



ՏԵԽՆԻԿԱՆ
ՄԱՍԱՆԵՐԻՆ

545

Մ. ՌՈՒԲԻՆՉԻԿ

ՏԵԽՆԻԿԱՆ
ՄԱՍՄԱՆԵՐԻՆ

ՊԵՏՐՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

18 DEC 2017


Մ. ՌՈՒԲԻՆՉԻԿ

600.18

ՏԵԽՆԻԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻՆ

ՀամԼԿՅԵՄ ԿԿ Աժխասանքի յեղ Կրթության
բաժնի կողմից հանձնարարված և կույրերիսա-
կան տպագրության տպարանի տպած համար

Յեղբորդ հրատարակչությունից
Թարգմ. Մ. Զ.



ՊԵՏՏՐՈՍԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿ. № 1722
ԳԼԱՎԼԻՏ 6565 (F)
ՊԱՏՎԵՐ 3634
ՑԻՐԱԺ 5000



11270699

ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌՈՒՄՆԵՐԻ

Քնն. Մ. Ռուբինչիկի «Տեխնիկան մասսաներին» պաշխ եւ սփանդակելու տեխնիկան ըստ մասսաների մեջ տարածելու աշխատանքին խորհրդային Հայաստանում :

Գրքի բնագիրը պատրաստվել է հրատարակության այն ժամանակ, յերբ մենք դեռ նոր էլինք ավարտել վերականգնման շրջանը, յերբ դեռևս կազմված էր հնգամյա պլանի սկզբնական վարկանաթը, վորն ամենակարճ ժամանակամիջոցում դարձավ մինիմալ վարկանաթ : Այդ պատճառով տեղ-տեղ հնացել են մի շարք հարցադրումներ և տվյալներ, բայց այդ հանգամանքը հազիվ թե անդրադառնա գրքի արժեքավորության վրա :

Հնգամյա պլանի լրակատար իրականացումը ներկայումս վաղ միայն ապահովված է, այլ և արդյունաբերության հիմնական ճյուղերում գերակատարված, վորի հետևանքով իրականանում է հնգամյակը չորս տարում կատարելու մարտական լոզունգը : Այս սույն դործի յեն դրվելու 518 գիզանա գործարաններ :

Սորհրդային Միությանը գտնվում է ագրարային յերկրից ինքուստրիալ յերկրի վերածվելու նախորդակին : Յեթե հնգամյա պլանի նախորդակին մեծ էր տեխնիկան մասսաներին սեփականություն դարձնելու պահանջը, ապա այժմ, հնգամյակի 3-րդ վճռական տարում, յերբ ավարտվում է սոցիալիզմի եկոնոմիկայի հիմքի կառուցումը, այդ պահանջը վիթխարի չափեր է ընդունում :

Սորհրդային Միության մեջ ներկայումս գյուղական տնտեսությունների 50 տակտից ավելին (մոտ 13 միլիոն նախկին գյուղական տնտեսություններ) ընդգրկված է կոլտնտեսություններում : 1931 թվի վարնանը Սորհրդային Միության 200.000 կոլտնտեսություններն ու 4.000 խորհանտեսությունները ցանել են բոլոր ցանքերի յերկու յերրորդից ավելին, մինչդեռ մնացած 12 միլիոն անհատական գյուղացիական տնտեսությունները ցանել են ամբողջ ցանքի տարածության մեկ յերրորդ մասը : Այսպիսով աճում է նաև տեխնիկայի վճռական դերը գյուղի սոցիալիստական վերակառուցման բնագավառում : Տեխնիկայի տիրապետումը կենսական անհրաժեշտություն է կոլեկտիվացող գյուղին :

Հակայի քայլերով ինդուստրացիոզ և կոլեկտիվացիոզ մեր
յերկրի համար ընկ. Ռուբինչիկի «Տեխնիկան մասսաներին» գեր-
քը ծայրահեղ անհրաժեշտութուն և ծով պահանջի հանդեպ:

Գրքում շոշափված խնդիրների վահատաբ կիրառումը նշանա-
կում և մի քայլ ստաջ կրտսարել ընկ. Ստալինի մարտական լո-
զունդը տեխնիկային տիրապետելու մասին՝ իրազործելու համար:

ՊԵՏՆԻԱ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Մեր անտեսութան զարգացման հնդամ չա պլանը հիմնված և
յերկրի լայն ինդուստրացիանի օրնա: Նախատեսվում է կատուցել
հակաբախան թիտի նոր գործարաններ, ուժեղացրուկցիայի յեն-
թարիկ յերաժները, մացնել նոր տիտի սարքավորումներ և տեխ-
նոլոգիական սրտցեաներ: Ընթացիկ հնդամ յակը, անտարակուչա,
բախականաչախ յորացնելու յե տեխնիկական հեղափոխութունը,
և այլ ժամանակամիջոցում պայքար և մղվելու մեր ժողովրդական
անտեսութան տեխնիկական կուրսուրայի բարձրացման համար:
Մեր ամբողջ անտեսութան սոցիալիստական այլ միթիտի ուչ-
խատանքն անկարելի յե առանց աչխատախար մասոաների ներ-
գրաւման, նոչ կրտուցորների կայրեր պատարաստելու, նրանց
կուրսուրական մակադակի բարձրացման և տեխնիկական գրտ-
գիտութան լայն սալամման: Սոխորեցնել բանխորին գիտակից
մասնակցողը լինելու արտադրական սրտցեախ մեջ՝ նշանակում է
հակաբախան չախերով բարձրացնել նրա աչխատանքից ստացվող
եֆեկտը, հաջողութուն ձեռք բերել ժողովրդական անտեսութան
ոսոցիտուսացման գործում և բարեբախի պարզ ժողովրդաստե-
սական սպարաախի փոխել:

Բանխորական ուժի փորակի բարձրացման և բանխորական նոր
փորակյալ ուժի պատրաստելու հարցը կարևորագույն սրտցեանե-
րից մեկն և, փորը պետք է բուժվի փոչ միայն մարչական և ար-
հետակցական կարգաւթտութուններ և ձեռք առած միջոցնե-
րով, այլ և կամաւոր հիմ բերով կադակեբալված ընկերութունե-
ների ախտիվ մասնակցութամբ: «Տեխնիկան մասսաներին» ըն-
թերութունը միայն մեկ տարի յե, ինչ գորութուն ունի, այլ
պատճառով միանդամայն բնական և, փոր ունի բարձրիվ լայ-
ցելը, և նրա աչխատանքը դեռ չի ստացել այն թախին ու զարդա-
ցումը, փոր առաջադրում է կյանքը: Ընկերութունը բաղմաղիմի
գործունեութուն ունի, կյանքի ձեռումը հակաբախան և, և բաղ-
մաղորդանի պահանջներ են առաջադրվում այլ յերիտասարդ
կարճակեբալութան: Այստեղից էլ բղխում է լավ, հանրամատչելի
դրքի և դասախախ պահանջը, այն էլ այնպիսի դասախոսի, փորը
փոչ միայն ընդհանուր գիտելիքներ սա, այլ և այնպիսի գիտելիք-
ներ, փորանք բարձրացնում են փորակը, գիտելիքները, յերեւման
բերում արտադրական սրտցեաների իակական ելութունը: Առ-

անդից և բղիճամ նաև գյուտարարներին ոգնելու պահանջը. հարցներ են ուղղում և՛ բանավորները, և՛ գյուղացիները, և՛ տնտեսագործներն ու արհեստավորները:

Հարցերի այն հսկայական քանակությունը, վոր մտնում է տեխնիկական գիտելիքների պրոպագանդա հասկացողություն մեջ, առաջադրվում է «Տեխնիկական մասսաներին» ընկերությունը: Ընկ. Ռուբինչիկի աշխատությունը, վոր տալիս է տեխնիկական գիտելիքների պրոպագանդայի համար մասսայական կամայոր մի կազմակերպություն ստեղծելու առաջին փորձի հանրազումարը, անկասկած, հսկայական նշանակություն ունի: Չափազանց դնահատելի յե այն հանգամանքը, վոր գերքը ինչ վոր ակադեմիական պրոպագանդա չէ՝ գրված ժամանակից և տարածությունից անկասի, այլ նա խարսխվում է կյանքի խոշոր հատվածների վրա: Նրանում վոր մի մտադածին խոսք չկա, այլ ամբողջովին արտացոլում է մեր իրականությունն ու հսկայական այն ձգտումը դեպի տեխնիկական գիտելիքները, վոր նկատվում է աշխատավորության լայն մասսաների մեջ: Իրա հետ միասին՝ նա գաղափար է տալիս նաև այն մասին, թե ինչ հսկայական թվով պահանջներ չեն բավարարված: Իրերը չափազանց հարուստ է փաստերով, վորոնք վերին աստիճանի պատկերասրտը և ակնբախ յուսաբանում են, թե տեխնիկական յետամնացությունն ու տեխնիկական անարդիությունն ինչպիսի հսկայական յոչընդոտ են հանդիսանում մեր տնտեսություն ինքնարթերի իջեցման և ուղիղտարացման համար մղվող պայքարում: Այդ վերաբերում է վոր միայն արդյունաբերությունն ու տրանսպորտին, այլ և նմանապես գյուղատնտեսությունը:

Հիրտովի, կատարելապես ճիշտ է այս գրքում հիշատակված ընկ. Լուսազարտի ուղիղտությունը, թե «մեքենան գրված է, բայց բանավորները ծանոթ չեն նրան, այդ պատճառով յերբեմն մեքենան աշխատում է հիմարաբար, իսկ բանավորը կանգնում է, վորպես հիմար»:

Գրքում մեջ բերված գիտելի պայթելու փաստը Ստրանկովով վկայում է, թե վորքան թանկ է նստում մեղ մեր տեխնիկական յետամնացությունը: Տեխնիկական տարրական գիտելիքների բացակայությունը և արտագրական պրոգնոսին ու այն դադյահին ծանոթ չլինելը, վորի վրա աշխատում է բանավորը, վորքան մեքեր առաջանանք, այնքան մեծ յոչընդոտ պետք է հանդիսանան մեր ժողովրդական տնտեսություն վորակական ցուղանիշների բարձրացման, արտագրությունն նոր մեթոդներին և ձևերին համար մղվող պայքարում: Կասկածից միանգամայն դուրս է, վոր արտագրական յորհրդակցություններում և սոցիալիստական մրցություն մեջ բանավոր դասակարգի ցուցաբերած ակտիվությունը նույնպես բավականաչափ կբարձրանա, յեթե մեղ հաջողյի ընդարձակել տեխնիկական գիտելիքներին պրոպագանդայի աշխատանքը: Լայն մասսաների ստեղծագործությունն այնպիսի չափե-

րով չի հաղորդվում սոցիալիստական շինարարության, վորքան այդ կարող էր տեղի ունենալ մեր պայմաններին ամբողջությամբ մեջ, յեթե արտագրության բարելավման վերաբերյալ առաջարկներ անող (արտագրական յորհրդակցություններում և այլուր) բանավորության հսկայական մասսան տեխնիկական ակելի բարձր գրագրություն ունենար:

Ահա այս հարցում իրող վոր հսկայական արգելակ է հանդիսանում տեխնիկական անգրագրությունը: Մենք արդեն վերը մատնանշեցինք, վոր «Տեխնիկական մասսաներին» ընկերությունը հնարավորություն չի ունեցել իր աշխատանքը ծավալելու այնպիսի չափով, վորը թիչ թե շատ նկատելի կերպով բավարարեր աշխատավորական լայն մասսաների առաջադրած տեխնիկական գիտելիքներին պահանջը: Կատարված են միայն առաջին քայլերը. անհրաժեշտ է ընդարձակել և մեծացնել «Տեխնիկական մասսաներին» ընկերության շրջանակները: Ընկ. Ռուբինչիկի գրքում հիշատակվում են այն կոնկրետ ձևերը, վոր ընկերությունն ընտրել է իր աշխատանքներ համար: Գրքում յոտվում է կոնսուլտացիայի փորձի, գյուտարարներին ոգնելու, գրքերի ընտրությունն ոգնելու, գրադարաններ կազմակերպելու մասին: Չափազանց դնահատելի յե նաև տեխնիկական կայանների կազմակերպման փորձը: Անկասկած, այդ փորձը պետք է համարել հաջող, և այժմ արդեն համարձակ կարելի յե դնալ տեխնիկական կայաններին ստեղծման ուղիով:

Անհրաժեշտ է նույնպես մատնանշել և նախակոչիկների համար դասընթացներ կազմակերպելու փորձը: Այդ, անկասկած, չափազանց հետաքրքիր նախաձեռնություն է: Իրականություն մեջ մեր տեխնիկական գործատերը հնարավորություն պիտի ունենան ստանալու արդեն համեմատաբար պատրաստի մարտիկներ, վորոնք անցած կրիներն այս կամ այն ուղիով տեխնիկական հաստատություն հետ կսարված դարձնեն: Հետադայում անհրաժեշտ է բավականաչափ ընդարձակել նրանց թիվը և բազմաոտեսակ բնույթ տալ դասընթացներին:

Հսկայական նշանակություն ունի գրքում հիշատակված գործարանային բլիշի աշխատանքի փորձը: Գրքում յոտվում է վոր միայն գործարանային բլիշի աշխատանքի նշանակություն, այլ և այն մասին, թե ինչպես են նրանք աշխատում և ինչպես պետք է աշխատել:

Չափազանց դնահատելի յե գրքի այն մասը, վորտեղ յոտվում է նոր տեխնիկական պրոպագանդայի յենթարկելու հարցի մասին: Այդտեղ միանգամայն յրախացի կերպով նշվում է դիտահետազոտական յնտախտուտի հսկայական նշանակությունը: Իրժ-բախտաբար, ուշադրություն չի նվիրված գործարանային լարտրատորիային, վորի դերը գործարանում, վորպես տեխնիկական լուսավորություն կազմակերպչի, անկասկած մեծ է, հետզհետե պետք է ընդարձակվի, առանձնապես յեթե նկատի ունենանք այն

հանդամանքը, վոր դործարանային լաբորատորիային միացվում է հատուկ տեխնիկական գրադարան:

Յեթե քաղաքում տեխնիկական գիտելիքները պրոպագանդայի բնագավառում աշխատում են և՛ արհեստակցական կադմակերպությունները, և՛ դանագան կամավոր ընկերություններ, ապա դյուղն այդ տեսակետից համարյա չի սպասարկում: Այդ պատճառով անհրաժեշտ է առանձնապես մատնացույց անել «Տեխնիկան մասնակցին» ընկերության առջ աշխատանքը: Այստեղ ընկերությունն աշխատանքի լայն ասպարեզ ունի և գործի այս կողմի վրա պետք է բացառիկ ուշադրություն դարձնի:

Ընդ. Ռուբինչիկն իր գրքում բախական շնորհքով և խելացի, կենդանի և հանրամատչելի լեզվով և բախական պատկերավոր կերպով ցույց է տվել տեխնիկական յետամնացության և տեխնիկական անդրագիտության դեմ պայքարելու ամբողջ նշանակությունն ու հակայական դերը: Կատկած չկա, վոր այս գիրքը ներկայումս բացարձակապես անհրաժեշտությունն է հանդիսանում: Նա լույս է տեսնում ժամանակին, յեթե չի տւչացել: Սոցիալիստական մրցության ծավալման շրջանում այսպիսի գրքերը մեզ համար հակայական արժեք ունեն: Սոցիալիստական մրցությունը, վոր մարտալական շարժումն է, վոչ միայն պետք է տեսնես մասնակցի խանդավառությունն ու սոցիալիստական շինարարության պափուքը, այլ և նա պետք է ամբաստնաբերի մեքենայի ու արտադրական պրոցեսի ճանաչողությամբ և տեխնիկական գրագիտությամբ:

ՓՏԳԻՆ ԳԻՏ. ՏԵԽՆ. ՎԱՐՇ.
ՏԵԽՆԱԳՐԱԿԻ ՏԵԴԱԿԱՂ՝ Վ. ՍՎԵՐԻՒՈՎ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԳՆՈՒՆ I

ՄԵՐ ԱՌԱՋ ԴՐՎԱԾ Ե ՀԱՄՆԵԼՈՒ ՅԵՎ ԱՆՑՆԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Արդեն մի քանի տարի յե, ինչ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ մենք լարված աշխատանք ենք կատարում յերկրի ինդուստրացման և ժողովրդական տնտեսությունը նոր տեխնիկայի հիման վրա վերակառուցելու համար: Մենք ուժգին տեմպով սկսել ենք ռացիոնալացնել ցարական ժամանակից մնացած արդյունաբերությունը, վոր յետամնաց էր և մաշված սարքավորումով: Մեկը մյուսի յետևից անում են նոր ֆաբրիկաներ և խոշոր դործարան-գիղանոններ: Մենք արժատապես վերակառուցել ենք մեր նավթարդյունաբերությունը: Արդեն աշխատում է Բազու-Բաթում նավթամուղը՝ 700 կիլոմետր յերկարությամբ: Ելեկտրարդյունաբերության մեջ վաղուց զերպոլանցված է նախապատերազմյան մակարդակը: Խորհրդային յերկրում հզոր ցանցով փոխած են հարյուրավոր մեծ ու փոքր էլեկտրոկայաններ: Վոլ-խովստրոյ հսկան իր ենթաբաժնով արդեն սնունդ է մատակարարում Լենինգրադի հարյուրավոր դործարաններին: Միության խորհրդային հանրապետություններում հիմք է դրված նոր էլեկտրոկայանները: Խորհրդային Բելոուսիայում կառուցվում է Ռսինստրոյ էլեկտրոկայանը: Ուկրայնայում տենդային թափով առաջ է գընում Դնեպրոստրոյի կառուցումը՝ դործարանների խոշորագույն կոմբինատի հետ միասին, վորոնք կառուցվում են տեխնիկայի վերջին խոսքով:

Մենք դիմել ենք մեր ամբողջ տրանսպորտի արժատական վերակազմության: Վերջին տարիներս մենք սկսել ենք ավտոչինարարության մեզ մոտ բացակայող ճյուղի ծավալումը՝ ձեռնարկելով ավտոմոբիլային նոր խոշոր դործարանի կառուցման, վիթխարի հաջողություններ ենք ձեռք բերել ավիացիայի ասպարիզում, ուժգին թափով զարդացնում ենք մեր քիմիական արդյունաբերությունը, անում են դաղդյաններ և մեքենաներ պատրաստող դործարանները: Ստեղծվում են արդյունաբերական նոր ճյուղեր, վորոնք կան արտասահմանում, բայց բացակայել են մեզ մոտ

Ընթացիկ տարում խիստ աչքի յե դարձում մեր եներդեպիկ բազայի և մեքենաչինության հղոր աճումը նաև նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ:

ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի ուղղվածությունը, վոր վերջնականապես ընդունված է XVI կուսակցական կոնֆերենցիայում, ամբողջ ժողովրդական տնտեսության կապիտալ ներդրումները նախատեսում է 64,6 միլիարդ ռուբլու սահմանում՝ նախորդ հնգամյակի 26,5 միլիարդի դիմաց: Այդ նույն ժամանակամիջոցում արդյունաբերության կապիտալ ներդրումները կազմելու յեն 16,4 միլիարդ ռուբլի՝ անցած հնգամյակի 4,4 միլիարդի դիմաց, արանսպորտի ներդրումները՝ 10 միլիարդ ռ.—2,7 միլիարդի դիմաց: Ելեկտրիֆիկացիայի վրա ծախսվելու յե 31 միլիարդ ռուբլի՝ 0,9 միլիարդ ռուբլու դիմաց: Արդյունաբերության մեջ ներդրվող կապիտալ հատկացումների 78% ընկնում է ծանր ինդուստրիային, այսինքն՝ արդյունաբերության այն ճյուղերին, վորոնք արտադրում են արտադրության միջոցներ. ելեկտրաչինարարություն, հանքային մետալուրգիա (քարածուխ, մեքենաչինական գործարանների՝ տրակտորի, գյուղատնտեսական մեքենաների և ավտոմոբիլների և այլ գործարանների կառուցում և օբեկտնատրուկցիա):

Այս թվերն ու տվյալներն ախհայտ կերպով ցույց են տալիս, վոր անշեղորեն կենսազործվում է մեր կուսակցության հիմնական գիծը՝ յերկիրն ամեն կերպ ինդուստրացնելու և ժողովրդական տնտեսությունը նոր տեխնիկայի հիման վրա օբեկտնատրուկցիայի յենթարկելու վերաբերյալ: Հակառակ թերահավատների տատանումների, նախազգծված հնգամյա մեծ պլանը մի կարեվորադույն փուլ է հանդիսանում բանվոր դասակարգի պատմական միասնայի իրականացման ճանապարհին, վորպեսզի համեմատաբար կարճ ժամանակամիջոցում «տեխնիկապես և տնտեսապես հասնենք և գերազանցենք Յեվրոպայի և Ամերիկայի առաջավոր կապիտալիստական յերկրները զարգացման մակարդակը»:

Ռուբլու-կարվածատիրական Ռուսաստանից մենք ժառանգություն ենք ստացել 25 միլիոն մանր, ցրված, անսահման յետամնաց տեխնիկա ունեցող գյուղացիական տնտեսություն, վորոնք վերջում քայքայվել է յին իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմներից: Խորհրդային իշխանությունը շատ ուժ և միջոցներ գործադրեց գյուղատնտեսության բարձրացման և վերականգնման համար, բայց այդ ջանքերը դեռևս անբավարար են: Ներկայումս գյուղատնտեսության աճման անսահման յետամնա-

ցությունը արդյունաբերության աճումից՝ լուրջ սպառնալիք է հանդիսանում յերկրի ինդուստրացման համար: Ահա, թե ինչու արդյունաբերության օբեկտնատրուկցիայի հետ միասին մենք վերականուցում ենք նաև գյուղատնտեսությունը նոր մեքենայական տեխնիկայի հիման վրա:

Վերջին տարիներս մենք նկատում ենք, վոր տեխնիկան հատապես արմատակալում է գյուղատնտեսության մեջ. գութանը, տրակտորը, տրիկերը, գյուղատնտեսական բարդ մեքենաները հետզհետե դուրս են մղում արորն ու բրիչը: Դեռ 1928—29 թ. գյուղին հայթայթված մեքենաները 2,25 անգամ գերազանցում է յին նախապատերազմյան մակարդակը: 1928—29 թ. գյուղում յեղած տրակտորները 35.000-ից ավելի է յին, մինչդեռ մինչև հեղափոխություն նրանք բնավ չէ յին գործադրվում գյուղատնտեսության մեջ: Իսկ հնգամյա պլանով գյուղատնտեսական մեքենաչինության արտադրանքը 4 անգամ ավելի կլինի արդեն ձեռք բերված մակարդակի համեմատությամբ: Ստալինգրադի տրակտորի գործարանը, Ռոստովի գյուղատնտեսական մեքենաչինության գործարանը բազմաթիվ անգամ ուժեղացնում են մեքենայական տեխնիկայի ուժերն հոսանքը դեպի գյուղատնտեսություն:

Գյուղատնտեսության ինդուստրացումն ու օբեկտնատրուկցիան՝ նոր տեխնիկայի հիման վրա՝ զուգորդվում են նրա յուշորացումով և ցրված տնտեսությունների մասսայական համախմբումով կուտնտեսությունների մեջ, վորոնց քանակն այժմ արդեն 130.000-ից անց է: Նախկին յուրհանտեսությունների յուշորացման հետ միասին ներկայումս նախապատրաստություններ են կատարվում իրականացնելու կուսակցության և նո յեմբերյան պլանումի դրած յարդերները հսկա յուրհանտեսությունների յինարարության վերաբերյալ, վորոնց ցանքերի տարածությունը դեռ 1929 թ. հասել է 1,5 միլիոն հեկտարի:

ԳՂՈՒՆ II
ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՈՒՆԸ ԱՐԳԵԼԱԿ Ե ՌԵԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՑԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ժողովրդական տնտեսության զարգացման և վերակազմության պատմության մեջ մինչև որս չտեսնված տեմպը մենք գործադրում ենք մի յերկրում, վորը նախորդ շրջանից ժառանգել է յետամնաց տեխնիկա ունեցող արդյունաբերություն և գյուղատնտեսություն, վորտեղ բանակապես գերակշռում է գյուղացիական, մանր-բուրժուական օգգաբնակչությունը, այն ժամանակ, յերբ

լարված և դասակարգային պայքարը: Այս ֆրոնտում մեր հաջողութեան կարեւորագույն գրադակները մեկը հանդիսանում է մեր յերկրի բանվոր դասակարգի ստեղծագործ ուժը և յեռանդի անսպառ աղբյուրը: Արտադրական խրոհակցութեան ստեղծանախ ալիքը պարզորոշ կերպով ցույց տվեց, վոր հարյուրավոր և հազարավոր գործարաններում բանվոր դասակարգի հակադասական մասսաները ներդրովում են արտադրութեան բարեկաման և օգտակարացման ահռելի և բարդ աշխատանքին, իսկ աասնյակ հաղարավոր այն առաջարկութեանը, վոր ամեն որ մտցնում են բանվորները, հանդիսանում են ամենաթանկարժեք դանձր ինդուստրացման ֆոնդի համար:

Այնուամենայնիւ, կան պատճառներ, վորոնք արգելքներ են ստեղծում յայն մասսաներին սոցիալիստական շինարարութեան մեջ ներդրակելու ճանապարհին: Այդ՝ մեր յերկրի բանվոր դասակարգի և գյուղացիութեան կուլտուրական ցածր մակարդակն է և տեխնիկական ավելի մեծ անգրագիտութեանը: Յարկովի այդ անիճյալ ժառանգութեանը, վորպես մի ծանր բեռ կախված է մասսաների ինքնագործունեութեանից, խանդարում է նրանց անտեսական շինարարութեան մեջ ներդրակելու գործին:

«Մենք, — ասում է ընկ. Պորտուգալովը (պետական «Պուլերաֆ» արեստի գործարան), մեզ հեծամասնութեամբ բացառապես պրակտիկ աշխատավորներ ենք և մեծ օտաժ ունենք: Պրակտիկ դիտելիքները մենք վոչ միայն յարմար ենք, այլ դրանք ներծծվել են մեր մտի ու արյան մեջ: Իսկ պետական տեխնիկական դիտելիքներ մենք չունենք: Մեզինց չառերին Սորհրդային իշխանութեան ատաղ և քաշել խորհրդային մեծ պաշտոնների: Տեխնիկական մեծ դիտելիքներ չունենալու պատճառով մենք հարկադրված ենք լինում հակայական ժամանակ կորցնելու նույնիսկ պարզ հարցերի լուծման վրա: Մինչդեռ մենք ժամանակ չունենք: Ստեղծված ենք աշխատելու մինչև բթանալու սոսիճան, իսկ դրա հետևանքն է լինում ջղազարութեանը և նրանից բխող բոլոր յերեւոյթները»:

Մենք մեր սոցիալիստական արդյունաբերութեանը փոխադրում ենք 7-ժամյա աշխատանքային օրվա: Այդ մեծ բեկումն արգեն խոշոր չափով կատարվել է տեքստիլ, նավթային և հանքային արդյունաբերութեան մեջ: 1929 թ. 7-ժամյա աշխատանքային օրվա յեն փոխադրվելու մեծ թվով քրիտիկան և մետադամշակման ձեռնարկութեաններ: Դրա հետևանքով արտադրութեան մեջ մըացվելու յեն հագարավոր անվարժ և անորակ բանվորներ, վորոնք նոր են հեռացել գյուղից և դեռևս չեն հոտոտել գործարանային ծուխը:

Խոսք չի կարող լինել այն մասին, վոր յերրորդ հերթի բանակի-

մեջ տեխնիկական դիտելիքների բացակայութեանը և նրա տգիտութեանը հանդիսանում են արտադրողականութեան իջեցման և անկարգութեանների կարևորագույն պատճառներից մեկը: 7-ժամյա աշխատանքային օրվա փոխադրվող մի քանի ձեռնարկութեաններում:

ՄԵԲԵՆԱՆ ԱՇԽԱՏՈՒՄ Ե «ՀԻՄԱՐԱԲԱՐ»

Մենք միլիարդներով փող ենք ներդնում կապիտալ շինարարութեան մեջ, բայց միաժամանակ հաղվազյալու չեն այն դեպքերը, յերբ տեխնիկայի վերջին խոսքով նոր կառուցված կամ վերանորոգված գործարաններում, ցեխերում և բաժանմունքներում նկատվում է աշխատանքի արտադրողականութեան իջեցում և ինքնարժեքի բարձրացում—միայն այն պատճառով, վոր մենք չունենք տեխնիկական դիտելիքներով զինված վարպետներ և բանվորների կազմեր:

Դեռ մի քանի տարի սրանից առաջ «Պրավդայում» մենք կարդացինք, վոր Գոնստանտինովսկի ապակեգործարանում, վորը նոր է կառուցված և վերասարքավորված տեխնիկայի վերջին խոսքով, իջնում է աշխատանքի արտադրողականութեանը, բարձրանում է ինքնարժեքը և անպիտուկ է մեծ քանակութեամբ աղբյուրներ:

Տեխնիկական հետամնացութեան պատճառով մեր բանվորները վարվել չզիտեն ժամանակակից դադդյաճաների հետ:

Հաճախ արտասահմանյան սարքավորումը մտնում է չողտադործված և սպասում «արտասահմանյան» մասնագետ վարպետի: Մեր մամուլում բազմիցս փաստեր են հրատարակվել այն մասին, վոր Դնեպրոստրոյում և այլ խոշոր կառուցումների վրա անդործութեան է մատնված արտասահմանյան սարքավորումը՝ նրանց հետ վարվել իմացող վորակյալ բանվորների բացակայութեան պատճառով: Պատահական յերևույթ չէ, վոր Գուգնեցկի ավազանի հանքագործները ընկ. Լուճաչարսկուն, նրա Սիբիրում կատարած շրջագայութեան ժամանակ, ինդրել են ուշադրութեան դարձնել հետևյալ հանգամանքի վրա:

«Կուզեցիկի ավազանում մի քանի հանքահորեր մեքենայացված են: Խոսքվում են մեքենաներ, կիմալում են, բայց այդ մեքենաների հետ վարվող բանվորներ չկան: Մեր ճարտարագետներն ու տնտեսավարները փոխանակ բանվորներին սովորեցնելու թե ինչպես պետք է վարվել մեքենաների հետ, իվանին կամ Մաքսիմին գործի յեն գնում և ասում. «Կոնվորես»: Յերկու օրից, ի հարկե, այդ մեքենաները փչացվում են, և յերբեմն դրանց նորոգել չի լինում»: Այդ նշանակում է, — ասում է ընդլուծաչարսկին «Ռարոչայա Գաղետայի» բանագյուղի թակիցների խոր-

հրահայտության մեջ, — թե մենք մեքենայքերը ենք, բայց չենք «սովորեցրել»: Մեքենան դրել ենք, բայց բանվորները նրան ծանօթ չեն: Յեվ այդ պատճառով յերբեմն մեքենան աշխատում է հիմարտաբար, իսկ բանվորը կանգնում է, վարպետ հիմար» («Ռարոչայա Գաղեատ», 1929 թ., № 12):

ԵԼԵԿՏՐՈԿԱՅԱՆ ՊԱՅԹՈՒՄԸ

Թե մեր տեխնիկական հետամնացությունն ինչքան թանդ է նստում Խորհրդային յերկրին, դրա մի ցայտուն ապացույցն է «Տրուդալայա Պրավդա» լրագրի 1928 թ. դեկտ. 29-ի հետեւյալ հոդվածը.

«Նոյեմբերի 23-ին Սարանսկ քաղաքում պայթեց գիղելի շարժիչը: Կայանը կանգ առավ և քաղաքը մնաց առանց լույսի: Պայթումից մարդկային զոհեր չեղան:

Պայթելու պատճառները պարզելու համար կազմվեցին հատուկ հանձնաժողովներ և, բացի դրանից, Սամարայից, վորպետ երապերտ ախտեղ դնաց ճարտ. Բ. Լ. Սուբվիլլոն:

Սուտ որերս ընկ. Սուբվիլլոն ճարտարագետների ընդհանուր ժողովում մանրամասն զեկուցեց ելեկտրոկայանի պայթելու մասին:

Պայթումը տեղի ունեցավ մեքենան գործի դնելու ժամանակ, նրա չորրորդ գլանի մեջ: Պայթումի ահուկ ճնշումից անջատվել է չորրորդ գլանը՝ հսկայական խորտակումներ կատարելով շարժիչի այդ և ուրիշ գլանների մանր դետալներին մեջ:

Անջատված չորրորդ գլանը, վոր 13 ցեխոններ ծանրություն ունի, գաղերի ճնշման ներքո թռել է վեր, կպել է 30 սմ. յերկայթաձողին, կորացրել է այդ ձողը և, թռչելի ուղղությունը փոխելով, շարունակել է թռչել դեպի վեր, ճեղքել է շարժիչից վերել առաստաղն ու տանիքը, բարձրացել է շենքի տանիքից վեր և 10 մետր հեռու նորից ընկել տանիքի վրա, կրկին ճեղքել առաստաղը և ընկել կայանի մեջ՝ 65 ուժի փոքր շարժիչի կողքին: Գետին ընկնելիս գլանը ծակել է բետոնե հատակի վրա 200 սմ մի փոս, սպանել է ելեկտրոմանույորին և լուրջ վերքեր պատճառել այդտեղ կանգնած մի ուրիշ մարդու: Շարժիչը գործի դնող պլազ մեքենավարը շարժիչի մոտից չարովել է վանդակաձողի վրայից ահագին տարածություն վրա, վորից հետո նա կորցրել է իր դիտակցությունը: Մեքենավարի ոչնականը, վոր շարժիչի գործի դնելու ժամանակ բացում էր ողային գլանի վենտիլը, ջրերի լուրջ քայքայում է ստացել, հոգեկան հիվանդի նշաններ է ցույց տալիս, և այժմ բժշկվում է:

Այս է ահուկի պայթումի և նրա սարսափելի հետեւանքների ընդհանուր պատկերը:

Սարանսկի ելեկտրոկայանի այս դժբախտ դեպքը գլխավորապես հետեւանք է մեքենական կազմի անդիտակից սխալներին, վորոնք թույլ են պատրաստված դիղելները սպասարկելու համար, և մասամբ հետեւանք է շարժիչի կոնստրուկտիվ թերություն (նախազուրուչական փականների բացակայություն):

Շարժիչը պայթումից հետո կարող է դնահատվել միայն, վորպես մետաղի մնացորդ, կիլոգրամը 2,5 կ. Ռուզմետալտորդի գըներով և ընդամենը կկազմի 750 ո., չհաշված դեներատորի և դըրագոնի արժեքը՝ մոտ 8000 ո.: Մինչդեռ շարժիչի վաճառքի գինը դեներատորի հետ միասին հասնում է 73.000 ո.: Երապերտներին դնահատությունը պայթումից առաջացած բոլոր վնասները հասնում են 85.000 ո.:

Սարանսկի շարժիչի պայթելու առթիվ ճարտարագետների ընդհանուր ժողովը, ի միջի այլոց, հանեց հետեւյալ վորոշումը.

«Շարժիչ-դիղելները անվտանգ սպասարկման համար մեքենագետներին կազմից պահանջում են տեսական և դործնական բավարար դիտելիքներ: Դիղելներին բանիմաց և փորձված մեքենագետներ պատրաստելու համար անհրաժեշտ է հիմնել հատուկ դասընթացներ՝ հնոցադանների դասընթացներին նման, և դիղելների մեքենավարներ նշանակել միայն նրանց, ովքեր սովորել են այդ դասընթացներում:

Շարժիչ-դիղելների շահագործման վրա աշխատող ճարտարագետներն ու տեխնիկները, բացի դիղելների մասին ունեցած իրենց դիտելիքների և փորձի մշտական հարստացումից, պետք է աշխատեն իրենց դիտելիքներն ու փորձը հնարավորության չափ շատ հազորդել մեքենագետներին կազմին: Իսկ անտեսավարները պետք է աշխատեն ձեռք բերել անհրաժեշտ գրքեր և ժուռնալներ ձեռնարկությունների մեքենագետների կազմի համար»:

Մեր հիշատակած որինակը յեղակի բնույթ չունի միանգամայն: Կարելի յեր խորտակման որինակներ բերել մեր Միություն դանազան վայրերից:

Արտասահմանյան տեխնիկան վիթխարի նվաճումներ ունի, իսկ մենք շարունակում ենք աշխատել մեր հին սովորություններով: Յուրաքանչյուր կառուցվող շենք մեղ մոտ չընկապատված է «անտառում» — ամենաթաղարժեք շինարարական և անտառային նյութերի խոշոր կույտերով, այնինչ արտասահմանը վաղուց պատվել է այդ «անախորժ» ողակումից:

Հաղիվ թե կարելի լինի հաշվի առնել այն անհամար վնասները, վոր մեզ պատճառում են կառուցող սեզոնային բանվորների ադիտությունը, խավարն ու տեխնիկական անդրադիտությունը,

ինչպես և վորոշ չափով տեխնիկական պերտնալի պահպանողականությունը, վոր ամուր կառուցել և աշխատանքի հին մեթոդներին և ձեվերին:

ԳԼՈՒԽ III

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼԱԿ Ե ՀԱՆԳԻՍԱՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՆ

Բանվոր դասակարգը, վոր տերն ու գերիշխանն և խորհրդային յերկրի, սուր կերպով զգում է տեխնիկական հետամնացություն և անզրադիտություն բոլոր հետեվանքները: Սոցիալիզմի կառուցման հաղթանակով շահագրգռված աշխատավորության լայն մասաները սկսում են ավելի ու ավելի գիտակցել իրենց տեխնիկական հետամնացությունը, վորպես մի լուրջ խոչընդոտ, վորը խանգարում է գիտակցաբար մասնակցելու արդյունաբերության և արտադրության բարելավման ու ռացիոնալացման գործին:

Լենինգրադի 4-րդ ելեկտրոկայանի մեքենավար ընկ. Անտոնովը արյայես է բնորոշում բանվորների տեխնիկական հետամնացությունը արտադրության համար. «Հնոցապանը միայն գիտե փայտ նետել հնոցի մեջ, իսկ թե ինչպես տնտեսել վառելիքը, ինչպես ռացիոնալ կերպով ուղտադործել այն՝ նա չգիտե: Յեթե մենք նրան տեսականապես զինենք, նա տնտեսաբար, խնայողությամբ կվարվի փառելիքի հետ: Յես կողմնակից եմ, վոր դանադան տիպի խրճրակներ կազմակերպվեն ավելի զարգացած և ավելի հետամնաց բանվորների համար»:

«Չպետք է աչք փակել այն յերևույթների հանդեպ, զրում է մեքենավար Բրուճակիլը, — վոր մեքենավարը տեխնիկական գիտելիքներ չունի, վոր հաճախ մեքենան կորսվում է, սրայթում են միտցներն ու կոմպրեսորները: Պետք է հարց դրոճբացնել, նույնիսկ ճշալ, վոր բոլոր գեկավարները լսեն մեքենավարների վերադատրաստություն անհրաժեշտության մասին՝ նրանց սովորեցնելով հատուկ կազմակերպված դասընթացներում: Պետք է հիշել ջերմուժային տնտեսության մեքենավարների կրթանք հրամանատարի (իսկ յերբեմն նաև միջին հրամանատարի) մասին: Պետք է նրան հնարավորություն տուլ զարգանալու տեսականորեն: Այն ժամանակ վրասներ չեն վնի»:

Կարելի չէ հիշատակել այլ բազմաթիվ նամակներ և թղթակցություններ, վորոնք վառ գույներով և պատկերավոր կերպով բնորո-

շում են բանվորական մասաների պայքարի մեջ ու յուրահատուկ պահանջներն իրենց տեխնիկական անզրադիտություն դեմ, վորը յերկաթե մադիլներով շղթայել է նրանց ստեղծադործ նախաձեռնությունն ու արտադրական միաբը:

«Ահա 45 տարի յե, ինչ յես աշխատում եմ դործարանում, — զրում է ընկ. Բարանովը «Լենինգրադական Պրավդայում»: — Ի հարկե, պրակտիկան ինձ շատ բան է տվել, բայց այնուամենայնիվ, յերբեմն մտածում ես և տեսնում, վոր դու ջո արտադրության հետ ծանոթ չես: Պակասում է թեորին: Յերբեմն յերիտասարդ բանվորը կամ դործուսի ուսանողը մի բան է հարցնում թեորիայից, բայց չես կարողանում պատասխանել»:

ԳՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ ԱՌԵՂԾՎԱԾ Ե

«Կրասնի Պուտիլովեցի» շինարարական ցեխից ընկ. Իվանովը նույն համարում զրում է.

«Մեր շինարարական ցեխում ամենազլխախըրը դժադրությունն է: Իսկ մենք ի՞նչ ենք հասկանում դժադրությունից: Գանի դեռ տեխնիկը ներկա յե, աշխատում ես, իսկ յեթե դնաց՝ չես կարող աշխատել, վորովհետև յուրաքանչյուր կառուցող բանվորի համար դժադրությունը դեռևս անհասկանալի մի ստեղծված է»:

Այն հանդամանքը, վոր բանվորները զիչ են հաճախում և բավարար ակտիվություն չեն ցույց տալիս արտադրական խորհրդակցություններում, հաճախ մենք բացատրում ենք նրանով, վոր հասարակական կազմակերպություններն անուշադիր են դեպի նրանց աշխատանքը և նախադատրաստական թույլ աշխատանք են կատարում նրանց ի մի հավաքելու համար: Հաճախ այդ յերեվույթների պատճառը, բացի հիշատակված մոմենտներից, արտադրական խորհրդակցություններին մասնակցողների տեխնիկական հետամնացությունն է և տեխնիկական գիտելիքներից զուրկ լինելը: Իսկ ինչպե՞ս հաճախ է պատահում, վոր ամաչելուց և այն յերկյուղից, վոր կարող են ծայրել իրեն, այնպիսի թանգարժեք մտքեր, վորոնք հսկայական նշանակություն ունեն արտադրության բարելավման և ռացիոնալացման համար, մնում են, վորպես նրանց կրողների զաղտնիքը:

Արտադրական խորհրդակցություններում այժմ հաճախ քննվում են տեխնիկական շատ բարդ խնդիրներ, վորոնց ջննություն մասնակցելու համար տեխնիկական գիտելիքների վորք միանում: Կարող են, վոր շինարարական շինարանի Շտամպովչեիկ» դործարանի ցեխի բանվոր ընկ. Ա. Ուզամն ասում է.

11-270699



«Մեզ մտա, մեքենական ցեխում արտադրութունն ամբողջ փամանակ կատարելադրվում է. բանվորները բաղձաթիվ արժեքավոր դորձնական առաջարկներ են անում արտադրության բարելավման վերաբերյալ: Իսկ յեթե նրանք տեսական գիտելիքներ ունենային, այդ առաջարկութունները թիվը բավական շատ կլինեք: Յեռ իմ որինակով գիտեմ. յերբեմն մտածում ես, թե ինչպե՛ս ավելի լավ հիմքերի վրա դնել աղյուսքի արտադրութունը, բայց տեսութունը պակասում է»:

ՅԵԹԵ ՏԵՆԻԿԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԿՆԵՐ ԼԻՆԵՑԻՆ...

«Լինինգրոպոկայա Պրավդայում» ընկ. Մարտիովը իր սպասվորութուններն է պատմում «Ստրոյկոմի» հյուան և վալադարսկի յրջխորհրդի անդամ ընկ. Սորոյեի հետ ունեցած գրույցից.

«Յեթե մեր բանվորի գլխում տեխնիկական գիտելիքներ լինեյն, աշխատանքը միանգամայն այլ կերպ կընթանար: Առանց տեխնիկի ըստիպված ես լինում աշխատել խարխափելով: Յերբեմն զգում ես, վոր դորձն ալսպես չպետք է տնել, բայց թո արդարութունը պաշտպանելուց վախենում ես, վորովհետև յերկյուղ ես կրում, թե թո տեխնիկական անդրադիտության համար ծաղրի կենթարկեն քեզ»:

Մոսկվայի տեխնիկական կայանը հետևվյալ նամակն է ստացել Որեսայի սպակեդորձարանի 18 տարեկան յերիտասարդ՝ գործուսի ուսանող ընկ. Դավիդովից.

«Գիտատեխնիկական կայանին յնդրում եմ պատասխանել իմ հետևյալ հարցերին. վորքա՞ն է ծխնելուդի ձգողութունը, յեթե նրա բարձրութունը 23 մետր է, իսկ ուղղահայաց արամաղիծը՝ 74 սմ— մթնոլորտային ցածր ճնշման դեպքում: Վորքա՞ն կիջնի ձգողութունը ծխնելուց դուրս, յեթե որական այրվել է և կես տոնն նավթ, յերբ չքացող գազերի ջերմությունն է 508° Ց. և 350° Ռ.— իհարկե, մթնոլորտային ցածր և բացարձակ ճնշման դեպքում: Խնդրում եմ գիտատեխնիկական կայանին իմ բոլոր հարցերին պատասխանել կարճ ժամանակամիջոցում, չձգձգել, վորովհետև այդ հարցը գրվելու յի արտադրական խորհրդակցության նիստին: Արդյոք ճիշտ են իմ յենթադրութունները, վորովհետև յեռ այնքան ել գրապես չեմ, վոր հակաճանձն արտադրողներին՝ ապացուցելու իմ իրավացի լինելը: Յեռ դեռևս սովորում եմ գործուսում և վոչ թե պարզեի կամ բարձր կոչման համար եմ ցանկանում ապացուցել այդ, այլ նորասակա և միայն վերադարձնել պետությանն այն ծախսերը, վոր նա կատարել է իմ կրթության վրա»:

Գործարաններում շատ ու շատ այդպիսի Բարանոյներ, Իվանովներ և Դավիդովներ կան, վորոնք ցավ են զգում խորհրդային արդյունաբերության բախտի համար և ցանկանում են ուղնել արտադրությանը:

Ձինևնք նրանց, ուրիմն, տեխնիկական գրադխտությամբ: Յեվ այն ժամանակ ուժգին հեղեղի նման կհոսեն սոցիալիստական չինարարության նպաստող թանգարժեք առաջարկությունները:

ՏԵՆԻԿԱԿԱՆ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԵՋՄԱՆՆ Ե

Տնտեսական շինարարության ֆրոնտում նվաճած մեր հաջողությունները նմանը չունեն պատմության մեջ, սակայն մենք վոչ մի բողոք չպետք է մոռանանք, թե ինչ սարսափելի չափերով մենք յեռ ենք մնացել արտասահմանյան տեխնիկայից: Այնտեղ նա «վոչ միայն զարգանում է, այլ ուղղակի առաջ է վազում, յեռ թողնելով արդյունաբերական տեխնիկայի հին ձևերը» (Ստալին): Մենք վոչ մի դեպքում չպետք է աչք փակենք, որինակ, այն յերբ վոլյեթի հանդեպ, վոր յեթե Միության մեջ ներկայումս հալոցներք միջին արտադրողականութունը (հաշված նաև ոժանդակ բանվորներին) մեկ բանվորին ընկնում է 330 տոնն, ապա արտասահմանում այդ արտադրողականութունը հասնում է 3.330 տոննի, այսինքն ուղիղ 10 անգամ խորհրդայինից ավելի: Կամ, որինակ՝ էլեկտրական պողպատածուլական հալոցը մեր Միության մեջ ամենից շատ տալիս է 8 տոնն, այնինչ Ամերիկայում այդ հասնում է 65 տոննի: Համեմատելով մեքենաշինության արդյունքները Խորհրդային Միության, Գերմանիայի և Միացյալ Նահանգների մեջ, մենք մեկ բանվորին կատանանք աշխատանքի արտադրողականության հետևյալ համեմատությունը, մարկերով. Միացյալ Նահանգներում՝ 21.806, Գերմանիայում՝ 6.413, Խորհրդային Միության մեջ՝ 4.016 («Պրավդա» 1928 թ. № 9):

Ահա, թե ինչու մենք առանձին ուշադրությամբ պետք է հետեվենք բանվորական գյուտարարության շարժման վերելքին, վորի մեջ թաղնված է յերկրի տեխնիկական վերակառուցման անսպառ աղբյուրը:

Բանվոր դասակարգի մեջ արդեն բյուրեղացել են ստեղծագործական նախաձեռնությամբ և արտադրական մաքով ոժտված գյուտարար բանվորների թանգարժեք ջոկատներ, գյուտարարներ, վորոնք իրենց ուղեղների մեջ կրում են մի շարք գյուտեր և արտադրական կատարելագործություններ:

ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՌԵԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՅԻ
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԼԾԱԿՆ Ե

Լենինգրադի «Կրասնի Վիբորժեց» գործարանն ամփոփել է նախընթաց տարվա բանվորական գյուտարարութեան արդյունքները և Բանվոր գյուտարարներն ընդամենը «Կրասնի Վիբորժեց» գործարանի վարչութեան ներկայացրել են 199 գյուտ (արտադրական խորհրդակցութեան ներկայացրել միջոցով) , վորից պլանային կարգով հնարավոր է յեղել իրականացնել 111-ը : Մերժված է 46 առաջարկ : Գործադրված գյուտերից նախընթաց տարում ստացվել է 11.000 ո. խնայողութեան («Տրուդ») :

Կան մի ամբողջ շարք փաստեր, վորոնք վկայում են, թե ինչպես մեր խորհրդային գյուտարարներն արդյունաբերութեանը նըվիրել են այնպիսի գյուտեր, վորոնք իրենց տեխնիկական կառուցվածքով և կատարելագործութեամբ գերազանցում են արտասահմանյան տեխնիկային : Նման բազմաթիվ գյուտերի մասին գրում է «Խարկովսկիյ Պրոլետարիյ» լրագիրը .

«ՎՈՒՍԿՈՐԻՔ» կոչվող գյուտերի իրացման ընկերությունը Խարկովում հրատարակ է հանել մի նոր կատարելագործված ելեկտրոմագնիսային մեքենա՝ Ս. Վ. Սամբուրովի կոնստրուկցիայով : Մեքենան պղնձի քերուկը մաքրում է չուգունի, պողպատի և յերկաթի խտնուրդից, մաքրում է հալած մետաղը, կաղապարելիք հողը և հարստացնում յերկաթահանքը : Սամբուրովի մեքենայի համեմատական փորձարկումները Եյզենախի գերմանական Մադեստ Վերայի նորագույն տիպի մեքենաների հետ, վոր կատարվել են Հյուս. Կովկասի յերկաթուղիների Լենինյան արհեստանոցներում, ցույց են տվել, վոր գերմանական տիպի մեքենան բավական պակաս արտադրողականություն ունի և անհամեմատ վատ է մաքրում ու շատ թանկ է նստեցնում մաքրումը : Համեմատելիս նմանապես նկատվել է, վոր ցածր վորակ ունի նաև անգլիական կոնստրուկցիայի մեքենան, վոր աշխատում է Վարոնեթում Հարավ-Արևելյան յերկաթուղիների Լենինի անվան գործարանում :

Կարելի յեք բազմաթիվ որինակներ բերել գործարանային պրակտիկայից, ցույց տալու համար բանվորների նախաձեռնութեան արտահայտութեանը : Ուկրայնական գործարաններից մեկի բանվոր ընկ. Վարբաբովը հարեվան դարբնոցում տեքավ, թե ինչպես սեպերը կռում են : Իր մաքրում խորհրդածելով այն մասին, վոր սեպերը կարելի յե պատրաստել կտրելով, Վարբաբովը հայտարարութեան տվեց, վոր պատվերն ուղարկեն իրենց բաժինը : Այժմ արդեն սեպերը վոր թե ծեծելով են պատրաստում, այլ կտրելով : Իրանից ստացված անտեսական եֆեկտն այն յեղավ, վոր տարեկան խնայվեց 30.000 ո. : Նույն գործարանում

վարդեա նիկոլայիվը կատարելագործեց անիվների ձուլումը, վորոնց անալիտումը հասնում էր 30 %-ի : Իրա խնայողութեանը տաքեկան հասնում է 40.000 ուրբլու : Գյուտարարների համաուկրաքնական համագումարում, պատգամավորներից մեկի ասելով, Գնեպրոպետրովսկում բանվորների առաջարկութեաններից պետութեանը 1 միլիոն ուրբլու ոգուտ է ստացել : Վերջին որինակները կատարյալ ակնառութեամբ մատնանշում են բանվորական գյուտարարութեան հսկայական նշանակութեանը ռեկոնստրուկցիայի գործում :

Իայց չնայած գյուտարարութեան աճող նշանակութեան, մենք հիատելի փոփոխութեան չենք տեսնում գյուտարարութեան պրոպեդիա լուծման մեջ :

«ԿՈՒՊԵՐ» ՇՈՒԿԵԱՌՔԻՑ ԼԱՎԸ ԶԻ ԼԻՆՈՒՄ

Իազմաթիվ ընկերներ հավատացած են, վոր մեր յերկրում գյուտարարութեան պրոբլեմի այդ աննախանձելի վիճակի պատճառը միայն անարժութեանն է ու բյուրոկրատիզմը : Անշուշտ, այդ մտեկնարը լուրջ և կարեվոր մի խոչընդոտ է գյուտարարութեան պրոբլեմի լուծման ճանապարհին :

Կարելի յե հիշատակել մեծ քանակութեամբ փաստեր մի շարք գործարանների, տրեստների, սինդիկատների, մինչեւ իսկ «գյուտարարութեան նպաստող» կազմակերպութեանների պրակտիկայից, վորոնք նկարագրում են անթույլատրելի ստուսատիրա վերաքերմունքը, անարժութեանն ու բյուրոկրատիզմը գյուտարարութեան հանդեպ :

«1927 թ. հունիսին, — գրում է «Կրասնայա Գաղետան» (Լենինգրեա), — «Բայլչելի» գործարանի բանվոր ընկ. Իվանենկոն հնարել էր ունիվերսալ կտրող դաղդյահ : Տ-ժամ յա աշխատանքային որվա ընթացքում դաղդյահը կարող է մեկ թեքից տալ 480.000 ետիկետ «Մավետ»-ի տուփերի համար : Ընկ. Իվանենկոն զիմել է մի շարք հիմնարկների և կազմակերպութեանների : Միտտի տրեստի տեխնիկա-արտադրական բաժինը, վորին ընկ. Իվանենկոն առաջարկել է իր գյուտը, հրաժարվել է նրանից : Ընկ. Իվանենկոն զիմել է Մարդային ժողանախորհին կից գյուտարար քանվորներին ոժանդակող բյուրոյին : Այնտեղ նրան առաջարկում են առլ դաղդյահի գծադրութեանն ու նրա նկարագրութեանը : Իրա վրա ընկ. Իվանենկոն ծախսում է իր միջոցներն ու ժամանակը : Ոժանդակող բյուրոն նրան խոստանում է դաղդյահի բոլոր գը-

Ծաղրութեանն ու նկարագրութեանն ուղարկել Ուկրաինայի գյուտարարական կոմիտեն և Լենինգրադի ծխախոտագործարանը: Բայց մինչև այժմ հայտնի չէ, թե ո՞ր են զծաղրութեանները:

«Յերբ մեզ մոտ մեքենավարը մի շոգեկառք հնարեց, — Ուկրաինայի գյուտարարներն համադրումարում պատմում և Չապարոֆյեյի պատգամավորը, — վոր տալիս և խոշոր խնայողութեան ամերիկականի համեմատութեամբ, նրան սասցին՝ «Իսկ դուք գիտե՞ք, վոր ամերիկյան «Կուպեր» Փիրմայի շոգեկառքից լավք լինել չի կարող»: Սակայն պարզվեց, վոր գյուտարարի առաջարկած շոգեկառքն ավելի կատարելագործված և, քան ամերիկյանը» («Եկանամիչեսկայա ժիդն»): Մեզանում դեռևս կան այնպիսի «ոֆանդակողներ», վորոնք մինչև այժմ չեն կարողանում պատկերացնել, վոր Խորհրդային Միութեան բանվորները կկարողանան ավելի լավ բան հնարել, քան ամերիկյան «Կուպեր» Փիրման: Յեվ, այնուամենայնիվ, մեր գյուտարարներին, հենց նրանց՝ ում հետ չեն ցանկանում խոսել մեր հիմնարկներում, վորոնք անվերջանալի և աննպատակ տառապում են մեր «տանջանքների բյուրոներում» (այսպես են անվանում գյուտարարութեանն ոֆանդակող բյուրոներին), մշտապես չըջապատում և հարց ու փորձ են անում արտասահմանյան Փիրմանների և ներկայացուցիչների գործակալները, վորոնք նրանց առաջարկում են վաճառել իրենց գյուտարարությունը հաղարավոր մարկերով, Փրանկներով և դոլլարներով:

ՉԱՐԻՔԸ ՄԻԱՅՆ ԲՅՈՒՐՈՎՐԱՏԻՋՄԻ ՄԵՁ ՉԵ

Սակայն գյուտարարութեան առաջ ընկած խոչընդոտների թրվին պետք և դասել նմանապես սլրոլետարիատի կուլտուրական ցածր մակարդակը և տեխնիկական յետամնացութեանը: Գյուտարար բանվորը, վոր ցանկանում և ոգնութեան ցույց տալ արտադրութեան, իր տեխնիկական անդրապիտութեան պատճառով կատարելապես անդոր և դառնում, յերբ դործը հասնում և հաշվեյուն և յերբ անհրաժեշտ և ձեվակերպել կամ զծաղրել մտածածը: Մեր գյուտարար բանվորները վորքա՞ն տառապանքներ են կրում գյուտարարութեան ոֆանդակող բյուրոներում և այնտեղ արհամարհական ու կաղտնի վերաբերմունքի հանդիպում դեպի իրենց գաղափարները՝ միայն այն պատճառով, վոր ամեն ինչ ճիշտ հաշված և զծված չէ:

Իսկ ի՞նչ նշանակութեանն ունեն իրավունքներն ու պատանա-

ները, վորոնք արվում են հազիվ թվարանութեան չորս դործողութեանների սահմաններում գիտելիք ունեցող կիսազրազեա գուտարարին: Գուրս և դալիս, վոր մենք լավ որենքներ ենք հրատարակում, բայց գյուտարարների մեծ մասը դրանց ոգտադործման համար անհրաժեշտ նախադրյալներ չունի: Կուլտուրական ցածր մակարդակը և տեխնիկական անդրապիտութեանը, վորպես մի ծանր բեռ, ընկած են գյուտարար բանվորների լինքնադործունեյութեան վրա: Գյուտարարութեանն ոֆանդակող և նպաստող բաղամաթիվ հանձնաժողովներ և տնտեսական մարմիններ բառացի հեղեղվում են գյուտարար բանվորների հայտարարութեաններով, վորոնցով բանվորները խնդրում են ողնել իրենց, ցուցումներ անել և առանձնապես զծաղրութեան կամ մոգել պատրաստել: «Ինքս իականագործ բանվոր լինելով, — դրում և Չաբայիայան յերկաթուղիներից ընկ. Վեդերնիկովը, — յես առիթ ունեցա կատարելագործելու կամ վերադասավորելու իմ արտադրութեանը և նախադիծ ներկայացնելու արտադրական հանձնաժողովին: Այնտեղից ահա, սկսում են բոլոր դժբախտութեանները. ներկայացնել զծաղրութեաններ, մատեմատիկական հաշիվներ և մի շարք այլ տեխնիկական պահանջներ: Բանվորների մեծ մասի, մանավանդ անդրազեա բանվորների մեջ այդպիսի աշխատանքից հետո գյուտարարութեան և իր արտադրութեանը բարելավելու ամեն մի ցանկութեան մեռնում և: Յեվ, յեթե ավելացնենք նաև տեղական կազմակերպութեանների բյուրոկրատիզմը (յես ինքս անձամբ իմ հրանարած սարքի հետ միասին զգացել եմ տառապանքի բոլոր սքանչելիքները կարիներից կարիներ), ապա, իհարկե, այդ բոլոր չոր բողունգներն առաջ չեն տանի գյուտարարութեան դործը»:

ԽՆԻՐՈՒՄ ԵՄ ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՐԱՍՏԵԼ

Ընկ. Ժիրնովը հին բանվոր և: Նա բաղմաթիվ մետաղագործարաններում կատարած արտադրական աշխատանքի 20-ամյա փորձ ունի: Նա մի ամբողջ շարք վարելիք գյուտեր ունի: Բայց ընկ. Ժիրնովը վոչ մի կրթութեան չի ստացել: Նրա և իր գյուտերի մասին դրվել և մեր մամուլում, բայց, չնայած գյուտարարութեան մասին յեղած որենքին, Ժիրնովը մինչև այժմ վոչ մի պատենտ չունի իր գյուտերից, թեև նրանց մասին ամենանպաստավոր զնահատութեան են տվել մասնագետները:

Գծաղրութեաններ չունենալու պատճառով նա բաղմաթիվ տարիներ շարունակ չի կարողանում պատենտ ստանալ իր գյու-

տերի համար: Վստրով 300 կըրումետր ճանապարհ կտրելով, հազարավոր միջոցներ հայթայթելով, ընկ. Ժիրնովը Պավլով-ժյեյի գերմանական հեռավոր հանրապետությունից հասնում է Մոսկվա: «Տեխնաստ» ընկերությունը գրած իր դիմումի մեջ, վորով խնդրում է տեխնիկական ոգնություն ցույց տալ իրեն, նա շրջում է. «Ոնդրում եմ ինձ տեխնիկական ոգնություն ցույց տալ: Յես պատրաստել եմ մի հիդրոտուրբին, վորն աշխատում է գետի հոսանքի ուժով: Բայց վորովհետև պահանջում են տուրբինի տեսական հաշիվներ, իսկ յես այդ կատարել չեմ կարող, ուստի խնդրում եմ ձեզ չմերժել իմ խնդրածը: Այս հայտարարությունս կցում եմ սխեմատիկ գծադրություն բանիմաց անձանց կողմից քննելու համար: Գծադրության վրա տուրբինի նշանակությունն օրին յեղբայրացություն են տվել յերկու մասնագետ ճարտարագետներ: 9 հունվարի 1929 թ.»:

Հետևյալ հայտարարությունը ստացվել է գյուտարարների ինտերգատու բյուրոյում № 5 ավտոգործարանի փրահանագործ, ԼԿՅՄ անդամ Ն. Յե. Լեպենկովից. «Մեր առաջ գրված՝ ԽՍՀՄ ավտոարդյունաբերության ուսցիտնալացման խնդրի առթիվ, յես, № 5 ավտոգործարանի բանվորս, վորոշեցի մասնակցել մեր արտադրության ուսցիտնալացման գործին՝ առաջարկելով արտադրության ուսցիտնալացման մի միջոց՝ այսինքն՝ 3 և 5 տոննանոց գոմկրատներ ավտոմեքենաների բարձրացման համար: Մեր գործարանին կից յեղած եքոպերտ հանձնաժողովը գրանք նպատակահարմար դատել մեր արդյունաբերության համար, բայց նա 3 ամսում չկարողացավ իրագործել՝ տեխնիկական ուժերի բացակայության պատճառով, քանի վոր գյուտը ղեռես կարոտ է կոնստրուկտիվ վերամշակության: Տեխնիկական կիսագրագիտության պատճառով յես ի վիճակի չեմ ինքս լուծելու այդ խնդիրը, ուստի հարկադրված եմ խնդրելու Մոսկվայի «Տեխնաստ» տեխնիկական կայանին ոժանդակելու ինձ կոնստրուկտիվ վերամշակության, այլ և աշխատանքային գծադրություններ կազմելու գործում, վորը խնդրում եմ չմերժել»:

Ամեն որ տասնյակ նման հայտարարություններ են ստանում «Տեխնաստը», նրա բաժանմունքները, լրագրերի խմբագրությունները, տեխնիկական ժուրնալները և այլն, տասնյակ հաղարավոր նախագծված և պատենտ ստացած արժեքավոր առաջարկություններ, վորոնք անտեսական խոշոր նշանակություն ունեն, ընկած

են գրասենյակներում, մեր պետական հիմնարկների և գյուտարարներին ոժանդակող մարմինների գործերի մեջ: Բայց տասնյակ և հարյուրավոր անգամ ավելի թանգարժեք գյուտեր անպտուղ քաղցրված են գյուտարար բանվորների գուլխներում և լույս տեսնել չեն կարող՝ նրանց տեխնիկական անգրագիտության և յեսամնացության պատճառով:

ԳԼՈՒԽ V

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅՈՒՆՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆՎՈՒՍՏՐԱՑՄԱՆ ԱՐԳԵԼԱԿՆ Ե

«Նայեցեք ՌՍՖՍՀ քարտեզին. Վալդդալայի հյուսիս, Ռաստվից դեպ հարավ-արելելք, Որենբուրգից և Ոմսկից հարավ, Տոմսկից հյուսիս ընկած են անընդհարկելի տարածություններ, վորոնց վրա կտեղավորվեյն տասնյակ հսկայական կուլտուրական պետություններ: Յեվ այդ բոլոր տարածությունների վրա թաղավորում է նահապետական կյանքը, կիսավայրենությունն ու ամենախիսկական վայրենությունը: Իսկ ամբողջ յետամնաց Ռուսաստանի գյուղացիական խուլ անկյուններում: Ամենուրեք, ուր տասնյակ կլումետրերով գյուղական ճանապարհները, ավելի ճիշտ՝ տասնյակ կլիկոմետրերով անձանապարհայնությունը անշատում է գյուղը յերկաթուղիներից, այսինքն՝ կուլտուրայի և կապիտալիզմի, խոշոր արդյունաբերության, մեծ քաղաքների հետ նյութական կապեր ստեղծելուց, — այդ վայրերում մի թե ամենուրեք նույնպես չի դերիշխում նահապետական կյանքը, արբոմովչինան, կիսավայրենությունը: Հնարավոր է արդյոք իրականացնել Ռուսաստանում գերիշխող այդ վիճակից անցումը դեպի սոցիալիզմ: Այս, հնարավոր է վորոշ սահմաններում, բայց միայն մի պայմանով, վորը մենք այժմ ստույգ գիտենք մեկ հսկայական և արդեն ավարտված դիտական աշխատանքի շնորհիվ: Այդ պայմանը ելեկտրիֆիկացիան է: Յեթե մենք կառուցենք տասնյակներով շրջապային ելեկտրոկայաններ (մենք այժմ գիտենք, թե գրանք վորտեղ կարելի յե և պետք է կառուցել), յեթե մենք գրանցից եներդրանցկացնենք ամեն մի գյուղ, յեթե մենք ձեռք բերենք բավարարանակալության ելեկտրոմատոներ և այլ մեքենաներ, այն ժողովուրդը նահապետականությունից դեպի սոցիալիզմ անցնելու մի

Չանկյալ աստիճաններէ կամ ողակներէ կարելք չի լինի կամ հասարկա կարելք չի լինի»:

Այս խոսքերը գրել Վ. Ի. Լենինը 1921 թ., նոր տնտեսական քաղաքականութիւնը մտցնելու նախորդակին: Այն ժամանակվանից բախականաչափ փոփոխութիւններ են առաջացել մեր դյուրի տնտեսութեան մեջ: Դեռ շատ առաջ չեր, յերբ հնադարյան արորը, հազվադէպս ղեպքերում գութանը հանդիսանում էր դյուրացիութեան հիմնական մասսայի գերիշխող դործիքը: Հոյը մեքենայով մշակում էին ցարական Ռուսաստանի միայն խոշոր կալվածատիրական հողամասերում: Այժմ նահապետականութեան, կիսավայրենութեան և վայրենութեան շրջաններն են մտցրված տասնյակ հազարավոր տրակտորներ, տրիկերներ, գութաններ և դյուրատնտեսական ամենարար մեքենաներ: «Մեզ մոտ գեուես բաղմահադար դյուրացիական տնտեսութիւններ զբաղվում են հին յետամնաց արտադրութեամբ, վորի համեմատութեամբ մեր սոցիալիստական խոշոր արդյունաբերութիւնը նմանում է ծովի մեջ զբաղվող կղզու» (Ստալին): Բայց մեզ մոտ քիչ չեն նաև խորհրտնտեսութիւններ և կոլտնտեսութիւններ, կոմունաներ և աշխարհի միջակ տնտեսութիւններ, վորոնց մեջ դյուրատնտեսական մեքենաները, տրակտորները, գութաններն ու քամհարները գութս են մղել արարին, տափանին և բրիչին:

Սակայն յեթե տեխնիկայի արադընթաց մուտքը ղեպի դյուր հանդիսանում է տեխնիկական վերափոխութեան մի կարելորագայլ լծակ, ապա դյուրացիութեան զարիւրելի անկույտութեան և տեխնիկական գիտելիքների լիակատար բացակայութեանը մի խոչընդոտ են հանդիսանում, վորը կանգնած է այդ վերափոխութեան հանապարհին: Դինամոմեքենայի, դյուրատնտեսական դործիքների տարածումը դյուրում առաջացնում է տեխնիկական գրազեւ, այդ մեքենաները գործադրել կարողացող մարդկանց անհատ ստիւլի պահանջ:

**ԻՆՉՈՒ ՊԱՅԹԵՅ ԼՈԿՈՄՈՒՐԻԼԸ ՅԵՎ ԻՆՉՈՒ ԱՆՊԵՏՔԱՅԱՆ
ՇԱՐՔԱՅԱՆԸ, ԿԱԼՍԻՉԸ ՅԵՎ ՏՐԻԵՐԸ**

Պետք է ընդունել, վոր ներկայումս դյուրում գտնվող տեխնիկական կարքերը բացարձակապես անբավարար են արդեն դյուրատնտեսական գործիքների սպասարկման համար: Բակ հետագայում դյուր տարվող զանազան անասի դյուրատնտեսական գործիքների և նրանց սպասարկող մարդկանց քանակի մի-

ջել յեղած տարբերութիւնն ավելի ու ավելի պետք է մեծանա: Ավելի ու ավելի հաճախ են պատահում այն դեպքերը, յերբ տասնյակ և հարյուրավոր դյուրատնտեսական մեքենաներ մատնվում են անգործութեան: Մի չնչին կոտրվածքի և վարայլալ կադրերի բացակայութեան պատճառով յերկար ժամանակով մի կողմ են նետվում քանգարժեք տրակտորը, տրիերը և այլն: Ահա մի տրեյնակ՝ բերված «Վեստնիկ կաշեգարա» ժուռնալում «1928 թ. ոգոստոսի 16-ի ցերեկվա ժամը 12-ին Միջին Դոնի ղալաուի Վասիլևկա խուտորում, յերբ պատրաստվում էլին կալսիչ մեքենան աշխատեցնելուց հետո մաքրելու, պայթեց լոկոմոբիլի շողեկաթան, վոր պատկանում էր քաղաքացիներ Գ. Յե. և Յե. Ն. Տրոֆիմենկոներին: Պայթումի ուժից կաթսայի կողը կալսիչից թռավ ճախ և 45° անկյուն կաղմեղով, ընկավ իր նախկին դիրքից 19 մետր հեռավորութեան վրա: Լոկոմոբիլի առաջին անիվը առաջամասի հեռմիասին ուղիղ դժով չարտված էր 25 մետր տարածութեան վրա: Յետեվի անվի սունին կալսիչի վրայից չարտված էր 45 մետր հեռու: Պայթումն առաջացել է կողքի ներքին պատի պայթումից:

Կաթսայի պայթելուց տուժել են 14 հոգի, վորից 3 մահացել են, 5 ծանր վիրավորված են և 6 այրվածքներ են ստացել: Վնասվածների մեջ կան նաև 6-11 տ. յերեխաներ: Բացի դրանից՝ պայթումից առաջացած հրեհը վոչնչացրել է 30 տնտեսութեան հացահատիկի դեղերը՝ մոտ 326 տոնն հացահատիկով:

Միջին Դոնի ղալաուի աշխտեսչութեան հեռագրութիւնը պարզել է, վոր «պայթելուն նպաստել է կաթսայատիրոջ և մեքենավարի անիւթի և հանցապարտ վերաբերմունքը շողեկաթսաների գործի զնելու և աշխատելու ժամանակ:

Կաթսաների սպասարկումը հանձնարարված է յեղել անիորձ և անորակ մարդկանց»:

Յերեք մարդկային կյանք, 5 ծանր վիրավոր, 326 տոնն հացահատիկ և խորհրդային ժողովրդական տնտեսութեան համար թանգարժեք և անհրաժեշտ լոկոմոբիլ, — ահա թե պետութեանն ինչ նասեց տեխնիկական կաղմի անգործութիւնն ու անորակ լինելը: Բրյանսկի նահանգի Նովի Սվետ դյուրացի Տալալայեվը «Բեդնատայի» 1927 թ. դեկտեմբերի 15-ի համարում գրում է.

«Մեր դյուրում կային վորոշ մեքենաներ՝ չարքացան, հնձող և այլն, բայց վորովհետև նրանց վրա չեյին հողում և չեյին կաքողանում վարվել նրանց հետ, մեքենաները փչացան: Չկար մի կաղմակերպութիւն, վորը հետեվեր մեքենաների վրա դյուրացի-

ների կատարած աշխատանքին» : Նման մի դեպքի մասին նույն համարում Դոնի գալժառից ընկ . Բարողկոն գրում է .

«Այս ամառ յես գյուղատնտեսից վարձով մի տրեկը վերցրի : Մեքենան նոր էր , բայց հացահատիկը չէր անցնում միջով : Իմանալով այդ մասին , գյուղատնտեսը յեկավ մեքենան կարգի բերելու : Մի ամբողջ օր նա աշխատեց , բայց մեքենան կարգի չբերվեց : Նա քանդեց մեքենան և հավաքեց , բայց տրեկերն , այնուամենայնիվ , չէր աշխատում : Այդ բոլորն առաջանում է նրանից , վոր մենք բոլորս , այդ թվում նաև գյուղատնտեսները , չգիտեցինք , թե ինչպես պետք է վարվել տրեկերի հետ : Մեր գյուղացիներից մեկը գնել է նոր սերգատ , վորը կարճ ժամանակամիջոցում սկսեց վատ աշխատել՝ քանդելն ու հավաքելը սխալ կատարելու պատճառով : Գյուղացին սկսեց շինել սերգատը , բայց այնպես շինեց , վոր սերգատն ամբողջովին հրաժարվեց աշխատելուց : Իսկ յեթե գյուղացին ծանոթ լիներ տեխնիկային , սերգատը չէր փչանա» :

Այլևի հետաքրքիր որինով է բերում կարմիր բանակային Մխարոֆանովը (Լենինգրադի նահանգ) . «Հայրս 50 ու . գնեց մի սերգատ և կարծում էր , թե դրանով միայն արածանը պետք է զբաղվել , և վոր այդ կարելի չէ անել նույնիսկ բոլորովին ծանոթ չլինելով սերգատի կազմության : Բայց ինչքան նա աշխատեց կաթ լցնել , ինչքան նա այս ու այն կողմ շուռ տվեց , այնուամենայնիվ , կաթը գտել չկարողացավ : Կանչեց դրացուն , վոր ավելի գիտեր այդ գործը , բայց նա յեյ այնքան կարողացավ անել , վորքան հայրս : Տեսնելով , վոր բան չի դուրս գալիս , հայրս սերգատը վաճառեց 30 ուրբով ավելի բանիմաց մի մարդու :

Նոր տիրոջ մոտ սերգատը հիանալի սկսեց աշխատել» :

«ՄԵՔԵՆԱՆ ՊԱՏՈՒՀԱՍ Ե»

Վերին աստիճանի ցայտուն մի դեպք , վորը բնորոշում է գյուղացիների , վորոնց թվում գյուղական գրագետները և նույնիսկ գյուղատնտեսների անգործությունը մեքենայի հանդեպ , չափազանց պատկերազարդ նկարագրված և Գոլյանսկի գյուղացիներու գալոցից թղթակցող Ց . Վինագրադսկու «Մեքենան պատուհաս է» հոդվածում :

«Աարապուլսկի շրջանի Մերդլյակի վոդրիկ գյուղը ողորտաբի վերջերին արտասովոր օրեր էր ապրում . հանդիսավոր կերպով

գյուղը բերվեց առաջին գյուղատնտեսական խմբական մեքենան՝ խառնարքի «Նովի խոնավ» կազմածը , վոր Լյուբեբեցկի գործարանի արտագրություն է և արժե 192 ու . : Մեքենայի պատճառով անհանցանի կոնտրակտացիան ուժեղացավ գյուղում :

Պատհարքի մեքենան բերեցին և դրին փողոցի մեջ , գյուղի տեխնիկական հեղինակավոր անձնավորություններից մեկի տան առաջ , վորը կարողանում էր բարեխիղճ կերպով ապակիներ ձգել պատուհաններին և հյուսնի վորոշ աշխատանք կատարել :

— Մտեպանը գլուխ ունեցող մարդ է . նա հնձի հարմարություններն էլ կլինի և մեքենան կտահի դաշտերով : Մեր կնանիքի գործն էլ կհեշտանա :

Մտեպանը բաց արեց մեքենան , ման յեկավ նրա շուրջը , թխկթխկացրեց , տասնյակ մանր մասեր շուռ տվեց , կարդաց մեքենայի սպրբելու մասին յեղած հրահանգը և անկեղծորեն հայտարարեց .

— Հրահանգն այնպես և դրած , վոր վոչինչ հասկանալ չե լինում : Մի մեղադրեք , յես մեքենաների վրա չեմ աշխատել : Ինձ աղատեք այդ պարտականությունից :

Անցավ յերեք օր : Փորձեր արին հեղի չափ գյուղական տեխնիկներ : Յեկ տմեն անգամ նրանց արածն այն էր լինում , վոր մասերը մի տեղից մյուսն է յին դնում :

Մերդլյակիները բռնեցին իրենց առաջավոր ընկերների ուձիքից .

— Իդնատից , դու կո՞մ յերիտական ես , ուզում ես միջոցը ճաքել , բայց մեքենան պետք է սարքես :

Իդնատին դիմում է գյուղխորհրդի նախագահ կուսակցական Մերդլյակովին .

— Դու մի բան արա , թե չես յես վոչինչ չեմ հասկանում ես աստանի մաշինից :

Անցավ մի ամբողջ շաբաթ : Մեքենան դուռևս կանգնած էր առաջին տեխնիկի դուռն առաջ : Մերդլյակովը տաքացավ .

— Մեղանից վո՞ր գյուղատնտեսական խմբակն է ամենամոտակի : Գո՞ւցե նա կողմի :

Կնանիքը յերեկոները դաշտից տուն վերադառնալիս ծիծաղում է յին մեքենայի վրա .

— Կանգնի՛ր հիմարի պես , քանի վոր հիմարների ձեռքն ես ընկել :

Մեքենան սարքել չկարողանալու պատճառով գյուղացիները

Արտադրական սրամիտներին և գյուտարար բանվորներին
հնարավորություն պետք է տրվի ոգտվելու դրանց բաղմաքանակ
կարիներտները, վորոնք դեռևս հիշեցնում են դադտնարաններ,
զանազան փորձեր կատարելու համար:

Մեր գիտական-հետազոտական ինստիտուտները պետք է սեր-
տորեն կապվեն գործարանային հասարակայնության հետ և ի-
րենց բոլոր նվաճումները, ինչպես և արտասահմանի փորձը իրենց
կարիներտներից տանեն դեպի աշխատավորության լայն մասսանե-
րը:

Տեխնիկական գիտելիքները տարածման հակադրական աշխա-
տանքները ժամանակ մշտապես պետք է նկատի ունենալ, վոր
«մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու պայմաններում մասսանե-
րը տեխնիկական լեզուն դառնում է քաղաքական լեզու, սլորե-
տարեխտի դասակարգային պայքարի և սոցիալիզմի շինարարու-
թյան լեզու: Ահա, թե ինչու «Տեխնիկական մասսաներին» պետք է
դառնա սլորետարական մարտական մի լողունը, վորը տիրապե-
տի մասսաների գիտակցութունը» («Պրավդայի» № 6-ի առաջ-
նորդը):

Վաստահորեն կարելի յե ասել, վոր հիշատակած ձեռնար-
կումները կիրառելով, մենք կկարողանանք մոտ ժամանակներս
յեռապատկել մեր յերկրի նյութական, կուլտուրական արժեքները
և ճարտ-տեխնիկական ուժերը ողտակարութունը: Մենք վոր-
պիսի արագությամբ կընթանայինք տեխնիկական յետամնացու-
թյան վերացման ուղիով, յեթե տեխնիկական գիտելիքների ճրգ-
տող միլիոնավոր աշխատավորների մեզ հաջողվեր սովորեցնել
բազմատեսակ ձեռքերով, մասնագետների դեկավարությանը: Այս
ինչը իրականացման ուղղությամբ պետք է դասավորվի «Տեխ-
մասս» ընկերության բոլոր բջիջները և բաժանմունքների ջանքերն
ու յեռանդը:

Իր գոյության կարճ ժամանակամիջոցում ընկերութունը
դեռևս չի կարողացել լիակատար չափով ճավարել աշխատանքնե-
րը բաղմաթիվ ասպարեզներում, բայց և այնպես, առանձին բնա-
գավառներում կան վորոշ նվաճումներ և արժեքավոր ձեռնար-
կումներ, վորոնց նկարագրությանն անցնում ենք այժմ:

«ՏԵԽՄԱՍՍԻ» ԽՈՐՀՐԴԱՏՈՒՍԵՂԵԿԱՏՈՒ ԱՇԽԱՏԱՆԻԸ

Մոսկվայի լրագրերի և գիտատեխնիկական ժուրնալների
խմբագրութունները, ժողովատուները և այլն ամեն ոք հակադա-
կան քանակությամբ նամակներ են ստանում խորհրդային Միու-
թյան անընդդրելիլ տարածության վրա փռված քաղաքներից,
գյուղերից և ծայրագավառներից: Նամակ են գրում բանվորները,
ինքնուս գյուղացիները, տնայնագործները, վորոնք ինքնաբերա-
բար ուսումնասիրում են մատեմատիկա, Ֆիզիկա, քիմիա և
տեխնիկայի բաղմատեսակ ճյուղեր: Գրում են գիտության և
տեխնիկայի նվաճումներով հետաքրքրվող բանվորներ և գյուղա-
ցիներ, վորոնք ցանկանում են այդ նվաճումները գործադրել ի-
րենց գործարաններում, կոլտնտեսութուններում, խորհրտնե-
սություններում և գյուղացիական տնտեսություններում: Նամակ-
ների այդ հեղեղն որեցոր աճում է:

Հաչվի ատներով այդ յերկրութը, «Տեխմասս» ընկերութուն-
ը կաղմակերպել և խորհրդատու-տեղեկատու բաժին, վորի նը-
շառտակն է տեխնիկական տեղեկանքներ տալ և տեխնիկական հե-
ռակա ոգնություն ցույց տալ ինքնուս բանվորներին և գյուղացի-
ներին, վորոնք հետաքրքրվում են տեխնիկայի առանձին հարցե-
րով և խորհուրդների ու ցուցումների կարիք ունեն:

Խորհրդատու-տեղեկատու բաժնի սլշակատում, վոր տարած-
ված է 20.000 որինակ, գրված է:

«Ընկեր, դու ցանկանո՞ւմ ես բարձրացնել ըս վորակը,
բարելավել արտագրութունը, բարձրացնել դաշտերի բեր-
քատությունը, թեթեւացնել ըս աշխատանքը, ապելի արտա-
դրողական դարձնել այն, ոգնել տեխնիկական գիտելիքներ
տարածելու աշխատավորության մեջ: Բայց հաճախ դու
տեխնիկական գիտելիքների կարիք ես գգում: Դու չգիտե՞ս,
թե վորտեղ կարելի յե ստանալ անհրաժեշտ խորհուրդներ:
Դիմիր «Տեխնիկական մասսաներին» ընկերության խորհրդ-
դատու-տեղեկատու բաժնին, վորը կարված է բարձրորակ
մասնագետների, ճարտարագետների, ազրոնոմների և գիտա-
կան աշխատավորների հետ:

Բաժինը պատասխաններ և տալիս բոլոր այն հարցերին, վեր վերաբերում են արտադրութեան տեխնիկային, գյուղատնտեսութեան տեխնիկային, տնայնագործութեան և տանք կատարելով աշխատանքներին, խորհուրդներ, թե վերջուց և ինչպես կարելի չէ ձեռք բերել տեխնիկական դիտելիքներ, ցուցումներ, թե ինչ կարգալ տեխնիկայի դանադան հարցերից: Այդ բոլոր հարցերին դու կստանաս ձրի, արագ և վրահատար պատասխան:

Ի պատասխան այդ պլանատի, խորհրդատու-տեղեկատու բաժինը բարձրագույն նամակներ և ստանում ամեն տեսակ հարցերի վերաբերյալ:

Ինչպե՞ս ընկալիմք ընկ. Նիկոլայիչը գրում է.

«Խնդրում եմ խորհուրդ տալ և տեղեկանք, թե յես ինչո՞ւ ինչպե՞ս չինեմ դեռեկտորով ռադիոընդունիչ, Ի՞նչ մասեր դնեմ նրա համար և Ի՞նչ պետք է ինչպե՞ս պատրաստել դանիական մոտեր անասունները համար և Ի՞նչ մեծութեան: Ինչպե՞ս չորացնել խոտը, վոր նա փոշոտ չլինի և պահպանել իր կանաչ դուրը: Մեզ մոտ կազմակերպվել է անկեղ նյութեր պատրաստող ընկերություն: Շինարարական աղյուսի համար ինչպիսի՞ ստանդարտ ձևեր ընդունել: Վորտեղի՞ց ճարել աղյուս կարող դադրյա՞ն և առաջին շրջանում ինչպե՞ս վարվել նրա հետ: Խնդրում եմ պարզ պատասխաններ տալ, թեկուզ դժադրութեամբ: Յես դժադրութեանը քիչ ծանոթ եմ»:

Ուշագրքով է Սիմֆերոպոլից, կոճակի արտադրութեան գործի ղեկավար ընկ. Ստարխուրսկուց ստացված նամակը: Նա գրում է.

«Խնդրում եմ ինձ մի ձեռնարկ ուղարկել՝ վստիկ կոճակների տնայնագործական արտադրությունը ճիշտ և ռացիոնալ կերպով վարելու համար: Յեթե դուք նյութեր ունեք այն մասին, թե ինչպես են կոճակ պատրաստում արտասահմանում և ինչպիսի դադրյա՞ններ ունեն նրանք, խնդրում եմ նկարագրել մանրամասն, վորպեսզի կարելի լինի կերտել մեր արտադրության մեջ, վերջինս ռացիոնալացնել և իջեցնել ինքնարժեքը: Այժմ մեզ մոտ աշխատում են 46 հողի և հարց է դրված մեր արտադրության ընդարձակման մասին: Յես ավելի ցանկություն ունեմ լիմնալու, թե ինչպե՞ս են պատրաստում սաղափե կոճակները, վորտեղի՞ց է հումք ստացվում և դրա համար Ի՞նչ դադրյա՞ններ են պետք, վորպեսզի մենք հիմնենք սաղափե կոճակների արտադրության ցեխ»:

«Տեխնիկայի» խորհրդատու-տեղեկատու բաժինը որակյան մի քանի տասնյակ նման նամակներ և ստանում արդյունաբերությունների և գյուղատնտեսությունների բազմազան ճյուղերի վերաբերյալ: Եստեղի մեջ միանգամայն բնականաբար հարց է ծագում, թե ընկերությունն արդյոք բավականաչափ ուժ ունի՞ պատասխանելու

հարցերի այդ տարաբնույթի: Պետք է խոստովանել, վոր այդ խնդիրը բնավ դյուրին չէ: Սակայն հաջող իրականացման դիմադրություն և հիմնական յերաշխիքը մասնագետների պատրաստակամությունն է ընդառաջելու այդ լուրջ ձեռնարկումին:

Յերբ «Տեխնիկան մասսաներին» ընկերությունն նախագահությունը մամուլի միջոցով դիմեց Մոսկվայի ճարտ.-տեխնիկական ուժերին, խնդրելով մասնակցել բաժնի աշխատանքներին, այդ կոչը նրանց մեջ լայն արձագանք դտավ:

Ճարտարագետ Պավլովիչը գրում է.

«Պրոլետարական լայն մասսաների համար դիտություն և տեխնիկայի հարցերի վերաբերյալ խորհրդատու-տեղեկատու աշխատանքի կազմակերպումն, անտարակույս, հատենացել է վաղուց: Յես կարծում եմ, վոր մեր ճարտ.-տեխնիկական դիտական ուժերն անսպասան աշխույժ մասնակցություն ցույց կտան այդ դադափարի իրականացման դործին: Ինչ վերաբերում է ինձ, յես կաշխատեմ հնարավորություն չափ մասնակցություն ցույց տալ այդ խորապես հետաքրքիր աշխատանքին»:

1929 թ. սկզբին ընկերություն խորհրդատու-տեղեկատու բաժինը 500-ից ավելի ճարտարագետից, տեխնիկից, ադրոնոմից և դիտական աշխատավորից համաձայնություն է ստացել մասնակցելու իր աշխատանքներին: Նրանցից յուրաքանչյուրը պատրաստակամություն է հայտնել իր մասնագիտություն վերաբերյալ ամսական տալու 1—2 պատասխան: Այդ հանդամանքը հնարավորություն է տալիս ամսական պատասխանելու մի քանի հազար հարցի: Ընկերությունը բարյացակամ վերաբերմունքի յես արժանանում նաև դիտահետազոտական ինստիտուտների և տեխնիկական կրթական հիմնարկների կողմից: Կաշեդործական ինստիտուտի ճարտ.-տեխնիկական սեկցիայի նախագահ ընկ. Սադեկիչը գրում է. «Խորհրդատու-տեղեկատու աշխատանքը հնարավորություն է տալիս դիտություն և տեխնիկայի նորությունները դուրս բերելու դործարանի, լաբորատորիայի նեղ սրատերից, դիտակայնի կարիներտից և տարածելու ամենուրեք, ուր գտնայվում է դրա պահանջը: Մեր դիտահետազոտական ինստիտուտի ճարտ.-տեխնիկական ուժերի ամենալայն համակրանքն ու ոժանդակությունը կաշխարհյունաբերությունն, սարահովված է: Մենք խոսքից դործի յենք անցել և մեզ մոտ կազմակերպել ենք հատուկ խորհրդատու բյուրո, վորը մշտապես պատրաստ է ամեն տեսակ պարզաբանություն, տեղեկանք, խորհուրդ տալու կաշխարհյունաբերություն հարցերի վերաբերյալ»: Բոլոր այն ինստիտուտներում և

տեխնիկական ԲՈՒՀ-երում, վորոնց հետ կապված է խորհրդա-
տու-տեղեկատու բաժինը, հիմնվում են նման բյուրոներ:

ԻՆՉ ԿՍՐԵԼԻ ՅԵ ԱՆԵԼ ՏԵՂԵՐՈՒՄ

«Տեխմաս» ընկերության ամենազբաղված անելիքներից մեկը
տեղերում բաժանմունքներ՝ նահանգական, մարզային, դավառա-
կան խորհրդակցություններ կազմակերպելն է, ուր բնակչություն-
նը կարողանա առաջին հերթին ուղղել իր հարցումները: Այդ նը-
պատակով պետք է լրիվ չափով ուսադարձել տեղական ճարտա-
բագետներին, տեխնիկներին, ազրոնոմներին, տեխնիկումները,
տեխնիկական ԲՈՒՀ-երը, կրթական հիմնարկները, կայանները:
Տեղական կոնսուլտացիաների կազմակերպումը, բացի մենտորնի
աշխատանքը թեթևալիցից, նաև այն նշանակություն ունի,
վոր տեղական բաժանմունքներին համար շատ ավելի հեշտ է իրենց
գործունեությունը հիմնել տեղական արդյունաբերական, գյու-
ղատնտեսական կամ տնայնագործական արտադրության բնորոշ
առանձնահատկությունների վրա: Չափազանց իրավացի չէ ընկ.
Ա. Գեորգիևիակին, յերբ «Աշխատիչ կրեստյանին» լրագրում հե-
տևյալ կերպ է պատճառաբանում տեղական խորհրդատու-տեղե-
կատու բյուրոները կազմակերպման անհրաժեշտությունը:

«Աշխատիչ դավառի բնակչության մեջ մեծ հետաքրքրություն է
նկատվում դեպի տնայնագործական քիմիա-տեխնիկական արդյունաբե-
րության խնդիրները: Վերջին քիմիայի դասատու, յես հաճախ արիթ եմ
ունենում դանդաղ ցուցումներ անելու տեղական տնայնագործ քիմիական
աշխատավորներին, իսկ ավելի հաճախ՝ քիմիայի սիրողներին: Այդ տնայ-
նագործներն ու քիմիայի սիրողները մեծ մասամբ դիմում են ոճառ յե-
փելու, ներկեր պատրաստելու, յերկաթե և պողպատե գործիքներ (հրա-
ցանների փողերը) դունավորելու, հայելներ արծաթապատելու, վռչ-
խարի մորթի դարձակելու, փայտը չոր թորելու, նյութերի շղախ պատ-
րաստելու և այլն: Հանդիպում են նաև տարրինակ հարցեր: Որինակ՝
ինչպես գտել ողին, ինչու թեյը սևանում է ողուց, սովորեցնել, թե ինչ-
պես կարելի չէ սասնալ մեծ քանակությամբ ծծմբաջրածին: Պարզվեց,
վոր այս վերջին՝ կարծես տարրինակ հարցի հեղինակը մատղաթյուն
է ունեցել ծծմբաջրածնով թունավորել ամբողջ լճի ձկներին և մեկ ան-
գամից վերստը բոլորը:

Մակայն, հարցերի հսկայական մեծամասնությունը միանգամայն
լուրջ է և արժանի յե ամենալուրջ ուշադրության:

Ինքնուրույն ճանաչման յե, վոր խորհրդատու բյուրոն չի կարող
իրեն նպատակ դնել պատասխանելու բացարձակապես բոլոր տեխնիկա-
կան հարցերին, վորով կրիմեն իրեն: Բազմաթիվ դեպքերում ավելի լուրջ

հարցերի լուծման համար հարկ կլինի դիմելու Նովոսիբիրսկ կամ Մոսկ-
վա «Տեխմաս» ընկերության:

Արժեքավոր բնույթ կունենա այն հանդամանքը, վոր մենք ճշարտ-
թյամբ կհայտարարենք բնակչության ունեցած պահանջները տեխնիկա-
կան ուղևության վերաբերյալ: Առանձնապես մեծ կլինի խորհրդատու բյու-
րոյի նշանակությունը ինքնուս դյուտարաներին ոժանդակելու դոր-
ծում, վորոնք մեզ մոտ, յերևի, քիչ չեն:

Առաջադրելով այս հարցը, յես հույս ունեմ, վոր դավառական ՊԱՋԸ-
Ավիաբիմը կընդառաջի Աշխատիչ դավառում այդ դործը կազմակերպելուն
և իր վրա կվերցնի ամբողջ կազմակերպչական աշխատանքը: Իսկ մասնա-
դեմները չեն հրաժարվի մասսաներին ոժանդակելու տեխնիկական ող-
ևությունները:

Ամբողջովին միանալով ընկ. Գեորգիևիակինի կարծիքին, մենք
առանձնապես շեշտում ենք նրա հողաձի այն մասը, ուր նա մատ-
նանշում է, թե նրանք այդ աշխատանքի համար ուժեր և միջոց-
ներ ունեն և վար մասնագետները չեն հրաժարվի իրենց ոժանդա-
կությունը ցույց տալու տեխնիկական ոգևորությամբ:

Այդ հանդամանքը կարելի է, վորովհետև ծայրագավառի
բազմաթիվ աշխատավորների մեջ այն կարծիքն է արմատացել, թե
լիկկայանները, խորհրդատու բյուրոները և այլ լավ բաները կարող
են հիմնվել միայն Մոսկվայում, Լենինգրադում և րնդիանրապես
մայրաքաղաքներում: Վոչ մի հիմք չունեցող այս կարծիքը պետք է
միանգամ ընդմիջտ հերքել, յեթե մենք լրջորեն մտածում ենք աշ-
խատանք ծավալել ամբողջ Միություն մեջ: Տեղերում հաճախ պա-
կաս նպատակավոր պայմաններ չեն լինում քան Մոսկվայում կամ Լե-
նինգրադում: Հարցը նրանց ողջադարձել կարողանալն է: Այդ միտքը
լավադույն կերպով հաստատվում է Սամարայի և Պենզայի յերկա-
թուղային արհեստանոցների ստորև հիշատակվող փորձով: «Տեխ-
մասի» յուրաքանչյուր բաժանմունք և տեխնիկական գիտելիքների
պրոպագանդայով զբաղվող մարմինները պետք է իրենց առաջ խըն-
դիր դնեն և հաջողությամբ լուծեն դավառական, նահանգական,
մարզային խորհրդակցություն կազմակերպելու մասին: Մենք ձեռ-
նարկություններում խորհրդակցություն հիմնելու հարցը չենք շո-
չափում այն պատճառով, վոր այդ հարցը շոչափված է «Տեխմաս-
սի» գործարանային բջիջի աշխատանքին նվիրված հատվածում:

Այդ խնդիրների լուծումը պայմաններ կստեղծի աշխատավոր-
ներին տեխնիկական տեղեկանքներով ոգնություն ցույց տալու հա-
մար և կդյուրացնի կենտրոնի աշխատանքը՝ ոգնելով նրան հանդի-
սանելու մեքսիկական դեկավար մարմին, իսկ կենտրոնական խոր-

հրդատու բաժնի անելիքն այն կլինի, վոր նա կպատասխանի միայն այն հարցումներին, վորոնց տեղական ուժերը չեն բավարարի: Տեղական ազգաբնակչութունը գրանով հնարավորություն կունենա տեխնիկական տեղեկանքներ ստանալու իր գործարանային, դավառական, նահանգական կամ մարզային խորհրդատու բյուրոյում:

ԳԼՈՒԽ III

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱՆ ԻՆՉՊԵՍ Ե ՈԳՆՈՒՄ ԳՅՈՒՏԱՐԱՐՆԵՐԻՆ

«Տեխմաստ» ընկերությունն իր հիմնական ուշադրությունը պետք է դարձնի պրոլետարիատի ամենաարժեքավոր շուկայի՝ արտադրական սրամիտների և գյուտարար բանվորների տեխնիկական պատրաստակալության բարձրացման վրա:

Ժողովոմխորհը և ԺՏԳԽ վորոշումներ են հանել 100-ից ավել ջանվոր ունեցող բոլոր մշտական ձեռնարկություններում, տրեստներում և սինդիկատներում եքսպերտ հանձնաժողովներ կազմելու մասին՝ ձեռնարկության կամ հիմնարկության ղեկավարի նախադասությամբ, վորոնք եքսպերտիզայի հետ միասին տեխնիկական և առարկայական ոգնություն պետք է ցույց տան գյուտարարներին (մոդելներ և դժադրությունների պատրաստումը, տեխնիկապես հիմնավորելը և այլն):

Միանգամայն կասկածից վեր է, վոր այս վորոշման կիրառումը բավականաչափ կնպաստի ավյալ պրոբլեմի արագ լուծման և կթեթեվացնի բազմաթիվ գյուտերի վիճակը: Պետք է ընդգծել, վոր ամբողջ պրոլետարական հասարակայնության ներգրավումը կարեւորագույն նախադրյալ կհանդիսանա կառավարության նախագծած ձեռնարկումների իրականացման և գյուտարարության պրոբլեմն ամբողջությամբ լուծելու համար: Յեթե վերջին տարում բյուրոկրատիզմի, անչարժության, անվութության, դժվար հաղթահարելի խոչընդոտների դեմ պայքարելու հարցերը, վորոնք ընկած են գյուտարարության ճանապարհին, իրենց վրա կենտրոնացրին հասարակայնության ուշադրությունն ընդգեմ իրենց, ապա նույնքան ուշադիր վերաբերմունք է պահանջում նաև ԽՍՀՄ աշխատավորների տեխնիկական ոգնության կազմակերպման գործը:

Նպատակ ունենալով իրականացնել ճիշտ նախագծված խրատները, իսկ յեղած փորձը դարձնել բոլոր բջիջների սեփականություն, համամիութենական «Տեխմաստ» ընկերության նախադասության կից կազմակերպվել է գյուտարարներին տեխնիկական ոգնություն ցույց տվող սեկցիա: Իր գոյության կարճատև շրջանում կատարած նրա կարեւոր ձեռնարկումն է գյուտարարներին ոգնող համամիութենական կոնսուլտացիայի կազմակերպումը, վոր նա իրականացրել է «Ռաբոչայա Գաղետայի» խմբագրության և բանվորների գյուտերն իրացնող կենտրոնական բյուրոյի հետ միասին: Կոնսուլտացիան ոգնություն է ցույց տալիս վոչ միայն Մոսկվայի, այլ և ուրիշ քաղաքների գյուտարարներին, նպաստելու յե նման կոնսուլտացիաների կազմակերպմանը տեղերում և ղեկավարելու յե նրանց աշխատանքը: Կոնսուլտացիոն աշխատանքի ներգրավված են ճարտարագետներ, տեխնիկներ և այլն: Նրանք բոլորն աշխատում են հասարակական գծով, և յուրաքանչյուրը կոնսուլտացիայի աշխատանքներին շաբաթական նվիրում է վոչ պակաս, քան մեկ յերեկո: Ճարտարագետներից և տեխնիկներից բացի, կոնսուլտացիային ներգրավված են Մոսկվայի ԲՈՒՀ-երի բարձր կուրսերի ուսանողները: Պետք է մատնանշել, վոր խորհրդատուները, մասնագետներն ու ուսանողները վերին աստիճանի բարեխելճ և լուրջ վերաբերմունք են ցույց տալիս այդ աշխատանքներին: Նրանց դիմող գյուտարար բանվորներն արժանանում են ամենաուշադիր վերաբերմունքի:

Կոնսուլտացիոն աշխատանքն արագ ծավալվեց այն պատճառով, վոր նրան ահտիվ մասնակցեցին «Տեխմաստ» ընկերությունը, «Ռաբոչայա Գաղետան» և ԽՍՀՄ ԺՏԳԽ կից բանվորների գյուտերն իրացնող կենտրոնական բյուրոն: «Ռաբոչայա Գաղետան» չենք հատկացրեց կոնսուլտացիային, նրա եջերում լուսաբանվում են գյուտարարության հարցերը և նրա միջոցով ամբողջ խորհրդային հասարակայնությունը պետք է ծանոթանա լավագույն գյուտարարներին: «Տեխմաստ» ընկերությունն աշխատանքի յե հրավիրում ճարտ-տեխնիկական ուժերին և մեր տեխնիկական ԲՈՒՀ-երի պրոլետարական ուսանողությանը: ԽՍՀՄ ԺՏԳԽ կից բանվորների գյուտերն իրացնող կենտրոնական բյուրոն կոնսուլտացիային հատկացրել է մի քանի հազար ռուբլի և միջոցներ է ձեռք առնում վորպեսզի գյուտերն արագ քննվեն եքսպերտիզայում:

Ներկայումս կոնսուլտացիայի առաջ դրված և արդեն իրականացվող խնդիրներից մեկն է անմիջական կենդանի կապ հաստատելը գյուտարար բանվորների խմբակների, գործարանների ճարտասանինիկական կոլեկտիվների, արտադրական տեխնիկական բազա ունեցող կրթական հիմնարկների՝ կարենեաների, լաբորատորիաների և դիտահետազոտական ինստիտուտների հետ:

Մոտ ժամանակներս կոնսուլտացիան Մոսկվայի ինդուստրիալ տեխնիկումներին և գործուսներին կից կազմակերպում է բաժանմունքներ, վերաբերյալ նրանցում հետո կենտրոնացնի համապատասխան սեկցիաների աշխատանքը:

Բանվորների վերաբերմունքը դեպի կոնսուլտացիան բնորոշելու համար հիշատակենք Պրեմենսկու մեխանիկական գործարանի բանվոր Ա. Ֆ. Կիրյանովի նամակը:

«Յես այսր «Ռաբոչայա Գաղետայում» դոհունակությամբ կարդացի, վոր մեզ մոտ կա հասարակական շտաբ, վորն ամեն կերպ նպաստում է բանվորական գյուտարարության: Ինձ անհրաժեշտ է ձեր ոգնությունը: Յես վաղուց անհաջողություններ եմ կրում անկեզ և քլորից ու թթվուտից չայրվող մեկուսիչի փորձերից: Մեր գործարանը պատրաստում է մեծ քանակությամբ ցինկած անոթներ, և հաճախ մեզ մոտ ցինկացնող վանաներն այրվում են: Յես առաջարկ մտցրեցի վաննայի ներսի պատերն այրվելուց մեկուսացնելու վերաբերյալ, բայց առայժմ անհաջողություն կրեցի՝ մասամբ անկեզ նյութի թուլության, մասամբ թթվուտների թուլության, մասամբ կոչնող նյութի մածուցիկ չլինելու պատճառով: Այս գործը մեծ և լուրջ գործ է: Վանաները տեղավորում են 16 տոննից ավելի ցինկ, յերբ վաննայի ներսում ձուլված մետաղի ջերմությունը հասնում է 800 աստիճանի: Ամեն 2 ամիսը մեկ անգամ բաժանված պատերից սկսում է հեղուկը հոսել, վաննաները շուտ են մաշվում և հսկայական քանակությամբ ցինկ անխանում է և ցնդում:

Ձեր ոգնությունն անհրաժեշտ է իմ սկսած գործում»:

Իսկ 19 տարեկան պատանի գյուտարար Կրավչուկը գրում է.

«Մասնագիտությամբ ելեկտրիկ, յես Ձեւյարինսկ քաղաքից յեկել եմ Մոսկվա՝ իրացնելու իմ մի քանի գյուտերը: Իմ գյուտերից մեկն է ավտոմատ ելեկտրոմեքենան կարգավորող՝ դեներատորի դուգասիոն աշխատանքի համար, վորը յենթարկվել է մի շարք տեխնիկական էքսպերտիզաների և ամենուրեք ստացել է նպաստալոր գնահատական: Գյուտիս իրականացման համար յես կարեք ունեմ մի քանի նկարների և լրացույչիչ գծադրությունների, վորոնք յես չեմ կարող պատրաստել, և այդ պատճառով խնդրում եմ ոգնել ինձ»:

Ընկ. Կրավչուկի համար արդեն գծադրություններ պատրաստված են և ուղարկված իրեն՝ ում հարկն է ներկայացնելու համար:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում ՌՍՖՍՀ ԺՏԳՍ կից

ճեկմասերի վերջի նախածնունդից: Ի տ մեջ մտնում է օճոն աշխատող տասնյակ խոշոր մասնագետներ և քաղաքից Մարշիկ տեխնիկական կադմից: ԲՆԸՆ իրեն կից կազմակերպել է գյուտարարների կոնսուլտացիա:

Իր աշխատանքների ընթացքում նա սկսել է կապ է հաստատել գյուտարարներին ողնող համամիութենական կոնսուլտացիայի և «Տեխմաս» ընկերության հետ, վորը նրա մոտ է ուղարկում առանձին գյուտարարների: Բացի դրանից, նա անմիջական կապ է հաստատել Ռազոտսկո-Սիմանովսկի ուսյունի «Տեխմասի» բՆԸՆ հետ: Կոնսուլտացիայի համար նա ուղարկործել է ԺՏԳՍ ողնությունը: Նրան ախտիվ մասնակցություն են ցույց տալիս ԺՏԳՍ ճարտարագետներն ու տեխնիկները: Նրանք կոնսուլտացիայի տրամադրության տակ են գրել իրենց գծադրական պիտույքները, և ԺՏԳՍ հասկացրած միջոցներով կազմակերպել են փոքրիկ գրադարան և ընթերցարան՝ մասնաշախկան տեխնիկական գրականությամբ: Կոնսուլտացիան իր գործունեյությունն սկսել է 1928 թ. վերջում: Չնայած իր գոյության կարճ շրջանին, նա բավականաչափ ոգնություն է ցույց տվել առանձին գյուտարարների՝ պատրաստելով պատկենտ ստանալու համար անհրաժեշտ գծադրություններ: Որինակ, բանվոր ընկ. Գրաչուկովի համար պատրաստված է սայլին հարմարեցրած արդեկակի գծադրություն, բնավոր Կլաուսյուսի համար՝ ավտոմոբիլի Փրիկցինն փոխանցման գծադրություն, իսկ ընկ. Ֆրաչենիոյի համար՝ տրամվայի ելեկտրական արդեկակի գծադրություն: Նույն կոնսուլտացիան լուրջ ոգնություն է ցույց տվել գյուտարար Ժիրնովին:

Բացի գյուտարարներին տեխնիկական ոգնություն ցույց տալուց, կոնսուլտացիան ոգնում է նաև մի շարք այլ հարցերում, վորոնցով բանվորները դիմում են նրան:

ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՅՑԵՒ ՏԵԿՆԻՐՈՒՄ

Տասնյակ գյուտարարներ, յերբեմն յերկար տարիներ տառապելով դավառական տնտեսական հիմնարկների ձեռքին, թողնում են իրենց աշխատանքը, ընտանիքը և դալիս Մոսկվա ողնություն ինդրելու, «արդարություն փորոնելու», իրենց գյուտերի իրացման համար: Վոչ միայն իսուլ անկյուններից, գյուղերից, այլ և արդյունաբերական կենտրոններից ամեն որ տասնյակ նամակներ

են ստացվում գյուտերի իրացմանն ուղնելու վերաբերյալ: Այն բնույթը բացատրվում է նրանով, վոր տեղերում միևնույն պետևս չեն հիմնված կազմակերպություններ, ուր գյուտարար բանվորներն և գյուղացիները կարողանան ստանալ անհրաժեշտ ոգևույթուն և ցուցումներ:

Յուրաքանչյուր գործարանում, ամեն մի գործուտի կից, վորոնց թիվը հազարից ավելի չէ, կարելի չէր սահղծել կայաններ, վորտեղ գյուտարար բանվորները կարողանան ստանալ իրենց անհրաժեշտ ոգևույթունն ու ցուցումները: Յուրաքանչյուր արդյունաբերական և կիսարդյունաբերական կենտրոնում կան բոլոր անհրաժեշտ տվյալները տեղական կոնսուլտացիաներ հիմնելու համար: Յուրաքանչյուր քիչ թե շատ խոշոր արդյունաբերական և գյուղատնտեսական կենտրոնում կան տեղական լրագրեր, կուսակցական արհեստակցական կազմակերպություններ, նահանգական, ժարգային և շրջանային տնտեսական կենտրոններ, տեխնիկոմներ, նույնիսկ ԲՈՒՀ-եր և այլ կրթական հիմնարկներ:

Անհրաժեշտ է ամենակարճ ժամանակամիջոցում յուրաքանչյուր նման կենտրոնում հիմնել կոնսուլտացիաներ Մոսկվայի որինակով:

Ինչու, որինակ, չմիանան պետական հասարակական և տնտեսական կազմակերպությունները՝ «Տեխնաստի» բաժանմունքները, նախագական կամ մարգային լրագրերը, ժողովուրդայինները, կոմյունիստական կազմակերպությունները և իրենց մոտ կոնսուլտացիա չհիմնեն: «Տեխնաստի» բաժանմունքները թող իրենց վրա վերցնեն մասնագետներին կոնսուլտացիայի աշխատանքներին ներգրավելու նախաձեռնությունը, տեղական լրագրերը լուսարանեն նրա աշխատանքի բոլոր հարցերը, տնտեսական մարմինները նյութական ոգևույթուն և սլաշտպանություն ցույց տան, ինչպես ԺՏԳԽ: Ահա այն բոլոր հիմունքները, վոր անհրաժեշտ են կոնսուլտացիա հիմնելու համար:

Մենք հարկ չենք համարում ավելի մանրամասն կանգ առնելու նահանգներում և մարդերում կոնսուլտացիաներ հիմնելու ժամանակ հանդիսող դետալների վրա:

Թող տեղական ընկերներն ուսումնասիրեն կոնսուլտացիա հիմնելու փորձն ըստ «Ռարոչայա Գազետայի» և Սամարյայի տեխնիկական կայանի: Միայն հիշեցնենք, վոր այն ընկերները, վորոնք հետաքրքրվում են այդ հարցով և մտադիր են վերակազմության

յնխարհիկ գործը, մշտապես կարող են սպասել պատասխաններ ստանալ բանվորական գյուտարարության համաժողովենական շտաբից (Москва, Тверская ул., д. № 8, редакция «Рабочей Газеты»):

ԳՆՈՒՆ IV

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ՊԵՏՔ Ե ԾԱՌԱՅԻ ՄԱՍՍԱՆԵՐԻՆ

ԻՐԵՆՑ ՅՈՒՂԻ ՄԵՋ ՏԱՊԱԿՎՈՒՄ ԵՆ

Խորհրդային բոլոր տիպի դպրոցների ելական թերութունն այն է, վոր նրանց ծրագրերը թույլ կապ ունեն արտադրության, յերկրի ինդուստրացման և ժողովրդական տնտեսության վերակառուցման խնդիրների հետ: Սրանք վերաբերվում են վոչ միայն Սոցդասի դպրոցներին, այլ և բարձրագույն ու միջնակարգ դպրոցներին: Այն միջոցները, վոր վերջին տարիներս ձեռք են առնվում ուսման ծրագրերն ու պլանները վերաքննելու համար՝ նպատակ ունենալով դրանք շաղկապել արտադրության հետ, մտցնել արտադրական անընդհատ պրակտիկա և այլն, մի մեծ քայլ են դեպի առաջ: Սակայն և այնպես նրանք դեռևս բավարար չեն վերացնելու համար այն խզումը, վոր գոյություն ունի մի կողմից արդյունաբերության և գյուղատնտեսության պահանջների, մյուս կողմից՝ նրանց համար կատարված տեխնիկական պատրաստությունների միջև: Դեռ մինչև այժմ ել մեր դպրոցների բնորոշ դիժն են հանդիսանում նրանց ավրոզ գործունեության մեթոդի կենտրոնացած բնույթը, շրջակա կյանքից կտրված լինելը և քաղկականաչափ կենդանի, անմիջական կապի բացակայությունն արտադրության հետ, վարի համար նրանք վերջին հաշվով պատրաստում են իրենց «արտադրանք»: Մեր բազմաքանակ միջնակարգ և բարձրագույն տեխնիկական դպրոցների հասարակական կազմակերպությունները սովորաբար տապալկվում են իրենց սեփական յուզի մեջ, իսկ պրոլետարական ուսանողություն իր հասարակական ամբողջ գործունեությունը կենտրոնացնում է կրթական հիմնարկի ներսում: Մեր տեխնիկական ԲՈՒՀ-երում և տեխնիկոմներում սովորում են յերեքից-չորս հազարական ուսանողներ: Նրանց 50-60 տոկոսը կուսակցական են և կոմյունիստական, 80-90 տոկոսն՝ արհմիության անդամ: Իսկ յեթե հարց տանք, թե նրանց վոր մասն է աշխատում տեխնիկական ԲՈՒՀ-երից դուրս, քանի ուսանող են դեկավարում

բանվորներն տեխնիկական դիտելիքների բարձրացման խմբակներն
և այլ կազմակերպությունները, կապուլի, վոր այդ թիվն անշուն
և բուսանողներն ընդհանուր քանակի հանդես: Մոսկվայի բարձ-
րագույն տեխնիկական դպրոցում, Մենդելեևի անվան ինստիտու-
տում, Մոսկվայի ճարտ-տեխն. ինստիտուտում, Վամանդովսկի ինս-
տիտուտում և Պրեխանովի անվան ժողովրդական տնտեսութան ինս-
տիտուտում սովորող ուսանողութունից դործարաններին, կցված
են փոքրաթիվ ուսանողներ և այն ել, սովորարար ընթացիկ քաղա-
քականութան խմբակների և կուսակցությունների ղեկավարութան
համար: Իսկ ուսանողութան մնացած մասը հասարակական աշ-
խատանք կատարում է ԲՈՒՀ-երի ներսում: Հարյուրավոր ուսա-
նողներ աշխատում են բազմաթիվ կամավոր ընկերութուննե-
րում, պրոֆիտներում, ախրեմիական հանձնաժողովներում:

Այն աշխատանքը, վոր հեշտութամբ կարող է կատարել
մեկ ուսանող, հանձնարարվում է տասնյակ ուսանողների, վորոնք
աննպատակ վառնում են իրենց ժամանակը: Կուսակցական, կոմ-
յերիտական, արհեստակցական կազմակերպությունների աշխա-
տանքների մեջ կազմադրեալ յերվույթ կարելի յե համարել տեխնի-
կական ԲՈՒՀ-երի ուսանողութան մասնաշաղկապ ամբաստան գոր-
ծարաններին՝ տեխնիկական կոնսուլտացիայի համար, յմբակ-
ներին՝ տեխնիկական անգրագիտութունը վերացնելու և բանվորի
տեխնիկական գիտելիքները հարստացնելու համար և գյուղատար-
ների յմբակներին և այլն: Դեռ այժմին՝ սովորարար դործարա-
նում պրակտիկայի մեջ դանվող տեխնիկական ԲՈՒՀ-երի ուսանող-
ներն իրենց հասարակական աշխատանքը կատարում են ԲՈՒՀ-ի
պատերի մեջ: Պրակտիկայի ծագից յելած ուսանողութունը դեռ
ևս կուռ շարքերով չի շարժվում ընդհանրապես բանվոր դասակար-
գի տեխնիկական բարձր կուլտուրա ձեռք բերելու յայն ալիքին:
Նմանապես հարվազեալ յերեվույթ է, վոր բանվորական ուսյոնում
դանվող տեխնիկական ԲՈՒՀ-ի կամ տեխնիկումի հասարակական
կազմակերպությունները պրոֆեսորներին կամ մանկավարժների
կալեկտիվի հետ միասին իրենց մոտ հիմնեն յերեկոյան տեխնիկում,
տեխնիկական դասընթացներ կամ յերեկոյան ինստիտուտ, տեխնի-
կական ԲՈՒՀ և այլն: Կրթական հիմնարկներին «Տեխմասի» բջիջ-
ների առաջ փուլած է դործունեյութան յայն ասպարեղ՝ ծախալե-
յու իրենց ստեղծագործական նախաձեռնութունն ու ինքնադոր-
ծունեյութունը ամեն ախղի և առաջին հերթին ինդուստրիալ կազ-

մակերպութունների մեջ: Այդ աշխատանքը կարող է ընթանալ
ամենաբարձրատեսակ ուղղութուններով:

ԻՆՁ ՊԵՏԳ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

Կրթական հիմնարկների մեջ «Տեխմասի» բջիջն աշխատում է
այսպես. նա կազմակերպում է դասախոսութուններ, գեկուցում-
ներ, եֆախարսխաներ, կինոսեանսներ, վորոնք ուսանողութան յայն
մասաններին ծանոթացնում են դիտութան և տեխնիկայի նորա-
գույն նվաճումներին՝ զանազան ասպարեղներից և առաջին հերթին
այն արտադրութունից, վորի համար ավայլ դպրոցը պատրաս-
տում է ապագա հրամանատարներ: Նա կազմակերպում է նաև դի-
տական-տեխնիկական և արտադրական զանազան խմբակներ՝
նվիրված ուսանողութանը հետաքրքրող առանձին հարցերի:
Անկասկած, առանձին ուշադրութուն պետք է նվիրել տեխնիկա-
կան խմբակների կազմակերպմանը, ուր ուսանողները մանկա-
վարժների, պրոֆեսորների, մասնաղետների, ինչպես և ձեռնար-
կութան մեջ աշխատող ճարտարադեմոստրի գեկուլարութամբ կա-
րողանան խորացնել իրենց դիտելիքները արդյունաբերութան այն
ճյուղի մեջ, վորի համար նրանք պատրաստվում են: Զախազանց
ցանկալի կլինեք եքսկուրսիաներ կազմակերպել դեպի դործա-
րանները և կապ հաստատել այնտեղի արտադրական խմբակների
հետ: Այսպիսի միջոցներն, անկասկած, կնպաստեն վերացնելու
այն բացը, վոր դայութուն ունի տեսական պարադոքսների և
արտադրական պրակտիկայի միջև:

«Տեխմասի» յուրաքանչյուր բջիջ կազմակերպվելուց և ձեա-
վորվելուց հետո կախածոկութուն պետք է վերցնել իր վրա կըր-
քական երմարկութան կից կազմակերպելու այն գործարանների
բանվորութան տեխնիկական անգրագիտութան վերացումն ու
տեխնիկական գիտելիքների հարստացումը, վորի հետ նրանք կապ-
ված են: Անկասկած, այդ աշխատանքների թիվն պետք է դասել
բանվորների համար դպրոցին կից յերեկոյան դասախոսութուն-
ներ կազմակերպելը, «Տեխմասի» դործարանային բջիջներին ու
ժանդակելը՝ դեպի դպրոցների կարիներներն ու լաբորատորիա-
ները կատարած նրանց եքսկուրսիաների ժամանակ, վորոչ որեր և
ժամեր տեխնիկական կոնսուլտացիա կազմակերպելը մոտակա դոր-
ծարանների բանվորներին դրականութամբ, դրադարաններով,
ընթերցարաններով ոգավելու հնարավորութուններ տրամադրելը,

տեխնիկական ԲՈՒՀ-երի և տեխնիկումների գիտա-տեխնիկական խմբակների և ձեռնարկությունների արտադրական խմբակների միջև կենդանի կապ հաստատելը: Բացի դրանից, «Տեխմասսի» բը- ջիջները տեխնիկական ոգնություն են ցույց տալիս գյուտարար բանվորներին՝ նրանց համար պատրաստելով դժադրություններ և ստանձին գյուտարարների հնարավորությունն ստելով աշխատելու կարինետներում և լաբորատորիաներում՝ մոդելներ պատրաստելու և նրանց վորձերը կատարելու համար: Իսկ ամենազյաավոր խըն- դերն այն են, վոր կրթական հիմնարկին կից կազմակերպվեն յերեկո- յան տեխնիկական դասընթացներ, տեխնիկումներ, տեխնիկական ԲՈՒՀ-եր, կիրակնորյա տեխնիկական համալսարաններ և այլն՝ հա- մապատասխան դպրոցի բնույթին և մասնագիտությանը: Մոսկվա- յում մի քանի տեխնիկական ԲՈՒՀ-երին կից արդեն գոյություն ունեն կիրակնորյա տեխնիկական համալսարաններ:

Իհարկե, յուրաքանչյուր նման ձեռնարկում պետք է խիստ համաձայնեցնել տեղական հնարավորություններին, բայց վոր այդ ձեռնարկումները կիրականանան, դրա վրա բնավ չպետք է կաս- կածել: Դրա մասին ամենացայտուն կերպով վկայում է Մոսկվայի ցերեկային տեխնիկումին կից (նույն լսարաններում, կարինետ- ներում, լաբորատորիաներում, արհեստանոցներում, ոգտա- դորձելով, նույն մանկավարժական կազմը) յերեկոյան տեքստիլ տեխնիկում կազմակերպելը Մոսկվայի տեքստիլ գործարանների յերիտասարդ բանվորության համար: Այդ յերեկոյան տեխնիկումի նպատակն է տեքստիլ արդյունարերության համար պատրաստել բարձրորակ վարպետներ ստանց կտրելու նրանց արտադրությու- նից:

Չի կարելի մոռացության տալ նաև Մենդելեյեվի ինստիտուտի հետաքրքիր նախաձեռնությունը: Նա իրեն կից կազմակերպել է կիրակնորյա համալսարան կրանայա-Պրեսնայի ուսյանի բանվոր- ների համար՝ նվիրված քիմիային, էլեկտրականությանը և մետա- դին: Պարապմունքները տեղի յեն ունենալու կիրակի օրերը ին- ստիտուտի լսարաններում և կարինետներում, իսկ գործնական պա- րապմունքների համար արամադրվելու յեն բոլոր կարինետներն ու լաբորատորիաները: Ինստիտուտի մանկավարժները, պրոֆեսոր- ներն ու ասպիրանտները դասախոսությունները կարգալու յեն ձրի: «Տեխմասսի» բջիջը, կիրակնորյա համալսարանը հնարավորության յապի կազմակերպված մարիյո համար, կապ է հաստատել յենի-

րության Մոսկվայի գործարանների բջիջների հետ: Գործարան- ներում «Տեխմասսի» անդամների և բանվորների ժողովներում զե- կուցումներ եյին արվում համալսարանի ինդիքների մասին և ար- ձանադրում սովորել յանկացողներին

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԿՑԵԼ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՆ

Կրթական հիմնարկների հասարակական կազմակերպություն- ների և «Տեխմասսի» բջիջների աշխատանքի կարևորագույն բաժին- ներից մեկն է ուսանակների մասսայական ամրացումը գործալան- ներին, վորպեսզի նրանք տեղական կազմակերպություններին ու- ժանդակեն ընդարձակելու բանվորների տեխնիկական գիտելիքնե- րը:

Հասկանալի յե, վոր այս դեպքում տեքստիլ գործարաններին պետք է կցվեն տեքստիլ ինստիտուտների և տեխնիկումների ուսա- նողները, էլեկտրոգործարաններին և էլեկտրոկայաններին՝ էլեկ- տրոտեխնիկական Փակուլետի ուսանողները, քիմիական գործա- րանին՝ քիմիական ինստիտուտների ուսանողները: Յուրաքանչյուր ձեռնարկության, «Տեխմասսի» յուրաքանչյուր գործարանային բը- ջիջի կարող է ամրացվել տեխնիկական ԲՈՒՀ-երի և տեխնիկումնե- րի «Տեխմասսի» անդամ կոմյերիտ-կուսակցական ուսանողների մի ամբողջ խմբակ: Նրանց հանձնարարվող հասարակական աշ- խատանքը վնջ մի դեպքում ավել չպիտի լինի տահմանված կուս- բեռնավորումից, բայց պետք է խստորեն վերոյ լինի նրանց մաս- նակցությունը տեխնիկական գիտելիքների ընդարձակման գործի դեկավարության մեջ (տեխնիկական կոնսուլտացիային, արտա- դրական խմբակներին, արտադրական կարինետներին ղեկավարելը, գյուտարարին, տեխնիկական կայանին ոգնություն ցույց տալը և այլն): Յուրաքանչյուր առանձին դեպքում ուսանողների դերը վորոշվում է իրենց կատարած աշխատանքի բարդությամբ և նը- րանց պատրաստակամության աստիճանով: Առանձին դեպքերում նրանք ինքնուրույն կերպով կարող են կոնսուլտացիաներում պա- տասխանել բանվորների հարցումներին, դժադրություն պատրաս- տել գյուտարար բանվորի համար, ղեկավարել այս կամ այն ար- ասդրական խմբակը, դասընթացը, կենցաղային տեխնիկան: Մյուս դեպքերում, յեթե պակասում են համապատասխան գիտելիքները, նրանք պետք է գտնան այդ կազմակերպություններում աշխատող ճարտարագետների ասիստետներ և ոգնականներ, ուսանողնե- րին մասնայորեն ամրացնելուց բացի, անհրաժեշտ է աշխատել,

մոռ նրանց բոլորը գործարաններում անընդհատ պրակտիկայի մեջ դասնախմբով, այնտեղ ստանան իրենց «հասարակական բեռնաբերումը» գերազանցապես բանվորների տեխնիկական գիտելիքների ընդարձակման գծով: «Տեխնաստի» բլիթի անելիքները մեջ են մտնում անընդհատ պրակտիկայի զննարդ ուսանողները ժողովներ կազմակերպելը նրանց «Տեխնաստի» աշխատանքի ձևերի և խնդիրների վերաբերյալ հրահանգներ ու նշումներ տալը, վոր հաջատարադոր և հահանդիշները և աղիտատորների կողմեր պատրաստելուն՝ հողուտ «Տեխնաստի» գաղափարները: Առանձին նշանակություն ունի կենսորոնից հետո ընկած գործարանները մեկնողների հետ կատարվող աշխատանքը: Այս տեսակետից բնորոշիական արժանի յե Մոսկվայի տեխնիկական դպրոցին կից «Տեխնաստի» բլիթի ցուցաբերած նախաձեռնությունը: Նա 1929 թ. սկզբին անընդհատ արտադրական պրակտիկայի մեկնող 400 ելեկտրիկ ուսանողների ժողովում զեկուցում և զերել «Տեխնաստի» անելիքները մասին: Ելիշը նրանց ավել և ընկերություն կանոնադրությունից և բազմաթիվ այլ նշումներ: Կարելի յե կարծել, վոր գրանից հետո մեր Միություն զանազան քաղաքների ձեռնարկություններն ընկած ուսանողների առանձին խմբերը գործնականապես նպաստել են «Տեխնաստի» բլիթների կազմակերպման և մասնակցել են նրանց աշխատանքին:

Հենց տեխնիկական դպրոցների ուսանողություն մեջ սաստիկ ձգտում և նկատվում աշխատելու բանվորների տեխնիկական անըրադիտություն վերացման և տեխնիկական գիտելիքների մակարդակի բարձրացման համար: Այդ ձգտումը կարելի յե և պետք և ոգտադրոծել:

«Տեխնաստի» վորոչ բլիթներ կատարելապես ճիշտ են ըմբռնում ընկերություն անելիքները: Իրա մասին վկայում և Սամարայի կնդուստրիալ տեխնիկումի բլիթի քարտուղար ընկ. Ռազայիվի նամակը:

«Մեր աշխատանքն սկսվեց 1928 թ. զեկտեմբերի 10-ին: Այդ բլիթի կազմակերպման նախաձեռնողն և յեղել պրոֆբյուրոն:

Առաջին հերթին հարց դրվեց 10 հողի առաջ քաշել հրահանգչական աշխատանքի, վորդեղեկ արտադրություն մեջ կազմակերպեն «Տեխնաստի» բլիթներ: Այդ կատարվեց. 10 հողի հրահանգչական աշխատանք սովորեցին: Նրանք այժմ աշխատում են արտադրություն մեջ և առայժմ դժվարություն չի և նկատվում նրանց գործում: Ամեն կիրակի հրահանգչները կոնֆերենցիա յեն գումարում, վորտեղ մտքերի վտխամահություն են կատարում իրենց աշխատանքի շուրջը: Յերը դժվար հարցեր են առաջանում, աշխատում են դրանք լուծել միասնաբար:

Հետո մեր բլիթը 4-րդ կուրսի մի ուսանողի նշանակեց գնադիր, վորպետել նա զեկավարի կազմի արտադրության զմադրական խմբակը: Մեկ ելեկտրիկ ընկեր առանձնացրինք, վորդեղեկ զեկավարի քաղաքի տեխնիկական տեխնիկական կայանը:

Ընդհանրապես մեր բլիթի նպատակն և մեր զխտելիքները նվիրել մասնակցին, վորի համար անհրաժեշտ և ուսանողներին ամբաջնել արտադրությունը՝ զեկավարելու այս կամ այն գիտատեխնիկական խմբակը: Յես զանում են, վոր դա ամենազլխավորն և:

Մեր աշխատանքներով չընդգրկված ուսանողների համար կրտսեր-քիմիայի պետք և կազմակերպենք զեղի արտադրություն, ծանոթացնելու նրա հետ: Հնարավորության դեպքում կողք և կազմակերպենք լաբորատորիաներ, կոնսուլտացիաներ, գիտատեխնիկական խմբակներ՝ այս կամ այն հարցը մանրամասն մշակելու համար: Մեր բլիթը մտադիր և ամատկան մեկ սնշում հրատարակել տեղեկատու մեր աշխատանքները վործի մասին, կազմակերպել զեկուցումներ, զատխոսություններ և մեր ուսանողների նախադեերի ըննարատություն:

ԳԻՏԱԿԱՆ ՄԵԼԻՈՐԱՏԻՎ ԽՄԲԱԿԻ ԱՇԽԱՏԱՆԻՐԸ

Այս խմբակը «Տեխնաստի» ընկերություն նախաձեռնությունը կազմակերպվել և 1928 թ. նոյեմբերի 20-ին և նպատակ ունի ուսումնասիրել մասնաշխատական զիտությունների զարնթացը կոլեկտիվ կերպով՝ իրենց իսկ ուսանողների զեկուցումներով: Բացի դրանից, խմբակի աշխատանքի ծրագրի մեջ են մտնում տեխնիկումին կից հիդրավլիկ լաբորատորիայի կազմակերպումն ու նրա հիմնելուն անմիջական մասնակցություն ցույց տալը: Խմբակն իր գործունեություն ընթացքում կատարել և հետևյալը.

1. Խմբակի 20 ժողովում ուսումնասիրել են չորացման դասընթացը պրոֆ. Կոստյակովի և Դուբալ-Սպարբի դասադրքերով:
2. Խմբակի ժողովներում ըննված են առաջինը ավարտած ընկերների, ինչպես և խմբակի անդամների ամենահետադրելի և ուսանելի աշխատանքները:
3. Զեռնարկված և լաբորատորիայի կազմակերպման տեխնիկումին կից: Այս նպատակով խմբակը կազմակերպել և և զեկուրսիա, վորի զլխավոր նպատակներից մեկն էր այդ գործի զրվածքը վորս առնել կենտրոնական, արդեն սարքավորված կրթական հիմնարկներից:

Ազգայի համար նախադժված հեռանկարները հետևյալն են.

1. Ժողովներում մանրամասն ըննել Մոսկվայում և Լենինգրադում և զեկուրսանանների ստացած տեղեկությունները:
2. Հիմք դնել հիդրավլիկ լաբորատորիայի կազմակերպման, այն հաշվով, վոր ստորին կուրսերի ընկերները կարողանան հաջողությամբ լաբորանակել նրա պատրաստումը»:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՅԵՎ «ՏԵԽՆԻԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻՆ»

ՄԵԶ ՊԵՏՔ Ե ՏԵԽՆԻԿԱՊԵՍ ԳՐԱԳԵՏ ՄԱՐՏԻՍԻ

Տարեց տարի մեծանում է տեխնիկայի դերը, վորպես մի ֆակտորի վորը բնորոշում է Բանվորաշրջակայան Կարմիր բանակի մարտական զորութիւնը: Վերահաս պատերազմում ուժերի գերակշռութիւնը խոշոր չափով վորոշվելու յե վոր միայն մարտիկների քանակով, այլ և ռազմատեխնիկական սպարազինման վարկով ու քանակով:

Իր ամբողջ մեծութեամբ ծառանում է տեխնիկայէս զրացեա կազմերի պատրաստման հարցը՝ սպասարկելու համար ժամանակակից բարդ թնդանոթները, մեքենաները, ռազմական ալտոարանսպորտը, ալիացիան, ռազմական նավատորմը: Այս հանգամանքը «Տեխնիկան մասսաներին» ընկերութեան առաջ դնում է կարգի բանակի լայն մասսաների մեջ տեխնիկական գիտելիքները տարածելու և մասսաներին ռազմական տեխնիկայի նորագույն նվաճումների հետ ծանոթացնելու խնդիրը: Այդ նպատակով «Տեխնիկան մասսաներին» ընկերութեան կից կազմված է ռազմական սեկցիա, վորի պարտականութիւնն է զորամասերում կազմակերպել «Տեխնիկան մասսաներին» - խմբակներ: Այդ խմբակների և բլիջների գործունէութեան հիմնական ձեւերն են դասախոսութիւնների կազմակերպումը կարմիր բանակային մասսաներին ռազմական տեխնիկայի գլխավոր նվաճումների հետ ծանոթացնելու համար: Գասախոսութիւններից բացի, կարմիր բանակայինների համար կարելի յե կազմակերպել բազմատեսակ հատուկ տեխնիկական ինքնագործունէութեան խմբակներ, վորոնք նպատակ ունենան բարձրացնել կարմիր բանակայինների տեխնիկական պատրաստութեան մակարդակը և ծանոթացնել ռազմական տեխնիկայի դասնայան, նրանց հետաքրքրող ճյուղերի՝ ալիացիայի, շրտանային գործի, լուսարձակների հետ և այլն:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԸ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՒՆԵՍՈՒՐԱՅԻ ԷՍՂՈՐԳԻԶ

Կարող են կազմակերպվել ընդհանուր տեխնիկական և այլ խմբակներ, վորոնք նպատակ դնեն բարձրացնել կարմիր բանակայինների ընդհանուր տեխնիկական մակարդակը և ուսումնասիրել առանձին հարցեր, վորոնց հետ նրանք աւրնչութիւն են ունեցել:

մինչեւ Կարմիր բանակ մանելը՝ գործարանային աուրյա կյանքում: Այդ հանգամանքը կարեւոր նշանակութիւն ունի այն տեսակետից, վոր վերջացնելով իրենց ծառայութիւնը Կարմիր բանակում, նրանք պետք է վերադառնան աշխատելու իրենց նախկին մասնագիտութեամբ: Կարմիր բանակում «Տեխնիկան մասսաներին» բլիջներին կից կարող են կազմակերպվել կենցաղային տեխնիկայի և այլ խմբակներ, ինչպես որ՝ կոնսուլտացիաներ և այլն: Բոլոր վերոհիշյալ կազմակերպութիւնները կարող են հիմնվել կարմիր բանակային աղումներին կից և զորամասերի շենքերում՝ պահպանելով կարմիր բանակում գոյութիւն ունեցող որեւէ բնու կանոնները:

Գյուղատնտեսութիւնը նոր տեխնիկայի հիման վրա վերակաուրցելու և յերկրի առաջ դրված բերքատվութեան բարձրացման հարցի կապակցութեամբ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել յերիտասարդ կարմիր բանակայինների և առանձնապէս արձակուրդավորների համար կազմակերպելու դանագան խմբակներ, վորտեղ ուսումնասիրվեն պարզ և բարդ գյուղատնտեսական մեքենաներ (արակտորներ, տրիեքներ, սերպաններ, շարքացաններ), այլ և յուրացվեն սպարտեխնիկական և գյուղատնտեսական տարական գիտելիքներ: Անհրաժեշտ է նրանց համար կազմակերպել նաև դասախոսութիւնների մի քանի ցիկլեր ազրոնոմիայից, գյուղատնտեսական տեխնիկայից և կուլտուրայից: Պետք է աշխատել, վոր յուրաքանչյուր յերիտասարդ գյուղացի կարմիր բանակային վարք վերադառնում է գյուղը, հանդիսանա «Տեխնիկան մասսաներին» ընկերութեան գաղափարների ազդեցութիւն և տեխնիկական կարողութեան կրողը դեպի գյուղ:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՆԱԽԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՄԵԶ

Մինչև այժմ մենք խոսում էյինք, «Տեխնիկան» կատարելիք աշխատանքների մասին Կարմիր բանակի զորամասերում: Այժմ պետք է նաև պարզել, թե ի՞նչ խնդիրներ են հարուցում «Տեխնիկան» ընկերութեան առաջ նախակոչիկները մեջ տեխնիկական գիտելիքներ տարածելու ասպարիզում:

«Ռազմական տեխնիկայի նորագույն նվաճումների հետեւանքով, — գրում է Ռազմամովային ժողկոմի տեղակալ ընկ. Ս. Կամենսկը, — հատուկ զորամասերի (ռազմական ալտոներ, հեռադրիչներ, սպարտներ, լուսարձակիչներ և այլն) տեսակարար կշիռը բավական մեծացել է: Չափազանց նպատակահարմար կլինէր նախակոչային պատրաստութեան ծրագրի մեջ ժողովել ունկնդիրներին այդ մասնագիտութիւնները սովորեցնելու ներկայումս այդպիսի մասնագիտական պատրաստութեան բացակայու-

Թյան պատճառով մեր հատուկ զորամասերը, հանձնի նորակազմերի, տասնուհին մի հուլիսի 1928 թ. վերջի կարգի և ընդունված սովորեցնելու բազմա- կան յերկար ժամանակ:

Հիշատակված նկատառումներով յես վողջունում եմ «Տեխնիկան մասսաներին» ընկերության նախաձեռնությունը: Ընկերությունը մտադիր և նախախոչիկներ համար կազմակերպել մասնագիտական կարճատև (3-4 ամսյա) դասընթացներ, նվիրված ավտոմոբիլիստներին, օդերիսին, հեռախոսին, լուսարձակման և այլն: Բազմաքանակում նման դասըն- թացները կլցվեն առաջին հերթին մեծազարգրած քանկորներով, վորոնք զործնականացնես ազգեն ծանոթ և մեծազարգրված, վակտնազործու- թյան, դարձնության և այլն:

Մասնանշնոր, վոր արտասահմանում, որինակ՝ Իտալիայում՝ նա- խախոչիկներ մասնագիտական պատրաստությունը վաղուց կիրառվում և նույնիսկ ուղղակի ավտոմոբիլի սովորեցնում, վորն ավելի բարդ և, քան իմ հիշատակած ճյուղերը սովորական զործում, և պահանջում և ավելի յերակարատելի ուսուցում: Մենք այս զործում յես չպեղծ և մը- նանք արտասահմանից: «Տեխնիկան» ընկերությունն անմիջապես նման դասընթացներ պետք և բանա 1928 թ. ծնված նախախոչիկներ համար:

«Տեխնիկան» ուղղակի անկցիան դրանց կազմակերպման վրա ուշադրություն և դարձրել իր գոյության առաջին խոչ որերից: Դեռ 1928 թ. հուլիսին Մոսկվայի ուղղակի նախախոչիկների դպրոցնե- րից մեկում կազմակերպվել է յին հեռախոսային հսկիչներին, էլեկ- տրատեխնիկներին, լուսարձակիչներին դասընթացներ: Դրանցից յուրաքանչյուրում միջին հաշվով պարապում է յին Մոսկվայի Արհմիտրհրդից զործուղված 25-30 հոգի:

Ելևկարտեխնիկներին և լուսարձակիչներին դասընթացները լրացվում է յին վիսիանազործական, տեխարի և նման այլ արտա- դրության մեջ աշխատող յերիտասարդ բանվորներով: Դրանց մեջ կուսակցականները կազմում է յին 65 տոկոս:

Պարապմունքները տեղի յեն ունենում № գումարտակի շեն- քում, և նրանց ղեկավարում են զորամասի հրամանատարներն ու դասախոսները: Ունկնդիրները հաճախում է յին 98 տոկոսով: Հե- ախոսային հսկիչների դասընթացներում պարապում է յին 28 հոգի, վորից 21 բանվոր, 12 կոմյերիտական, 3 կոմունիստ: Դե- կավարներին տեղեկություններով ունկնդիրները հաճախում է յին միանգամայն բավարար և ծրագիրը յուրացնում ինչպես հարկն է: Դասընթացները վերջացել են անցյալ տարի հոկտեմբերին: Փորձը ցույց տվեց, վոր նոր խոչոր հնարավորություններ կան կարմիր բանակի մասնագիտական զորամասերը լրացնելու նախախոչիկներին կազմակերպել, ինչպես և այդ նպատակով ողջազործելու ուղղա- տեխնիկական դպրոցները՝ նրանց շենքը. լարորսատրիայի սար-

բանվորում և մանկավարժական կազմը: Այստեղ մենք նախում ենք, վոր գոյություն ունի մի հետադրելի դուզորդություն բան- վոր յերիտասարդության մեջ տեխնիկական գիտելիքները հարը- տացնելու ամող ձևուման և կարմիր բանակի մասնագիտական զո- րամասերը մտնելու ցանկության հետ: Թե վորքան մեծ նշանակու- թյուն և արվում նախախոչիկներին այդ դասընթացներին, կարելի յե իմանալ Ռազմածոյային ժողկոմ ընկ. Վարաչիլովի 1928 թ. ո- դոստոսի 20-ի № 265 հրամանից՝ «Մասնագիտական զորամասե- րը «Տեխնիկան» դասընթացներն ավարտած նախախոչիկներով հա- մարման մասին»:

Ահաբանելու և, վոր՝ «Տեխնիկան» յուրաքանչյուր բաժանմունք մոտ ժամա ակներս հատուկ ուշադրություն նվիրի աշխատանքի այդ բնագավառին: Դասընթացներին կազմակերպման համար պետք և ըստ համաձայնության ողջազործել ամեն մի ուղղակի նշա- նում յեղած ուղղատեխնիկական դպրոցները, տեխնիկական դպ- րոցներն ու զործուսնիքը:

ԳԼՈՒԿ VI

ԺՏԳԻՆ ԳԻՏԱՏԵՆԻԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՐԱԳԱՐԱ- ՆԻՆ ԿԻՑ «ՏԵՆՄԱՍՍ» ԿԱՔԻՆԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ
1. ԿԱՔԻՆԵՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ԺՏԳԻՆ գիտատեխնիկական վարչության զբաղարանին կից տեխնիկական հանրամատչելի գրականության հատուկ բաժին կազմակերպելու միտքը հարուցվել է դեռ 1927 թ. վերջում: Գըը- քերի հավաքումը սկսվեց՝ դեռ վորոշակի պատկերացում չունենա- լով այդ բաժնի կատարելիք աշխատանքների յնույթի մասին: Զիշտ այդ ժամանակները հարց առաջացավ գիտատեխնիկական գրադարանի վրակման վերաբերյալ: Ընթերցողների ակտիվը պաշտ- պանում էր զբաղարանի պահպանման տեսակետը: Նրա զործու- նեցության զարգացման և ընդարձակման համար կազմվեց գրա- դարանին սփանդակող խորհուրդ: Հետագայում միտք առաջացավ կազմակերպել հանրամատչելի գրականության բաժին և գրադա- րանին կից հիմնել բանվորների շարքային մասոյայի մեջ տեխնի- կական գիտելիքների տարածման նպատակով կենտրոն: Բայց այս միտքը շատ թույլ էր իրագործվում մինչև վ այն ժամանակ, յերբ գրադարանի նոր վարիչ նշանակվեց, վորի գլխավոր ֆունկցիա- ներից մեկն էր «Տեխնիկան» ընկերության աշխատանքներին նպա- տելը: Այդ ժամանակից սկսվեց լեկումը: «Տեխնիկան» հատկաց-

վում և հատուկ չենք, ԺՏԳԽ գիտատեխնիկական վարչությունը սորամադրում և միջոցներ, հրավիրվում են «Տեխնաստի» բջիջի կազմակերպչական ժողովներ, վորին մասնակցում են բոլոր աշխատել ցանկացողները: Այդ ժողովում նշվում և գործունեությունը ընդհանուր բնույթը: Ներկայում գրադարանի հանրամատչելի բաժինը, վոր վերանվանված և «Տեխնաստի» կաբինետ, տնի ընդարձակ րնթերցարան, մոտ 2000 գտնադաս անուն գրքեր, դժադրական սեղաններ և պիտույքներ: Կազմակերպչական հասարակական խմբակը աշխատանքի պրոցեսում անմիջականորեն կապ և ստեղծել նաև Բաումանի ուսյունի «Տեխնաստի» կաբինետի, ապա Մոսկվայի բաժանմունքի հետ հանդիսանալով «Տեխնաստ» ընկերություն ընդհանուր աշխատանքի հիմնական տարրերից մեկը:

2. ԿԱՔԻՆԵՏԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Կաբինետի կազմակերպչները նրա անելիքները պատկերացնում են այսպես.

- ա) Ունել բանվոր ընթերցողներին տեխնիկական գրականությանից ոգտվելու համար ընտրություն կատարելու:
- բ) Ոժանդակել տեխնիկական հանրամատչելի գրքերի հրատարակման գործի զարգացմանն ու բարելավմանը:
- գ) Ոժանդակել գյուտարար բանվորներին:
- դ) Ոժանդակել աշխատանքի ընթացքում առաջացող արտադրական—տեխնիկական այն կամ այն հարցերի լուծմանը:
- ե) Ստեղծել կուլեկտոր՝ ձեռնարկություններին կից գրադարանների սպասարկման համար և հիմնել այդպիսի գրադարաններ:
- զ) Հրատարակել տեխնիկական հանրամատչելի գրականություն գրախոսական ուղեցույց բա նրանց մատչելիության ատիճանի:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Նախագծված նպատակների իրականացման համար կաբինետին կից կազմակերպված և կոնսուլտացիա՝ տեխնիկայի առանձին ճյուղերի մասնագետներից, վորոնք ոժանդակում են պարզարանելու ամեն տեսակ գործնական և տեխնիկական հարցեր, նպատում են դժադրություններ պատրաստելուն և խորհուրդներ են տալիս գյուտարարներին: Բացի դրանից, նրանք մատնացույց են տնում անհրաժեշտ գրականությունը և ոգնում նրա ոգտադործմանը:

Հետագայում նախատեսվում և կաբինետին կից կազմակերպել

գիտկուսին բնույթի պարբերական գրույցներ այն կամ այն հրատապ խնդրի շուրջը՝ ներգրավելով հեղինակներին և համապատասխան մասնագիտություն բանվոր ընթերցողներին: Այդ հանդամանքը կոբնի հայտարարելու այն պահանջները, վոր առաջադրվում և մասսայական տեխնիկական գրքին: Ապա նախատեսվում և տեխնիկական հանրամատչելի գրականություն կազմելու և թարգմանելու գործին մասնակից անել համապատասխան անձանց, վորի համար անհրաժեշտ և սերտ կապ ստեղծել հրատարակչությունների հետ: Հանրամատչելի դասախոսություններ կազմակերպելը կհանդիսանա կաբինետի աշխատանքի մի այլ բաժինը:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ԶԵՎԵՐԸ

(Դեռ վերջնականապես չեն հաստատված)

Նախագծված նպատակներին հասնելու համար կաբինետը աշխատանքի յե հրավիրում պիտիվ աշխատավորներ բարձր կուրսերի ուսանողություն միջից և ճարտ—տեխնիկական կադրերից, ինչպես և շահադրգոված հիմնարկների ներկայացուցիչներ: Կաբինետի կազմակերպումը հանդիսանալով «Տեխնաստի» ուսյունական բաժանմունքի աշխատանքների հիմնական տարրը, կաբինետի աշխատանքներին մասնակցելու և ղեկավարելու համար կարիք ունի շահադրգոված հիմնարկների ներկայացուցիչների: Այդ նպատակով կաբինետին կից հիմնվում և խորհուրդ, վորի մեջ մտնում են բյուրոյի անդամներն ու կաբինետի խորհրդատուները, «Տեխնաստի» համաժիտությունական, Մոսկվայի և ուսյունական բաժանմունքների ներկայացուցիչները, արհեստակցական կազմակերպությունների կուլտրաժինների և առանձին խոշոր ձեռնարկությունների ներկայացուցիչները: Ընթացիկ աշխատանքը կատարում և կաբինետի բյուրոն, կազմված 5 հոգուց, վորին բնտրում և նրա աշխատավորների ընդհանուր ժողովը: Այնուհետև բյուրոյի մեջ մտցվում և Բաումանի ուսյունի «Տեխնաստի» կոմիտեյի ներկայացուցիչը և գրադարանի վարիչը:

ՆՄՈՒՇՆԵՐ ԳՐԱՌԱՐԱՆԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՃԱՆՈՐԳՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՑ

1. Մանյոր ընկ. Կ. հնարել և հեռախոսի ելեկտրական զանգի նոր կոնստրուկցիա: Նա խնդրում և հնարավորություն տալ իրեն դժադրելու զանգը և պարզաբանել տեսական կոդը, թե ինչպես և աշխատում իր զանգը հնի համեմատությամբ:
2. Ընկ. Կ. Ելեկտրոմագնիսային կոնը հարմարեցրել և լուսանկարչական հարմարեցրած մեկ ապարատի՝ ավտոմատ գործողություն համար, բայց այդ կոնը բաղաբաշին ցանցի հետ միանալիս լույսը թարթում և և

կոնք աշխատեալ: նա խնդրում և՛ սպիկ կոնքի չտիր, Վեկալեբրաբել նրա կոնք-
ատրուկիան և հնաբաղնուրութուն տալ պատարաստելու:

Այդ սղնությունը նրան ցույց է տրված:

3. Բանվոր ընկ. 9. ստիտում և գործարանին կից կելիտրոսեինիկա-
կան խմբակում և խնդրում և պարզել իրեն, թե ինչպես և փոխվում հո-
տանքի ուժը էլեկտրական շարժանքի մեջ՝ յերբ ուժեղանում և ճյուղերից
մեկի դիմադրութունը, պարզալայանել այդ իրեն մեխանիկայից վերցրած
անալոգիայով:

4. Ճիշտ մեխանիկայի արևտի բանվոր և՛ փոխադրված և ամփոփման
ցեխը: նա խնդրում և մասնանշել դրահանութուն՝ ճիշտ ապարատ շինե-
լու զեպում մասերն իրար միացնելու վերադրելով:

5. Բն. Բ. սղնուրում և գործարանում, չի հասկանում մի բանի Ֆի-
զիկական նշաններ և խնդրում և պարզարանել:

6. Գործարանային մի խմբակ խնդրում և կազմել հանրամատչելի դրա-
կոնության ցուցակ՝ համաձայն իր նպատակի:

ՊԼՈՒԽ VII

ՀԱՆՈՒՆ ՄԱՍՍԱԸՅԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՍԿԱՆ ԿՐԹԻ
ԻՆՁ ՊԱՀԱՆՁՆԵՐ ՈՒՆԵՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

Վերջին տարիներս մենք նկատելի առաջընթացություն ենք
նկատում տեխնիկոսների, տեխնիկական ԲՈՒՆ-երի, ԲՈՒՆ-երի, ա-
ռաջի և յերկրորդ աստիճանի գալուցների, կուսակցությունների և այլ
կրթական միավորների համար գրքեր հրատարակելու մեջ: Թող
վայր հրատարակվող գրահանության վորակը բազմաթիվ դեպքե-
րում վատ է, բայց այդ գալուցների բոլոր ունկնդիրներն այս կամ
այն շահով առահանված են անհրաժեշտ ձեռնարկներով: Չափա-
զանց վատ և սլիմիտիվ արտադրական խմբակներում սովորող
հարյուր հազարավոր բանվորներին մասսայական տեխնիկական
գրքեր հայթայթելու դործը, բանվորներ, վորոնք ցանկանում են
բարձրացնել իրենց վորակը, վորոնք արտադրական խորհրդակ-
ցությունների ակտիվ մասնակցող են և գյուտարարներ: Ահա բան-
վորների այս բազմաքանակ և անընդհատ աճող նոր կազմերը,
վորոնք ծնունդ են անկոնսարուկցիայի շրջանի, սիտում են ավելի
ու ավելի համառ պահանջ ներկայացնել համրամատչելի տեխնի-
կական գրքի, վորը պարզ լինի և մատչելի կիսադրագետ մարդ-
կանց, այնպիսի գրքի, վորը ոժանդակի ըմբռնելու արտադրական
աշխատանքը, բարձրացնելու վորակը և հասկանալու խմբակնե-
րում չաչափվող հարցերը: Այդ են վկայում արդյունադրության
զեանոցան հյուսիսի բանվորներից «Տեխնաս» ընկերությունը, տեխ-

Նիկական հրատարակչությունների և ժուրնալների առաջած
նամակները:

Վլադիմիրսկի նահանգի Հոկտեմբերի 5-ի անվան տեքստիլ գոր-
ծարանի բանվոր ընկ. Վ. Սաֆոնովը գրում և «Տեխնաս» ըն-
կերություն:

«Յես աշխատում եմ փորագրման բաժանմունքում, վերջես փորա-
գրման զլաններ գլորող և այդ արհեստով զբաղվում եմ 6 տարի, բայց
դեռևս ծանոթ չեմ, ավելի ճիշտ՝ չեմ գտել տեսական մի դիրք այս պը-
րոֆեսիայի վերաբերյալ: Այս արհեստը յես սովորել եմ 4 տարի մի հին
մասնագետի մոտ: Յես կարծում եմ, վոր յեթե այս արհեստի վերաբեր-
յալ վորեև տեսություն կամ դիրք լիներ, այն ժամանակ կարելի կլիներ
սովորել 1 կամ 1½ տարում, և վոր թե 4-5 տարում, ինչպես այժմ սո-
վորում եմ մեր յերետասարդությունը: Յե՛վ ահա, յե՛նելով այս նկատա-
ռումներեց, խնդրում եմ «Տեխնաս» ընկերության դասել ինձ համար
այդ տեսությունը կամ վորեև աշխատություն այդ արհեստի վերաբեր-
յալ»:

Կոնալի գործարանի բանվոր ընկ. Գլապերինը գրում է «Տեխ-
նաս» ընկերություն:

«Շատ եմ խնդրում ձեզ մի լավ դիրք հանձնարարել ինձ, վորը վե-
րաբերի կոնալի արտադրության՝ նրա բոլոր տեսակներով (կոնոսե կո-
նալներ կամ յեթե այդպիսիները չկան, ապա ուրիշները): Յես շատ դրա-
դարաններում եմ հարցրել, բայց վոր մի տեղ նման դիրք չկա: Յեթե
կա մի դիրք, վորը բազմակողմանի կամ մասամբ լուսարանում է այդ
արտադրությունը, շատ եմ խնդրում հայտնել ինձ»:

Հանրամատչելի արտադրական—տեխնիկական գրքի առանձ-
նապես խիստ պահանջ է իկատվում մետաղագործ բանվոր-
ների մեջ:

Լենինգրադի № 4 գործարանի բանվոր ընկ. Սեմյոնովը իրա-
վացի կերպով նկատում է.

«Մեր հրատարակչությունը մոռանում է սակավորակ մետաղա-
գործները՝ դադարակի վրա աշխատողների, դանդուների, կտրիչների
մասին և այլն, մինչդեռ մետաղագրյունարեական բազմաթիվ ձեռնար-
կություններում դրանք բանվորների մեջ զերակուշ թիվ են կազմում:
Բայց սկսածի դիրք չկա: Այդ պատճառով անհրաժեշտ է տոկարի, Փրե-
զերի և ունդելու դադարակների աշխատանքը լուսարանող գրքերից բա-
ցի տալ նաև այնպիսի գրքեր, վորոնք պարզ և հստակ լուսարանեն Փա-
սոնատոկարային և ասրճանակի դադարակները, կիսավտոմատներն ու
ավտոմատները: Թող դիրքը բացատրի շլինդերի և սուպրոտի նշանակու-
թյունը, նրանց անճառությունը, ճախարականվի ընտրությունը, ինչ-
պես կոն և սրել փորիչները, ինչ գործիքի հետ գործ ունի դադարակի
բանվորը և ինչպես աշխատեցնել դրանք: Նման հարցեր լուսարանող գրքի
նշանակություն ուժեղանում է նրանով, վոր մեր ձեռնարկություններում

բանվորների մշտական կազմեր շինան: Այդպիսի գիրքը կոթանդակի մի շարք մետաղադործների խորապես ճանաչելու իրենց աշխատանքը և ամբողջ արտադրությունը, կատեղծի անհրաժեշտ անցման մի աստիճան բանվորների բավականաչափ խավերի վորակի բարձրացման գործում»:

Գյուղատնտեսություն ինդուստրիայի և ունեցողության մեղմանը մասնավորապես հետևելու գրանց սպասարկող տեխնիկական կադրի մեջ մենք սաստիկ պահանջ ենք նկատում այնպիսի գրքերի, վորոնք ողջեն գեկավարելու արակառքը, արիերը, լոկոմոբիլը և այլ բարդ մեքենաներ ու գործիքներ:

«Յես ուղիտյով լսեցի,—գրում է ընկ. Պոտաշինը՝ Սմոլենսկի Գրիգորովի գյուղից,—ձեր «Տեխնաս» ընկերության առաջարկը, թե դուք կպատասխանեք տեխնիկայի վերաբերյալ բոլոր հարցերին: Այդ պատճառով խնդրում ինձ խորհուրդ տալ: Յես արդեն 4 տարի յե աշխատում եմ, վորպես մեխանիկ նավթային յերկձիգ ներքին այրման շարժիչների վրա: Բայց յես տառապում եմ այն բանից, վոր չգիտեմ տեսությունը, մեխանիկայի մեջ պահանջվող մատեմատիկական ֆորմուլները, և ընդհանրապես հեռու յեմ տեսությունից: Շատ լավ կլինեք լուսավորել միտքը դրանց վերաբերող տեսական գիտելիքներով: Բայց յես արդում և աշխատում եմ գյուղում և չգիտեմ, թե ինչից և ինչպես սկսեմ, ինչ գրականություն պետք է ձեռք բերել, ինչ ժուրնալներ ստանալ, վորպեսզի գիտելիքներ քաղեմ, հաստատեմ ու բարձրացնեմ իմ վորակը, վորպես մեխանիկ»:

Ույազանի նահանգի Շերեմետյեվո գյուղից ընկ. Անտոնովը գրում է «Տեխնասին»:

«Յես 20 տարեկան եմ և աշխատում եմ «Պորձոնի» վրա, վորպես արակտորիստ: Ինձ հետաքրքրում են հետեվյալ հարցերը. Ի՞նչ լավ ձեռնարկներ կան «Պորձոնի» վերաբերյալ և վորտեղ կարելի յե գտնել: Վորտեղից ձեռնարկ գտնել «Չապարոթեց» և «Ինտերնացիոնալ» արակտորների մասին և ընդհանրապես դասադրքեր, վորոնյով կարելի յինի ուսումնասիրել աշտոնների մատոններն ու մոտոցիկլերը: Վորովհետեւ յես ախտոներ և մոտոցիկլեր շատ եմ սիրում, ուստի խնդրում եմ չմերժել պատասխանելու ինձ»:

Ամենաբազմատեսակ արհեստի և մասնագիտություն բանվորներից բաղմաթիվ նամակներ և համառ խնդիրներ են ստացվում համապատասխան տեխնիկական գրքերի ցուցումներ անելու մասին:

Կոլորովսկի գործարանի մանածագործ ընկ. Շիրալովը դիմել է «Տեխնաս» ընկերությանը հետեվյալ խնդրով.

«Դուք կարո՞ղ եք ինձ մի ձեռնարկ տալ Նուլահուլյան վերաբերյալ: Յեթե կարող եք, ինչպե՞ս պետք է անեք. դուք պետք և ավտոդե՞ք, թե մատնացույց անեք դասընթացների հասցեն: Ի՞նչ գրքեր պետք է

կարգալ Նուլահուլյան վերաբերյալ և վորտեղից կարելի յե ստանալ»:

«Մասնանշեք ինդրեմ տեխնիկական առաջնորդող գրականություն (ցանկալի կլինի հանրամատչելի) կոչկեղենի մեխանիկական պատրաստման վերաբերյալ: Տեղեկացրեք կոչկեղենի մեխանիկական արտադրության վերաբերյալ գրականության մասին»: Այսպես է գրում Կիմրա քաղաքի «Կրասնայա Չվկզա» գործարանից ընկ. Անենկինը:

Մեծ հետաքրքրություն և հարցումներ կան ելեկտրոտեխնիկայի հարցերին նվիրված մատչելի գրքերի մասին:

Նիժեգորոդսկի նահանգից հեռագրական հսկիչ ընկ. Յատենկոն գրում է.

«Ելեկտրոտեխնիկայից ունեցած իմ գործնական գիտելիքները ցանկանում եմ լրացնել ինքնակրթությամբ: Ուզում եմ դառնալ փորձված ելեկտրոմանյոր: Այդ պատճառով ցանկալի յե տեսականորեն ծանոթանալ թե թույլ և թե ուժեղ հոսանքի և ամեն տեսակ մոնտաժի վերաբերյալ աշխատանքի կանոններին, վորոնք առնչություն ունեն ելեկտրոմանյորի հետ: Յես տարրական կրթություն ունեմ: Մատեմատիկան թույլ գիտեմ, ծանոթ եմ ֆիզիկայի և ելեկտրոտեխնիկայի տարրական գիտելիքներին: Խնդրում եմ խորհուրդ տալ ինձ, թե ի՞նչ ձեռնարկներ պետք է ունենալ հիշատակված նպատակով թե մատեմատիկայից և թե ելեկտրոմանյորի առարկեց»:

Ահա այն ամենատիպիկ նամակները, վոր ամեն ոք ստանում են «Տեխնաս» ընկերությունը և Մոսկվայի ու Լենինգրադի մյուս կազմակերպությունները: Սրանք վկայում են, վոր արտադրական և մասնագիտական բաղմադիմի ճյուղերի բանվորության լայն խավերի մեջ անընդհատ աճում է պարզ և մատչելի արտադրական—տեխնիկական գրքի պահանջը: Ամենաբնորոշն այդ պահանջների ու հարցումների մեջ այն է, վոր բանվորները տեքստիլի, մետաղի, ելեկտրոտեխնիկայի վերաբերյալ տեխնիկական գրքերով հետաքրքրվում են վոչ թե ընդհանրապես, այլ իրենց արտադրության վորոշակի ու կոնկրետ մասնագիտությունը: Յուրաբանչյուրը նրանցից ցանկանում է կշռագատել ու ճշտել իր աշխատանքը և իր արտադրական պրոցեսը, ամեն մեկը ուզում է վերացնել իր աշխատանքի թերությունները, բացերն ու պակասները:

ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՆ

Դժբախտարար պետք է ասել, վոր մինչեւ այժմ այդ պահանջը հաշվի չեն առել վոչ պետական տեխնիկական հրատարակչությունները, վոչ կուսակցական և վոչ արհեստակցական կազմակերպությունները, և բավարարվում է միայն աննշան շահով:

ԲԳՏ Ժողովմատի և ԿՎՀ կորեկիայի անդամ ընկ. Գոլցմանի հայտարարութեամբ՝ 1927 թ. հրատարակված 31.870 անուն բոլոր գրքերից տեխնիկական են միայն 1600 անուն:

Յեթե մատնանշված թիվը ցույց է տալիս, վոր գրքերի ամբողջ պրոդուկցիայի մեջ տեխնիկական գրականութիւնը չնչին տեսակարար կշիռ ունի, ապա ավելի վատ վիճակի մեջ և հասակապես բանվորների և գյուղացիների համար արտադրական-տեխնիկական գրքերի հրատարակման գործը: Մամուլի կոմիտեյի արվյալներով՝ 1927 թ. հրատարակված 1178 տեխ. գրքերը բաշխվում են այսպես. տեխնիկական ԲՈՒՀ-երի համար 25 տոկոս, տեխնիկումներին՝ 25 տոկոս, զիտական՝ 13,4 տոկոս, զիտական-մատչելի՝ 10,6 տոկոս, հասակավորների և ինքնակրթութեան՝ 4 տոկոս, առաջին աստիճանի դպրոցների՝ 1,7 տ., յերկրորդ աստիճանի դպրոցների՝ 1,7 տոկոս, մասսայական բանվարական գիրք՝ 3,8 տոկոս, մասսայական գյուղացիական գիրք՝ 3,4 տոկոս:

Այսպիսով ամբողջ տեխնիկական գրականութեան յերկու յերրորդը (65 տոկոս) հրատարակված է ԲՈՒՀ-երի, տեխնիկումների և մասնագետների համար: Աննշան քանակութեամբ գիրք է հրատարակվում 1-ին, 2-րդ աստ. դպրոցների և ինքնակրթութեամբ զբաղվողների համար: Սակայն կատարելապես անտես են առնված բանվորներն ու գյուղացիները, վորոնց համար հրատարակված է տեխնիկական գրականութիւն միայն 7 տոկոս: Հասկանալի յե, վոր բանվորական մասսաների ունեցած տեխնիկական գրքի պահանջը մնում է համարյա չբավարարված: Ետևայում դուք չեք հանդիպի արդյունաբերութեան կարեւոր ճյուղերին՝ քիմիայի, թղթի, շինարարութեան, մետաղի, տրանսպորտի վերաբերյալ գրքեր, չխոսելով զեռնվա արտադրական նոր մուծվող ճյուղերի մասին:

Չափազանց իրավացի յե Լենինգրադի նավաշինարանի քսանամյա արտադրական ստաժ ունեցող վարպետ ընկ. Լարիոնովը, յերբ գրում է. «Յես գտնում եմ, վոր ժամանակակից տեխնիկական գրականութեան մեջ քիչ ուշադրութիւն է հատկացված զանազան արտադրութիւնների հատուկ ձեռնարկներին: Առանձնապես նավաշինական աշխատանքների վերաբերյալ բանվորին մատչելի վոչինչ չկա: Սմեն ինչ հրատարակված է բարձրագույն կրթութիւն ունեցողների համար»:

Նույն բանն է յին ասում արտադրական-տեխնիկական գրականութեան նվիրված Լենինգրադի կոնֆերենցիայի պատգամավորները: «Մասսայական ընթերցողի համար հրատարակված տեխ-

նիկական գրքերի մի մասը, որինակ՝ ամենարեզմնավոր հեղինակ ճարտ. Գ. Գուզեվիչի գրքերը, լիքն են ընդհանուր խոսքերով, գործնական գիտելիքներ չեն տալիս, գրված են «թավշյա» լեզվով և կրկնութիւններ են: Մեր հրատարակչութիւնները բավարար չափով վերահասու չեն լինում նույնիսկ արտասահմանյան գրականութեան: Իսկ յերբեմն ամերիկյան կամ գերմանական սքանչելի գրքերը հրատարակում են այնպես անդրադետ թարգմանված, վոր ուղղակի դարմանում էս: Այդպիսի գրքերի յերեսին, ճիշտ է, վայրում են յերբեմն պրոֆեսորների մեծ անուններ, վորոնք իրրեւ թե խմբագրել են այդ գրքերը, բայց այդպիսի տոնական խմբագիրները՝ ինչպես արտահայտվեց հոետորներից մեկը, հաճախ բնաժ չեն նայում թարգմանութեան յերեսին, վորի խմբագրումը նրանք վերցրել են իրենց վրա»: («Կրասնայա Գաղետա», 1929 թ. հունիսի 14):

ՄԵԾ ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆԸ

Մասսայական արտադրական տեխնիկական գրականութեան անընդհատ աճող պահանջը, վորը բավարարվում է անսահման չնչին չափով՝ ահա այսօրվա իրրերի դրութիւնը տվյալ Փրոնտում:

Այսօրվա կարեւորագույն խնդիրն է հանդիսանում ամենակարճ ժամանակամիջոցում եյական հաջողութիւններ և վճռական տեղաշարժութիւն կատարել կուլտուրական Փրոնտի այս կարեւորագույն ճակատամասում:

Պետհրատին և պետական տեխնիկական հրատարակչութեանը պետք է հարկադրել նախ և առաջ իրենց յերեսը դարձնելու դեսի բանվորական և գյուղացիական մասսաների պահանջները: Այսօր պետք է հասկանալ, վոր վերը մեջ բերված հարաբերութիւնը հրատարակչող մասսայական տեխնիկական գրականութեան և ամբողջ գրքերի պրոդուկցիայի միջև վաղն արդեն անհանդուրժելի յիլինի: Պետք է վերջ դնել այն դրութեանը, վորի մասին ընկ. Չուբարը գրում է «Պրավդայում», յերբ «բոլոր հրատարակչութիւնները վրա յեն պրծնում զեղարվեստական գրականութեանը, կատարելով պարալելիզմ և հրատարակելով հաճախ բացարձակապես անպետք գրքեր: Տեխնիկական գրքի հրատարակման վրա ուշադրութիւն չեն դարձնում, և, իհարկե, տեխնիկական գիրքը յերկար ժամանակ ընկած մնում է դարակներում: Գրքերն ընթերցողների մեջ տարածելու կամպանիա չի մղվում: Նույնիսկ բան-

վորական հրատարակչությունները («Ուկրաինակի Ռարոչի» և այլն) ճնշող մեծամասնությամբ հրատարակում են գեղեցիկ գրականություն և վոչ թե տեխնիկական, վորը կոչված է ոգնելու բանվորներին յուրացնելու տեխնիկան, լավ ճանաչելու արտադրությունը վոչ միայն իր արհեստանոցում, այլև անտեսության բոլոր ասպարեզներում»:

Այժմ արդեն աննորմալ և անհանդուրժելի յե այն գրությունը, յերբ գեղարվեստական գրականության վրա ծախսվում են հարյուրավոր և հազարավոր անգամ ավելի միջոցներ և ուշադրություն, քան մասսայական տեխնիկական գրականության հրատարակման վրա: Մեր աչքի առաջ անխնայ ծախսեր են կատարվում ամեն տեսակ գեղարվեստական գրքերի ունկլամի հրատարակման և տարածման վրա, մինչդեռ մասսայական տեխնիկական գիրքը, վոր նախատեսվում է բանվորի համար, հրատարակվում է միայն հարյուրավոր անունով:

Ժամանակն է, վոր մեր հրատարակչությունները վճռական շրջադարձ կատարեն՝ իրենց յեռանդը գործադրելով մասսայական տեխնիկական գրքի հրատարակման սլանն ընդարձակելու վրա:

Ի՞նչ ԳԻՐԻՔ Ե ՀԵՏԱՔՐՔՐՈՒՄ ԲԱՆՎՈՐԻՆ

Ամենամոտ ժամանակներս տեխնիկական գիրք սկսեք և մատակարարել ջուհակներին, մանածագործներին, դադեյասի վրա աշխատողներին, ֆրեզերավորներին, քարտաշներին, բետոնագործներին, կառուցողների միլիոնավոր բանակին, քիմիկան, ավիացիոն, շաքարի, թղթի, կոշիկար բանվորներին, տրակտորիստներին, զիզելիստներին, շոֆերներին, զեկապաններին, կոլտնտեսություններին, խորհանտեսություններին և իրենց անտեսությունը կուլտուրական յեղանակով վարել ցանկացող գյուղացիներին:

Պետք է ընդհանուր ուժերով աշխատել, վոր պարզ մատչելի տեխնիկական գիրքը հրահանգչական մի գիրք է: Առնա, գործնական ձեռնարկ աշխատանքի միջոցին, անփոխարինելի մի ուղեցույց արտադրող բանվորի համար:

Կարելի է մատնանշել, թե բանվորն ինչ պահանջներ է առաջադրում գրքի վերաբերմամբ: «Մետալիստ» թերթիկում, վոր հատկապես հրատարակված էր արտադրական-տեխնիկական գրքերին նվիրված Լենինգրադի խորհրդակցության առթիվ, ընկ. Բրիլովը մեջ է բերում բանվորների սոված զնահատականներն այս կամ այն գրքի առթիվ: Որինակ՝ մեկ բանվոր, կարդալով «Ինչպես հեր-

ձաքարել և հղկել նյութն ու սպրանքը», հայտնում է, վոր բանվորը լիակատար հնարավորություն ունի բարձրացնելու իր վորակը, նույնիսկ նոր մասնագիտություն ուսումնասիրելու՝ գրքերով: Մի այլ բանվոր գովում է Բեկոնի «Գործնություն» գիրքը, վորովհետև նրանով յուրաքանչյուր վոք կարող է սովորել յերկաթը կռել, յեթե նա նույնիսկ մինչև վայր իր ձեռքը չի վերցրել մուրճ և աղցան և չի իմացել, թե ինչպես վարվել այս գործում կերատվող նյութի հետ: «Թող ավելի շատ լինեն այսպիսի գրքերը բանվորական մասսայի մեջ, և մենք ահալին առաջ կտանենք մեր արդյունաբերությունը», - վերջացնում է իր զնահատականը նույն գրքի մասին գրող մի ուրիշ բանվոր: Մեծ ուշադրության են արժանի նույն ընկ. Բրիլովի մեջ բերած զնահատականները, վորոնք ցույց են տալիս, թե բանվորները վորքան մեծ նշանակություն են տալիս՝ գործնական ցուցումները մատչելի շարադրված տեսական մոմենտների հետ շնորհով համադրելուն և գուզորդելուն: Նա գրում է. «Պոխերանովի «Գործնական ճախարակագործություն» գիրքը չի բավարարում բանվորին, թե ինչու տեսությունն առանց գործնականի չի կարող ճիշտ դարձանալ և նմանապես, թե ինչու գործնականը չի կարող գոյություն ունենալ առանց տեսականի: Այդ պատճառով Պոխերանովի գործնական խորհուրդները թեև ճիշտ են, բայց առանց տեսական ապացույցների նրանք ճապող են և պարզ չեն»: Ուրիշ բան է ասում Բադլինի «Ճախարակագործության հիմունքները» գրքի մասին. «Չնայած դուռ գործնական աշխատանքներ չկան գրքում, բայց դրա փոխարեն նկարագրված են այն բոլոր պատճառները, վորոնք ազդում են մշակման վորակի վրա: Այդ չափազանց կարելիոր հանգամանք է, վորովհետև տեղ բանվորները վոչ մի նշանակություն չեն տալիս իրենց գործի այն թերություններին, վորոնք հետևյալնք են անուշադրության կամ սովորի գործի հիմունքները չիմանալու: Այդ գիրքը կոժանդակի բարձրացնելու բանվորի վորակը»:

Գտնալով զեպի բանվոր ընթերցողը, սովորել գոհացնելու նրա հարցումներն ու պահանջները՝ այս է մեր հրատարակչությունների առաջնահերթ խնդիրը: Մինչև վայժմ զեռեպս տեխնիկական գրքի միջին տիրաժը 4200 որինակ է՝ գրականության մյուս բոլոր տեսակները 10.000 որինակի հանդեպ, միջին ծավալը՝ 6-7 մամուլ՝ 5-7 մամուլի հանդեպ, միջին արժեքը՝ 1 ու 41 կ., մյուս գրականության 56 կ. հանդեպ: Այսպիսով տեխնիկական գրքերը զերազանցապես նախատեսված են ճարտարագետի, տեխնիկի, սուսանողի համար: Լայն մասսաներին նրանք անմատչելի յեն իրենց

և՛ շարադրութեամբ, և՛ ծավալով, և՛ դնով: Յեղ դժվար չե՛ հասկանալ, վոր մասսայական տեխնիկական մատչելի և գործոն գրքի հսկայական հաջողութեանն ապահովված կլինեն:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԱՆԵՆՔ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐՔԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ

Սակայն մասսայական տեխնիկական գրքի հրատարակման ուժեղացմանը և գրքերի ընդհանուր արտադրանքի մեջ նրա տեսակարար կշռի մածացմանն անպայման պետք է զուգորդել հրատարակչական գործի ամբողջ զբաղմունքի և նրա ամբողջ բնույթի լուրջ փոփոխութեանը՝ բանվորագյուղացիական մասսաների պահանջների համապատասխան:

Այս տեսակետից հաջողութեան ամենակարեւոր նախապայմանը և յերաշխիքը, անկասկած, հանդիսանում է բանվորների ներգրավումը արտադրական տեխնիկական գրքի հրատարակման գործին: Այս ուղղութեամբ կազմակերպելիչ դեր պիտի ստանձնեն արհմիութեանները և «Տեխմաս» ընկերութեան ստորին ղեկավար մարմինները՝ կուսակցական մարմինների ընդհանուր ղեկավարութեամբ և հսկողութեամբ:

Ամենամոտ ժամանակներս մի շարք ձեռնարկումներ պետք է կիրառել բանվորական մասսաներին ներգրավելու յեղած մասսայական տեխնիկական գրականութեան գնահատականը տալու և նրա հետագա հրատարակութեանն ուղղագծման գործին: Այդ համագամանքը կոթանդակի հարկ յեղած ցուցակ կազմելու այն գրքերի, վորոնք պետք է վերահրատարակել և մի լուրջ հարված կլինի կեղծ ժողովրդականացողներին, վորոնք գրադարանային մի աշխատավորի արտահայտութեամբ՝ շահագործում են հեղինակների ճշմարտամբ, գրքեր են թխում, փող են կորցում և ավելի շատ մտածում են հոնորարի մասին, քան հոգ տանում գրքի բովանդակութեան և նրա ընթերցողի նկատմամբ:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ—ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐԻ ՄԵՁ

Բացարձակապես հատուկ ուշադրութեան պետք է նվիրել այն բանին, վոր բանվորների լայն մասսաները ներգրավելն նոր մասսայական—տեխնիկական գրականութեան ստեղծման և հրատարակման վրա հսկելու, ղեկավարելու և կազմակերպելու մեջ: Չէ՞ վոր մասսայական տեխնիկական գրքի ներկա վիճակի գլխավոր պատճառներն, անշուշտ, հանդիսանում են նախ և առաջ մասսաների պահանջներին զգալուն վերաբերմունքի ցույց չտալը, դրանց հաշվի առնելու անկարողութեանը, հեղինակների միանգամայն

պատահական անլուրջ ընտրութեանը, պարալելիլը հրատարակչութեաններին աշխատանքներում և մի շարք այլ մոմենտներ, վորոնք լայն ապարեղ են ստանում շուկան հագեցնելու խիզախ գրիչ ունեցող կեղծ ժողովրդականացողների «ստեղծագործութեաններում», վորոնք գրում են իրենց անծանոթ նյութերի մասին:

Մասսայական տեխնիկական գրքի հրատարակումն այնպիսի հիմքերի վրա պիտի դրվի, վոր նրան ամենագործոն մասնակցութեամբ ցույց տան բանվորական լայն մասսաները:

Գործի նոր կազմակերպումը, յերբ մասսայական—տեխնիկական վոր մի գիրք չի կարող լույս տեսնել առանց բանվորների կողմից սկզբնապես քննվելու և ստուգվելու, կկատարվի զանազան ուղիներով: Նախ և առաջ պետք է աշխատել, վոր մեր տեխնիկական հրատարակչութեանների խմբագրական խորհուրդներում և բաժիններում տեղ գտնեն արտադրական նարարագետներ և գրվածքավորապես, բարձրարակ վարպետ բանվորներ, թրիգադիներ, արտադրական խմբակների ավագներ, տեխնիկայի հարցերով հետաքրքրվող ակտիվ ընթերցողներ: Դրանց ընտրութեանը յուրաքանչյուր առանձին դեպքում կարող են կատարել «Տեխմաս» ընկերութեան նահանգական կամ մարդային բաժանմունքները, արհեստակցական կազմակերպութեանները, «Տեխմասի» բլիժները և գործարկումները: Այս դեպքում հրատարակչութեանների առանձին սեկտորների ամբողջում են արտադրութեան համապատասխան ճյուղերի՝ մետաղամշակման, քիմիական, տեքստիլ արդյունաբերութեան մեջ աշխատող արտադրական բանվորներ և ճարտարագետներ:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ, ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԿՈՆՑԵՐՆԵՏՍԱ

Արտադրական բանվորների մասնակցութեանը տեխնիկական գրքի պլանների մշակման և ընտրության մեջ ինքնին յերաշխիքում է առաջնորդում կատարված մի շարք սխալներից: Իայց մի միայն այդ չափազանց անբավարար է: «Տեխմաս» ընկերութեանը, արհմիութեանները, հրատարակչութեանների հետ միասին՝ բանվորների նախաձեռնութեամբ և մոտիկ մասնակցութեամբ իրենց մշակած հրատարակչական պլանները կանոնավոր քննութեան պետք է դնեն առանձին գործարանների առաջավոր արտադրողների, արտադրական և տեխնիկական խմբակների քննութեան կամ արտադրության առանձին նյութերի բանվորների կոնֆերենցիային: Նրանց կոնֆերենցիաներում բանվորների ներկայացուցիչներն, անշուշտ, կարող են մատնանշել մի ամբողջ շարք թերութեաններ և

բացեր պլանները մեջ, մասնել էյական փոփոխութիւններ և հա-
վելումներ՝ մասսաների պահանջների համապատասխան:

Անցած տարի դեկտեմբերին մետաղագործների Լենինգրադի
մարդկամբ և Պետհրատի Լենինգրադի բաժանմունքը հրավիրել
էին բանվորական կոնֆերենցիա, նվիրած արտադրական տեխ-
նիկական գրքին: Նրան, բացի հեղինակներից և հրատարակչու-
թյան աշխատավորներից, ակտիվ մասնակցեցին Լենինգրադի մե-
տաղագործական գործարանների բանվորական ներկայացուցիչնե-
րը: Կոնֆերենցիայի որակարգի հարցերն էյին.

1) Մասսայական բանվորական տեխնիկական գրականութիւնը
և կուլտուրական հեղափոխութիւնը — գեկուցող Պետհրատի նա-
խագահ ընկ. Թալատով:

2) Մասսայական արտադրական գրքի խնդիրները յերկրի ին-
դուստրացման կապակցութեամբ:

3) Վորտեղ հրատարակել մասսայական արտադրական գիրքը:

4) Արտադրական գրքի եթանացման ուղիները:

5) Արտադրական գրքի տարածումն ու պրոպագանդան:

Կոնֆերենցիայում աշխատում էյին մի քանի սեկցիաներ մե-
տաղագրչուհարեութիւնի գանաղան ճյուղերից և մասնադիտու-
թիւններից՝ 1. մետալուրգիական, 2. մետաղի սառը մշակման, 3.
մետաղի տաք մշակման, 4. ելեկտրոտեխնիկայի, 5. մեքենա-
գիտութեան: Կոնֆերենցիայից մի քանի շաբաթ առաջ Պետհրատի
Լենինգրադի բաժանմունքը և մետաղագործների մարդկամբ հրա-
տարակել էյին մանրամասն նյութեր, վորոնք նկարագրում էյին
մասսայական տեխնիկական գրքի հրատարակման գործի վիճակը:
Կոնֆերենցիային նախորդեց յերկարատե նախապատրաստական մի
կամպանիա մի շարք գործարաններում: Տրվեցին մի շարք հատուկ
գեկուցումներ՝ բանվորների լայն մասսաներին կոնֆերենցիայի
խնդիրների հետ ծանոթացնելու համար: Կոնֆերենցիան անցավ
բանվորների ակտիվ մասնակցութեամբ, վորոնք բաղձաթիւ արժե-
քավոր ցուցումներ արեցին տեխնիկական գրքի հրատարակումը
կանոնավորելու համար: Բնորոշ է, վոր նրա աշխատանքներին վոչ
մի մասնակցութիւն չցուցարեցին տեխնիկական գրքի հիմնա-
կան հրատարակիչներ՝ Պետտեխհրատը, ԿՈՒԲՈՒՁԸ և «Տեխնիկա ի
Պրաիդիոգատիոն»:

Այս մի ակտիւրը անգամ ապացուցում է մեր տեխնիկական
հրատարակչութիւնների վոչ զգաստ վերաբերմունքը բանվորների,
զրած պահանջներին և նրանց անկարողութիւնը լսելու և կատա-
րելու դրանք: Լենինգրադի «Կրասնայա Գադետան» մի-

անդամայն իրավացի կերպով նկատում է, վոր «Այդ խայտառակ
արհամարհանքն՝ ուղղված Ի բանվորական կոնֆերենցիայի դեմ,
վորը հրավիրված էր լուծելու մի շարք հիվանդոտ հարցեր, խիստ
դատապարավեց կոնֆերենցիայում: Մենք մանրամասն կանգ չենք
առնի կոնֆերենցիայի աշխատանքների, բանվորների առանձին յե-
յուրեյաների վրա, վորոնք, լողեպ սասած, մենք քաղվածարար մեջ
ենք բերել այս գլխում: Բայց մի բան վեր է կասկածից, վոր արտա-
դրութեան առանձին ճյուղերի նման կոնֆերենցիաների ճիշտ և
խնամքով նախապատրաստելը բավականաչափ կողմի հանրամատ-
չելի տեխնիկական գրքի հրատարակման գործը կանոնավորելուն:

Վերոհիշյալ ձեռնարկումներից բացի, անհրաժեշտ է ամեն
կերպ աշխատել, վոր հրատարակչութեան պատրաստվող յուրա-
քանչյուր մասսայական արտադրական տեխնիկական գիրք ևս
յսպես քննութեան դրվի առանձին գործարաններում և արտադրա-
կան յմբակներում՝ գրքի պատրաստման բոլոր փուլերում: Այս
բանը կարելի յէ կատարել, կազմակերպելով հեղինակների սիստե-
մատիկ հանդիպումներ բանվորների հիշատակված յմբակներին
հետ, ուր հեղինակները կծանոթացնեն նրանց գրքի պլանի, նրա
նպատակագրութեան, նրա հետապնդած խնդիրների հետ: Բան-
վորները, բնականաբար, հեղինակին մասնացույց կանեն մի ամ-
բողջ շարք մոմենտներ, վորոնք պետք է գուրս հանել և այնպիսի
մոմենտներ, վոր պետք է, բնդհակառակը, ավելացնել: Մտքերի
այս փոխանակութիւնը կնպաստի հեղինակի աշխատանքի ճիշտ
ուղղութեան իր գրքի նկատմամբ: Հեղինակի կողմից գիրքը վերջ-
նականապես պատրաստելուց հետո, վերջինս կրկին քննութեան է
դրվում բանվորների նույն յմբակի ժողովին, վորպեսզի նրանք
կազմակերպեն և տան իրենց վերջնական նկատողութիւններն ու
չտկումները: Այս մեթոդը հնարավորութիւն կտա գուրս մղելու
բանվորների համար անհասկանալի և անմատչելի լեզուով գրված
գրքերը: Պետք է հրատարակել միայն այնպիսի գրքեր, վորոնք
բանվորների կարծիքով կբավարարեն իրենց պահանջներին, կո-
ժանդակեն բարձրացնելու իրենց վորակը, կըլուբացնեն նրանց ար-
տադրական աշխատանքը: Գրքի վերաբերմամբ այնպիսի աշխա-
տանք կազմակերպելը ամենելին հեշտ գործ չէ, բայց ճիշտ նախա-
պատրաստելու դեպքում այդ միանգամայն իրագործելի յէ: Կարե-
լի յէ վստահ ստել, վոր այդպիսի մեթոդը կապահովի բանվորների
համար լուրջ և իրոք պիտանի մասսայական տեխնիկական գրակա-
նութեան հրատարակումը:

ԱՐՏԱԳՐԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԵՏԻՆ ՀՐԱՎԻՐԵԼ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ

Մինչև այժմ մասսայական տեխնիկական գրքի հեղինակները չէին են միանգամայն պատահական մարդիկ գերազանցապես մասնագետները: պրոֆեսորներ, ճարտարագետներ շարքերից: Նրանցից շատերը բավարար չափով ծանոթ չեն, իսկ հաճախ միանգամայն անծանոթ են արտադրութանն ու բանվորական միջավայրին, վորի համար նրանք գրում են: Հետևանքն այն է լինում, վոր գրքերի մեծ մասը խճողված է լինում բարդ մատեմատիկական ֆորմուլաներով, վորոնք մատչելի չեն բանվոր ընթերցողին: Այդ հեղինակները մեջ շատերը կան, վորոնք ընդունակ են բանվորին հասկանալի լեզվով առանձին բաներ պատմելու արտադրական պրակտիկայից: Ահա, թե ինչու մոտ ժամանակներս արտադրական տեխնիկական գրքի վերաբերմամբ հեղինակային աշխատանքի պետք է հրավրել բացի վաղուց հայտնի և բարձրորակ հեղինակություններից նաև գործարանային և արտադրատեղիների և տեխնիկների: Այդ մարդիկ բավարար տեխնիկական գիտելիքներ ունեն, հմուտ են այն արտադրությանը, վորի մեջ աշխատում են, լավ ծանոթ են բանվորական մասսաների պահանջներին: «Հիդրավլիկա» գործաբանի բանվոր ընկ. Միզովը Լենինգրադի կոնֆերենցիայում պատմում էր հետևյալը. «Գործարանի ճարտարագետների կոլեկտիվը ցանկանում է մասնակցել տվյալ արտադրության բանվորների համար բազմաթիվ ձեռնարկներ կազմելու աշխատանքին: Այդպիսի ցանկալի յուն ունեցողներ, հավանաբար, կան նաև այլ գործարաններում: Միայն պետք է վոր հրատարակչությունն ոգտագործի նրանց պատրաստակամությունը»:

ՄԱՍՍԱՑԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՐՔ ՊԵՏՔ Ե ԳՐԻ ՆԱՅԵՎ ԲԱՆՎՈՐԸ

Մենք ստորագրողները մեկը, վորոնք ապահովում են լավորակ տեխնիկական գրքի հրատարակումը, իրենց՝ արտադրական բանվորների մասնակցությունն է հեղինակելու աշխատանքին: Կան բարձրորակ բանվորներ, վարպետներ և բրիգադիրներ, վորոնք արտադրական մեծ փորձառություն ունեն: Նրանք ավելի, քան վորեք մեկը ծանոթ են արտադրության, դադարահին, մեքենային, արտադրական իմաստությունները և զորություններին: Նրանք սքանչելի ծանոթ են բանվորական միջավայրին, նրա պահանջներին: Նրանք են, վոր կարող են ավելի լավ, քան վորեք մեկը գրել լայն մասսաների, առանձնապես յերիտասարդ և վերջի-

րըս արտադրության մեջ ընդունված բանվորների համար պիտանի պարզ արտադրական տեխնիկական գրքը այս կամ այն արհեստից և մասնագիտությունից: Վերջին տարիներս մեզ մոտ հաճախակի արտասահմանյան գործարանները շրջագայություն և գործուղման են ուղարկվում ամենաընդունակ և ակտիվ արտադրական բանվորներ: Այդ, անկասկած, նպատակ է նրանց փորձառություն հարստացման և մտավոր հորիզոնի ընդարձակման: Այդ բանվորներից մի քանիսը նույնպես կարող էին ներգրավվել հեղինակություն աշխատանքի:

Մեր գործարաններում գյուտարար բանվորները ամեն ոք արժեքավոր առաջարկություններ են անում արտադրության բարելավման և ռացիոնալացման վերաբերյալ: Հաճախ դրանք գործադրվում են միայն այն գործարանում, ուր աշխատում է գյուտարարը, թեև կարելի չէր ոգտագործել բոլոր նման ձեռնարկություններում: Ինչո՞ւ միջոցներ ձեռք չառնել հեղինակներ հայտարարելու բանվորների միջից, ոգնելով նրանց գրելու իրենց գյուտի մասին և հրատարակելու անհրաժեշտ քանակությամբ, վորոնք տարածվեն հարակից ձեռնարկություններում:

Այդ կադրերը չողտագործված և անսպառ աղբյուր են, վորի մեջ պետք է վորոնել մասսայական տեխնիկական գրքի հեղինակներին: Սակայն, դժբախտաբար, մեր հրատարակիչները, վորոնց թվում նաև արհեստակցական և այլ հասարակական կազմակերպությունները մինչև այժմ հաշի չեն առել դրանց ներգրավման մեծ կարելությունը, հակառակ նրա, վոր բանվորների գրած մի քանի գրքեր շատ ավելի պարզ և հասկանալի չեն, քան մասնագետների կազմած գրքերը: Դեռ ավելին՝ վորոչ գեպերում մենք նկատում են կազմակերպի, վոր զգաատ վերաբերմունք դեպի բանվոր հեղինակները, վորոնք վորոչել են իրենց անձնական նախաձեռնությամբ իրենց փորձը հաղորդել բանվորներին և համապատասխան գիրք գրել: Այդպիսի անփույթ և կաղանջի վերաբերմունքի մի որինակ բերված է արտադրական գրքին նվիրված Լենինգրադի կոնֆերենցիայի նյութերում:

«Այդ տեսակետից ցուցադրական բնույթ ունեցող մի գեպը լեզի յե ունեցել Ստալինի անվան գործարանի բանվոր ընկ. Սուդարիկովի հետ: Նա կազմում է մի գիրք՝ «Տոկարի և Ֆրեդերի բանվորի ուղեցույց՝ դանազան պտուտակներ կտրելու համար հավաքական անիվների հաշվարկման դեպքում»: Այդ «ուղեցույցի» մեջ նա հավաքել է կենդանի իրականությունից յերեք հարյուր գանազան որինակներ: Գիրքը հրատարակված է տեղական միջոցներ-

ըով և, ըստ յերևութիւնի, շատ ոգտակար ե, քանի վոր «գործա-
բանային արտադրական հանձնաժողովի և երսպորտ հանձնաժողո-
վի կողմից հանձնարարված ե, վորպէս ձեռնարկ Ստալինի կոմ-
բինատի տոկարների և Ֆրեզերի բանվորների համար»: (Ինչո՞ւ
միայն Ստալինի կոմբինատի: Մի՞թէ մյուս տոկարներն ու Ֆրե-
զերի բանվորները տարբեր են)՝ Բայց յերբ այս գիրքը հանձն-
վեց Պետտեխհրատին, նրանք հրատարակեցին տպագրելուց, վորով-
հետև, գրտե՛ք ինչ, «պարզ և ճշգրիտ ընդհանուր ցուցումներ չի
տալիս»: Իսկ բանվորը հատկապէս պահանջում ե վոչ թէ ընդհա-
նուր, այլ հնարավորութեան չափ թանձրացած, նեղ կանոններ ու
հասկացողութեաններ, վորոնք հարմար և պիտանի լինեն իրեն:
Յե՛վ քանի՛-քանի աղբյուրի Սուզարիկովներ կան բարձրորակ մե-
տաղադրծների մեջ, վորոնք յեթե սեփական գիրք չգրեն, ապա
կարող են ողնել մասնազետ հեղինակին իր գիրքը դարձնելու բան-
վորական, մասսայական:

Բագմաթիվ բանվորներ, վորոնք բոլոր տվյալներն ունեն գիրք
գրելու, համարակալութեան չունեն, յերկյուղ են կրում՝ դործը գը-
լուխ չըրեր և ծաղրի առարկա դառնալ նման վորձի համար: Այս
հանդամանքը ավելի ևս խորանում ե նրանով, վոր վոչ վոք վոչ մի
խրախուսական միջոց ձեռք չի առնում նրանց ներդրալման համար:
Իհարկե, վորոչ ղեպքերում տեսական պատրաստականութեան բա-
ցակալութեան իրոք գրկում ե բանվոր հեղինակին դրքի առանձին
հատվածներն անհրաժեշտ տեսական գրութեաններով ո՞՞տեղու
հնարավորութեանից: Բայց այս խոչընդոտը բնալ անհաղթահարելի
չե: Քիչ մեթոդներ չկան, վորոնց ձեռն ոգտագործումով կարելի
յե վերացնել բանվորի հեղինակ դառնալու ճանապարհին ընկած
խոչընդոտները: Նախ և առաջ անհրաժեշտ ե հրատարակչութեան-
ներին կից ստեղծել արտադրութեան քաջահմուտ ղյուրաղաջ և
ուշադիր ճարտարագետների և տեխնիկների կազմ, վորոնք կարող
դանային համապատասխան ցուցումներ և խորհուրդներ տալ բան-
վոր հեղինակին նրան հետաքրքրող հարցերից: Անհրաժեշտ ե ապա-
հովել նրանց արվելիք ոգնութեանն այնպիսի մարդկանցով, վորոնք
կարողանան շուտ ըմբռնել բանվորի ասածները, նրա միտքը կամ,
Ֆրանից տեխնիկապէս անդրազետ նյութ ստանալով, մշակել, լրաց-
նել անհրաժեշտ տեսական գրութեաններով: Նպատակահարմար
կլինեն հեղինակի աշխատավայրի արտադրական ճարտարագետին
հրավիրել մշտական ոգնութեան և խորհուրդներ տալու նրան գրքի
պատրաստման ամբողջ ժամանակամիջոցում: Այդ նպատակով ա-
վելի գյուրին կողտագործվեն տեխնիկական ԲՈՒՀ-երի բարձր

ղյուրերի ուսանողները, այն նախկին բանվորները, վորոնք ալար-
տել են բանֆակ և պատրաստվում են աշխատելու համապատաս-
խան մասնագիտութեամբ: Ինչո՞ւ ճարտարագետներին և տեխնիկ-
ներին, կուսակցական ուսանողներին, կոմյերիտականներին գործ-
նական աշխատանքներ չհանձնարարել հատարակական գծով և տե-
վական ժամանակ կցելով, վորպէսզի նրանք ոգնութեան ցույց տան
բանվոր հեղինակներին: Նման միջոցները բալականաչափ կոժան-
դակելին վերացնելու այն խոչընդոտները, վոր կան բանվորի հե-
ղինակ դառնալու ճանապարհին:

Բայց նախ և առաջ չմոռանանք, վոր բանվորների մեջ այժմ
քիչ թիվ մարդիկ չկան, վորոնց համար ընդհանուր տեխնիկական
պատրաստականութեան և վասնագիտական գիտելիքների բացակա-
լութեանը ավելի լինի բնորոշ չե: Հիշենք բանվոր դասակարգի ծո-
ցից դուրս յեկած գործարանային ուսանողութեան դպրոցների այն
կրահանգիչներին, վորոնք ալարտել են մասնագիտական տեխնի-
կումներ և հրահանգչական դասընթացներ և յերկար տարիներ աշ-
խատել արտադրութեան մեջ, մինչև դասընթացներն ընդունվելը:
Հիշենք բարձրորակ բանվորներին, այն յերիտասարգութեանը, վոր
վաղուց ալարտել ե գործուս, պարապում ե յերեկոյան բանֆակնե-
րում, տեխնիկումներում, տեխնիկական դասընթացներում, տեխ-
նիկական ԲՈՒՀ-երում, վորոնք իրենց բարձր վորակի հետ միասին
արդեն ունեն բալականաչափ ընդհանուր տեխնիկական պատրաս-
տականութեան: Նրանց մի լուրջ մասն, անկասկած, ի վիճակի կլի-
ներ ինքնուրույն գրելու մատչելի տեխնիկական գիրք: Վոչ մի
կասկած չկա, վոր այդ ընկերները մեծ հաջողութեամբ կկարողա-
նան ողնել պատրաստականութեան չունեցող բանվոր հեղինակնե-
րին: Ժամանակն ե նույնպէս փոքրիկ կուլեկտիվներ կազմելու ա-
ռանձին բանվորներից, ճարտարագետներից և տեխնիկներից՝ ա-
ռանձին խնդիրներ մասին մասսայական-տեխնիկական գրքեր գրե-
լու համար: Այս կալեկտիվ հեղինակութեանը, գիտութեան և բան-
վորի փորձի այս գաւգորդումը չալագանց կրարելովի գրքի
վարակը:

«Տեխմասս» ընկերութեան նախագահութեան կից արդեն կես
տարի յե, ինչ դոյութեան ունի ամերիկայան մի սեկցիա, վորի մեջ
մտնում են Ամերիկայում ապրած բանվորներ, վարպետներ, ճար-
տարագետներ և տեխնիկներ: Սեկցիան արդեն դործի յե անցել,
բայց չուտով կվերակազմվի և կզանա արտասահմանյան սեկցիա,
ընդգրկելով Ամերիկայում և յեվրոպական յերկրներում յերկար
ապրած աշխատավորների:

Այդ սեկցիան կարող ձևով և ճիշտ ողտադործելով, կարելի չէ արտասահմանյան տեխնիկայի վերաբերյալ գրքեր թարգմանել:

Այդ բոլոր միջոցների գործադրումը միմեյն հրատարակչական գործ չէ, այլ և բոլոր հասարակական կազմակերպությունների պարտականությունը, վորոնց մեջ առանձնապես մեծ դեր պիտի խաղա «Տեխմասս» ընկերությունը: «Տեխմասս» բաժանմունքներն սւ բլիշները պետք է աշխատեն հասարակական կարծիք ստեղծել այդ հարցերի շուրջը, նախաձեռնություն ցուցաբերեն հեղինակներ դանելու և ընտրելու, ճարտ. տեխնիկական և ուսանողական ուժեր ներգրավելու այդ հեղինակներին ոգնություն ցույց տալու համար:

Միայն այդ դեպքում մեզ կհաջողվի կենսադործել վերելք հիշատակված միջոցները, կհաջողվի հայապետել այն տաղանդները բանվոր դասակարգի միջից, վորի մասին շատ եր գրում Լենինը, և նրանց ստեղծագործական աշխատանքի հրավերել կերտելու մասսայական տեխնիկական գիրքը:

ԳՄՐԳԱՎՈՐԵՆՔ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գիտահետազոտական ինստիտուտները, գործարանային լաբորատորիաները վիթխարի հաջողություններ են ձեռք բերել, վորոնք կարելի չէր հեշտությունը փոխանցել արտադրություն համապատասխան ճյուղերը, բայց դրանք հայտնի չեն շատ քիչ մարդկանց: Ահա, թե ինչու անհրաժեշտ է հարց բարձրացնել մասաչեի բրոշյուրների հրատարակման մասին, վորոնք աշխատավորության յայն մասաներին ծանոթացնելին այդ նվաճումների հետ:

Միաժամանակ, իր ամբողջ հասարակ պետք է դնել այն տեխնիկական գրականության թարգմանություն կարգավորման հարցը, վորը լուսաբանում է արտասահմանյան նվաճումները գլխություն և տեխնիկայի ասպարիզում: Հաճախ մեզ մոտ արտասահմանյան գրականություն թարգմանում և հրատարակում են, սակայն այնպիսի հարցերի վերաբերյալ, վորոնք վրչ մի նշանակություն չունեն և բնավ ընդունելի չեն մեր պայմաններում, մինչդեռ իրոք անհրաժեշտ գրականությունը չի թարգմանվում:

ԳԻՐԲԸ ՏԱՐԱԾԵՆՔ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՄԵՁ

Ներկայումս, յերբ մասսայական տեխնիկական գրքի սուր պահաս է գրացվում, նկատվում են դեպքեր, յերբ մեծ քանակություն գրքեր թափթիված մնում են գրախանությունների դարակներում:

Գրքերի հրատարակման գործի ուժեղացումը նաև հարց է առաջացնում մասսաների մեջ նրա ստարածման համար լուրջ միջոցներ ձեռք առնելու մասին: Նախ և առաջ անհրաժեշտ է աշխատել, վոր բանվորները տեղեկանան գոյություն ունեցող հանրամատչելի գրքերի մասին: Այդ նպատակով արտադրական լրագրերում և գլխական տեխնիկական ժուրնալներում պետք է ընդարձակել գրախոսություն բաժինը և հաճախ մատնացույց անել լավ գրքերը: Ամենալուրջ ուշադրություն պետք է դարձնել մեր շարժական գրադարաններին (նախ և առաջ գործարանային) տվյալ արտադրություն հարցերին նվիրված գրականություն գրացուցակներ և տեխնիկային նորություններ մատակարարելու վրա: Առանց դրա գրադարանային աշխատավորները հնարավորություն չունեն բանվորին տեխնիկական գիրք հանձնարարելու: Այս գիտություն անվելի մեծ չափերով վերաբերում է մեր գրախանությունների աշխատավորներին: Այդ պատճառով գրադարաններին և գրախանություններին գրացուցակներ և գրախոսական ցուցակներ մատակարարելը հասունացած է անհրաժեշտ մի գործ է: Գրքերի քիտակեր հիմնելը մեծ նշանակություն ունի տեխնիկական գրականությունը մասսաների մեջ տարածելու տեսակետից: Յե. Միխեյսոնը գրում է Պետհրատի Լենինգրադի բաժանմունքի մի հետաքրքիր փորձի մասին տեխնիկական գրականություն տարածման ասպարիզում:

«Մինչևի այժմ մետաղագործ բանվորը բավարար չափով հնարավորություն չունի ժամանակին նոր տեխնիկական գրքեր ձեռք բերելու: Այդ գրքերը վաճառվում էին միայն գրախանություններում, ուր աշխատանքից հետո հողնած բանվորը հնարավորություն չունի դնալու և տեղեկանալու: Մանավանդ, վոր բանվորն ամեն անգամ չէր կարող գրքի փող վճարել, վորի դինը մեզ մոտ դեռևս բարձր է: Այս հանգամանքները հաշվի առնելով, Լենյուհրատը 1927 թ. վերջերից սկսեց գործարաններում բացել գրքի քիտակեր: 1928 թ. նոյեմբերի վերջին քիտակեր բացվեցին «Կրասնի Պուտիլովց» և «Նլեկարոսիլա» գործարաններում, այս տարվա մայիսին՝ Բալտիկ գործարանում: Այդ քիտակերի աշխատանքն ապացուցեց, վոր դրանք կենսունակ են, և ոչ ոստոս—սեպտեմբերին Պետհրատը կազմակերպեց մի շարք նման գործարանային քիտակեր: Դրանց շնորհիվ մետաղագործ բանվորը հնարավորություն կտանա անմիջականորեն ձեռնարկության մեջ ծանոթանալու նորագույն տեխնիկական գրքին: Բոլոր քիտակերում հատուկ ցուցափեղկեր կան նվիրված նոր լույս տեսնող գրականություն: Բացի դրանից, մի շարք գործարաններում արդեն կարգի յե բերված նմուշների տեղափոխությունը, վորը բանվորին հնարավորություն է տալիս ճաշիս ընդմիջումին ձեռք բերելու իրեն պետքական գիրքը՝ առանց ժամանակ և աշխատանք վատնելու:

Բոլոր քիտիներում լայն շափերով վարկ են բաց թողնում: Յուրա-
քանչյուր բանվոր հնարավորություն ունի միաժամանակ գնելու 15—20
ո. գիրք, իր պարտքը մտրելով 2-3 ամսում՝ ամեն անգամ ոտճիկ ստա-
նալիս՝ ձեռնարկության հաշվարկման բաժնի միջոցով: Տեխնիկական
ղրքի մոտեցումը բանվոր սպառողին, ինչպես և վարկ հասկացնելը,
ցուցադրական հետեւանքներ են տվել: Այսպես՝ «Կրասնի Պուտիլոկե-
ցում»-ում մեկ տարում վարկից ոգտվել են 3500 բանվոր, «Ելեկորո-
սիլայում»-ում 2000 և այլն: Վարկավորվածներից շատերը, իրենց խել
խոստովանությամբ, տեխնիկական գիրք ձեռք են բերել իրենց կյան-
քում առաջին անգամ: Այսպիսով, գործարաններում տեխնիկական սրա-
կանության տարածման գործը իր մեռյալ կետից հաջողվեց շարժել:

Լավ կլինեք, յեթե կոնֆերենցիայի այն անդամները, վորոնք ծա-
նոթ են տեղական քիտիների աշխատանքներին, հանդես գային կոնֆե-
րենցիայում՝ լուսարանելու գործարանային զրքի քիտիների գործու-
նեյությունը:

Լենինգրադի այս հետաքրքիր փորձը առավելագույն չափով
պետք է տգտագործեն արհեստակցական կազմակերպությունները,
գործարկումները, «Տեխմասսի» բաժանմունքներն ու բջիջները, վո-
րոնք պետք է նախաձեռնություն ստանձնեն բանակցություններ
վարելու և կապ հաստատելու հրատարակչությունների բաժան-
մունքների հետ՝ նման քիտիներ հիմնելու բոլոր քիչ թե շատ խո-
շոր գործարաններում և աղումներում:

Մենք արդեն մատնանչեցինք, վոր անհրաժեշտ է բջիջներից
հաստակ կազմակերպիչներ և նախաձեռնողներ նշանակել հրատա-
րակչությունների և զբախանութների հետ կապ հաստատելու հա-
մար: Կարելի յեր հիշատակել մի շարք այլ ուղիներ, սակայն,
նույնիսկ, թեկուզ այդ միջոցների ոգտագործումը բավականաչափ
կնպաստեր տեխնիկական զրքի տարածմանը բանվորական մասսայի
մեջ:

ՅԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ Ի

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ «ՏԵԽՄԱՍՍԻ» ԳՈՐԾՍՐԱՆԱ-
ՅԻՆ ԲԶԻՋ ՅԵՎ ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԱՆԻ ՆԱ

Տեխնիկական գիտելիքները բանվորին հաղորդելու կարեւո-
րագույն ձեվերից մեկը «Տեխնիկական մասսաներին» ընկերության
բջիջներն են, վորոնք կազմակերպվում են անմիջականորեն գոր-
ծարաններում: Յուրաքանչյուր բջիջի անելիքը, վերջին հաշվով,
այն եր, վոր նա աշխատի վոչ մի տեխնիկապես անգրագետ բան-
վոր չթողնել այն գործարանում, ուր գործում է ինքը: Առաջին
չբջանում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել «Տեխմասս» րն-
կերության մեջ մտցնելու այն բանվորին, վորոնք մինչև բջիջի
կազմակերպումը հետաքրքրություն են ցույց տվել և ներկայումս
հետաքրքրվում են տեխնիկայի խնդիրներով: Բայց, դրա հետ
միաժամանակ, բջիջները պետք է ուշադրություն դարձնեն ներ-
դրավելու հետամնաց բանվորներին, այն բանվորներին, վորոնք
սակավորակ են և մտել են արտագրության մեջ 7-ժամյա աշխա-
տանքային ուրվա հետեւանքով, վորակյալ բանվորներին, վորոնք
արտագրական մեծ ստաժ ունեն, բայց տեսական գիտելիքներ չու-
նեն, յերիտասարդ բանվորներին և այլն:

Ըստինքյան հասկանալի յե, վոր բանվորական լայն մասսանե-
րին «Տեխմասսին» անդամագրելը դեռևս բավարար չէ: Անհրաժեշտ
է համապատասխան պայմաններ ստեղծել նրանց աշխատանքնե-
րի համար: «Տեխմասսի» ընկերության բջիջների կարևորագույն ա-
նելիքներից մեկը հանդիսանում է ձեռնարկության մեջ յեղած
մասնագետների մեծ մասին բջիջի դեկավարման աշխատանքներին
մասնակից դարձնելը: «Տեխմասսի» գործարանային ամեն մի բը-
ջիջ պետք է լավ ըմբռնի, վոր յեթե մենք ցանկանում ենք, վոր
ճեք գործարաններում ի վերջո չմնա «վոչ մի տեխնիկապես ան-
դրագետ բանվոր», ապա մենք դրան կհասնենք միմիայն այն դեպ-

քում, յեթե ճիշտ և կարող ձեվով ոգտագործենք ձեռնարկության նարտարագետների և տեխնիկների գիտելիքներն ու նախաձեռնությունը:

Նրա կարեվորագույն խնդիրն է հանդիսանում աշխատել, վոր ձեռնարկության բոլոր ճարտարագետներն ու տեխնիկներն առանց բացառության դառնան «Տեխմաստի» բջիջի անդամ: Յուրաքանչյուր գործարանում կան մեծ թիվով հիմն վորակյալ բանվորներ և արհեստավորներ: Նրանց «Տեխմաստին» անդամագրելու վրա նույնպես պետք է լուրջ ուշադրություն դարձնել: Յուրաքանչյուր ձեռնարկության մեջ ամբողջ տարվա ընթացքում աշխատում են մեծ թիվով ուսանողներ տեխնիկական ԲՈՒՀ-երից, վորոնք բավարար չափով տեսական գիտելիքներ ունեն: Նրանց մեջ քիչ չեն կուսակցության, կոմյերիտավորության, արհմիության անդամներ, քիչ չեն պրոլետարական ծագում ունեցողներ, վորոնք առաջ աշխատել են արտադրության մեջ: Այժմ, անընդհատ արտադրական պրակտիկա մտցնելու հետեւանքով նման պրակտիկաների թիվը ամսե ամիս և տարեց տարի պետք է մեծանա: Նրանց պետք է ամբողջ ուժով անդամագրել «Տեխմաստի» գործարանային բջիջին և մասնակից անել նրա ամենորյա գործնական աշխատանքներին:

ՈՎ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ «ՏԵԽՄԱՍՄԻ» ԲԶԻՋ

«Տեխմաստ» ընկերության բջիջը կարող է կազմակերպվել առանձին անձանց, խմբակների և այս կամ այն հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ: Փորձը ցույց է տալիս, վոր մի դեպքում «Տեխմաստի» բջիջ կազմակերպում են բանվորներ, մասնագետներ, գիրեկտորներ, արհեստակցական աշխատավորներ, կոմյերիտականներ, մի այլ դեպքում՝ այնպիսի հասարակական կազմակերպություններ, ինչպես որինակ, ճարտ-տեխն. սեկցիա, կուլտհանձնաժողով, գործարկում, կոմյերիտական բջիջ և այլն: Թե ով է ձեռնարկության մեջ «Տեխմաստի» բջիջի առաջին նախաձեռնողը՝ առանձնապես մեծ նշանակություն չունի: Կարելի է այն է, վոր այդ նախաձեռնությունը մեկն ու մեկը ցուցաբերի: Բայց հետագայում անհրաժեշտ է դառնում լայն գործակցություն ծավալել այդ բջիջին անդամագրելու բանվորներին, մասնագետներին և ուսանողներին բոլոր շերտերին:

Վերին աստիճանի կարելի է նշանակություն ունի նախաձեռնող խմբակի կողմից լայն խորհրդակցություն հրավիրելը, վորին մասնակցեն բոլոր հասարակական կազմակերպությունները, առաջին հերթին ճարտ-տեխն. սեկցիայի, կուլտհանձնաժողովի,

գործարկումի, կոմյերիտական և կուսբջիջներին, վարչության և տեխնիկայով հետաքրքրվող բանվորներին, վերջիններս ողնող մասնագետների ներկայացուցիչները: Այդ խորհրդակցությունը պետք է քննի ընկերության նպատակներին և անդեղների և ապագա գործունեության ուղիներին խնդիրները: Այդ խորհրդակցության մեջ նախաձեռնող խմբակը իր կազմը լրացնում է աշխատանակ, յեռանդուն ընկերներով՝ բանվորներին, կոմյերիտականներին, կուլտաշխատավորներին, ճարտարագետներին, տեխնիկներին և պրակտիկանտ ուսանողներին կողմից: Նախաձեռնող խմբակի ամենակարգ անդամները, վորոնք այս կամ այն կազմակերպության ներկայացուցիչներն են, ամենակարգ ժամանակամիջոցում իրենց կազմակերպության անդամներին լայն ճանությանն են առաջարկում համապատասխան ղեկուցումներ, կատարում են զրույցներ ընկերության նպատակներին ծանոթացնելու համար: Որինակ՝ նախաձեռնող խմբակում աշխատող կոմյերիտականները հարց են դնում կոմյերիտական բջիջում, ճարտարագետները՝ ճարտ-տեխն. սեկցիայի պլենումում, արհեստակցական աշխատավորները՝ բանվորների ընդհանուր ժողովներում: Այսպիսով, հիշատակված բոլոր միջոցները կիրառելով, «Տեխնիկան մասսաներին» ընկերության նպատակներն ու խնդիրները կդառնան գործարանային լայն մասսաների սեփականություն:

Հաշվի առնելով բանվորներին հսկայական հետաքրքրությունն ու ձգտումը դեպի տեխնիկական գիտելիքները, կարելի է վստահ լինել, վոր այդ ձեռնարկումներն անխուսափելի կերպով կհանդես բանվորների մասսայական անդամագրությանը «Տեխմաստ» ընկերության:

ՎՈՐՆ Ե ԲԶԻՋԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՑՔԸ

Բանվորներին զարգացման մակարդակի խայտաբղետության և նրանց պահանջների բազմապատկերության պայմաններում անհրաժեշտ է կազմակերպել տեխնիկական անդրադիտության վերացման և տեխնիկական գիտելիքների բարձրացման աշխատանքի բազմազան ձևեր և մեթոդներ: Բանվորների բազմապիսի հետաքրքրությունը դեպի այս կամ այն հարցը գերազանցապես հետեւյալն է նրանց ամենորյա արտադրական գործունեության և այն հարցերի, վորոնք կապ ունեն նրանց մասնագիտության հետ և առաջանում են արտադրության պրոցեսում: Մենք բավականաչափ որինակներ բերեցինք պարզելու համար, թե ինչ չափով բանվորների ձգտումը պայմանավորվում է նրանց ցանկությամբ՝ ավելի գիտակցաբար

մասնակցելու արտադրական Կլանքին և տեխնիկայի Բմբոնելու իր սեփական աշխատանքն արտադրութեան մեջ: Դեռևս մեր կուսակցութեան IX համագումարը, վոր սեղի ունեցավ արտադրական պրոպագանդայի հարցերին խիստ ուշադրութեամբ դարձնելու շրջանում, իր բանաձևովի մեջ ամբողջ վճռականութեամբ ընդգծեց հետեւյալը. «Արհմիութեաններէ և ԺՏԳԽ միջոցով պատշաճ բարձրութեան վրա դնել արտադրական պրոպագանդան, չսահմանափակելով աշխատանքի արտադրողականութեան բարձրացման վերաբերյալ ընդհանուր կոչեր անելով, այլ կոնկրետացնելով և մասնագիտացնելով հարցերն ըստ արդյունաբերութեան ճյուղերի և առանձին ձեռնարկութեաններէ: Խնդիր դնել, վոր յարաբանչուր բանվոր իմանա ձեռնարկութեան դերն ու տեղը սոցիալիստական տնտեսութեան ընդհանուր սխտեմի մեջ»:

Բացի դրանից, պետք է հասկանալ, վոր արդյունաբերութեան ռեկոնստրուկցիայի և ռացիոնալացման անընդհատ բարդացող պրոցեսում արտադրական պրոպագանդան պարտադիր կերպով պետք է ընթանա սերտորեն շաղկապված արտադրական պրոցեսներին:

«Տեխնիկական մասսաներին» ընկերութեան պլենումում կատարած իր յերւոյթի մեջ այդ հանգամանքը մատնանշում է Նադեժդա Կոնստանտինովնա Կրուպսկայան: «Վերջերս յես յերա մի շարք գործարաններում, —ասում է նա, —վորտեղ հարց ու վորձ արեցի բանվորներին արտադրական խորհրդակցութեաններին մասին (նախազուրկացնում եմ, ընկերներ, վոր նրանից, ինչի մասին յես խոսում եմ, վոչ մի ընդհանրացում չեմ անում): Մարդ հանդիպում է այսպիսի փատտերի, որինակ՝ արտադրական խորհրդակցութեանները հրապարակում են շատ սակավ, ընդ վորում նրանք պատրաստված չեն, այն իմաստով, վոր արտադրական խորհրդակցութեաններում քննելիք հարցերը նախապես չեն մշակվում: չի յեղել վոչ նախապատրաստական դասախոսութեան այդ թեմայով, վոչ գրականութեան, վորի հետ ծանոթանային բանվորները, չեն կատարվել երեւոյրսիաներ վոչ դեպի մոտակա ձեռնարկութեանները, վորոնք վորոշակի գաղափար կտային արտադրութեան մասին, վոչ դեպի թանգարանները, այլ այս բոլորը կատարվել է գուտ անաբ նաբար: Հետեւանքն այն է լինում, վոր սահմանափակում է այդ խորհրդակցութեաններին թափը, և հաճախ բանվորները նրանցից հեռանում են շրաւարարված: Այս պատճառով, յերբեմն «Պրավդայում» յերեւացող տեղեկութեանները, թե այսինչ տեղում կայացավ արտադրական խորհրդակցութեան, վորին մասնակցեցին

կարմիր դիրեկտորը և մեկ վորակյալ բանվոր, —անկասկած վորոչ հիմք ունեն: Իհարկէ, այդ վոչ մի դեպքում չի կարելի ընդհանրացնել, բայց, այնուամենայնիվ, յես կարծում եմ, վոր յեթե խոսելու լինենք «Տեխմասի» մասին, պետք է հարցի բուն կենտրոնը դնենք բանվորների քննութեան, առանձնապես այժմ, յերբ ամբողջ յայնութեամբ դրված է ռացիոնալացման հարցը: Ռացիոնալացման հարցը չի կարող լուծվել առանց դրան մասնակից կարծնելու յայն մասսաներին: Այդ պատճառով 1920—21 թ. թ. մեր առաջ գրված արտադրական պրոպագանդայի հարցը ներկայումս առանձին սուր և առանձին ակտուալ բնույթ է ստանում: Այն հանդամանքը, վոր այդ գործը 1920 թ. քնեց, ոգից կախված մնաց այն ընդհանուր պատճառներով, վոր կային այն ժամանակ, բնավ չի նշանակում, թե արտադրական պրոպագանդան մեկ անգամ ընդմիշտ մոռացութեան է արված, վոր այժմ հարկ չկա վերակենդանայն և յայն թափ հաղորդել նրան: Հենց «Տեխմասի» ընկերութեան առաջացումը վկայում է, վոր անհրաժեշտ է յայն արտադրական պրոպագանդա մղել, և, իհարկէ, առաջին հերթին բանվորական մասսաների մեջ»:

Դրա հետ միասին անհրաժեշտ է հիշել, վոր «Տեխմասի» բըջիջը չպետք է իր աշխատանքը սահմանափակի առանձին խմբակների հարցումներն ու պահանջները բավարարելով, վորոնք բըրխում են նրանց մասնագիտութեանից և արտադրական աշխատանքից: Հիմնական և գլխավոր խնդիրն այն է, վոր, բավարարելով սկզբնական հարցերը, աշխատել ընդարձակելու առանձին բանվորների տեխնիկական գիտելիքների շրջանակը, վորպեսզի նրանք կարողանան գիտակցել և ըմբռնել արտադրական պրոցեսն իր ամբողջութեամբ:

ՏԵԽՄԱՍԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԲԶԻՋՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԻՊԱԿԱՆ ՍԵՆՄԱՆ

Կարելի յե մեջ բերել տիպական և ամենաբնորոշ մի սխեմա, վորը հիմք հանդիսանա «Տեխմասի» գործարանային ամեն մի բըջիջի համար (բոլոր բջիջների համար համասարապես պիտանի սխեմա տալ կատարելապես անկարելի յե): Իսկ «Տեխմասի» յուրաքանչյուր գործարանային բջիջի անելիքը կլինի սխեման գործադրել իր արտադրութեան սպեցիֆիկ պայմաններում, բայց թողնելով անպետք ձեւերը և ավելացնելով նորերը, վորոնք բըրխում են տվյալ արտադրութեան պայմաններից, բանվորների առանձին

խմբերի պահանջները և շահերը : Այսպիսով, «Տեխնաստի» գործարանային բջիջի որինակելի սխեման կլինի հետևյալը .

1) «Տեխնաստի» գաղափարները պրոպագանդան, 2) դասախոսությունների կազմակերպումը, 3) մասսայական երևույթներն աշխատանք, 4) տեխնիկական կինոֆիլմի ցուցադրումը, 5) տեխնիկական կոնսուլտացիա, 6) տեխնիկական գրադարան և ընթերցարան, 7) գյուտարարները խմբակներ, 8) դժգոհողների կարիքներ, 9) «Տեխնաստի» արհեստանոցներ, 10) կենցաղային տեխնիկայի խմբակներ՝ ելեկտրական լարեր և դանդ անցկացնելու, հեծանվների, կարի մեքենաների խնամելու և նորոգելու : Ռադիոյի, ֆոտոյի և այլ խմբակներ, 11) բազմատեսակ արտադրական և տեխնիկական խմբակներ և դասընթացներ, ինչպես որինակ՝ գրծադրական, ձուլման, փականազործական, ջերմատեխնիկական, քիմիական : Խմբակներ, վորոնք ուսումնասիրեն հումքը, անպատումը, դազգյազը, ցեխը և այլն : 12) Ընդհանուր տեխնիկական խմբակներ՝ մատեմատիկայից, ֆիզիկայից, քիմիայից, տեխնիկումների, ԲՈՒՀ-երի համար նախապատրաստելու և այլն : 13) Կարիքներն ոգնություն ցույց տալու ֆիզիկական, քիմիական, ելեկտրատեխնիկական խմբակներին : 14) Տեխնիկային նվիրված ցուցահանդեսներ : 15) Արտադրական թանգարան : 16) Միասնական աշխատանք մյուս ընկերությունների հետ : 17) Արտասահմանյան գրականություն և տեխնիկայի ուսումնասիրություն : 18) Արտասահմանյան նյութի ուսումնասիրություն : 19) Կապ ստեղծել տեխնիկական ԲՈՒՀ-երի տեխնիկական խմբակների և գիտահետազոտական ինստիտուտների հետ : 20) Կապ ստեղծել այլ ձեռնարկությունների ընկերության բջիջների հետ : 21) Շեֆություն ստանձնել «Տեխնաստի» գյուղական բջիջների նկատմամբ :

ՎՈՉ ՄԻԱՅՆ ՍՈՎՈՐԵԼ, ԱՅԼԵՎ ԱԿՏԻՎ ԱՇԽԱՏՆԵԼ

«Տեխնաստի» ընկերության անգամ-բանվորների անելիքը միմիայն այն չէ, վոր սովորեն այս կամ այն խմբակում և այս կամ այն տեղեկությունը ստանան : «Տեխնաստի» գործարանային բջիջի անգամ բանվորները, բացի դրանից, ամենակտիվ մասնակցություն պիտի ցույց տան և առավելագույն ինքնագործունեություն ցուցաբերեն դառնբացներ, խմբակներ հիմնելու մեջ, վորտեղ հետագայում նրանք իրենք պետք է սովորեն : «Տեխնաստի» անգամները պետք է հոգ տանեն չենք դառնելու, միջոցներ ձեռք բերելու համար, մասնակցություն ցույց տան տեխնիկական գրականություն, գրադարաններ, արտադրական թանգարան, երկուր-

ախաներ կազմակերպելու, դասախոսություններ նախապատրաստելու, կինոֆիլմեր ձեռք բերելու գործին և այլն : «Տեխնաստի» յուրաքանչյուր բջիջ կկարողանա կատարել սխեմայում հիշատակված ամբողջ աշխատանքը միմիայն ընկերության անդամների ամենալայն ինքնագործունեությունից և ակտիվության դեպքում :

«ՏԵԽՄԱՍՏԻ» ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ

Չենարկություն «Տեխնաստի» բջիջի առաջին անելիքը, նրա առաջին քայլը պիտի լինի «Տեխնիկական մասսաներին» լողունգի գաղափարները և նշանակություն ազիտացիան և պրոպագանդան : Այդ խնդրի իրականացման ամենահաջող և ստուգված ձեվը ղեկուցումներ և դասախոսություններ կարգաչն և բանվորների ցեխային և ընդհանուր գործարանային ժողովներում, կոմյերիտական բջիջի ժողովներում, կուսակցական բջիջի ժողովներում : Չափազանց արժեքավոր նշանակություն ունի ցեխերում և գործարանային ակումբներում պլակատներ և լողունգներ փակցնելը, վորոնք մշտապես կարելի չէ ստանալ ընկերության բարձրագույն մարմիններում : «Տեխնաստի» գաղափարների պրոպագանդան, մեծ հաջողություններ ձեռք բերելու համար, պետք է շարկապվի տրվյալ ձեռնարկության բանվորներին գործարանների ուցիտուրացման և ղեկունստրուկցիային մասնակից դարձնելու խնդիրներին :

«Վոչ մի տեխնիկասպես անգրագետ բանվոր տվյալ գործարանում» — ահա այն լողունգը, վորի վրա պետք է բեվեռել գործարանի բանվորության ուղադրությունը : Անհրաժեշտ է աշխատել, վոր բանվորի տեխնիկական անգրագիտությունը ամոքապարտ յերեվույթ համարվի նիշտ այնպես, ինչպես կուսակցության և կոմյերիտության անդամների քաղաքագիտություն չիմանալը և կարմիր բանակայինի ու ՊԱԶ-ը Ավիաֆիմի անդամի գեմք գործածել չիմանալը :

ԴԱՍՍԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

«Տեխնաստի» բջիջի հիմնական ուղադրությունը պիտի դարձվի այն հարցերի և թեմաների շուրջը դասախոսություններ կազմակերպելու վրա, վորոնք կապ ունեն տվյալ արտադրության հիմունքների, գիտություն և տեխնիկայի նորագույն նվաճումների հետ : Դասախոսություններ և ղեկուցումներ կարող են կազմակերպվել ինչպես ամբողջ գործարանի բանվորների, այնպես և ցեխի և բախանումների համար : Վորպես ղեկուցողներ կարող են

հրավիրվել «Տեխմաստի» գործարանային բջիջի անդամ ճարտարա-
դեպտեմենտի տեխնիկները: Ձեկուցումների համար տեղական
ճարտարագետներին սպասարկող կարելիոր է այն տեսակետից,
վոր նրանք լավ գիտեն իրենց արտադրութունն ու տեղական բան-
վորներին:

Անհրաժեշտ է բանվորական խմբակների և ամբողջ գործարա-
նի համար կազմակերպել արտասահմանից վերադարձած ընկերնե-
րի ղեկուցումները, դասախոսութուններն ու զրույցները: Յեթե
«Տեխմաստի» բջիջը տեղեկանում է, վոր արտասահմանյան գործու-
ղումից վերադարձել են հարակից արտադրութային կամ նույն ար-
բատի աշխատավորներ, նա պետք է ամեն միջոց ձեռք սունի
նրանց ղեկուցումը դնելու բանվորական ժողովներում:

Տեխնիկական գիտելիքների մասսայական պրոպագանդայի
փորձը ցույց է տալիս, վոր հայտարարութունները վատ կատա-
րելու պատճառով, բանվորական լայն մասաները հաճախ դասա-
խոսութային կամ ղեկուցման մասին տեղեկանում են նախորդ որը
կամ նույն որը: Պետք է ամենալուրջ ուշադրութուն դարձնել դա-
սախոսութուններ կազմակերպելու և նախապատրաստելու վրա,
նշանակել հատուկ ընկերներ, վորոնք պատասխանատու լինեն դը-
րանց նախապատրաստման համար:

Բանվորների ուշադրութունը գրավելու համար պետք է դա-
սախոսութուններից մի քանի որ ստաջ ցեխերում, բաժանմունք-
ներում, ակումբներում համապատասխան պրակտիկներ փակցնել՝
մատնանշելով թեման: Նպատակահարմար կլիներ նշանակել 2-3
մասնագետներից և ամենաակտիվ բանվորներից կազմված մի
փոքրիկ խմբակ, վորը մշակի տեխնիկայի զանազան հարցերին
նվիրված դասախոսութունների թեմաներ և պլաններ: Յուրաքան-
չյուր ցիկլի մեջ կարելի չե մտցնել միևնույն հարցին նվիրված
մի քանի թեմա: Դրա հետ միասին պետք է աշխատել, վոր մատնա-
նշված ցիկլի յուրաքանչյուր դասախոսութունը կատարելապես
ամբողջական բնույթ ունենա, և այնպես, վոր ունկնդիրների մեջ
հետաքրքրութուն առաջանա նույն հարցին նվիրված հաջորդ դա-
սախոսութային հանդես, և վոր այդ հաջորդը լրացում՝ հանդիսա-
նա առաջին և լուծի առաջին դասախոսութունից դրված մի
շարք հարցեր: Անհրաժեշտ է նկատի առնել, վոր դասախոսու-
թյունները ունկնդիրները պետք է լինեն տեխնիկապես անդրագետ
բանվորները, վորոնք ծանոթ չեն ֆիզիկայի և մատեմատիկայի
հիմնական որոնքներին: Այդ պատճառով անհրաժեշտ է լուրջ ու-
շադրութուն դարձնել բացատրութունների մատչելիութային վրա

և դասախոսութունները առավելագույն չափով մատչելի դարձնել
բանվորական մասսաներին: Այդ նպատակին կարելի չե հասնել
դասախոսութունները լուսաբանելով դիպուկորեն, դիա-
գրալներով, նկարներով և գծագրութուններով: Ձեկուցումներ
պատրաստելու գործին «Տեխմաստի» գործարանային բջիջի անդամ
բանվորներն ամենաակտիվ մասնակցութուն են ցույց տալիս նյու-
թերի էքսպոնատներին, թվերի ընտրութային, դիպուկամեթոդի և դա-
սախոսութունը լուսաբանելու համար անհրաժեշտ այլ ոժանդակ
նյութերի պատրաստման ժամանակ: Դիպուկամեթոդի, դիպուկիցե-
րի և դիպուկութունների պատրաստումը կարելի չե հանձնարարել
գծագրական խմբակներում պարապող «Տեխմաստի» անդամներին:
Այս մեթոդների կիրառումն անխուսափելիորեն կուժեղացնի «Տեխ-
մաստի» անդամների ինքնադրժուներութունը և բանվորական
լայն մասսաների հետաքրքրութունը դեպի այդ դասախոսութուն-
ները:

ԿԻՆՈ

Վերջին ժամանակներս տեխնիկական կինոֆիլմեր հրատա-
րակելու ասպարիզում մենք նկատում ենք վորոշ ստաջադիմու-
թյուն: «Տեխմաստի» բջիջն ամեն միջոց պետք է ձեռք առնի ոգ-
տադրժելու դրանց, վորպեսզի ավելի մատչելի և ակնառու դար-
ձնի տեխնիկական թեմա ունեցող դասախոսութունները:

ԵՔՍԿՈՒՐՍԻՈՆ ԱՇԽԱՏԱՆԻ

Մի շարք արդյունաբերական կենտրոններում կան դանազան
կազմակերպութունների հիմնած տեխնիկական ցուցահանդես-
ներ, ուր հավաքված են տեխնիկական գրականութուն, մեքենա-
ներ, դադգյահներ, սարքավորում, կամ ցուցադրական պահեստ-
ներ, ուր կենտրոնացված են բոլոր նորագույն, ուսուսումնական և ար-
տասահմանյան, նվաճումները և ներմուծվող սարքավորման նը-
մուշներ: Դրանց հետ ծանոթանալու համար «Տեխմաստի» բջիջը
պետք է կազմակերպի պարբերական եքսկուրսիաներ՝ հմուտ ճար-
տարագետների և տեխնիկների ղեկավարութային: Բացի ցուցա-
հանդեսներից և ցուցադրական պահեստներից, եքսկուրսիաներ կա-
րող են կազմակերպվել դեպի հարակից արտադրութային գործա-
րանները՝ նրանց նվաճումների հետ ծանոթանալու և դրանք իրենց
գործարանում կիրառելու համար: Սակայն էքսկուրսիան աշխա-
տանքը չպետք է սահմանափակվի հարակից արտադրութային ցու-
ցահանդեսներն ու գործարանները հաճախելով: «Տեխմաստի» բը-

Չիջի անելիքը պիտի լինի ժամանակին հաշի տանել բանվորների հետաքրքրությունը դեպի տեխնիկայի բազմազան ճյուղերը և դեպի մեր շինարարական խոշոր կառուցումները՝ Վոլյոսկոստրոյը, Գնեսլոստրոյը և այլն: Այդտեղ պետք է ուղարկել բանվորական մասսայական, նախապես պատրաստված եքսկուրսիաներ: Եքսկուրսիաների պատրաստման գործին պետք է մասնակից անել, բացի ճարտ-տեխնիկական կազմից, նաև «Տեխմաստի» անդամ շարքային բանվորներին:

ԳՐԱԿԱՐԱՆ

Մեր գործարանային ձեռնարկություններում դեռևս հազվա-գյուտ են այնպիսի տեխնիկական գրադարանները, վորոնք ունեն քիչ թե շատ լավ ընտրված մասսայական տեխնիկական գրականություն: «Տեխմաստի» գործարանային բջիջը պետք է լարի իր բոլոր ջանքերը գործարանային գրադարանին կից կազմակերպելու մատչելի տեխնիկական գրականության բաժին:

Առաջին հերթին նրա մեջ պետք է կենտրոնացվեն տվյալ արտադրութային համար բնորոշ առանձին մասնագիտության դեքերը: Լուրջ ուշադրություն պետք է դարձնել նաև գրադարանի համար տեխնիկական թարգմանական գրականություն ձեռք բերելու վրա, վորը լուսարանի արտադրության տվյալ ճյուղի մեջ յեվրոպական և ամերիկյան տեխնիկայի ունեցած գլխավոր նվաճումները: Տվյալ արտադրության վերաբերյալ մասնագիտական գրականությունից բացի, անհրաժեշտ է ձեռք բերել մասսայական գրականության տեխնիկայի այլ հարցերի և արտադրության այն ճյուղերի վերաբերյալ, վորոնք ամենից շատ են հետաքրքրում առանձին բանվորներին, այսինքն՝ էլեկտրատեխնիկայից, ռադիոյից, ավիացիայից, ֆիմիայից և այլն, յուրաքանչյուրից մի քանի որինակ: Բանվորներին պետք է լայնորեն իրազեկ պահել գրադարանի ունեցած գրականությանը, աչքի ընկնող տեղերում վաղցնելով յեղած դեքերի ցուցակը, և ամեն միջոց ձեռք առնել բանվորներին գրավելու դեպի գրադարան: «Տեխմաստի» այն բջիջը, վոր միջոցներ չունենալու պատճառով գրադարանին կից բաժին չի կարողանում կազմակերպել, կամ ուր յեղած գրականությունն անբավարար է, պետք է կապ հաստատի շարժական գրադարանի հետ: Հենց «Տեխմաստի» գրադարանին կից պետք է համախմբել այդ բոլոր հրատարակությունները, պլակատները, թերթիկները, դիադրամներն ու դժադրությունները, վորոնք նպաստում են «Տեխմաստի» գաղափարների ժողովրդականացման և տարածման:

Բազմատեսակ շատ հարցեր կան և որեցոր հարուցվում են բազմաթիվ բանվորների մեջ նրանց արտադրական աշխատանքի և վործունեության վորոցեսում: Գործարանում այդպիսի մի կայան, ուր յուրաքանչյուր բանվոր վորոշ որերի և ժամերի կարողանա դոհացուցիչ պատասխան, տեղեկություն ստանալ իրեն հետաքրքրող վորևե հարցի առթիվ, հանդիսանում է գործարանային տեխնիկական կոնսուլտացիան: Նրա կազմակերպման վրա առանձին ուշադրություն պետք է դարձնել «Տեխմաստի» բջիջը: Նրա աշխատանքներին պետք է ներդրավի ճարտարագետների և տեխնիկների, պրակտիկանա ուսանողների, «Տեխմաստի» գործարանային բջիջի անդամ վարպետների ամենակտիվ և պատրաստի մասը:

Ճարտարագետներին և տեխնիկներին պետք է հրավիրել կոնսուլտացիա կատարելու տեխնիկայի ամենաբազմազան ասպարեզներից և տվյալ արտադրության բոլոր առանձին մասնագիտություններից: Կոնսուլտացիայի յեկող ամեն մի բանվոր պատասխան պիտի ստանա իրեն հետաքրքրող բոլոր հարցերին տեխնիկայի և արտադրական կյանքի տարբեր ճյուղերից: Յեթե այս կամ այն ընկերը հետաքրքրվում է քիմիայի, Ֆիզիկայի, էլեկտրատեխնիկայի հարցերով կամ իր արտադրությանը, ապա կոնսուլտացիայում նա դոհացուցիչ պատասխան պիտի ստանա և ցուցումներ համապատասխան գրականության, առանձին գլուխների և էջերի վերաբերմամբ, վորտեղ լուսարանված են նրան հետաքրքրող հարցեր: Հաճախորդներին մատչելի և հասկանալի ձևով բացատրություններ պիտի տրվեն ուղած հարցերի առթիվ, վորոնք անհասկանալի յեն նրանց համար՝ նույն որը կամ վորոշ ժամանակ անց: Բացի միանվազ ողնությունից, կոնսուլտացիան նպատակ պետք է ունենա ավելի տեվական, մշտական տեխնիկական ողնություն ցույց տալու ընկերների առանձին խմբերի, անկախ նրանց տված հարցումներից: Յեթե այս կամ այն բանվորը հետաքրքրվում է վորևե հարցով, վորը պահանջում է մեկ շաբաթվա, ամսվա, կես տարվա սխտեմատիկ աշխատանք, ապա կոնսուլտացիան պետք է տա համապատասխան հարմարություններ: Այդ նպատակով անհրաժեշտ է տեխնիկական կոնսուլտացիային կից սարքավորել հատուկ կաբինետ, մի սենյակ (ցանկալի յե դրադարանի շենքում) — 20-30 հոգու համար, ուր առանձին բանվորներ կարողանան անդորր պայմաններում զբաղվել գրքով և ուղած բոպեյին դիմել հերթապահ խորհրդատուին՝ բացատրություն և տեղեկություն ստանալու:

Վերջապես, տեխնիկական կոնսուլտացիան իրեն դիմող բանվորին հայտնում է, թե նա ինչպես գործարանում, այնպես և նրանից դուրս ինչ խմբակ՝ պետք է մտնի կանոնավոր կրթութուն ձեռք բերելու կամ տեղեկութուն ստանալու համար:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՏԱՐԱՐՆԵՐԻՆ

Չեոնարկութուններում մինչև այժմ գոյութուն ունեցող գյուտարարության նպաստող բազմատեսակ բյուրոներն իրենց վարչական բնույթի, ինքնամփոփի և բանվորական մասսաներից մեկուսացած լինելու պատճառով ոգնութուն չեն ցույց տալիս գյուտարարին, և հաճախ նրանց գոյության մասին վոչ վոքի հայտնի չի լինում: «Ռարոչայա Մոսկվայի» հունվարի 27-ի «Ինչով է հիվանդ Կալոմենակի գլխատը» հոդվածում գրված է. «Գյուտարարության նպաստող հանձնաժողովը բավարար չափով ակտիվ չի յեղել: Վորովհետև բանվորները զիչ տեղեկութուններ են ունեցել նրա աշխատանքների մասին, այդ պատճառով հանձնաժողովին կից տեխնիկական կոնսուլտացիան, վորը կազմված է արագբության զանազան ճյուղերի 10 բարձրորակ խորհրդատուներից, բանվորներից վոչ մի դիմում չի ստացել ոգնութուն ցույց տալու մասին, և այդ տեղի յե ունեցել այնպիսի ժամանակ, յերբ մի շարք ցեխերում բանվորները պատմում էին ԿՎՀ հանձնաժողովին, թե իրենք վորոչ իդեա մշակել են, բայց վոչ մի կերպ չեն կարողացել իրացնել, վորովհետև կոնսուլտացիա և տեխնիկական հաշիվներ կատարել չեն իմացել»: Կայմենակի գլխատի որինակը բնորոչ է մեր Միության բազմաթիվ գործարանների համար: Գեո. ավելին՝ նրանցից շատերը չունեն խորհրդատուներ և նույնիսկ «հայտնի չե, թե ուր են» յեղածները, իսկ դրա հետևանքն այն է լինում, վոր հարյուրավոր թանգարժեք գյուտեր անտեղի կորչում են: «Տեխնասի» գործարանային բժիշկ առանձին ուղարկութուն պետք է դարձնի գյուտարար բանվորների վրա: Նախ և առաջ՝ նա պետք է հաշվառման յեխնիկի ինչպես հայտնի գյուտարարներին, այնպես և այն բանվորներին, վորոնք դեռևս վերջնականապես չեն պարզել իրենց դեմքը, բայց եակում ունեն դեպի գյուտարարութունը՝ նրանց «Տեխնասի» բրջիցին կից գյուտարարների խմբակում համախմբելու նպատակով:

Գյուտարարների խմբակ կազմակերպելու հետ միաժամանակ պետք է միջոցներ ձեռք առնել ճարտարագետներից, տեխնիկներից և պրակտիկանոս ուսանողներից ընտրելու նրանց, ովքեր «Տեխնասի» առաջավոր անդամներ են՝ խմբակի աշխատանքները դե-

կալարելու համար: Յեթի ձեռնարկության կից կա գործուս, ապա խմբակի աշխատանքների համար չափազանց նպատակահարմար կլինի ոգտագործել նրա գծադրական կաբինետն իր սարքավորումով և գծադրական պարագաներով: Իսկ յեթե գործարանին կից չկա գործուս, «Տեխնասի» բժիշկը միջոցներ է ձեռք առնում անհրաժեշտ պարագաներ ստանալու: Հերթապահ ճարտարագետներն ու տեխնիկներն իրենց դիմող գյուտարարներին պետք է տրամադրեն բոլոր անհրաժեշտ նյութերը, իսկ հարկ յեղած դեպքում (յեթե գյուտարարն ինքը չի կարողանում) լմբանեն գյուտարարներին յոգեան և նրանց հիշատակած հիմնական ավյալները և նրանց անմիջական մասնակցությամբ նրանց համար պատրաստեն պետք յեղած գծադրութունները: Առաջին տեխնիկական ոգնութունը ցույց տալուց և ավյալ գյուտի ոգտակարութունը հատատելուց հետո, խմբակի բյուրոն գյուտը ըննության է դնում գյուտարարների խմբակի անդամների առաջ, դրանով իսկ ավյալ գյուտի վրա դարձնելով ամբողջ գյուտարարական հասարակայնության ուղարկութունը:

Այնուհետև խմբակի բյուրոն միջոցներ է ձեռք առնում պատրաստելու գյուտի մոդելներ կամ նմուշներ: Այս նպատակով պետք է յիակատար չափով ոգտագործել ձեռնարկության արխեստանցներն ու սարքավորումը: Հաճախ, յերբ բանվորների գյուտերն անմիջական առնչութուն չեն ունենում ավյալ արտադրության հետ, գյուտարարները պատշաճ ուղարկութուն և ոգնութուն չեն ստանում անտեսական և հասարակական կազմակերպութուններից, իսկ յերբեմն նաև գործարանի գյուտարարության նպաստող մարմիններից: Գյուտարարներին խմբակը վճռական պայքար պետք է մղի նման տեղեկանքների դեմ և բազմակողմանի ոգնութուն ցույց տա այդ գյուտարարներին: Այլ դեպքերում խմբակը պետք է ոգնի նրան կապ հաստատելու և ոգնութուն ստանալու ուրիշ ձեռնարկութուններին կից գյուտարարության նպաստող մարմիններից կամ ուղարկի նրան «Տեխնասի» շրջանային, նահանգական, համալրութենական սեկցիաները:

«Տեխնասի» բժիշկը և մասնավորապես գյուտարարներին խմբակի բյուրոն կարող է իր վրա վերցնել լորորատորիաներ և կարենետներ հիմնելու նախաձեռնութունը: Գյուտարարներին խմբակներն ամեն կերպ նպաստում են այն գյուտերի գործադրելուն, վորոնք ուրիշ հարակից գործարաններում արդեն գործադրվում են: Նրանք պետք է ոգնութուն ցույց տան վոչ միայն այն գյուտարարներին, վորոնց գյուտերի ոգտակարութունն արդեն ակներև

ե, այլ և նրանց, ում իրեան դեռևս ամբողջովին չի ձեռնակերպված՝ խրատուներով նրանց արտադրական մտքի ստեղծագործական ուղղութիւնը:

Գյուտարարները խմբակը հատկապէս նշանակված ընկերները միջոցով պետք է կապ հաստատի գործարանի եքսպերտ հանձնաժողովի, վարչութիւն և գյուտարարութեան նպաստող բոլոր մարմինների հետ: Այդ ընկերները պետք է գյուտարարների համար գյուտարարներն գյուտը ներկայացնելու վերաբերյալ վկայականի և պատենտի ստացումը:

Գյուտարարները խմբակները հոգ են տանում, վորպէսզէ իրենց նվաճումներն ու իրացված գյուտերը «Տեխնաստի» բարձրագույն մարմինների, մյուս հասարակական կազմակերպութիւնների և մամուլի միջոցով դառնան մյուս ձեռնարկութիւնների սեփականութիւն: Գյուտարարները խմբակի կարևորագույն անելիքներից մեկն է այս կամ այն գյուտի շուքը մրցութեամբ կազմակերպելը:

ԿՆՆՅԱՂԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՐՃԱՏԵՎ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ

Բաղմաթիվ բանվորներ և յերիտասարդ բանվորներ մինչև այժմ դեռևս բացարձակապէս ծանոթ չեն տեխնիկային, վորի ծանոթութիւնն անհրաժեշտ է առօրյա կյանքում և տանը: Տեխնիկայի այդ ճյուղերից են էլեկտրական լույս և ցանց անցկացնելը, ռադիոընդունիչ, ջրմուղ, կոյուղի շինելը և այլն: Գործարաններում բաղմաթիվ բանվորներ հեծանիվ ունեն, բայց չգիտեն նրանց կառուցվածքը, չեն կարողանում քանդել և սարքել նրան, իսկ վորևէ չնչին կտրվածքի դեպքում՝ նորոգել: Վոմանք ունեն կարի մեքենա, բայց նրանց հետ վարվել չեն կարողանում: Որեցոր աճում է Փոտոսիքողների թիվը, բայց քչերը գիտեն Փոտոսի հիմնական որևէքները, իսկ ավելի քչերն են կարողանում նրա հետ վարվել, չիտեսելով արդեն ինքնուրույն կերպով ռադիո-ընդունիչ և Փոտոսպարատ պատրաստելու մասին: «Տեխնաստի» բջիջը պետք է կազմակերպի կենցաղային տեխնիկայի կարճատև դասընթացներ, վորտեղ բանվորները սովորեն էլեկտրական լույս և ցանց անցկացնել, ռադիոսի և Փոտոսի հետ վարվել և ինքնուրույն կերպով պատրաստել, հեծանիվ և կարի մեքենա գործածել և նորոգել: Այդպիսի դասընթացներ հեշտութեամբ կարելի չէ կազմակերպել գործարանային աշխատքին կամ գործուսին կից:

Վորպէս գործնական պարապմունքների համար անհրաժեշտ նյութ, կարելի չէ ոգտագործել ձեռնարկութեան մեջ յեղած հին էլեկտրոլարերը և մեքենաների մասերը: Պարապմունքները ղեկա-

վարելու համար դժվար չէ հրավիրել «Տեխնաստի» բջիջի անդամ վարպետների և տեխնիկների: Դասընթացներում միջին հաշվով կարող են պարապել 15-20 հոգի:

Կենցաղային տեխնիկայի կարճատև դասընթացների հոկայական նշանակութիւնն այն է, վոր նրանք հնարավորութիւն են տալիս սովորեցնելու այդ հարցերով զբաղվող մեծ քանակութեամբ բանվորների, վորոնք, բացի իրենց տեխնիկական գիտելիքներից, տարրական գիտելիքներ ձեռք կրերեն Ֆիզիկայից, քիմիայից, մեխանիկայից և այլն:

Ստորև մանրամասն կնկարագրենք Մոսկվայի վորձնական տեխնիկային կից այդ դասընթացների գործունեութիւնը, նրանց ծրագիրը, կթվարկենք անհրաժեշտ նյութերը, դեկլավարողների կազմը և դասավանդման մեթոդը: Բոլոր այն գործարանային բջիջները, վորոնք հանկութիւն ունեն նման դասընթացներ կարծակերպելու, կարող են ոգտագործել տեխնիկական կայանի փորձը:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐ

Բանվորների նամակներից մենք տեսանք, վոր նրանցից շատերը, բազմամյա արտադրական վորձ ունենալով, այնուամենայնիվ, տեխնիկական գիտելիքներ չունենալու պատճառով, տկախվ մասնակցութեամբ չեն կարողանում ցույց տալ արտադրական խորհրդակցութեամբ յարմարեցնել և ռացիոնալացման ձեռնարկումներին, չեն կարողանում գործածել նոր դազգյախներն ու մեքենաները: Այդ յերևույթն ավելի մեծ չափերով վերաբերում է արտադրութեան մեջ նոր մտնող բանվորներին: Այդ պատճառով միանգամայն անհրաժեշտ է, վոր «Տեխնաստի» գործարանային բջիջը կազմակերպի դանադան տիպի արտադրական և տեխնիկական խմբակներ:

Արտադրական խմբակի հիմնական անելիքն է՝ հնարավորութիւն տալ բանվորին ոտանալու տեխնիկական տարրական գիտելիքներ, վորոնք անհրաժեշտ են իր մասնագիտական աշխատանքին գիտակցական վերաբերմունք ցույց տալու և իր վորակի բարձրացնելու համար: Դրա հետ զուգընթաց և միաժամանակ դեկլավարները պետք է ունկնդիրների ուշադրութիւնը կենտրոնացնեն բնագահնուր տեխնիկական խորիքների, այսինքն՝ ֆիզիկական և քիմիական այն որեմքների վրա, վորոնք հանդիսանում են դազգյախների, մեխանիզմների և հարմարեցված մեքենաների կառուցվածքի հիմքը:

Տեխնիկական գիտելիքների մասսայական պրոպագանդայի փորձը ցույց է տալիս, վոր յուրաքանչյուր ձեռնարկութեան մեջ՝

Յայժմ նրա արտադրութեան բնույթին, մասնագիտութեաններէ տարբերութեանը և սարքավորման սխառեմին, կարելի չէ կազմակերպել համադաստասխան արտադրական և տեխնիկական խմբակներ: Ամենատարածված խմբակներն են. դժադրական, սովորական, փականագործի, դարբնի, հնոցպանի, մեքենավարների, թելավոր նյութերի, մեռադի տեխնոլոգիայի և այլն: Մեխանիկական ցեխում որևէ կազմակերպել, սովորական դադդյաճի վրա դանդաղ ստուսակներ կտրելու համար ստամնավոր անխմբուս ուսումնասիրելու խմբակ: Ամփոփել ցելուսում՝ նշանակման, չափական գործիքների ուսումնասիրութեան և այլ խմբակներ:

Այդ պատճառով նոր սարքավորում ունեցող, ինչպէս և տեխնիկայի վերջին խոսքով կառուցված նոր ձեռնարկութեաններում նպատակահարմար կլինեն ստանձին ճարտարագետները, տեխնիկները ղեկավարութեամբ կազմակերպել ամբողջականի, նոր մեքենայի, դազգյանների կամ մեքենաների խմբի կամ կոմպլեքսի ուսումնասիրութեան խմբակներ: Հաճախ պատահում են դեպքեր, յերբ միևնույն դադդյաճի վրա մի քանի տարի աշխատած բանվորը վոչ մի գաղափար չի ունենում իր իսկ ցելի կամ մյուս ցելիներէ դադդյաճների կառուցվածքի մասին: Այսպիսով նա գտրի և իր արտադրական պրոցեսի ակտիվ մասնակիցը լինելու հնարավորութեանը: Այս դեպքում անմիջականորեն գործարանում ճարտատեխն. ուժերի ղեկավարութեամբ կազմակերպված խմբակները, վորոնց նպատակն և ուսումնասիրել իրենց ցելը, բաժանմունքը, գործարանը, խոչոր դեր կարող են կատարել այն խմաստով, վոր կբարձրացնեն բանվորների տեխնիկական պատրաստականութեանը և կնպաստեն մտցնելու նրանց ամբողջ ձեռնարկութեան ուսցիտնալացման գործի մեջ: Նմանապէս նպատակահարմար և ձեռնարկութեաններում կազմակերպել պատահական հանձնաժողովներ, վորոնք ընեն արտադրական խորհրդակցութեաններում զբաղված և սկզբնական տեխնիկական նախապատրաստութեան պահանջող հարցեր, վորոնք ուսումնասիրեն անպիտելու, ինքնարժեքի բարձրացման պատահանները, վորոնք ուսումնասիրեն հումքը և այլն:

ԱՅԳԳԻՍԻ ԽՄԲԱԿՆԵՐ ԱՐԳԵՆ ԿԱՆ

«Գաղի գործարանում աշխատում են 1650 հոգի: Ճարտարագետական-տեխնիկական սեկցիան, ՀԱՄԼԿՅԵՄ բջիջը և գործարկում կազմակերպել և գործի յեն դրել յերկու խմբակ: Առաջին՝ դժադրական-թվարանական խմբակն ընդգրկում և 15 յերկտասարդ

և 20 հատակավոր բանվոր: Այդ խմբակն աշխատում և չարաթափան մեկ անդամ, և բանվորներն աշխատանքի յեն գալիս բաղարար կրողով, վորովհետև պարտաբանները սերտորեն կապված են գաղային ցանց անցկացնելու աշխատանքների հետ: Խմբակի հաճախորդները, այսպիսով, ծանոթանում են այն առարկաներին, վորոնց հետ նրանք առնչութեան ունեն գործնականում: Յերկրորդ՝ արտադրական-տեխնիկական խմբակն ուսումնասիրում և գաղերի արտադրութեան գործը: Այդ խմբակում գերազանցապէս աշխատում են մեծահասակ բանվորները, վորոնք արդեն ծանոթ են քիմիայի հիմնական գրութեաններին, գաղի արտադրութեան հետ և ունեն վորձատութեան և գլխաւորներ: Պարտաբանները սեղի յեն ունենում չարաթափան մեկ անդամ: Բոլոր ցելիների բանվորները հաջորդաբար, տեսական պարտաբաններին հետ միասին ունենում են նաև գործնական պարտաբանները: Գարնթաղը տեղում և մեկ սեզան (ձմեռը): Խմբակն ունի 16 հոգի: Խմբակի սպասարկման համար կա տեխնիկական գրադարան և կազմակերպվում և տեխնիկական անկրան: Վերահիշյալ խմբակներին և բնդհանրապէս մշտական կոնսուլտացիային ամբողջովին շարտարկում և ճարտարանպետական-տեխնիկական սեկցիան: Գործարանային կազմակերպութեանները նույնպէս ոժանդակում են այդ աշխատանքներին: Խմբակների աշխատանքի պլանն ու ծրագիրը ամբողջովին չաղկապված են արտադրութեան հետ և մշակված ձՏՄ բյուրոյի՝ ձեռքով: Բանվորները հետաքրքրվում են խմբակներիով: ՀԱՄԼԿՅԵՄ բջիջն ակտիվ մասնակցել և և մասնակցում և խմբակի անդամներ հավաքելու գործին: Ներկայումս գործարանում ստեղծված և նախաձեռնող խմբակ՝ ձՏՄ, ԼԿՅԵՄ և գործարկումի ներկայացուցիչներին՝ «Տեխնասի» գծով մշտական պլանային աշխատանք կատարելու համար:

Մոսկվայի Բառւմանի ուսյնի ներկարարական-ապաքատուր գործարանում կազմակերպված և գժադրական խմբակ՝ 14 հոգուց: Պարտաբանները ղեկավարում և ստաժյոր մեխանիկը: Խմբակը լավ են հաճախում: Նույն տեղում կազմակերպված և տեքստիլ գործի և արտադրութեան ուսցիտնալացման խմբակ: Խմբակը ղեկավարում են ճարտարագետներն ու տեխնիկները, վորոնք միաժամանակ մշակել են ծրագիրը»:

«Բառւմանի շրջանի «Ապատագրված Աշխատանք» տեքստիլ գործարանում աշխատում են 1300 հոգի: Ձեռնարկութեան մեջ կազմված և և արդեն գործի յեն անցել գժադրողների 18 հոգուց

բաղկացած խմբակը: Խմբակի ղեկավարման գործի մեջ հրապիր-
ված է ճարտ. — տեխն. սեկցիան: Պարապմունքները տեղի յեն ու-
նենում շաբաթական յերկու անգամ՝ շաբաթ և կիրակի օրերը:

Ներկայումս խմբակում անցնում են գծադրության հիմունք-
ները: Վորոշ ընկերների հետ կատարած դրույցներից պարզվեց,
վոր նրանք շատ դուր են խմբակից, հետաքրքրվում են նրա գոր-
ծունեյությամբ և վոր պահանջ կա նման յերկրորդ խմբակ կազ-
մակերպելու:

Նմանապես գործի յե անցել և 7 պարապմունք է ունեցել շո-
ֆերները խմբակը, վորին ղեկավարում և տեղական շոֆերը: Ծա-
նոթանում են ընդհանրապես մատուցների, ավտոյի դամբույղի
կազմության, առանձին մասերի անունների և մեքենան գործածե-
լու հետ: Կուլտանաձևափոխումն սկսել է կազմակերպել նաև վորակի
բարձրացման խմբակներ: Նախատեսված են յերկու հիմնական
խմբակ՝ մեխանիկական և հյուսվածքի՝ ունենալով թե տեսական
և թե գործնական պարապմունքներ: Յերկու խմբակում միասին
պարապելու յեն մոտ 80 հոգի: Խմբակների ղեկավարներն են լի-
նելու գործարանի վորակյալ ուժերը»:

«Քառամանի ուսյունի աշխատանքի հերոս Ուիլյ Զվանկովի ան-
վան շքի գործարանում կազմակերպված են կրտսեր վարպետներին
յերկու խմբակ, վորոնց ղեկավարում է իրենց վարպետը: Խմբակ-
ների աշխատանքի համար ողտագործվում է գործարանի յար-
քատորիան: Հաճախումը հասնում 8 տոկոսի»:

Կարելի յեր բազմաթիվ օրինակներ բերել ձեռնարկություննե-
րում յեղած բազմատեսակ արտադրական խմբակներից: Մենք
դիտավորյալ կերպով կանգ առանք բերված օրինակների վրա,
ցույց տալու համար, թե ինչ հաջողություններ են ունենում խմ-
բակները, յերբ նրանց աշխատանքը կապվում է արտադրության
հետ և յերբ նրանց ղեկավարելու համար հրավիրվում են ճարտ.-
տեխն. ուժերը, վորոնք յալ գիտեն րանվարների պահանջները,
յալ ծանոթ են արտադրությանն ու պարապելու առարկաներին:

Նպատակահարմար կլիներ աստիճանաբար խմբակներից անց-
նել կարճատև դասընթացների սխեման՝ մեկ շաբաթից մինչև
վեցամսյա, նույնիսկ մեկ տարվա տևողությամբ, պայմանով՝
վոր սահմանված ժամանակամիջոցում սպառիչ կերպով մշակվե-
այս կամ այն մասնադիտության և արտադրական վորակի մեկ
վորոշակի խնդիր: Դասընթացների սխեման անցնելը, յերբ
պետք է պահպանվի նպարտմունքների հիմնական բովանդակու-

թյունը, վոր բնորոշ է ներկայումս դոյություն ունեցող և կազ-
մակերպող խմբակների համար, կարճաճացնի իր կրթության
համար ունեցած պատասխանատվությունը, կնպաստի պարապ-
մունքներին յալ հաճախելուն և կոժանդակի ունկնդիրներին
դասընթացն անցնելուց հետո լիակատար տեղեկություններ ձեռք
բերելու մեկ կատարելապես կոնկրետ, թեկուզ վորքը, հարցի վերա-
բերյալ:

Արտադրական խմբակների հետ միասին շտապանց ցանկալի
յե, վոր «Տեխմաստի» բջիջները կազմակերպեն գանազան խմբակ-
ներ և կարճատև դասընթացներ՝ նվիրված ընդհանուր տեխնիկա-
կան դիտլիքների, վորոնք անհրաժեշտ են տեխնիկական գրագետ
բանվորին: Դրանց թվին պետք է դասել թվաբանության, հանրա-
հաշիվի, յերկրաչափության, Ֆիզիկայի, բիմիայի և այլ առարկա-
ների ուսումնասիրության խմբակները:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

«Տեխմաստի» բջիջը մեծ ուշադրություն պետք է նվիրի արտա-
դրական թանգարանների, տեխնիկական անկյունների և տեխնի-
կայի ցուցահանգեսների կազմակերպման գործին: Արտադրական
խմբակները պետք է ընդգրկեն բոլոր այն հիմնական նյութերը,
վորոնք հնարավորություն են տալիս ակնհայտ կերպով վերահա-
սու լինելու բոլոր բազմատեսակ արտադրական պրոցեսներին,
նրանց թերություններին ու նվաճումներին, արտադրության վի-
ճակին ու զարգացմանը: Արտադրական թանգարաններ կարելի յե
կազմակերպել գործարանի կամ ակումբի շենքերից մեկում: Նրա-
նում պետք է համախմբվեն ձեռնարկության և յեխների մոդելներն
ու մակեաները, գործարանում վերամշակվող հումքի, կիսա-
ֆարբիկատի դանազան տեսակները, կիսաֆարբիկատներ վերամշ-
ակման գանազան փուլերում, հարուստ արտադրանք, վորը լու-
սաբանի գործարանի տնտեսական զարգացումը, արտադրության
նվաճումներն ու թերությունները:

Անպայման արտադրական թանգարաններում պետք է ունենալ
չալ և վատ սարքավորման նմուշներ, արտադրանքներ, վորոնց
հետ միասին սովյալներ՝ հիշատակելով հումքի վորակի, առանձին
բանվորների ղեպի արտադրությունն ունեցած վերաբերմունքի մա-
ոին: Այդտեղ սովյալներ պետք է լինեն աշխատանքի բարձր կամ
ցածր արտադրողականության, արտադրանքի ինքնաբեկ իջեցման

կամ բարձրացման պատճառների մասին: Թանգարանում տեղ պեռք-
ե հատկացնել մոզեղներին նմուշներին, նորագույն դազգյահներին
և մեքենաներին, արտադրութեան ավյալ ճյուղի մեջ գիտութեան
և տեխնիկայի ունեցած նվաճումներին, վարժնք արդեն կիրառ-
վում են, բայց դեռևս մուտք չեն գործել դործարանային արտա-
դրութեան մեջ:

Թանգարանի ցուցահանդեսում կամ տեխնիկական անկյունում
պետք է լինեն եքսպոնատներ և մոզեղներ նաև արտադրութեան այլ
ճյուղերից՝ ավիացիայից, քիմիայից, ալտարարարութեանից և
այլն: «Տեխնասի» բջիջը արտադրական թանգարանի կազմակերպ-
մանը պետք է հրավիրի ճարտարապետական-տեխնիկական ուժե-
րին, շարքային բանվորներին, գործուսի կամ յերտականներին,
վորոնք «Տեխնասի» անդամ են: Նրա անելիքն է գեկավարել
պլանավորման, սխեմաներ պատրաստելու և պլանի տեխնիկական
մշակութեան ամբողջ աշխատանքը, սգնութեան ցույց տալ ստան-
ձին բանվորների ընտրելու եքսպոնատներ, հումք, գործվածքներ
և այլն: Իսկ արտադրական թանգարանում խոչոր տեղ պետք է
հասկացնել ավյալ դործարանի գյուտարար բանվորներին գյուտերի
ցուցահանդեսին՝ ավյալներ ցուցադրելով նրանց կիրառման արն-
տեսական արդյունքների մասին:

ԿԱՊ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՀԵՏ:

Գիտահետազոտական ինստիտուտները վերջին տարիներս բն-
հանրագրութեանը չեն ձեռք բերել արդյունավերական և արտա-
դրութեան ասպարեզում: Նրանց գիտական գործունեությունը
մեր շինարարութեան խոչոր բնագավառներում որեցոր ավելի ու
ավելի ցուցադրական բնույթ է ստանում: Սակայն շատ էիչ բան
է արված գիտութեան և տեխնիկայի այդ նվաճումները, վարունք
հասնախ հեշտ կիրառելի յեն արտադրութեան այս կամ այն տա-
քարիցում, ժողովրդական լայն մասսաների անդամակալութեան
դարձնելու համար: Այնինչ մեր գարգայման ներկա շրջանում սն-
հրաժեշտ է, վոր ամեն մի նորումձութեան, գիտութեան և տեխ-
նիկայի յուրաքանչյուր նվաճում անմիջապես ոգտադարձվի և
գործադրվի արտադրութեան պրոցեսում: Գրան կարելի յե հաս-
նել այն դեպքում, յերբ «Տեխնասի» գործարանային բջիջները
կենդանի, անմիջական կապ հաստատեն արտադրութեան գանա-
դան ճյուղերի գիտահետազոտական ինստիտուտների հետ՝ հաս-
կապես նշանակված ընկերների միջոցով: «Տեխնասի» գործարա-

նային բջիջները կանոնավոր եքսպոզիտներ պետք է կազմա-
կերպեն դեպի ինստիտուտները, նորտաի ունենալով ծանոթանալ
իրենց հեռաքրքրող բոլոր հարցերով, առանձնապես այն հարց-
դություններով ու նվաճումներով, վորունք կարելի յե և պետք է
կիրառվեն և արմատացվեն արտադրական պրոցեսներում: Գրա
հետ միտան «Տեխնասի» բջիջները պետք է հրավիրեն գիտահե-
տազոտական ինստիտուտների ստանձին գեկավարների՝ գեկու-
ցումներ և գաստիտություններ կարգալու բանվորական ժողով-
ներում և գրույցներ կատարելու արտադրական խորհրդակցու-
թյուններում, խմբակներում և դասընթացներում՝ նրանց հետա-
քրքրող թեմաների շուրջը:

«Տեխնասի» անդամ յուրաքանչյուր բանվորի և ստանձնապես
«Տեխնասի» գործարանային բջիջի անելիքներից մեկն է ինստի-
տուտների առաջ սխառեմատիկ կերպով դնել մի ամբողջ շարք
ինդիկներ և պրոբլեմներ, վորոնց նրանք հանդիպում են արտա-
դրութեան պրոցեսում և վորոնց կատարելադրումով՝ նրանց
կարծիքով պետք է գրադվեն ինստիտուտները:

Նմանապես «Տեխնասի» բջիջը պետք է ձգտի ձեռնարկութեան
մեջ ոգտադործելու միջնակարգ և բարձրագույն կրթական հիմ-
նարկների կարիներաների և յարթատորիաների վորձը և նրանց
կից ուսանողական դանապան գիտական-տեխնիկական խմբակների
վորձը:

Հիշատակված և մի շարք այ միջոցների կիրառումն անշուշտ
լայն մասսաներին ավելի շուտ կձանոթացնի մեր գիտական հիմ-
նարկների նվաճումներին և կարողացնի վերջիններս գործա-
դրումն արտադրութեան մեջ:

ԱՐՏԱՍՍՀՄԱՆՅԱՆ ՏԵՆՆԻԿԱՅԻ ԱՐՄԱՍԱՑՈՒՄԸ

Մենք արդեն հիշատակեցինք, վոր բջիջների գրադարաններին
կից պետք է համախմբվի արտասահմանյան տեխնիկայի վերա-
բերյալ սուտերին թարգմանված ամբողջ մաստալական գրականու-
թյունը: Բացի դրանից, «Տեխնասի» բջիջները պետք է սրտովի-
րեն արտասահմանյան ամենատարածված ժորնալներն ու արտա-
սահմանյան տեխնիկական գրականությունը, ինչպես և բնորեն
ոտար լեզուներ իմացող «Տեխնասի» անդամ ճարտարագետներին,
վորոնք ուսումնասիրեն և թարգմանեն ավյալ ձեռնարկութեան
մեջ կիրառվող գիտութեան և տեխնիկայի նվաճումների յուսա-

բանութեամբ դարձուց ամենապիտանի հողմածներն ու նյութերը : Թարգմանված նյութը կարելի չե կարգալ գոյութիւն ունեցող կամ հատկապէս բնական կարգալեւալած խմբակների պարսպմունքի ժամանակ, այլև կախել պատի լրագրի կողքին :

ՇԵՆՈՒԹՅՈՒՆ «ՏԵՆՄԱՍՍԻ» ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՁԻՋԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Չափազանց կարեւոր է գործարանային բջիջի առանձին անդամների ոգտադործումը, վորոնք կապված են գյուղի հետ կամ գործուղվում են շեֆական հանձնաժողովի կողմից՝ «Տեխմասսի» գաղափարների ոգտին պրոպագանդա անելու և դյուղական վայրերում «Տեխմասսի» բջիջներ կազմակերպելու համար : Պետք է հողտանել, վոր գործարանային բջիջը մշտապես իր մոտ սենեմա գյուղում տեխնիկական և ագրոնոմիական դիտելիքներ տարածելու վերաբերյալ բոլոր նյութերը : Շատ լավ կլինի, յեթև առանձին բանվորների կամ նրանց խմբերի գյուղ գնալու ժամանակ, նրանցից յուրաքանչյուրին տրվեն առաջադրութիւններ և հրահանգներ և ստուգվի նրանց կատարումը : Այդ հրահանգների թվին կարելի չե դասել ագրոտեխնիկական գրականութիւն տարածելու վերաբերյալ գյուղացիներին հրահանգներ տալը, դյուղացիների հետ գրույցներ կազմակերպելը, դյուղում յեղած գյուղատնտեսական մեքենաների կառուցվածքի հետ ծանոթացնելն ու նրանց գործածել և նորոգել սովորեցնելը, կոլտնտեսութիւններին և կոմունաներին համոզելը, վոր կոլեկտիվ կերպով մեքենաներ ձեռք բերեն, փչացած մեքենաների նորոգումը :

Աշխատանքի այդ ձևերի ոգտադործումից բացի, «Տեխմասսի» գործարանային բջիջը կարող է իր վրա շեֆություն վերցնել գյուղական համապատասխան բջիջների կհասմամբ, վորպէսզի նրանց կանոնավոր տեխնիկական ոգնութիւն ցույց տա՝ կազմակերպելով բանվորական բրիգադների սիստեմատիկ շրջագայութիւն իրենց գործիքներով և նյութերով, նորոգելու գյուղացիական, դերագանցապէս չբավորների և կոլեկտիվ տնտեսութիւնների սարքավորումն ու գյուղատնտեսական մեքենաները : Հարկ կլինի յերբեմն բարձրորակ բանվորներ գործուղել կազմակերպելու կարգաւորում (մեկշաքաքյա, յերկշաքաքյա և ամսական) դասընթացներ՝ նվիրված գյուղում յեղած գյուղատնտեսական մեքենաների գործածութեամբ ու հորգութեամբ, իբրև սենկոլիքներ ներգրավելով գերագանցապէս կալտնոտեսականներին, չփայտ, միջակ գյուղա-

ցիներին, գլխավորապէս յերիտասարդութեամբ : Այս ամբողջ աշխատանքը պետք է կատարվի շեֆական ընկերութեան ղեկավարի փոխգլխով :

ՄԱՄՈՒԼԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

«Տեխմասսի» բջիջի անդամները և բանվորները պետք է մշտապէս իրազեկ լինեն գործարանում «Տեխմասսի» բջիջի կատարած ամբողջ աշխատանքին : Այդ նպատակով անհրաժեշտ է հնարավորութեամբ չափ լավ ոգտադործել գործարանային պատի լրագիրը : Նրա միջոցով գործարանի բանվորները պետք է իմանան «Տեխմասսի» բջիջի կազմակերպած բոլոր խմբակների, դասընթացների, կոնսուլտացիաների, դեկուցումների, դասախոսութիւնների մասին : Պատի լրագրում «Տախմասսի» անդամ բանվորները գրում են տեխնիկայից իրենց հետաքրքրող խնդիրները մասին և հենց նրանում պատասխաններ գտնում այդ հարցերին : Նրանով լուսարանվում է «Տեխմասսի» բջիջի աշխատանքը, թերութիւններն ու նվաճումները : Բանվորների հետաքրքրութիւնը դեպի տեխնիկայի խնդիրներն ուժեղացնելու և նրանց խմբակների ու դասընթացների մեջ ներգրավելու համար լավագույն միջոց են հանդիսանում հենց իրենց բանվորների տված սիստեմատիկ տեղեկութիւնները պատի լրագրին՝ «Տեխմասսի» խմբակներում կատարած իրենց աշխատանքների արդյունքի մասին : Անհրաժեշտ է նույնպէս, վոր գործարանի բոլոր բանվորները տեղեկանան առանձին ճարտարագիտների և տեխնիկների աշխատանքի և գործունեութեան մասին, վորոնք ջերմ և նվիրված մասնակցում են աշխատանքին, նպաստում են տեխնիկական դիտելիքների մակարդակի բարձրացման : Կալ կլինի ոգտագործել այն առանձին փարագետներին մրցանքավերները, վորոնք դեռ չեն մասնակցել այդ աշխատանքներին : Բացի պատի լրագրին ոգտադործելուց, միանդամայն հարմար կլինի հրատարակել միանվագ կամ պատահական թերթիկներ և լրագրեր :

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԻ ԱՅԴ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Բաղմաթիվ ձեռնարկութիւններում, բացի «Տեխմասսի» բջիջից, կան նաև այլ ընկերութիւնների, ինչպէս որինակ, Ավտոդորի ՊԱՁԸ-Ավիաբեմի, «Ռադիոյի բարեկամների», տուրիստների և այլ բջիջներ :

«Տեխնաստի» բջիջը միասնական աշխատանք պետք է կատարել այդ կազմակերպութեանը հետ: «Տեխնաստի» բջիջն ստանձնապես սերտ կապ է հաստատում տուրիստներին ընկերութեան բջիջի հետ, վորպեսզի միասնաբար կազմակերպեն և քննարկեն զեղյուտեանը, վորպեսզի միասնաբար կազմակերպեն և քննարկեն զեղյուտեանը, վորպեսզի միասնաբար կազմակերպեն և քննարկեն զեղյուտեանը, վորպեսզի միասնաբար կազմակերպեն և քննարկեն զեղյուտեանը:

ՄԻՔԱՆԻ ՅԵՋՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մենք փոքրիշատե մանրամասն թվեցինք այն հնարավոր ձև-վերն ու տեսակները, վորով կարող է ընթանալ «Տեխնաստի» գործարանային բջիջի աշխատանքը: «Տեխնաստի» աշխատանքի նկարագրութեանը հիմնոված է առանձին կազմակերպութեանը վործի ուսումնասիրութեան վրա: Հասկանալի չէ, վոր այդ սխեմայի մեջ կարելի չէր մտցնել տեխնիկական գիտելիքները տարածման մի քանի տասնյակ այլ ձևեր, վորոնք նախատեսված չեն այդ սխեմայով: Բայց մենք կարծում ենք, թե մեզ հաջողվեց հիշատակել և ընդհանրացնել նրանցից ամենաբնորոշները, վորոնք կարող են կիրառվել «Տեխնաստի» գործարանային ուղղությամբ բջիջի կողմից: Չնայած «Տեխնաստի» գոյութեան համեմատաբար կարճ ժամանակամիջոցին, արդեն կան փոքրաքանակ բջիջներ, վորոնք կարողացել են հաջողութեամբ և լայնորեն կիրառել դրանց իրենց աշխատանքների պրակտիկայում: Դրանց փորձը մեր ընկերութեան բոլոր բջիջների սեփականութեան դարձնելու համար մենք կցիմենք նրանց ստեղծագործական աշխատանքի և գործունեութեան նկարագրութեանը:

ԼՅՈՒԲԵՐԵՑԿԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ «ՏԵԽՆԻԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻՆ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՋԻՋԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԸ*

Լյուբերեցկի գյուղատնտեսական մեքենաչինական գործարանում, զեռ մինչև «Տեխնաստի» ընկերութեան կազմակերպումը, ճարտ.-տեխն. կազմի ամենաառաջավոր մասի նախաձեռնութեամբ և հասարակական կազմակերպութեանը սովորականութեամբ բաժանելով ինտենսիվ աշխատանք էր կատարվում: Ձեռնարկել է լին

* Այդ փորձը վերաբերում է 1928 թ.: Բջիջի վերջին շրջանի աշխատանքների մասին մանրամասն տեղեկութեանը չկան:

տեխնիկական ցուցահանդեսների և տեխնիկական խմբակներին ցանցի կազմակերպման, վորոնց մեջ արձանագրվեցին զանազան ցեխերի և բաժանմունքների 100-ից ավելի բանվորներ: Կազմակերպված խմբակների աշխատանքը նոր էր ծավալվում, յեբբ լուր բուտացվեց, թե Մոսկվայում կազմակերպված և Համամիութենական նոր «Տեխնաստի» ընկերութեան: Դրա հետևանքով տեխնիկական խմբակներին և ճարտ.-տեխն. կազմի հասկացված հրավիրված ժողովում կենտրոնական նախագահութեանը զեկուցեց «Տեխնաստի» Համամիութենական ընկերութեան խնդիրների մասին, և կարգացվեց նրա կանոնադրութեանը: Մտքերի վստահագրութեանից հետո հանվեց հետևյալ վորոշումը. «Լյուբերեցկի պետական գործարանի բանվորական տեխնիկական խմբակներին ընդհանուր ժողովը, լյուբով և քննելով զեկուցում Համամիութենական «Տեխնաստի» ընկերութեան խնդիրների և աշխատանքի ձևերի մասին, ինչպես և նրա կանոնադրութեանն ու հրահանգները, միաձայն փորձեց անդամագրվել «Տեխնաստի» ընկերութեան: Դրա հետ միասին ժողովը հանձնարարում է բյուրոյի նոր կազմին վերակազմութեան յենթարկել Պետ. Լյուբ. գործարանի «Տեխնաստի» բջիջի բոլոր խմբակները, կազմակերպչական աշխատանք կատարելով: Բյուրոն, բացի բոլոր խմբակների առկա կազմից, վոր համարում է 184 բանվորի, կազմակերպութեան մեջ պետք է ներգրավի ճարտարագետների կոլեկտիվին, գործարանային կոմիտեյին Պետ. Լյուբ. գործարանի գործարանային վարչութեանը, այլև հրահանգներ տալ խմբակներին ավագներին և անգամներին կազմակերպութեան մեջ ներգրավելու նոր բանվոր և ծառայող անդամներ՝ նպատակ ունենալով մասնակից դարձնել «Տեխնաստի» ակտիվ աշխատանքներին: Ժողովը միաձայն անհրաժեշտ է համարում առձանել մուտքի վճար 30 կ., ամսավճար՝ 20 կ. (կանոնադրութեամբ առձանելով է 5 կ.): Այդ նոր ժողովում ընտրվեց «Տեխնաստի» գործարանային բջիջի մշտական բյուրո, վորի մեջ մտան 6 ճարտարագետ և տեխնիկ.-ընկ. ընկ. Բուրմակին («Տեխնաստի» նախաձեռնող և կազմակերպիչ), Հակոբյան, Բերուսով, Տեխման, Յելիչև (գործիքային ցեխի վարպետ), Պիչկին և 9 բանվորներ՝ ընկ. ընկ. Բաննիկով, Վեդեչչենկո, Վասիլյեվ, Գլոբյակին, Իվանով, Կալուզին, Սոկոլով, Սուխարով և Տյուբենև:

Այսպիսով, Լյուբերեցկի գործարանում «Տեխնաստի» բջիջը գոյացել է վաղարոք կազմակերպված խմբակներից՝ գործարանի

ճարտ.-տեխն. կադմի և առաջավոր բանվորների մեծ մասի ակտիվ մասնակցութեամբ: 1928 թ. մարտի 15-ին կայացած այդ ժողովից հետո նորընտիր բյուրոն ձեռնարկեց վաղուք սկսված աշխատանքի ամրացմանն ու զարգացմանը:

Լյուբերեցկի գործարանի «Տեխմասի» բջիջի աշխատանքներում գլխավորն այն է, վոր նա իր գործունեությունը առաջին շրջանում կարողացավ հաշվի առնել բանվորների ամենալուրջ պահանջները, պայմաններ ստեղծեց նրանց բավարարման համար: Թիթամանակ նա պայմաններ ստեղծեց ճարտ.-տեխնիկական կադմի մի խոչոր մասին ներգրավելու տեխնիկական գիտելիքների բարձրացման համար կազմակերպված ձեռքերի ղեկավարության մեջ: 1928 թ. աշխատանքների պլանը մշակելիս հաշվի առնվեցին գյուղատնտեսական մեքենաշինական գործարանների զարգացման բոլոր առանձնահատկությունները, բանվորների տեխնիկական պատրաստակալության մակարդակը, առկա նյութական ռեսուրսները և ճարտարապետական-տեխնիկական ուժերը:

Լյուբերեցկի գործարանի «Տեխմասի» բջիջին հաջողվել է ի մի ևս ավաֆել տեխնիկական գիտելիքների բարձրացման մոտ հսկող անձանց և հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ և, վերացնելով պարայելիզմն ու ուժերի ցրվածությունը, աշխատանք ծավալել բոլոր հիմնական ուղղություններով, վորոնց մասին մենք հիշատակեցինք նախորդ գլխում: «Տեխմասի» բջիջի առաջին քայլերը յեղան ծանոթացնել բանվորներին գործարանի արտադրական բաժինների և տեխնիկական մասի աշխատանքների հետ: Առաջադրված նպատակին հասնելու համար նախագծվեց գործարանային ճարտարագետների ղեկուցումների և զբույցների մի ցիկլ, հետևյալ կարգով.

- 1) Չուլսկան բաժինների աշխատանքը՝ ճարտ. Ի. Գ. Յիրուսկի:
- 2) Դարբնոց-մետաղալար քաշելու բաժինների աշխատանքը՝ ճարտ. Ռ. Լ. Շմիդտ:
- 3) Մեխ., ամփոփ. պտտածեփ. բաժ. աշխատանքը՝ ճարտ. Ա. Գ. Վոլկով:
- 4) Լաբորատորիայի ղեռը՝ Գ. Լ. Գ. աշխատանքներում՝ ճարտ. Հ. Գ. Շումիրո:
- 5) Հրահ. վերահսկիչ բաժնի աշխատանքը՝ ճարտ. Վաննիկով:

6) Գ. Լ. Գ. ուժային տնտեսությունը և նրա ուսցիտն՝ ճարտ. Կ. Յե. Վասրելով:

7) Անվտանգություն տեխնիկան՝ ճարտ. Գ. Ի. Իցկովիչ:

8) Գործարքային աշխատանքը՝ ճարտ. Գ. Կ. Պիչկին:

9) Չափավորման տեխնիկայի հիմունքները՝ ճարտ. Ե. Ա. Խարիտոնով:

10) Գյուղատնտեսական մեքենաշինության ունիֆիկացիայի և ստանդարտիզացիայի հարցերը՝ ճարտ. Ա. Վ. Իվանկով:

ԽՍՀՄ և արտասահմանի գյուղատնտեսական մեքենաշինությունների գործարանների տեխնիկական նվաճումների հետ ծանոթանալու համար մատանշվեցին ճարտ. Յուկերմանի ղեկուցումն ու զբույցը՝ «Լյուբերեցկի գործարանի աշխատանքը հարավային գործարանների համեմատությամբ» թեմայով: Արտասահմանյան գործուղումից՝ Գերմանիայից վերադարձած ճարտ. Յիրուսկին և Կունիցյան ղեկուցումներ կարգացին՝ «Չուլսկան գործը արտասահմանի գործարաններում» և «Արտասահմանի գործարանների աշխատանքը» թեմաներով: Բացի դրանից, նշանակված էլին ամերիկյան գործարանները գործուղված ճարտարագետների ղեկուցումներ: Իրականում անցյալ տարի «Տեխմասի» բջիջին հաջողվեց իր նշանակած ղեկուցումների մի մասը միայն կատարել, բայց մենք հարկ համարեցինք մեջ բերել ամբողջ պլանը, վորպես «Տեխմասի» բջիջի կողմից աշխատանքի տվյալ ասպարեզին՝ ցիկլ մտնեցում ցույց տալու մի նմուշ:

Բավական հետաքրքիր է գրադարան-ընթերցարանի կազմակերպչական պլանը՝ նրան կից մշտապես գործող կոնսուլտացիայով՝ գործարանի ճարտ.-տեխն. կադմից մեկ կամ յեղիու ընկերոջ մշտական հերթապահությամբ: Գրադարանը և ընթերցարանը պլանով պետք է ունենան բոլոր հիմնական պարագաները՝ բոլոր տեխնիկական խմբակների աշխատելու դեպքում, իսկ վորոշ գրականություն, վոր համարատասխանում է խմբակների ծրագրին, գրադարանը ձեռք էր բերել:

Նկատի ունենալով, վոր տեխնիկական մասշեյի գրականությունը Լյուբերեցկի գործարանում կենտրոնացած է զանազան կազմակերպություններում, վորոշվեց այդ գրականությունը հավաքել մեկ միասնական գրադարան-ընթերցարանում, հետվյալ բաժիններով.

- ա) ընդհանուր տեխնիկական գրականություն (հիմնական մատենատիկական և տեխնիկ. դիսցիպլիններին),
- բ) գյուղատնտեսական մեքենաշինության վերաբերյալ գրականություն,

դ) պարբերական տեխնիկական մատչելի ժուռնալներ .

զ) գրացուցակներ , պրոսպեկտներ , ուղեցույցներ ԽՍՀՄ և արտասահմանի գյուղատնտեսական մեքենաների և մեքենաշինութեան գործարանների վերաբերյալ :

Մենք գտնում ենք , վոր գրադարանի այդ վորձը լիակատար չափով կարող են ոգտագործել մեր Միութեան բոլոր բլիժները :

Լյուբերեցիկի գործարանը վերջին տեղը չի գրավում գյուղին գյուղմեքենաներ մատակարարող ձեռնարկութեանների շարքում : Բլիժը վորոչեց կազմակերպել ընկերների և մասնագետների մի խումբ , վորը մշակի և պատրաստի համապատասխան , մատչելի հրատարակութեաններ Պ . Ա . Գ . և այլ գործարանների մեքենաները գործածողների համար՝ մեքենաների գործածութեան , նորոգման վերաբերյալ և այլն :

Պետք է հիշատակել նաև բլիժի այն վորոչումները , վոր վերաբերում են պատի լրագրին կից մշտական ցուցահանդես կազմակերպելուն , տեխնիկա-արտադրական բաժինների գործունեություն , ԽՍՀՄ-ում և արտասահմանում գյուղատնտեսական մեքենաշինութեան վերաբերյալ հրատարակվող բոլոր լրագրերից հանած քաղվածքները շարաթր մեկ անգամ փակցնելուն և այդ քաղվածքներից կազմված ցուցափեղկ-պատի լրագրի պատրաստելուն :

ԽՄԲԱՎՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Բլիժի աշխատանքների մեջ խոշոր տեղ են գրավել բանվորական-ճարտարապետական խմբակների նախապատրաստումն ու կազմակերպումը : Գործարանում կազմակերպվել և ընդամենը 3 խմբակ՝ տեխնիկական-գծագրական—144 հոգով՝ կազմված 5 յենթախմբակներից՝ յուրաքանչյուրը 20—25 հոգով , բանվորական գյուտարարութեան խմբակ՝ 43 հոգով , ընդհանուր տեխնիկական՝ 26 հոգով :

Նախապես ընտրված բյուրոյի ստաջ , վորը պետք է ղեկավարեր խմբակների նախապատրաստման և կազմակերպման աշխատանքը , դրված էին հետևյալ խնդիրները . նախ և առաջ անհրաժեշտ էր մշակել պարապմունքների ծրագիրը , դանել ղեկավարներ , գտնել շենք աշխատանքների համար , միջոցներ վորոնել կրթական պարագաներ , առանձնապես գծագրական պարագաներ ձեռք բերելու համար : Ընտրված բյուրոն հաջողութեամբ կատարեց նախատեսած ամբողջ աշխատանքը : Խմբակների ծրագիրը մշակելու և նրանց աշխատանքը ղեկավարելու համար բյուրոն հրավերեց գործարանի լավագույն ճարտարապետներին : Դեռ մինչև խում-

բույնների պարապմունքներն սկսելը յուրաքանչյուր ճարտարապետ մշակում էր խմբակների պարապմունքների ծրագրերն ու մեթոդները : Հաջորդ , վորչ պակաս կարեվոր խնդիրն էր շենք վորոնելը , վորի բացակայութեանը յերկար ժամանակ խոչընդոտ էր հանդիսանում և ձգձգում պարապմունքներն սկսելը : Այդ աշխատանքներին ներգրավվեցին վորչ միայն «Տեխնաստի» ղեկավարները , այլ և խմբակների առանձին անդամները : Խնդիրը դրված էր բոլոր հասարական կազմակերպութեանների և գործարանային վարչութեան ստաջ , վորը բլիժին մեծ ոժանդակութեան ցույց տվեց իր ձեռնարկման միջոցին : Գործարանային վարչութեանը հատկացրեց մի հատուկ շենք՝ յերկու լսարանով , նխտերի դահլիճներով , սենյակներ գյուտարարների արհեստանոցի համար , ինչպես և սեղաններ , աթոռներ , նստարաններ , պահարաններ , արտադրական և քսպոնատներ , գիադրամներ և այլն : Այդ շենքը , վոր առաջ պատկանում էր կոոպերատիվին , պահանջում էր հիմնական նորոգութեան (չկային վատարաններ , պատուհաններ , լույս , փայտե հատակ , սեղաններ , աթոռներ և այլն) : Նորոգութեանն ու կահավորումը կատարեց գործարանի 10-րդ բաժանմունքը շարաթրյակի կարգով : Ծառ միջոցներ և ուժ գործադրվեց , վորպես-չի ուսումնական պարագաներ և նյութեր գտնվեին խմբակների և «Տեխնաստի» մյուս բաժինների համար : Գոհունակութեամբ պետք է արձանագրել այն փաստը , վոր բլիժին ընդառաջեցին բոլոր հասարակական կազմակերպութեանները , վորոնց թվում նաև գործարանային վարչութեանը , վորը վորչ ուրիշների որինակով ըմբռնել էր , վոր բանվորների տեխնիկական դրագիտութեան բարձրացման վրա ծախված փոքրիկ գումարը ամենակարճ ժամանակամիջոցում հարյուրապատիկ չափով կարգարացվի բանվորներից ստացված տասնյակ գյուտերի , հարյուրավոր առաջարկութեանների , արտադրութեան բարելավման միջոցով : Գործարանում հատկացրեց 205 ու . , ահումբի վարչութեանը՝ 180 ու . , գործարանային վարչութեանը՝ 1060 ու . , և այդ միջոցներով բլիժը կարողացավ ձեռնարկել նշված աշխատանքների ծավալման : Անհրաժեշտ է ընդգծել այն բարձր դիտակցականութեանը , վոր հայտարարեցին գծագրական խմբակների անդամները : Նրանց առաջ խնդիր էր դրված գծագրական կարիքները սարքավորել եպիդիասկոպով և յուրաքանչյուր ունկնդրի համար ձեռք բերել գծագրական պարագաներ , դատավայրայաններ , անկյունաչափեր , քանոններ և այլն : Եպի-

գլխակողմը ձեռք բերվեց դործարկումի հատկացրած գումարով: 55 կոմպլեկտ դժադրական պիտույքներ դնվեցին գործարանային վարչության և գործարանի հասարակական կազմակերպությունների տված միջոցներով: Բայց ունկնդիրները մեծ մասը դժադրական պարագաներ չունեն: Գծագրական-տեխնիկական խմբակի անդամների ընդհանուր ժողովում բանվորներն իրենք առաջարկեցին (վորն ընդունվեց միաձայն), վոր 100 ո. ավել ստացող բանվորներն իրենք պարագաները ձեռք բերեն իրենց հաշվին: Այսպիսով, շնորհիվ հասարակական կազմակերպությունների, գործարանային վարչության, «Տեխնասի» անդամների ակտիվության նորմալ պայմաններ ստեղծվեցին խմբակների գործունեություն համար:

Գծագրական խմբակներ: Սրանց հիմնական անելիքն է գծագրությունների հետ գործ ունեցող բանվորներին տալ գլխակողմներ ինչպես գծագրությունները կարդալու, այնպես և գծագրելու: Մշակված ծրագիրը քննվեց և հաստատվեց խմբակները անդամների ժողովում: Ամբողջ խմբակը բաժանված է 5 մասի՝ 20-25 հոգով, յուրաքանչյուրը հատկացված գործարանի մեկ ցեխին՝ գործիքային, մեխանիկական, ամփոփման, ձուլական, դարբնոցի: Հաճախումները, ինչպես վիպյում են վերստուգելի հանձնաժողովի ավյակները, ամբողջ ժամանակ յեղել են 80 տոկոս: Մնացածները բացակայություն պատճառը դիչերային հերթի աշխատանքն է և այլ ներքին հանգամանքներ: Բնորոշ է, վոր դեկավարները չեն բացակայել պարապմունքներից: Գծագրական խմբակից հետո մեծ աշխատանք է կատարել գյուտարարների խմբակը՝ կազմված «Տեխնասի» անդամ 43 բանվորից: Աշխատանքի պրոցեսում խմբակը կազմակերպել է հետևյալ դասաստուգությունները. 1) գյուտարարություն պատմությունը, 2) ինչպես պետք է աշխատեն գյուտարարները: Խմբակն իր աշխատանքը կառուցել է ծրագրի հիման վրա, վոր մշակել է բանվորների մասնակցությամբ ճարտ-տեխն. կազմը: Գյուտարարների խմբակի բյուրոյին հաջողվել է իր ներկայացուցչին մտցնել ոսպիոնալացման բյուրոյի մեջ, վորպետք ավելի արագ ընդունվեն խմբակի ընդհանուր ժողովում ընդունված և մշակված գյուտերը:

«Տեխնասի» գործարանային բլիթի համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատուկ հիշատակարանը՝ «Ինչ պետք է իմանա գյուտարարը» խորագրով: Հիշատակարանը կազմված է

12 խնամքով մտածված կետերից և պարունակում է ցուցումներ: Նկատի ունենալով, վոր այդ հիշատակարանը կարող են ոգտագործել «Տեխնասի» բաղմաթիվ բլիթներ, մենք առաջ ենք բերում ամբողջությամբ:

Ինչ ԳԵՏՔ Ե ԻՄԱՆԱ ԱՄԵՆ ՄԻ ԳՅՈՒՏԱՐԱՐ

(Գյուտարարի հիշատակարանից)

1. Հիշիր, վոր յուրաքանչյուր բանվորի պարտականությունն է բարելավումներ մտցնել իր աշխատանքի ասպարեղը և այդ բարելավումները հաղորդել արտագրություն:

2. Բարելավումներ վորոնիր այն բնագավառում, վորի մեջ աշխատում ես ինքդ:

Մասնագիտություն վերաբերյալ մեկ լավ գյուտն ավելի ոգտակար է արտագրություն համար, քան 20 հատ շուտ թիված գյուտն այն ասպարիղից, վորում դու չես աշխատում:

3. Վորքան շատ ուսումնասիրես թո գյուտին հարակից ուրիշ գյուտեր, այնքան շուտ կխուսափես թո գյուտի սխալներէց:

4. Քո գյուտը իրականացնելու ավելի շատ աշխատիր կառուցվածքի վրա և քիչ հնարագիտություն արա:

5. Մի՛ հնարիր այնպիսի մեքենա, վորը վոչինչ չսպառելով, շատ է աշխատում. — Դու կարո՞ղ ես աշխատել առանց ուտելու և լամելու:

6. Քո բարելավումը կամ գյուտը հնարելով, նկարագրիր և նկարիր (եսքիզները) ինչքան կարող ես, և դիմիր բանվորական գյուտարարություն գործարանային կոնսուլտացիային. նա քեզ կտա պարզաբանումներ և յեզրակացություն:

7. Միչեվ վոր թո առաջարկների ճշտությունը չստուգես գործարանային կոնսուլտացիայում և գյուտարար բանվորների խմբակում, ուժեր, ժամանակ և վող մի ծախսիր մոդելները և վորձերի վրա: Յեթե առաջարկն ոգտակար լինի արտագրությունը, այն ժամանակ խմբակը, կոնսուլտացիան և համապատասխան կազմակերպությունները կողեն պատրաստելու գծագրություն, մոդելներ և, յեթե անհրաժեշտ է՝ վորձեր կատարելու:

8. Հիշիր, վոր միայն այն առաջարկներն ու գյուտերը կարող են գործադրվել արդյունաբերություն մեջ և ժողովրդական տնտեսություն այլ ճյուղերում, վորոնք տալիս են տնտեսական նկատե-

լի ոգուտ, բարեխալով եւս դործվածքի վորակն ու աշխատանքի պայմանները գոյութուն ունեցողներէ համեմատութեամբ:

9. Հիշիր, վոր յեթե ուղում ես որեւնքով պաշտպանել զո գյուտի հեղինակութեան իրավունքները, դիմիր ԺՏԳԽ կէց գյուտարարութեան կոմիտեյին:

10. Գծադրութեանները վերջացնելուց և կոնսուլտացիայից համապատասխան յեզրակացութեան ստանալուց հետո դիմում տուր ռայոնային գործարանային բյուրոյին՝ գծադրութեաններէ հետ միասին:

11. Քո առաջարկի իրականացման համար տեղեկութեաններէ կարելի ունեցած դեպքում դիմիր գյուտարար բանկորներէ խումբակին:

12. Առաջարկն իրականացնելուց և զո առաջարկից արտադրութեան ստացած անտեսական ոգուտը հաշվելուց հետո ստացիր այն պարգևիւր, ինչ իրավունք ունես ստանալու՝ համաձայն արտադրութեան մեջ գյուտարարներին պարգևատրելու վերաբերյալ վորոշումներէ:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Արտադրական քանգարանի ձագմակերպումը: Հոկտեմբերյան հեղափոխութեան 10-րդ տարեդարձի առթիւ վորոշված եր հիմնել արտադրական թանգարան և նրանում ցուցադրել արտադրական պրոցեսներէ հիմնական նվաճումներն ու թերութեանները: Այս խնդիրը հաջողութեամբ լուծվեց շնորհիւ այն հանգամանքի, վոր ցուցահանդեսի կազմակերպմանն ակտիւ մասնակցութեան ցույց տվեց ձեռնարկութեան ճարտ.-տեխն. կազմի մի մեծ խմբակ: Կազմակերպման շրջանում ցուցահանդեսը բազմակցած եր արտադրութեան եքսպոնատներէ, Փոտոգրաֆիաներէ, սարքավորումներէ, ցեխերի փոխադարձ հարմարեցումներէ, բնակարանային շինարարութեանից, դիազրամաներից, ՏՊՈ-ից, ՈՆՏ-ից, կալիուլյացիայից և այլ բաժիններէ, սպառող գյուղացիներէ և ամենազլնավոր կազմակերպութեաններէ տված զնահատութեաններէ և բողոքներէ և այլն: Իսկ կազմակերպումից հետո «Տեխնասի» բլիշն իր աշխատանքներէ պլանում մատնանշեց. «Ընդարձակել և լրացնել արտադրական ցուցահանդեսը այնպիսի պակասող նյութերով, վորոնք դործարանային վարչութեան միջոցով կարելի յե ստանալ արտադրութեանից՝ դործարանի բաժիններէ, ցուցահանդեսը արտադրական թանգա-

րանի վերածելու համար»: Բացի դրանից, ցեխային կարմիր անկյուններին կէց հիմնված եւս տեխնիկական-արտադրական խումբակներ հետեյալ հիմնական խնդիրներէ վերաբերյալ. 1) արտադրական ծրագրի կատարումն ամբողջութեամբ և ըստ առանձին ցեխերէ—ամիսներով (աճում— դիազրամաներ), 2) իջեցումը (անպիտում—բրակ) դիազրամաներով և ամենաբնորոշ անպիտումի ցուցահանդես, 3) գործվածքի ինքնարժեքի իջեցում (ցեխերի վերադիր ծախսերի իջեցում), 4) արտադրութեան պրոցեսներէ ռացիոնալացում և այլն:

ՊԼԳ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՍԵՆՄԱՏԻԿ ԹՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ

«Տեղմասի» դործարանային բլիշներէ համար խոշոր հետաքրքրութեան և ներկայացնում նաև կազմակերպված թանգարանում բոլոր բաժիններէց բերված նյութերի և եքսպոնատներէ թվարկութեանը: Վորպեսզի այդ փորձը հնարավորութեան ունենան ոգտադործելու մյուս դործարանային բլիշները, մենք մեջ ենք բերում այդ թվարկութեանը.

I. Ընդհանուր մաս.

1. Գործարանի տնտեսական դարգացման պլանը:
2. Գործարանի պլանը տվյալ մոմենտին:
3. ՊԼԳ ընդարձակման հնգամյա պլանը:
4. ՊԼԳ վարչական կառավարման սխեման:
5. ԽՍՀՄ գյուղատնտեսական մեքենաների արտադրութեան, ներմուծման, սպառման դիազրամը:
6. Գործարանի արտադրած մեքենաների դիազրամը, սկսած 1911 թ., ըստ տարիների:
7. Գործարանի 3 տարում արտադրած մեքենաների դիազրամն ըստ տարիների:
8. Գործարանի արտադրած մեքենաների դիազրամն ըստ շաբաթների (չարժական):
9. Ինքնարժեքի դիազրամ (կալիուլյացիա):

II. Աշխատանքի եկամտիկայի բաժին.

1. Տեխնիկատնտեսական ցուցանիշների դիազրամ:
2. Բանուժի հոսունութեան և շարժման դիազրամ:
3. Արտադրական խորհրդ. առաջարկների դիազրամ:
4. Աշխատավարձի և աշխ. արտադրողակ. դիազրամ:

III. Փորձակաճան-կոնստրուկցիոն բաժին.

1. Մեքենաների դինամոտորացման դիագրամ:
2. Բողոքներ և զնահատականներ մեքենաների վորակի մասին:
3. Գործարանի կատարած փորձերի լուսանկար:

IV. ՊԼԳ ձուլարանը

1. Գործարանի կատարած ամենաբնորոշ կադրապրման փուլերը գետալներով: Յուրաքանչյուր և ձուլարանում գետալի արտադրութայն պրոցեսի հաջորդականությունը (կադրապրում, չուզունի թափելը, կտրելը, մաքրելը և այլն):
2. Կադրապրման պլիտաներ:

V. Գարբուց-մետաղաքելի բաժին.

1. Գործառնական մշակման դետալներ դարբնոցում (չտամպովկա):
2. Լուսանկարներ և շտամպեր:
3. Ստրբալորման լուսանկարներ (մամուլների, մուրձերի և այլն):

VI. Դանակային բաժին.

1. Կտրող ապարատներ՝
 - ա) Ամերիկյան որիդինալ Մակ-Կորմիկ:
 - բ) Ամերիկյան որիդինալ Դիրինգ:
 - գ) Յերկսի համար ունիֆիկացված հնձի մեքենաներ:

VII. Մեխանիկական բերքահավաքի բաժիններ.

1. «Նովի իդեալ» հնձի մեքենա՝ կտրվածքով:
2. Խրձկապ ապարատ՝ շղաղատով:
3. Հանդուցիչի շրջանակներ 25 հատ:
4. Հանդուցիչի ամփոփումը:
5. Մեխանիկական արհեստանոցի հարմարեցված մեքենաների լուսանկարներ:

VIII. Գործարանի մեխանիկայի բաժին.

1. Գործարանի ելեկտրիֆիկացիայի արդյունքները (ՄՈԳԵՍ-ի հոսանքին անցնելը) դիագրամներով:
2. Ելեկտրոկայանի լուսանկարներ:
3. Տրանսֆորմատորների յենթակայանի լուսանկարներ:
4. Կաթսայանոցների ուսցիոնալացման արդյունքները:

5. Նորոգման մեխանիկ. ցեխի ուսցիոնալացումը:
6. Ելեկտրոններդեյայի, շոգու, ողի ծախսում և այլն:
7. Վենտիլյացիոն սարքերի հիմնումը:

IX. Գործուս.

1. Գործուսի աշակերտների աշխատանքների նմուշներ:
2. Գործուսի աշխատանքի արդյունքների դիագրամներ: Ահա, թե ինչ կերպարանք ունի արտադրական թանգարանը, վոր հիմնված և ամբողջ ճարտ.-տեխն. կուլեկտիվի՝ ճարտարադեաների, տեխնիկների, վարպետների և դիտակից բանվորների ձեռքով: Բնորոշ և, վոր ամբողջ աշխատանքը կատարված և հասարակական կարգով: «Տեխնասսի» բջիջի ջանքերն ևլ հենց ուղղված են յեղել դեպի սկսված աշխատանքի շարունակումն ու զարգացումը և նվաճված հաջողությունների ամբացումը: Մենք չգիտենք, թե ինչպես և աշխատում «Տեխնասսի» այդ բջիջն այս տարի:

Լյուբերեցկի գործարանի կուլեկտիվի 1928 թ. փորձը պետք է դառնա մեր Միության մյուս ձեռնարկությունների սեփականությունը և ողտադործվի նրանց կողմից:

ՊԵՆՉԱՅԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՅՆԵՐԻ «ՏԵՆՄԱՍՍԻ» ԲԶԻՋԻ ՓՈՐՁԸ

Մինչև 1928 թ. Պենզայի արհեստանոցներում բանվորների մեջ տեխնիկական գիտելիքներ տարածելու աշխատանքը չափազանց թույլ էր: Հոկտեմբերին մի քանի բանվորների նախաձեռնությամբ և բոլոր հասարակական կազմակերպությունների ու ժանդակությամբ կայացավ նոր սաղմնավորվող «Տեխնասսի» բջիջի առաջին կազմակերպված ժողովը:

Բջիջի կազմակերպմանը կենդանի հետաքրքրություն ցույց տվեցին բանվորներն ու ճարտարագետները, վորոնց ներգրավման համար նրա գոյության հենց սկզբից վճռական միջոցներ ձեռնարկվեցին:

Նրա աշխատանքներին մասնակցելու պատրաստականություն ցույց տվեցին արհեստանոցների ճարտարագետներն ու տեխնիկները, գործուսների հրահանգիչներն ու մանկավարժները: Բջիջը յերկաթուղային տեխնիկումի վարիչից առաջարկ ստացավ խումբակային և դասընթացների պարապմունքների համար ողտադործել տեխնիկումի շենքն ու լաբորատորիաները, ինչպես և տեխնիկումի մանկավարժական կազմը՝ տեսական առարկաների ալանդման համար:

«Տեխմաստի» բջիջը, կազմակերպվելուց մի քանի ամիս հետո, ուներ մոտ 80 անդամ, վորից 75 տոկոս բանվոր, 20 տոկոս տեխնիկ և 5 տոկոս ճարտարագետ:

Բանվորների պահանջներն ուսումնասիրելու համար բջիջի անդամներին բաշխվեցին անկետաներ, վորոնց մեջ նրանք հիշատակում էին, թե նրանց առանձնապես ինչ հարցեր են հետաքրքրում:

Գասախոսություններ: Նախ և առաջ գործուսի հրահանգիչ ընկ. Շեստակովը մշակեց դասախոսությունների կազմակերպման և կարգալու պլան, վորը կազմված է հետևյալ 4 ջրկլերից.

1) Նյութական կարգավորումը մեքենաշինություն մեջ և յերկաթուղային տրանսպորտում:

2) Եներգիայի տեսակները՝ ջերմություն, էլեկտրականություն և այլն:

3) Յերկաթուղային մեքենաշինություն և մեքենաներ. կաթոսաներ (չողեկառքի և ստացիոնար), շողեկառքի մեքենաներ, մամուլներ և այլն, ներքին այրման շարժիչներ (դաղալին, հեղուկ սակետներ, ալտո և ալիո-չողու և ջերմական):

4) Տնտեսություն. տնտեսության սկզբունքներն ու կազմակերպումը ՆՈՏ-ով և առանց նրա: Ֆորգելիզը ՆՍՀՄ-ում և առցիոնալացման խնդիրները:

«Տեխմաստի» բջիջն սկզբնապես մի քանի մասնախկան դասախոսություններ կազմակերպեց յերկաթուղային ակումբում: Գործուսի դասատու ընկ. Լվովը կարգաց առաջին դասախոսությունը՝ «Տեխմաստ» և նրա խնդիրները՝ թեմայով: Յերկրորդ դասախոսությունը կարգաց ճարտ. Ռոմադինը՝ «Յերկաթուղային տնտեսության զարգացման հեռանկարները» թեմայով:

Բանվորների մեջ առանձին հետաքրքրություն առաջացրեց ճարտ. Բատուրինի դասախոսությունը միառելս յերկաթուղու մասին: Հետաքրքիր է, վոր ընկ. Բատուրինի դասախոսություն կազմակերպմանը մեծ մասնակցություն ցույց տվեցին «Տեխմաստի» շարքային անդամները:

Գիապոդիտիվների պատրաստումը հանձնարարված էր շքանային ակումբին կից լուսանկարչական խմբակին, իսկ սխեմատիկ դժազրությունները՝ տեխնիկումի աշակերտության՝ ընկ. Բելյայեվի ընդհանուր ղեկավարությունը:

Առաջիկա դասախոսության մասին լայն հայտարարություն կատարելու համար կերպարվեստի խմբակին հանձնարարվեց ազդեհայտարարություններ պատրաստել կինոսարատի համար:

Հոգատար նախապատրաստությունների և ակներեվ բնույթ ունենալու շնորհիվ ապահովվեց ընկ. Բատուրինի դասախոսություն հաջողությունը:

Կոնսուլտացիա: Բջիջի հաջորդ, հիշատակության արժանի ձևնարկումը կոնսուլտացիան բյուրոյի հիմնումն էր այն գյուտարար բանվորներին ոչնություն ցույց տալու համար, վորոնք հետաքրքրվում են տեխնիկայի և արտադրություն առանձին հարցերով:

Կոնսուլտացիայի ղեկավարություն համար ձՏՄ-ից նշանակվեց ընկ. Միշելյեվը, տեխնիկումից՝ ընկ. Բատուրինը, «Յերթեվեկությունից և քարչից» ընկ. ընկ. Բորաչը և Ռոմադինը և «Տեխմաստի» բջիջից՝ ընկ. Գրիվենկովը:

Մի քանի կետերում՝ բջիջի սենյակներում, ձՏՄ ակումբում, հաւատալից 2 հոգու հերթապահություն՝ յերեկոյան ժամի 6-ից 10-ը:

Յեթև առաջարկված հարցերը թեթև էյին լինում, սակ հերթապահները անմիջապես պատասխան էյին տալիս, իսկ յեթև դժվար էյին լինում՝ դրանք հանձնվում էյին կոնսուլտացիոն բյուրոյի մասնագետներին:

Ճանապարհային դասընթացներ: Կայարամի անձնակազմի վորակը բարձրացնելու համար «Տեխմաստի» բջիջի նախաձեռնությունը կազմակերպվեցին ճանապարհային դասընթացներ:

Այդ ձեռնարկումը պաշտպանություն դառավ Հ.-Ա. յերկաթուղու լուսարձնի կողմից, վորը միջոցներ հատկացրեց ուսումնական պարաղաներ ձեռք բերելու համար:

Դասընթացներում սովորում են ընդամենը 30 հոգի: Նրանց նպատակն է պատրաստել արտելներ ավագներ:

Պարապմունքները սկսվեցին 1928 թ. դեկտեմբերի 18-ին Պենդայի արհեստանոցների դպրոցում:

Դասընթացի տեխոլությունը 1—1 և կես տարի յե—չարաթական 12 դասով:

Առաջին ավարտումը կատարվելու յե 1930 թ. հուլիսին:

Տեխնիկական խմբակներ: Բացի ճանապարհային դասընթացներից, «Տեխմաստի» բջիջն ուչարոֆսոփի, կուստայկոմի, տեխնիկումի և գործուսի ոժանդակությունը կազմակերպեց արտադրական-տեխնիկական խմբակներ փականադործի և առադձագործի մասնագիտություններից: Խմբակներում ընդամենը պարապում են 45 հոգի:

Գծի տեղկոմն ու նյութական բաժինը խմբակների տրամա-

դըրութեան տակ դրեցին Տ կոմպլեկտ ատաղձագործական պարագաներ (դուրեր, սղոցներ և այլն) :

Խմբակների տեսական սյարսալուծումները տեղի էլին ունենում տեխնիկումի շենքում դասատուների ղեկավարութեամբ : Խմբակները գործնական պարսպունքները տեղի էլին ունենում գործուսի արհեստանոցներում՝ շոգեկառքի և վազոնի ցեխերի վարպետների և հրահանգիչների ղեկավարութեամբ : Այդ բաժնի ղեկավարութեանն իրենց վրա վերցրեցին՝ փակասագործների խմբակինն ընկ . Կնյաժինը, ատաղձագործական խմբակինը՝ ընկ . Ֆադումովը :

Նախապատրաստական աշխատանքներից հետո 1928 թ . դեկտեմբերի 17-ին սկսվեցին խմբակների պարսպունքները :

Թանգարանի կազմակերպումը : Պենդայի «Տեխմասի» բջիջի ամենաարժեքավոր ձեռնարկումների թվին, անկասկած, պետք է դասել Չերժինսկու անվան ակումբին կից արտադրական քանդակարանի կազմակերպումը : Առաջին շրջանում նախագծված երկազմակերպել «Յերկաթուղային տրանսպորտի բարելավման ու կատարելագործման» բաժինը : Բացի դրանից, թանգարանին կից արդեն կազմակերպված է պատահարների բաժին, վորի անելիքն է լուսարանել վնասված մասերը և նկարագրել սվյալ պատահարի պատճառներն ու այն միջոցները, վոր անհրաժեշտ են նման աղետները կանխելու համար :

Դրա կազմակերպման գործին ներդրված են յերկաթուղային տեխնիկումի, գործուսի գասատուներն ու «Տեխմասի» առանձին անդամները :

Ներկայումս արդեն կան մի ամբողջ շարք երազնատներ՝ վազոնի առանցքի ստուտակները կտորված գլուխներ և այլն :

Թանգարանին կից կազմակերպված է «Տեխմասի» անդամների ամենորյա հերթապահութեան :

Ահա, թե ինչ է արել Պենդայի արհեստանոցների «Տեխմասի» բջիջը :

«Տեխմասի» ամենակտիվ աշխատավորներից մեկը՝ ընկ . Կատելնիկովը իր նամակում այսպես է գնահատում բջիջի աշխատանքը .

«Յ ամսվա ընթացքում կատարած մեր աշխատանքը ցույց է տալիս, վոր տեխնիկական գիտելիքները բանվորական մասունքի մեջ արմատացնելը, նրանց մեջ տեխնիկական գրագիտություն և արտադրության վերաբերմամբ սեր դաստիարակելը կատարելապես վորոշ և սեռ ողուսունի : Դրա ճանապարհին ընկած են բազմաթիվ գծավորություններ, վորոնք հետեանք են միջոցների պակասության : Աշխատանքի բոլոր խըն-

դերները միանգամայն բնականորեն դեմ են առնում այդ խոչընդոտներին : Բայց մենք կարծում ենք, վոր բանվորների և խորհրդային ինտելեկտուալի ջանքերով և հասարակական, կուսակցական կազմակերպությունների ու տնտեսական մարմինների վորոշ ոժանգակութեամբ մոտ ժամանակներս մեզ կհաջողվի հսկայական արդյունքներ ձեռք բերել :

ՇՉԵՐԲԻՆՍԿԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՔԱՀՈՐԻ ՓՈՐՁԸ

Դոնավազանի Շչերբինսկի հանքում «Տեխմասի» բջիջը նոր են սկսել կազմակերպել : Բայց բանվորների, հանքագործների մեջ տեխնիկական գիտելիքների տարածման և ընդարձակման աշխատանքը, ինչպես պարզվում է ընկ . Ավդուշնիլիչի ներկայացրած նյութերից, դրված է բավական լավ հիմքերի վրա :

Դեռ սկսած 1926 թ . Շչերբինսկի հանքագործների միութեան հանքի մի նախաձեռնութեամբ և անմիջական ղեկավարութեամբ ամեն տարի էլեկտրոտեխնիկական բաժնի բանվորների տեխնիկական անդրադիտություն վերացման համար կազմակերպվում էլին դասընթացներ : Նրանց նպատակն էր արդեն արտադրության մեջ աշխատող բանվորներին սովորեցնել պարզ հաշիվներ, սովորեցնել գծագրաբանությանը ընթերցում, պարզել արհեստանոցներում դազգյախների մոտ, հնոցի ու կարսայի առաջ կատարվող աշխատանքների հիմնական սկզբունքները : Մեկ խոսքով՝ տալ տեխնիկական այբուբեն : Այդ դասընթացները վոր մի վկայական կամ գիտլում չեն տվել :

Հաշվի առնելով անցած աշխատանքի փորձը, հանքի մեջ այս տարի կազմակերպել է դասընթացների ավելի լայն ցանց :

Ճարտարապետական-տեխնիկական սեկցիայի տեղական բյուրոն աշխուժ արձագանք տվեց հանքի մի և դասընթացների կոչին :

Հանքային վարչությունը սիրով տրամադրեց հանքարդյունաբերության դպրոցի շենքն ու կարիներները և միջոցներ տրամադրեց դասագրքերի համար : Դասընթացների նպատակը մնաց նույնը՝ վերացնել տեխնիկական անդրադիտությունը : Դասընթացներն ընդունվում էլին միմիայն արտադրության մեջ աշխատող բանվորները :

1928 թ . Կենտրոնական-Շչերբինսկի հանքահորում գործում էլին հետևյալ դասընթացները .

1) Հողի տակ աշխատող հանգադրման դասընթացներ : Այդ դասընթացներում սովորում են հանքագործներին անհրաժեշտ պարզ հաշիվներ, վորի համար մտցված են թվաբանութեան և մի քանի յերկրաչափական գիտելիքներ՝ մակերեկվոյթ, ծա-

վալ և այլն: Դրա հետ միասին անցնում են հանքային արվեստ և արտադրական գրադիրություն: Վերջինիս դասընթացի մեջ են մտնում քարածխի արտադրություն կազմակերպման, այդ արդյունաբերություն կապիտալի և այն ֆակտորների վերաբերյալ ծանոթությունները, վորոնք սլայդմանավորում են արտադրանքի ինքնարժեքը:

Դասընթացներում սլայդավորումները տեղի յեն ունենում շաբաթական 3 անգամ, և սովորում են 50 հոգի:

2) Դասընթացներ էլեկտրամեխանիկական բաժնի բանվորների համար: Այստեղ ավանդում են թվարանություն, ֆիզիկա, (տվյալ բաժնին անհրաժեշտ մասերը), մեխանիկական մեքենավարություն, գծագրություն և մեխանիկական տեխնոլոգիա: Դասընթացներն ոգտվում են Հանքարդյունաբերություն դպրոցի կարիներներից: Ուսումնական անհրաժեշտ սլայդաները (գծագրություններ, տետրակներ, թուղթ և այլն) տալիս են հանք-կոմները: Դասընթացները սլայդավորում են ունենում շաբաթական 3 անգամ: Նրանք 9-ամսյա դասընթաց ունեն, և նրանցում սլայդավորում են 35 հոգի:

3) Դասընթացներ շինարարական բաժնի բանվորների համար: Այս դասընթացները նախատեսված են ձմեռվա սեզոնի համար՝ դեկտեմբեր-հունիս, յերբ կառուցողների աշխատանքը կանգ է առնում: Դասընթացներում սլայդավորում են 20 հոգի: Նրանցում ավանդում են թվարանություն, անհրաժեշտ գաղափար յերկրաչափությունից, գծագրություն, շինարարական արվեստ: Պատասխանները տեղի յեն ունենում շաբաթական 6 անգամ:

4) Դասընթացներ կոբալի գործի բանվորների համար: Այս դասընթացների կարիքն զգացվում էր առանձնապես սուր կերպով: Մեկ մոտ վոչ մի տեղ նման դասընթացներ չեն յեղել: Կոբալի գործ վորակյալ բանվորների սլայդավորում տեղական բնույթ ունեն: Դասընթացներում ավանդում են թվարանություն, ֆիզիկա, քիմիա և կոբալտգործություն: Դասընթացներում սլայդավորում են 20 հոգի—շաբաթական 3 անգամ:

5) Արտադրական քանգարան: Կուլտուրայի Պալատին կից կազմակերպված է արտադրական թանգարան: Նրա կազմակերպմանը մասնակցել է ՃՏՍ: Թանգարանում համախմբված են զանազան շերտերի նմուշներ: Յուրաքանչյուր շերտի քիմիական կազմը քննում և ուսումնասիրում է յին բանվորները: Այստեղ են նաև հանքահորերում կատարված հետաքրքիր դյուտեր, դիագրամներ, հանքագործների աշխատանքներ: Կուլտուրայի Պալատին կից

կենտրոնական գրադարանում կան բազմաթիվ տեխնիկական գրքեր: Տեխնիկական գրքի մեծ սահանջ և զգացվում է:

«ԿՐԱՍՆԱՅԱ ԲԵՐԵՋԻՆԱ» ԼՈՒՑԿՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԻ «ՏԵՆՄԱՍՍԻ» ԲՁԻՁԻ ՓՈՐՁԸ

Ն. Բարխուդյոյի (ԲՄՆՀ) «Կրասնայա Բերեզինա» գործարանում աշխատում են մոտ 1100 հոգի: Հիմնական լուցկու արտադրությունից բացի գործարանն ունի կահույքի համար ֆաներներ սլայդավորում, հարթաչափի բաժնիներ և փոքրիկ մեքենական-նորոգման և չուգունաձուլական գործարան:

Նույն տեղում կառուցված է լուցկու նոր գործարան, վորն աշխատում է նոր յեղանակներով՝ վերացնելով ձեռքի աշխատանքը: Գործարանը փոքրաթիվ բանվորներով կրկնակի արտադրանք է տալու:

Լուցկու արտադրության ուղեկցողի աշխատանքի սլայդավորում յեղանակներից կատարելագործված (մեքենացված) ձեւերի անցնելու հետևանքով բանվորական մասսայի առաջ սուր կերպով դրվեց յր վորակի բարձրացման հարցը:

Գործարանի բազմատեսակ արտադրություններն ստեղծում են զանազան կատեգորիայի, տարբեր վորակի ու տեխնիկական սլայդավորականություն յանվորներ: Դրա համապատասխան տեխնիկայի սահանջը չափազանց բազմատեսակ էր և արհեստակցական կազմակերպությունները դժվարանում է յին այդ հարցերին սլայդավորում բավական արագ և սպառիչ կերպով:

Նկատի ունենալով բանվորների սահանջները, մի յուր մարտ-տեխն. աշխատավորների, կոմյերիտականների, գործարկումի և ԼԿՅԵՄ կոլեկտիվի նախաձեռնությամբ գործարանում կազմակերպվեց «Տեխմասսի» բջիջ:

Գանի վոր բջիջը առաջինն էր ամբողջ Բելոռուսիայում, ապա աշխատանքներին ոժանդակելու, հրահանգավորելու և նպաստելու յնդրով նախաձեռնող յամբակը դիմեց «Տեխմասսի» համամիութենական յորհրդին:

Ոժանդակությունը ցույց տրվեց բավական արագ և ժամանակին: Նախաձեռնող յամբակը ստացավ մի շարք նյութեր՝ թեղեր, հրահանգներ, ծրագրեր, կանոնադրություններ, անդամագրքույկներ և այլն:

Այն ժամանակ նախաձեռնող յամբակը մշակեց կարճ անկետա (8 հարցից) ընկերություն մեջ մասնել ցանկացողների համար:

Գործարանի բոլոր ցեխերում զեկուցումներ տրվեցին «Տեխ-

մասս» ընկերութեան անելիքները մասին և տեղն ու տեղը անկեա-
նէր տրվեցին նրանց, ովքեր ցանկանում եյին մտնել ընկերութեան
մեջ:

Ընդ վորում ամբողջ այդ անդամագրութեանը վորոշված ևր
կատարել այս կամ այն կոնկրետ ձեռնարկման շուրջը, վորի հա-
մար հայտարարվեց անդամագրութեան հետևյալ տեխնիկական
խմբակներին. 1) լուցկու արտադրութեան ուսումնասիրութեան,
2) դժադրողներին, 3) մատեմատիկական և 4) գյուտարարներին:

Նախնական անդամագրութեան ժամանակ տրված է ընդամենը
140 անկեա՝ հիշատակելով, վոր մտնողը ցանկանում է սովորել
այս կամ այն խմբակում:

140 արձանագրվողներին 16 ճարտարագետներ և տեխնիկներ են:

Պետք է մասնանշել, վոր գործարանի բանվորուհիները մեծ ալ-
տիվութեան եյին ցուցաբերում բլիշի աշխատանքներում: Որի-
նակ՝ կանանց պատգամավորական ժողովը վորոշեց իր ամբողջ
կազմով անդամագրվել «Տեխմասսի» բլիշին:

Բլիշի անդամների առաջին կազմակերպչական ժողովը կայա-
ցավ 1928 թ. հոկտեմբերին: Բլիշի անելիքները և առաջիկա աշ-
խատանքները մասին զեկուցումից հետո ընտրվեց բյուրո 5 անդա-
մից և 2 թեկնածուից:

Առաջին նիստում բյուրոն քննեց խմբակների աշխատանքի յե-
ղանակը, մեթոդներն ու ծրագրերը, նշեց իր գործունեյութեան սլը-
լանը, վորի իրականացման ձեռնարկեց անմիջապես:

Բլիշի ամբողջ գործունեյութեանը մի ուղղութեան ունեւր-
կազմակերպել դանադան ձեւեր՝ բավարարելու բանվորների բազ-
մատեսակ պահանջները և ընդարձակելու նրանց տեխնիկական գի-
տելիքները՝ հաշվի առնելով նրանց զարգացման մակարդակը և ար-
տադրական աշխատանքը:

Բլիշին կից կազմակերպվեց կոնսուլտացիոն բյուրո՝ տեխնի-
կայի և արտադրութեան հարցերի վերաբերյալ բանվորներին պար-
զաբանութեաններ տալու համար:

Լուցկու արտադրութեան ուսումնասիրող խմբակի նպատակն
է անցնել լուցկու ուսումնասիրութեան լրիվ ծրագրերը ինչպես հին,
այնպես և նոր գործարանում: Հաջորդարար ուսումնասիրվում են
հումքի մթերումը, տեսակավորումը, տեղափոխումը գործարան,
պահպանումը, վերամշակումը, փաթիկատի ստացումը: Ապա ու-
սումնասիրվում է լուցկու տուփերի վրա քսվող նյութերի պատ-
րաստման բիմիական և տեխնոլոգիական պրոցեսները, անպիտած
սպրանքից ընտրութեանը, անպիտման նվազեցումը, մեքենաների
աշխատանքը և նրանց վրա հսկելը և այլն:

Հին բանվորները վերաբերմամբ վերե ասածներին պետք է ա-
վելացնել բանվորների պրակտիկ գիտելիքները տեսական գիտե-
լիքներով լրացնելու հանգամանքը:

Գծադրական խմբակի նպատակն է ուսումնասիրել յերկրաչա-
փական գծագրութեանը, սովորել դետալներից եւֆիզներ հանելը,
դետալներ գծելը: Այնուհետև՝ եւքիզները ինքնուրույն մշակու-
թեան և հավաքական պարզ գծագրութեաններ, խմբակների ան-
դամների ծանոթացումը մեքենաների դետալները հաշվելիս ան-
հրատեչա մի շարք ֆորմուլաների, հաշվելու և նրանց մշակելու նոր-
մաների հետ:

Մատեմատիկական խմբակի նպատակն է մատեմատիկական
պատրաստականութեան տալ խմբակի անդամներին՝ պրոֆանի-
կական դպրոցները կամ դասընթացներն ընդունվելու համար և գի-
տելիքներ արտադրութեան, արտադրանքի արժեքի և այլ հարցերի
ինքնուրույն մշակութեան համար, խմբակի անդամների պատրաս-
տումը բլիշին կից բարձր տիպի տեխնիկական խմբակներում պա-
րագելու համար:

Աշխատանքի պայմաններն ու միջոցները: Շենքերի բացակա-
յութեան պատճառով խմբակների պարապմունքները տեղի յեն
ուսնում շաբաթական մեկ անգամ 2—2 ու կես ժամ:

Բլիշը քիչ զբբեր է ձեռք բերել գործարանի արտադրական և
ընդհանուր տեխնիկական հարցերի վերաբերյալ, վորովհետև մի-
ջոցներ չունի:

Վերջին ժամանակներս «Տեխմասսի» բլիշի բյուրոն համաձայ-
նութեան է յեկել գործարկումի կուլտանսնամոտոզիլի հետ, վոր
գործարանի դրադարանի համար ձեռք բերվող զբբերի 10 տոկոսը
տեխնիկական բովանդակութեան ունենա և ուղտագործվի իրմ-
բակների պարապմունքներին:

Մասաչյական աշխատանք, դասախոսութեաններ: Բանվորա-
կան լայն մասսայի մեջ աշխատելու համար նշված են հետևյալ
յերկու եպիգոգիկ դասախոսութեանները.

1) Նոր գործարանների կառուցումը ԽՍՀՄ-ում և արտասահ-
մանյան մեքենաշինութեան կախումից ազատվելը:

2) Ելեկտրականութեան և նրա ողտագործման մասին:

Նախատեսված է դասախոսութեանները լուսարանել տեխնի-
կական կուլտուրֆիլմի ցուցադրումով կամ ուղղակի դասախոսու-
թեանից հետո ցուցադրել վորեւ տեխնիկական ֆիլմ:

Սպասվում է, վոր բՆԻՋԸ, տրվող գեկուցումները և դաստիարակությունների հետևանքով, հետզհետե կաճի:

«Տեխնաստի» անկյուն: Խմբակի անդամները աշխատանքը թեթևացնելու նպատակով բՆԻՋԸ անդամները կազմակերպել են «Տեխնաստի» անկյուն:

Անկյունում կան եքսպոնատներ լուցկու, Փաներայի և վատերպասի արտադրությունից՝ թե պատրաստի և հավաքված և թե կիսաֆարրիկատի ձևով՝ հաջորդաբար, ըստ արտադրությունների թացքի, այսինքն՝ սկսած հումքից մինչև արտադրանքի պատրաստի ձևը:

Ինչոր արտադրական դործարքներն ոժտված են բացատրական աղյուսակներով և մակադրություններով:

Ձեռք են բերված մի քանի տեխնիկական ակնառու սխեմաներ թույլ հոսանքի սարքերի վերաբերյալ, դանդեր, ուղիւ, տաքացանող սարքեր և այլն:

Կազմակերպված է տնտեսական աշխարհագրություն անկյուն, վորն ունի ԽՍՀՄ մի քանի աշխարհագրական և տնտեսական քարտեզներ: Նրանց ողնությամբ կազմակերպվում են դանադան գրուլցներ և քարտեզների վրա դիտողություններ են կատարվում սովյալ շրջանի արդյունաբերություն այս կամ այն տեսակների մասին:

Անկյունում կազմակերպված է «Տեխնաստի» անդամների ընթերցարան, վորը ստանում է բավարար քանակությամբ տեխնիկական ժուռնալներ. «Искра», «Хочу все знать», «Производственный Журнал», «Пути Индустриализации», «Производственное Сопешание», «Изобретатель».

Միջոցների և շենքերի պահապանությունը հնարավորություն չի տալիս լայն աշխատանք ծավալելու: Անկյունը բաց է շարաթական 3 անդամ մյուս որերը պարասում են այլ խմբակներ և դպրոցներ:

ԳՆՈՒՆ II

ԻՆՁ Ե ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՅԱՆԸ ՅԵՎ ԻՆՁՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

Մենք բավական մանրամասն կանդ առանք «Տեխնաստի» դործարանային բՆԻՋԸների խնդիրների և աշխատանքի վրա՝ ըստ նրանց առորյա դործունեության հիմնական հատվածների: Այդ նույն խնդիրները դրված են յուրաքանչյուր տեխնիկական կայանի ա-

ռաջ, վորին կից կարող են դոյություն ունենալ աշխատանքի վերել հիշատակված բոլոր ձեվերը: Այնուամենայնիվ, «Տեխնաստի» դործարանային բՆԻՋԸ և տեխնիկական կայանի միջև վորոշ տարբերություն, անկասկած, դոյություն ունի:

Տեխնիկայաններ կազմակերպվում են գերազանցապես դործունեներին և այլ կրթական հիմնարկներին կից, վորոնք ունեն արտադրական-տեխնիկական բազա, այսինքն՝ դործարան: Տեխնիկայան այն կենտրոնն է, ուր համախմբվում է «Տեխնաստի» բՆԻՋԸ, կոմյունիստիկայան և այլ հասարակական կազմակերպությունների կատարած աշխատանքը տեխնիկական գիտելիքների լայնացման սպարիզում: Տեխնիկական կայանները իրենց աշխատանքը կազմակերպում և կառուցում են սովյալ դործուսի աուղիտորիան, կարիներաները, արհեստանոցներն ու ամբողջ սարքավորումն առավելագույն չափով ոգտադործելու սկզբունքի վրա, աշխատանքներին ներդրավելով դարոցի մանկավարժական և հրահանղչական կազմը: Գործուսի ոգտադործումն իր բոլոր նյութերով՝ նպատակ ունենալով յերեկոները աշխատանք կատարել ընդարձակելու բանվորների տեխնիկական գիտելիքները, —մեր պայմաններում հսկայական նըշանակություն է ստանում: Գործուսները, մինչև վերջին ժամանակներս, սովորաբար ոգտադործվում են մի քանի հարյուր աշակերտներ սովորեցնելու համար, վորոնք սովորաբար պարասում են մինչև յերեկոյան ժամի 4-5-ը: Մնացած ժամանակ նրանց ունեցած բոլոր դասարանները, կարիներաները, արհեստանոցները, հաղվաղյուս բացառությամբ, բացարձակապես չեն ոգտադործվում: Յեվ այդ կատարվում է այն ժամանակ, յերբ խոշոր ձեռնարկություններում, վորոնց կից դործում են նրանք, աշխատում են 1-5 հազար բանվորներ, վորոնք ձգտում են ընդարձակել իրենց տեխնիկական գիտելիքները և հաճախ զուրկ են այդ հնարավորությունից՝ արտադրական խմբակների շենքեր չլինելու պատճառով: Մի թե հարյուրապետ դեպքեր են լինում, յերբ դյուստարար բանվորը չի կարողանում իր համար անկյուն գտնել, անհրաժեշտ գծադրական պարադաներ և դործիքներ գտնել եսքիդներ, գծադրություններ, մոդելներ պատրաստելու, մինչդեռ դործարանում կա դործուս կամ յոթնամյակ լավ սարքավորված գծագրական կարիներով, փականագործական, սովարի և դարբնոցի արհեստանոցներով, ֆիզիկական, ֆիլիական, էլեկտրոտեխնիկական և այլ կարիներաներով: Ահա, թե ինչու Համամիութենական «Տեխնաստի» ընկերության և Սամարայի ու Չխտայի նրա բաժանմունքների ունեցած

Թեկուզ աննշան փորձք նրանց կից տեխնիկական կայաններ Հիմնու-
լու ասպարիզում մեծ և ցուցադրական նշանակութիւնն է ստա-
նում : Տվյալ դեպքում մենք տեսնում ենք, վեր իրոք կենսագործ-
վում են «Տեխնոսպ» ընկերութեան աշխատանքի և գործունեութեան
Հիմքը կազմող գլխավոր սկզբունքները՝ յերկրում յեղած նյութա-
կան և կուլտուրական արժեքների ամենալրիվ և նորատակահարմար
ոգտագործումը : Տեխնոսպաների աշխատանքներում, անկասկած,
քիչ թերութիւններ չեն դտնվի : Սակայն դրանք չեն նվաստացնում
այդ կայանների նշանակութիւնը, վորոնք իրոք ցույց են տալիս
ամենաճիշտ ուղին «Տեխնոսպ» տեղական բաժանմունքների աշ-
խատանքները դարգացնելու համար :

Որինակ՝ Հետեւինք և տեսնենք, թե ինչպէս պետք է կատար-
վի կոնսուլտացիայի աշխատանքը գյուտարարներին տեխնիկական
ոգնութիւն ցույց տալու և տեխնիկայի հարցերի ասպարիզում :
Վերջինս հանդիսանում է ամեն տեսակ տեխնոլոգիայի, դրանց թվում
և Մոսկովայի գործունեին կից տեխնոլոգիայի աշխատանքի ամենակա-
րելիոր հատվածը : Գրանց անելիքներից մեկն է տեխնիկական ոգ-
նութիւն ցույց տալ գյուտարար բանվորներին : Նախ և առաջ
մասնաշնչեք, վոր կայանն այդ աշխատանքներին ներգրավել և
տեխնիկայի դանադան ասպարեղներից մեծ թիւով ճարտ. տեխն. և
գիտական ուժեր, Լոմոնոսովի և Մենդելեւի ինստիտուտների ու-
սանողներ : Նրանք մեծ մասամբ աշխատում են հասարակական
գծով և նրանցից յուրաքանչյուրը կոնսուլտացիայի աշխատանքնե-
րին նվիրում է վոչ պակաս, քան շարաթական մեկ յերեկո : Այդ
դեպքում տեխնիկական ԲՈՒՀ-երի բարձր կուրսերի ուսանողները
վերադանցապէս ոգտագործվում են, վորպէս ճարտարագետների
ոգնակամներ, ասխատենտներ և կոնսուլտանտներ : 1928 թ. հոկտեմ-
բերից կոնսուլտացիայով անցել են մի քանի տասնյակ գյուտա-
րարներ, և կոնսուլտացիային դիմած յուրաքանչյուր գյուտարար
հերթապահ մասնագետից ստացել է բազմակողմանի ոգնութիւն՝
խորհուրդներ և ցուցումներ այս կամ այն դյուտով ճշտութեան, նը-
պատակահարմարութեան և արժեքայի լինելու մասին, յեթե նա
ոգտակար է հանդիսացել : Յեթե տեխնիկական անդրագիտութեան
պատճառով գյուտարարը չի կարող ինքնուրույն կերպով տեխնի-
կապէս ձեւակերպել իր իրեան, այն ժամանակ հերթապահ գծա-
դիրը կոնսուլտանտի ղեկավարութեամբ նրա համար ճիւղաբար
պատրաստում է բոլոր անհրաժեշտ դժագրութիւնները՝ ում հար-
կըն է ներկայացնելու և պատենտ ստանալու համար :

Բազմաթիւ գյուտարարներ այնպիսի իրեաներ են ներկայաց-
նում, վորոնք բացարձակապէս աննպատակահարմար են և անիրա-
դրծելի : Այդպիսի հաճախորդներին կոնսուլտանտներն ուշադրու-
թեամբ լսում են, և նրա մեջ ստեղծագործական ընդունակու-
թիւններ նկատելիս, ցույց են տալիս մի շարք խնդիրներ, վորոնց
վրա պետք է կենտրոնացնել ուշադրութիւնը և գյուտարարական
միտքը : Յեթե կոնսուլտանտի կարծիքով այս կամ այն գյուտը
արժեք ունի արդյունաբերութեան և ժողովրդական տնտեսութեան
համար, ապա տեխնոլոգիայի արհեստանոցներում գործուտի աշա-
կերտները հրահանգիչների ղեկավարութեամբ պատրաստում են
դյուտերի նմուշներն ու մոդելները :

Այսպիսով, կոնսուլտացիայի անելիքն է տեխնիկական ոգնու-
թիւն ցույց տալ գյուտարարներին՝ մինչև դժագրութիւններ
պատրաստելը, վորոնք անհրաժեշտ են ներկայացնելու և պատենտ
ստանալու համար : Վորոչ դեպքերում պատենտ վերցնելուց հետո
պատրաստվում են մոդելների աշխատանքային դժագրութիւններ
ու նմուշներ :

Սա մի որինակ այն հայտարարութիւններից, վոր գյուտա-
րարները հաճախ ներկայացնում են կայանին :

Յերիտասարդ բանվոր Լոպուլը գրում է .

«Յես մի քանի դյուտերի նախագծեր ունեմ, մասնավորապէս ծաղիկ-
ները կատարացիայի յեթարիող միտաի նախագիծը, բայց յես տեխնի-
կական կրթութիւն չունեմ և չեմ կարող ճշտութեամբ պատրաստել ոգ-
նակներ, պլաններ և դժագրութիւններ : Այդ պատճառով խնդրում եմ
տեխնիկական կայանին ոգնել ինձ դիւսլս բերելու այդ դյուտերը » :

Իսկ գյուտարար Գուչչեւը խնդրում է .

«Վորովհետեւ յես տեխնիկապէս անգրագետ եմ, խնդրում եմ պատրաս-
տել իմ հնարած սալակի դժագրութիւնները, վորպէսզի պատենտ վերց-
նեմ » :

Հերթապահ կոնսուլտանտներն այդ հարցին տվեցին հետեւյալ
դնահատականը .

«Ընկ. Գուչչեւին առաջարկում է պարզացրած մի սալակ դյուտարու-
տեսական աշխատանքների համար : Նրա սալակն որիդինալ է նրանով,
վոր առանձին կառուցվածք ունի, նրա վրա հնարավոր է դամբելովի ա-
ռանձին մասերը տեղափոխել, նրան կարելի յե ոգտագործել զանազան նը-
պատակներով, մասնավորապէս կարող է ոգտագործվել սալեր միացնելու
և տեղափոխելու համար » :

Յերիտասարդ գյուտարար Դուլիցկին գրում է .

« Դիմում եմ ձեզ, խնդրելով քննել իմ շարժիչը և, յեթե նա իրագոր-
ծելի յե, ոգնել ինձ խորհուրդներով և հնարավորութիւն տալ աշխատե-
լու ձեր արհեստանոցներում (հետո նկարագրում է կոնսուլտացիան) : Յես

տեխնիկական բաժնարար գրադիտութիւն չունեմ և չգիտեմ, թե վորտեղ կարելի չե գտնել անհրաժեշտ գրականութիւն: Կարիք ունեմ փորձված ընկերներէ խորհուրդներէ: Վերջապէս, յիս կարիք ունեմ մի անկշան, վորը նյութեր և գործիքներ ունենա: Կնդրում եմ տեխնիկական ուղներ ինձ, թույլ ապ աշխատելու ձեռ կարիներաներում և արհեստանոցներում, և տեխնիկական ուղնութիւն ցույց տալ ինձ»:

Այդպիսի դիմումներ, վորով խնդրում են տեխնիկական ուղնութիւն ցույց տալ և գծադրութիւններ պատրաստել, կայանի գոյութեան շրջանում բաժնական շատ են ստացվել: Մեծ թիվով ընկերներէ ուղնութիւն և ցույց տրված վոչ միայն խորհրդով, այլ և գծադրութիւններ պատրաստելով՝ ներկայացնելու համար: Գյուտարար Բորչիչեվը, վորի համար տեխնիկայնը գծադրութիւն և պատրաստել պատենտի համար ներկայացնելու, «Տեխնաստ» ընկերութեանը գրել և հետևյալ նամակը.

«Յեռ ձեզ դիմել էյի ինձ ուղնութիւն ցույց տալու և իմ գյուտերի գծադրութիւնները պատրաստելու մասին: Ի պատասխան դիմումիս, տեխնիկայնը պատրաստել և իմ գյուտերի գծադրութիւնները, վորոնցով յես արդեն վկայականներ եմ ստացել №№ 38, 26, 269, 38 և 271: Երկր-կայանս դուք ինձ ուղնում եք՝ պատրաստելով իմ ներկայացրած գյուտի գծադրութիւնները՝ պատենտ ստանալու համար: Վերոհիշյալի հիման վրա իմ խորին շնորհակալութիւնն եմ հայտնում՝ իմ գյուտարարութեանը, իսկ վոր դիմավորն ե՝ իմ առաջադիմութեանը ձեր ցույց տված ոճան-դակութեան համար: Գյուտարար Բորչիչեվ, 31 հունվարի 1929 թ.»:

Տեխնիկայնի արամագրութեան տակ կան գյուտարարներէից ըստացված մի քանի նման շնորհակալական նամակներ:

ՄՈԳԵԼՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵՑԻՆ

Սակայն միայն գծադրական կարիներաներում գծադրութիւններ պատրաստելով չեն սպառվում տեխնիկայնի աշխատանքները: Վորոչ գյուտարարների համար, յերբ նրանք առանձնապէս արժեքավոր գյուտեր են հնարում, գործուսի արհեստանոցներում նրա համար հրահանգիչներէ ղեկավարութեամբ և գործուսի աշակերտների ոճանդակութեամբ պատրաստվում են գյուտերի մոդելներ և նմուշներ, վաղորոք պատրաստված գծադրութիւններէ հիման վրա: Թվարկենք մի քանի ամենապարզ մոդելներ և նմուշներ, վորոնք պատրաստված են վերջին ժամանակներս տեխնիկայնի աշխատանոցներում:

Կոմ յերիտական, յերիտասարդ գյուտարար Կապլանսկի համար պատրաստված ե մի հարմարանք շարժական կինոյի համար: Նրա գյուտի շնորհիվ անընդհատ ջուր ե մատուցվում, վորի հետևանք-

քով սպարատն անընդհատ դառնալով, հնարավորութիւն և տալիս կինոտպագվենը. պատել անընդհատ: Գյուտարար Փարբիկովի համար պատրաստված ե կարտոֆիլ փորող մեքենա, վորի եյութիւնն այն ե, վոր նրա ուղնութեամբ կարտոֆիլը հողից հանվում և առանց ձեռներով փորելու, և ավտոմատ կերպով լցվում պարկը: Գյուտարար Պիսարենկոյի համար պատրաստված ե արագ կարող մեքենայի կոթ-ամբիչներ: Գյուտարար Իսաբինի համար պատրաստված ե հիդրավլիկական շարժիչ-աղաց: Գյուտարար յեղբ. Մուխարտովների համար պատրաստված ե կարկանդակներ մեխանիկորեն պատրաստելու մեքենա: Այդ գյուտի շնորհիվ խմորով փաթեմած պատրաստի Փարշը մեքենային հանձնվում և ավտոմատ կերպով: Որական 20-000 հատ կարկանդակ մեխանիկորեն մամլվում ե և պաղացվում:

Հետաքրքիր ե յեղբ. Մուխարտովների բաց նամակը «*Кому Правда*»-ին:

«Յեռ անցած տարվա հոկտեմբերին, մենք՝ գյուտարար յեղբ. Մուխարտովներս դիմեցինք բանդյուտարարութեան կենտրոնային, խնդրելով միջոցներ հատկացնել ձեզ յերկու մոդել պատրաստելու համար, վորոնց թվում մի կարկանդակ թխող մեքենա: Մեր միջնորդութեանը բաժնարարից միայն թղթի վրա: Մեզ հատկացրին 11-000 ռ., բայց արդեն անցել ե 3 ամիս և մինչևի այժմ մենք չենք ստացել: Մեքենայի պատրաստումը նույնպիս թղթի վրա կմնար, յեթե չլիներ տեխնիկայնը, վոր հնարավորութիւն տվեց ձեզ աշխատելու արհեստանոցներում: Մենք պատրաստելիք կարկանդակ թխելու մեքենայի աշխատանքային մոդել: Ս.թ. հունվարի 19-ին մենք մոդելը ցուցադրեցինք ժողովնոյի հանձնաժողովին, վորը վարչեց պատրաստել այդ մեքենան և ապ համապատասխան վարկ: Յեթե տեխնիկայնն ուղնութիւն ցույց չտար, մենք գործնականում չեյինք կարող սպացուցել ձեր իղեայի ճշտութեանը, այդ պատճառով սրտաղին շնորհակալութիւն ենք հայտնում տեխնիկայնին»:

Կարելի յեր հիշատակել այլ գյուտարարների բազմաթիվ նըման հայտարարութիւններ: Նրանք, ինչպէս և վերոհիշյալները միանգամայն ակնհայտ ցույց են տալիս, թե ինչպիսի խոշոր դեր կարող ե յսպալ տեխնիկական ոգնութիւնն այն անգրագետ բանվորներին և գյուղացիներին, վորոնք ոճոված են արտադրական ստեղծագործ մտքով:

Մոսկվայի տեխնիկայնը ուղնութիւն և ցույց տալիս դանազան գործարանների գերազանցապէս գյուտարար բանվորներին և մեխանիկներին, վորոնք գործարանում չկան նման կայաններ կամ կետեր: Չեռնարիտութեան կից կազմակերպվող տեխնիկայնը, բնականաբար, տեխնիկական ուղնութիւն և ցույց տալու գերազանցապէս իր ձեռնարկութեան բանվորներին: Այդ դեպքում տեխնիկա-

կան ողնության ամբողջ գործը կարելի կլինի շաղկապել արտա-
դրութեան բնույթին՝ հաշիւ առնելով նրա բացիոնարացման և ու-
կոնստրուկցիայի բոլոր առանձնահատկութիւնները:

ՄՈՒԵԼԻՍՏՆԵՐԻ ՅԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐՆԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

Մենք տեսանք, թե բանվոր յերխտասարդութեան մեջ վորքան
ուժեղ և ճշտումը պատրաստելու զանազան տեսակ մոդելներ և
կոնստրուկցիաներ՝ ավտոմոբիլներ, շողենալեր, ռադիոնդուլներ-
ներ, դադաչափներ, մեքենաներ, ֆոտոսպարատներ: Այդ պատճա-
ռով տեխնիկայի արհեստանոցներում առանձին կարիներում պետք
է անկյուն հատկացիլ համապատասխան խմբակների՝ պատանի
տեխնիկներին, կոնստրուկտորներին, մոդելիստներին և այլն: Նրանց
ղեկավարելու համար պետք է հրավիրվեն գործուսի ավագ աշա-
կերանները, վարպետներն ու հին բարձրորակ բանվորները: Այդ
խմբակների արդյունավետ աշխատանքն ապահովելու համար նը-
րանց հնարավորութիւն պետք է տալ ոգտովելու հին, գործարա-
նին անպետք նյութերով, գործիքներով, սարքավորումով:

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՐՃԱՏԵՎ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ

Մի քիչ մանրամասն կանգ առնենք տեխնիկայի և Կրասնայա
Պրեսնյայի կոմյերիտական Կենտրոնական Տան կադմակերպած
այն դասընթացների աշխատանքի վրա, վորոնք սովորեցնում են
էլեկտրականութիւն անցկացնել, հեծանիւներ, կարի մեքենաներ,
ֆոտո և ռադիո գործածել և նորոգել: Դասընթացներում սովո-
րում են 150 յերխտասարդ բանվորներ, վորոնք գործուղված են
գործարանների «Տեխմասսի» և կոմյերիտական բժիշկների կողմից:

Բանվոր յերխտասարդութիւնն առանձնապէս հետաքրքրվում
է էլեկտրականութիւն անցկացնելու դասընթացներով, վորտեղ
պարապում են 2 խմբակ—30-ական հոգով: Նրանցից 52 բանվոր են
և ծառայող, 8 աշակերտ:

Դասընթացների նպատակն է համառոտ ծանոթութիւն տալ
էլեկտրատեխնիկայի հիմնական որենքներից ընդհանրապէս և
մաքնավորապէս էլեկտրատեխնիկայից, սովորեցնել զանգ անցկաց-
նելը, զանգի ազդանշան, զանգի արմատուրա պատրաստելը, լա-
բերի կայաններ, էլեկտրոլարերի նորոգութիւնն ու մարումը: Ելեկ-
տրական ազդանշանի դասընթացի ծրագրում նախատեսված է ծա-
նոթացնել զանգով ազդանշան պալու, նրա նպատակի, զանգի հա-
մարատուների պատրաստման և գործողութեան սկզբունքների:

ձողութեան յեղանակի և զանգային տարրերի ու տրանսֆորմա-
տորների բազմազան սխեմաների հետ: Դասընթացները գործում
են շաբաթական 2 որ, 2-ական ժամ, 2 ամիս տեւողութեամբ:
Ամբողջ դասընթացի միջոցին տեսութեանը հատկացվում է 21
ժամ, իսկ գործնական պարապմունքներին՝ 24 ժամ: Հմուտ և
պատրաստի էլեկտրամանույրը, վոր գործնական և տեսական գի-
տելիքներ ունի էլեկտրատեխնիկայից, կարող է ղեկավարել էլեկ-
տրականութիւն և զանգ անցկացնելու կարճատե դասընթաց-
ները: Կայանի այդ դասընթացները ղեկավարում է Մոսկվայի
էլեկտրատեխնիկական դասընթացներն ավարտած ընկ. Ս. Ս.
Միտինը:

Պարապմունքները թեթեւացնելու համար վորոշ մատեմատի-
կական գիտելիքներ ունեցող և պատրաստի ունեկողներին հանձ-
նարարել են Կարպովի և պրոֆ. Ալեքսանդրովի դասագիրքը, իսկ
մատեմատիկայից քիչ ծանոթութիւն ունեցողների համար՝ վոր-
պէս էլեկտրատեխնիկայի կոնսպեկտ՝ պրոֆ. Ալեքսանդրովի մի
փոքրիկ գիրքը:

Գործնական պարապմունքների համար անհրաժեշտ են փայտե
ձող 1 մ. լայնութեամբ և 3 մ. յերկարութեամբ, վորոնք ամբաց-
վում են սենյակի պատին ունեկողներին թվի համապատասխան
(3-4 ձող), փոքրիկ դրատախտակ, 5 կոմպլեկտ մոնտաժի գործիք,
էլեկտրատեխնիկական նյութեր, պահարան գործիքների և նյութե-
քի համար, ապա

1. Լար 1 մմ	300 մ
2. Չատված լար 1 մմ	300 մ
3. Գլանիկներ № 2	500 հ
4. Պտուտակներ 1 3/4 դյուլմ № 8	300 հ
5. Մեկուսիչ ժապավեն	1 կ
6. Տինոլ	0,5 կ
7. Կապելու լար 1 մմ	2 կ
8. Տրանսֆորմատորներ	2 հ
9. Չանգեր	4 հ
10. Չանգի լար	2 կ
11. Չանգի մեխ	1 հ
12. Ապահովիչ «Մինյոն»	3 հ
13. Կոթառ առանց բանալիի	5 հ
14. Ընդհատիչ 4 ա	5 հ
15. Խրանոց	5 հ
16. Ճիրան	5 հ
17. Ճախարակ	1 հ
18. Կոթառ բանալիով	1 հ
19. Ճիրան	1 հ
20. Ճախարակի լար	5 մ

21. Փոխանցիկ արկղներ 3X2	1 հ
22. Մանր մուրճեր	5 հ
23. Պատուակազարձներ	10 հ
24. Դանակներ	5 հ
25. Պաստառիժե	5 հ
26. Ազգան բուժքերան	5 հ
27. Ազգան սուբբերան	5 հ
28. Մամլիչներ	1 հ
29. Զանգի կոճակներ	1 հ

ՀԵԾԱՆԻՎ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ՅԵՎ ՆՈՐՈԳ-ԵԼՈՒ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Հեծանիվ գործածելու և նորոգելու դասընթացներում ընդամենը պարապում են 16 հոգի վորից 13 բանվոր են: Դասընթացների անեյթն է:

Հեծանիվի մասերի վերաբերյալ տալ տեսական և գործնական հիմնական ցուցումներ, ընդհանուր հրահանգներ տալ հիմնական մասերի գործածության մասին— I դաս (2 ժամ):

Առաջի անիվը քանդելու պարագամունքներ: Անունները՝ մատնացույց անելով առանձին մասերի փոխադրեցությունը, մատնացույց անելով, թե վոր մասերն են խոնավ, վորոնք՝ չիկացած— II դաս (2 ժամ):

Նույնը յետի անիվ վերաբերյալ— III դաս (2 ժամ):

Նույնը շրջանակի վերաբերյալ— IV դաս (2 ժամ):

Պարագամունքներ, յերբ ունկնդիրներն ինքնուրույն կերպով քանդում են առանձին մասերը, սարքում և կանոնավորում— V-VIII դասը ներառյալ (8 ժամ):

Այնպիսի դասեր, յերբ յուրաքանչյուր ունկնդիր ինքնուրույն կերպով քանդում և հավաքում է մեքենան՝ մատնացույց անելով մասերի փոխադրեցությունը և անվանելով նրանց— IX-XV դասը ներառյալ (14 ժամ):

Գրավոր դիտողություններ կազմելը՝ մասերի ցուցակով, ցույց տալով, թե անային պայմաններում ինչպիսի ասարական նորոգություն կատարել— XVI, XVII և XVIII դասեր (6 ժամ):

Այլ դասընթացներում տեսությունը տեղում է ամբողջ առաջին դասերը: Մյուս դասերին տեսության անըրադատում են այնքան, վորքան անհրաժեշտ է, բայց վոչ ավելի քան մեկ դասի ընթացքում 15-20 րոպե:

Նման դասընթացները ղեկավարել կարող է հեծանիվ լավ ծա-

նոթ յուրաքանչյուր մետաղագործ, մեխանիկ կամ փականագործ: Ղեկավարներից առանձին տեսական դիտելիքներ չի պահանջվում, բայց, այնուամենայնիվ, մեխանիկայից վորոչ դիտելիքների տիրաչլետելը չափազանց ցանկալի չէ: Մոսկվայի տեխնիկային կից դասընթացները ղեկավարում է կարի մեքենայի պետական գործարանի Մյասնիցիի դեպոյի մեխանիկ ընկ. Դմիտրիևիվը, վորը 26-ամյա արտադրական ստաժ ունի: Դժբախտաբար մինչև այժմ չկա մի դասագիրք հեծանիվի նորոգման վերաբերյալ, չնայած դրա պահանջը շատ մեծ է: Փորձը ցույց է տալիս, վոր նպատակահարմար կլիներ, յեթե խմբակում ինեյին 10-15 հոգի: 36 դասաժամ միանգամայն բավական է, վոր ունկնդիրները լիակատար չափով՝ ծանոթանան ուսուսական և արտասահմանյան սխառեմի հեծանիվին և նրա նորոգությանը տնային պայմաններում: Պարագամունքները կարելի չէ կատարել ունկնդիրների քանակին համապատասխանող ուղած սենյակում: Սարքավորման համար պահանջվում է սեղան, դրատախտակ և բացի դրանից:

- | | |
|--|-------|
| 1. Ռուսական կամ արտասահմանյան հեծանիվ | 1 հաս |
| 2. Ռուսական կամ արտասահմանյան անուր (ВТУЛКА) | 3 » |
| 3. Տարպեզու և կեյնոր | 3 » |
| 4. Հեծանիվի մի քանի կոմպլեկտ բանալի | — |
| 5. Մուրճ | 1 » |
| 6. Մամլիչներ | 1 » |
| 7. Նարկոլի գործարանի խուփեր | 1 » |

Կարի մեքենայի դասընթացներ.— Կարի մեքենայի նորոգության կարճատե դասընթացները նպատակ ունեն ծանոթանալ անային տիպի մեքենաների հետ (կենտրոնական և ճոճփող ճախարակիկով), նրանց թերությունների վերացման և կարգավորման հետ: Պարագամունքների ծրագրի մեջ մտնում է հաեյալը. մեքենաները քանդելը և մասերի փոխադրեցությունը, մեքենաների պրակտիկ աշխատանքը, քանդելու և սարքելու կարգը, ծանոթություն մեքենայի մեջ պատահող փչացումներին, բացատրություն մեքենան լրիվ քանդելու մասին, մասերի մեջ պատահող թերություններն ու նրանց վերացումը, մեքենայի քանդելն ու կարգավորելը:

Պարագամունքները դիտավորապես պետք է հիմնել գործնական աշխատանքների վրա, վորի համար պետք է յուրաքանչյուր 4 մարդուն ունենալ 1 մեքենա:

Դասընթացներում ընդամենը սովորում են 21 հոգի, վորոնք պարապում են չարաթը 2 անգամ, 2-ական ժամ՝ 2 ամիս տեվողու-

Թյամբ: Ուսման սլանը կազմված է այնպես, վոր տեսութիւնը հատկացվում է 10 ժամ, գործնականին՝ 26 ժամ: Կարի մեքենաների գործածութեան և նորոգութեան տեսութիւնն ու գործնականը կարող է ավանդել կարի մեքենաների մասնագետ մեխանիկը: Տվյալ դեպքում դասընթացները ղեկավարում է Պլասնիցկի դեպոյի մեխանիկ ընկ. Մ. Կ.: Վորպեսզի դասընթացներն արդյունավետ լինեն, պահանջվում է հետևյալ սարքավորումը.

Կարի մեքենաներ	2 հատ
Մամլիչներ	1 »
Փոքրիկ մուրճ	1 »
Ձանաղան ստուտակադարձներ	4 »
Հատուկ մեքենայի ստուտակադարձի բանալիներ	4 »
Սղոցներ 8''	1 »
» անձնական 6''	1 »
Բրոկիա	2 »
Գերն	1 »
Նաժդակի թուղթ	10 թերթ
Պասսատիժե	1 հատ

Փաստդարձքացնիլի նպատակն է պատրաստել կարող և ինքնուրույն ֆոտոաշխատանք կատարող վորակյալ ֆոտոսիրտողներ: Պարագմունքների ընդհանուր տեվոլութիւնը հավասար է մյուս դասընթացներին: Տեսութեանը հատկացվում է 12 ժամ, գործնականին՝ 24: Անկալար կարող է լինել պրակտիկ լուսանկարիչը: Գործնական աշխատանքների համար անհրաժեշտ է ունենալ կատարելապես մութ սարքավորված սենյակ:

Ռադիոյի դասընթացներում պարապում են 20 հոգի, տեվոլութիւնը նույնն է:

Դասընթացներում ունկնդիրները հիմնական տեղեկութիւններ են ստանում կապի և ռադիոտեխնիկայի պատմութեան մասին և անցնում են Ա. Ս. Պասլովի աշխատանքների նշանակութիւնը ռադիոտեխնիկայի համար, ռադիոկապի տարբերութիւնը լարային կապից, նրա առավելութիւններն ու թերութիւնները, ռադիոյի կիրառումը կենցաղի մեջ: Բացի դրանից, պարագմունքների ծրագրի մեջ են մտնում հետևյալ հատվածները. ելեկտրականութիւնը և մագնետիզմը, տոկը և նրա առանձնահատկութիւնները, մագնետիզմը և ելեկտրական տատանումները, ընդունիչի մասերի քանդումը, ընդունիչի կառուցումը:

1. Կատողային լամպ,
2. լամպային սարքի առանձին մասերի դերը,
3. միալամպ ընդունիչի կառուցումը,
4. տոկի աղբյուրը:

Ահա մի համառոտ նկարագրութեան Մոսկվայի տեխնիկական կայանին և կոմյերիտմիութեան Կենտրոնական Տան կից գործող Կենցաղային տեխնիկայի կարճատև դասընթացների գործունեյութեան և աշխատանքների մասին:

Մենք դիտավորյալ կերպով մանրամասն կանդ առանք ամեն մի դասընթացների աշխատանքների վրա: Նրանք կարող են հիմնովել յուրաքանչյուր գործարանում «Տեխմասի» բջիջի կամ տեխկայանի ձեռքով:

Նրանց կազմակերպման և նորմալ աշխատանքներին անհրաժեշտ րոտր տվյալները կան բոլոր գործարաններում և առավելապես գործուսներում: Ահա, թե ինչու «Տեխմասի» բջիջներն ու տեխնիկական կայանները պետք է ամենալուրջ ուշադրութեան դարձնեն նրանց հիմնելու և զարգացման վրա:

ՏԵՔՆԿԱՑԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Մենք արդեն մատնանշեցինք, վոր կայանն իր աշխատանքը կատարում է ոգտագործելով գործուսների կարիներտները, արհեստանոցները, լարտատորիաներն ու սարքավորումը: Նրա ղեկավարները հիմնական կազմն աշխատում է առանց վարձատրութեան՝ հասարակական կարգով, այդ պատճառով միջոցներն անհրաժեշտ են, դիտավորապես, ամենուրեք աշխատանքների ծախսերի համար՝ լուսավորութեան, վարպետների, հավաքարարների, զանազան նյութեր ձեռք բերելու (կենցաղային տեխնիկայի, թղթի և այլն), գրադարանի, ընթերցարանի համար գրականութիւն ձեռք բերելու, կայանի մեկ-յերկու հիմնական աշխատակցի և մի քանի մանկավարժների աշխատավարձը տալու, վորոնց գործունեյութիւնը չափազանց արդյունավետ է և կենտրոնական բնույթ ունի տեխկայանի ամբողջ աշխատանքներում:

Աշխատակիցների այդ փոքրաթիւ մասի վարձատրութիւնը պետք է լինի աննշան չափով, վորպես մի հավելում նրանց ստացած հիմնական աշխատավարձի: Կայանի աշխատանքների առաջին շրջանում նրա ամսական սխեման կարող է կազմվել 330-ից մինչև

500 Բ. սահմանում: Տեխնոլոգիաների միջոցները զույգանում են կուլտ-
հանձնաժողովների հասկացումներից, գործարանի վարչաթիվի, համապատասխան տրեսանների և սինդիկատների տված գումարնե-
րից: Անհրաժեշտ է անպայման աշխատել, վոր անտեսական կադ-
մակերպութունները և վարչութունները դրամական սմանդա-
կութուն ցույց տան տեխնոլոգիաների, չխոսելով դեռևս գործարկում-
ների կուլտհանձնաժողովների մասին: Բայց և այնպես, միանշա-
մայն թույլատրելի չէ տեխնոլոգիաների աշխատանքն սկսել առանց կարճ
ժամանակամիջոցում անմիջապես սուբսիդիա ստանալու, քանի վոր
միջոցներ հեշտ է ձեռք բերել, յեթև գործնականում ցուցադրվի
տեխնոլոգիաների աշխատանքը:

ԱՅՍ ԱՍՊԱՐԻՋՈՒՄ ԱՇԽԱՏԵԼ ԿՈՐ ՅԵՂԱՆԱԿՈՎ

Ահա տեխնոլոգիաների կազմակերպման աշխատանքի խնդիրների և ձե-
վերի նկարագրութունը՝ հիմնական գծերով:

Նրա կազմակերպմանն ահալի մասնակցութուն պետք է ցույց
տան հասարակական կազմակերպութունները՝ ամբողջ կնիկովիվը՝
դասատուները, հրահանգիչները, գործուսի աշակերտները, Համ-
ԼԿՅԵՄ բՆԻՎը, գործարկումը, կուսբՆԻՎը՝ անպայման մասնակցից
գարձելով անտեսական մարմիններին: Կազմակերպման նախա-
ձեռնութունն իրենց վրա կարող են վերցնել գործարանի կուլեկ-
տիվն ու կոմյերխտական բՆԻՎը: Առաջին շրջանում կարելի չէ
սանդձել տեխնոլոգիաների կազմակերպիչների փաթրիկ՝ 7-10 հոգուց
կազմված խմբակ:

Այս խմբակը կառարում է ամբողջ նախապատրաստական աշ-
խատանքը: Նա հարցը դնում է գործարանային կազմակերպու-
թունների առաջ և նրանց հրավիրում է մասնակցելու և ոգնու-
թուն ցույց տալու կայանի աշխատանքներին: ՃՏՍ միջոցով պետք
է գործի հրավիրել ձեռնարկութուն ճարտարադեպներին և տեխ-
նիկներին: Շատ կարևոր է աշխատել, վոր գործին մասնակցեն
նայելի հին վորակյալ վարպետներն ու բանվորները: Անհրաժեշտ
է թույլալութուն ստանալ ոգովելու գաղղյահներից և նյութերից:

Ամենակարևոր խնդիրներից մեկն է հանդիսանում բանվոր-
ներին պատի լրադրի, սլախատներ կախելու, կոմյերխտական բՆԻ-
Վի, յերխտաարդութուն և հասակավոր բանվորների ժողովներում
գեկուցումներ դնելու միջոցով կայանի ամբողջ գործունեյութուն

հետ ժամանակին ծանոթացնելը: Միայն այս պայմանները կառա-
րելով կարելի չէ ապահովել տեխնոլոգիաների կազմակերպման և աշ-
խատանքի հաջողութունը:

Գ Լ Ո Ւ Խ III

**ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵՑ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Ե ԱՇԽԱՏՈՒՄ
«ՏԵԽՄԱՍՍ»-Ի ՍԱՄԱՐԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ *)**

«Տեխմաս» ընկերութունն իր գոյութուն առաջին տարիների
մեր Միութնան դանադան քաղաքներում ուներ 15 նահանգական
բաժանմունք՝ Մոսկվայում, Լենինգրադում, Իվանովո-Վայնոսեն-
սկում, Ռոստովում, Կիևում և այլուր:

Շնորհիվ այն հսկայական հեռաքրքրութուն, վոր աշխատա-
վարութնան դանադան խալիք ցույց են տալիս «Տեխմաս» ընկերու-
թնան, մենք նկատում ենք, վոր գործարաններում և դյուզական
վարչերում տարերայնորեն առաջանում են բՆԻՎներ, մինչդեռ նա-
հանգական և մարդային կենտրոններում դեռևս զեկավար բաժան-
մունքներ չեն հիմնված: Նահանգական բաժանմունքներից ոգնու-
թնուն և զեկավարութուն չստանալով, ինչպես և հետու գանվելով
կենտրոնից, վորոշ բՆԻՎների աշխատանքը թուլանում է քայքայ-
վում է: Դրան պետք է ափելացնել նաև այն հանգամանքը, վոր
«Տեխմասի» բազմաթիվ նահանգական և մարդային բաժանմունք-
ներ դեռ բավականաչափ չեն կարողացել աշխատանք ծախելի
ճարա-տեխնիկական ուժերին ներդրավելու բՆԻՎների, տեխնո-
լոգիաների, կոնսուլտացիայի և աշխատանքի այլ ձևերի կազմակերպ-
ման: Այս պատճառով յուրաքանչյուր կազմակերպութուն համար
հսկայական հեռաքրքրութուն կենրկայացնել կոմյերխտականների
մի փաթրիկ նախաձեռնող խմբակի աշխատանքի լուսարանութունը,
վորոնք կարճ ժամանակամիջոցում կարողացել են հիմնել «Տեխ-
մասի» նահանգական, իսկ այժմ մարդային բաժանմունք՝ գործա-
րանային բՆԻՎների լայն ցանցով: Սամարայի կոմյերխտականների
նախաձեռնող խմբակի գործունեյութուն մեջ բնորոշն այն է, վոր
նրանք ձեշտ են բմբունել ընկերութնան խնդիրները, ամենասկզբից

*) Մտորել լուսարանից փորձը վերաբերում է Սամարայի բաժան-
մունքի գործունեյութնան առաջին շրջանին: Այժմ բաժանմունքը մի շարք
նոր արժեքավոր ձեռնարկումներ ունի:

Գուրա ևն վերցրել «Տեխմաստի» բլիժներ կազմակերպելու Վաճիճա-
կանքին գործարաններում և կարողացել են իրենց աշխատանքն-
երին ներգրավել Սամարայի ճարտ. -տեխնիկական սեկցիաներին:

ՍՍՄՍՐԱՅԻ ԱՌԱՋԱՄՍՐՏԻԿՆԵՐԸ

Սամարայում «Տեխմաստի» ընկերություն հիմնելու միտքն առա-
ջին անգամ ծառել է կոմյերիտականներ Մատլինի, Կուկլինի և
Մարխիպովի մեջ: Քիչ ժամանակ անց, նրանց միացել է յերիտասարդ
բանվորուհի ընկ. Իալաչևան: Նրանք գործը սկսել են ընկերու-
թյան կենտրոնական նախադասությունում նյութերի ուսումնա-
սիրությունից, վար նրանք ստացել էլին 1928 թ. հուլիսին դեպի
Մոսկվա կատարած չրջագայություն ժամանակ:

Իազմացնելով ստացված նյութերը, նախաձեռնող խմբակն
սկսեց մասսայական անհատական աշխտացիա ծավալել Սամարայի
յերիտասարդ բանվորների մեջ: Կարճ ժամանակամիջոցում նախա-
ձեռնող խմբակը հավաքեց 25 կոմյերիտական բանվոր դանազան
ձեռնարկություններից, վորոնց թվում յերիտախուղային գլխավոր
արհեստանոցների դեպոյից, Միլին Վոլգայի գործարանից, աղա-
ցից, բամբակագործարանից և Յենտրոսպիրտից: Բոլոր յեղած
նյութերը կոլեկտիվ մշակություն յենթարկելուց և հրահանգչական
խորհրդակցություն դումարելուց հետո, նախաձեռնող խմբակի
անդամները բաշխվեցին գործարանների վրա, ուր սկսեցին բլիժներ
կազմակերպել: Միաժամանակ նախաձեռնողները ղեկուցումներ
տվեցին կուսակցություն և կոմյերիտիություն ուսուցիչների բյու-
րոններում, ուր վերոհիշյալ քառյակը հաստատվեց, նրանց ձեռ-
նարկումը հավանություն ստացավ, և նրանց ղեկավարելու և ող-
նելու համար կուսակցումը նշանակեց տոկար բանվոր ընկ. Յեվսեյե-
վին: Կոմյերիտիություն ուսուցիչին կից շարաթական յերկու ան-
գամ կոնսուլտացիա յեր տրվում բլիժների կազմակերպման, ինչպես
և «Տեխմաստ» ընկերություն հարցերի շուրջը:

Իացի դրանից, հողված տպագրվեց Սամարայի «Կոմունա»
լրագրում:

Ուսանողների ներգրավումը: Նախաձեռնող խմբակն իրեն
նպատակ էր դրել, բացի յերիտբանվորներից, գործի հրավիրել
նաև Սամարայի բանֆակի ուսանողներին: Սկզբնական բանակցու-
թյուններից և բանֆակի կուս. և կոմյերիտական բլիժների բյուրո-
յում ղեկուցում ղեկուց հետո նրանք «Տեխմաստի» տրամադրու-

թյան տակ դրեցին 15 ուսանող, վորպես հրահանգիչ: Քառյակի
ղեկավարությունում հրահանգիչները համար կազմակերպվեցին չոր-
սորյա դասընթացներ, ուր մանրակրկիտ ուսումնասիրվեցին ընկե-
րության աշխատանքների խնդիրների և մեթոդների վերաբերյալ
բոլոր նյութերը: Յերիտասարդ բանվորներին և ուսանողներին
ներգրավելով, նախաձեռնող խմբակին հաջողվեց այլևի լայն աշ-
խատանք ծավալել: Այդ ակտիվի անդամներով լրացնելով նախա-
ձեռնող խմբակը, վերջինս աշխատանք սկսեց ներգրավելու ճարտ.
տեխնիկական ուժերին և իրավական անդամներ դարձնելու հասա-
րակական-տնտեսական կազմակերպություններին:

ՃՏՍ ոգնուրյունը: Ճարտ. -տեխն. սեկցիան, վորին նախաձեռ-
նող խմբակը ոգնություն դիմեց, ամբողջությունում ընդատալեց նրան:

Առաջին չրջանում նախաձեռնող խմբակի աշխատանքներին
մասնակցելու համար նշանակվեցին առանձին ճարտարագետներ:
Յեղած նյութերը բազմացվեցին, ճարտարագետների համար կազ-
մած թեղիսները բաշխվեցին արհմիությունների բոլոր սեկցիանե-
րին: Պատրաստվեց մի կոչ՝ ուղղված ճարտարագետներին և տեխ-
նիկներին: Հետագայում, ինչպես մենք կտեսնենք, ճարտ. և տեխն.
նահանգական բյուրոն մի քանի տասնյակ ճարտարագետի նշանա-
կեց կոնսուլտանտ և տեխնիկայի աշխատանքներին մասնակցելու
համար:

Ովքեր են իրավական անդամները: Առանձնապես դժվար էր ի-
րավական անդամ դարձնել արտադրական և տնտեսական կազմա-
կերպություններին: Այնուամենայնիվ, շնորհիվ Սամարայի կոմ-
յերիտականների ցուցաբերած հսկայական յեռանդի, մենք առե-
նում ենք, վոր նրանց աշխատանքն աստիճանաբար դարգանում և
աճում է:

Ինչի՞ վրա դարձնել գլխավոր ուշադրությունը: Մենք ար-
դեն հիշատակեցինք, վոր նախաձեռնող խմբակի առաջին քառ-
յակին էլին «Տեխմաստի» բլիժների կազմակերպումն անմիջա-
կանորեն գործարաններում: Իր գործունեությունում այս ասպարեզին
նա իրավացի կերպով դարձրել է իր ուշադրություն գլխավոր մասը:
Սամարայի ենտուլիաստների գլխավոր ճարտարությունն այն է,
վոր նրանք հենց սկզբից, ինչպես դրում է գլխավոր նախաձեռնող
ընկ. Մատլինը, հրահանգիչին աշխատանքի կազմունի բյուրոկրա-

տահան մեթոդներից և այդ աշխատանքը կառուցեցին կոնկրետ և կենդանի գեկափարութեամբ: Չոր և կադյուննի շրջափակումների մոխարեն գործարաններն էլին ուղարկվում գիտակից, աշխուժ հրահանգիչ ուսանողներ, բանֆակի ուսանողներ և ինդուստրիալ տեխնիկումի աշակերտներ: Նրանցից յուրաքանչյուրը, անցնելով հրահանգչական դասընթացները, վորոնք ձեռք են բերել բոլոր նյութերը, դնում եր ձեռնարկութուն և համառորեն ու հաստատապես աշխատում, մինչև վոր բլիժը կազմակերպվեր և նրա գործը կարգի գրվեր: Հրահանգիչներից ամեն մեկը՝ լինի նա տվյալ ձեռնարկութեան յերթարանվոր, թե ուսանող, սկսում եր նրանից, վոր կոմյերխական բլիժի բյուրոյում հարց եր դնում «Տեխնաստի» բլիժ կազմակերպելու մասին՝ անպայման հրավիրելով գործարկումի, վարչութեան, ձՏ Սեկցիայի ներկայացուցիչներին: Սյնտեղ վորոշում եր հանվում, վոր ոչետք է հրավիրել գործարանի բանվորութեան և ճարտ.-տեխնիկական ուժերի ընդհանուր ժողով: Աչքի ընկնող տեղերում, ինչպես և ցեխերում, բաժանմունքներում և ճաշարահում կախվում էլին «Տեխնաստի» հայտարարութեաններն ու սլախատները: Բնականաբար, այդպիսի նախապատրաստութեանից հետո ժողով էլին դալիս մեծ քանակութեամբ բանվորներ և ճարտարագետներ, վորպեսզի գեկուցում լան «Տեխնաստ» ընկերութեան անելիքների մասին և անդամագրվին նրան: Այդ ժողովներում, սովորաբար, պաշտոնապես ձեակերպվում եր ձեռնարկութեան «Տեխնաստի» բլիժը և ընտրվում եր բյուրո, վորն անցնում եր գործի: «Տեխնաստի» հրահանգիչները միայն չէին բավականանում բլիժի կազմակերպումով: Նրանցից յուրաքանչյուրը կամ նրանց փոքրիկ խմբակը յերկու ամսով ամբացվում եր գործարանին՝ բլիժին ողնելու և նրա աշխատանքին ընթացք տալու համար: Նորակազմ բլիժներն իրենց առաջ խնդիր էլին դնում հիմնել աշխատանքի նոր ձևեր, վորոնք բավարարեն բանվորների ունեցած տեխնիկական գիտելիքների ընդարձակման պահանջը, և տեղական ճարտ.-տեխն. ուժերին ներգրավել գեկափարութեան համար: Յեզ միայն աշխատանքը վերջնականապես ամբացնելուց հետո նրանք տեղափոխվում էլին մյուս, ավելի թույլ վայրերը: Ծնորհիվ «Տեխնաստի» կազմակերպիչների և հրահանգիչների ցուցաբերած բացառիկ յեռանդի և լուրջ ու մտածված մոտեցման, մենք նկատում ենք, վոր վորակապես բարելավվում է նրանց աշխատանքը: Առ 1 նոյեմբերի 1928 թ. կազմակերպված եր 15 բլիժ՝ համեմատաբար թույլ զարգացած

աշխատանքով, իսկ միայն մի քանի ամիս հետո՝ առ 1 դեկտեմբերի 1929 թ. արդեն կար 29 բլիժ, 2850 անդամով, վորոնք ըստ արդյունարեբութեան ճյուղերի բաշխվում էլին այսպես. յերկաթուղային խմբակից՝ 727 հոգի, մետաղագործութեանից՝ 480, անդարդյունարեբութեանից՝ 225, դարբններից՝ 449 և այլն: Հետաքրքիր է մասնանշել, վոր Սամարայի գործարաններում «Տեխնաստի» բլիժի կազմակերպիչներն ու նախաձեռնողները դերադանցապես կոմյերխականներն էլին:

Ինչ է կատարված բլիժներում: Սամարայիների աշխատանքը չի սահմանափակվում բլիժներ հիմնելով և նրանց 2000-ից ավելի քանվոր անդամագրելով: Միաժամանակ նրանք լուրջ ուշադրութեան են դարձրել ստեղծելու աշխատանքի համապատասխան ձեվեր, վորպեսզի բավարարեն բանվորների ունեցած տեխնիկական գիտելիքների ընդարձակման պահանջը:

Բոլոր բազմաթիվ խմբակների, դասընթացների, դասախոսութեանների և երապերտիզանների մանրամասն նկարագրութեանը բազմական շատ տեղ կհոնք: Այդ պատճառով սահմանափակվենք յուրաքանչյուր բլիժի ձեռք բերած նվաճումները թվարկելով՝ նրանց գործունեութեան համատարբունութեամբի հետ միասին:

Յերկաթուղային խմբակ: Յեղած տվյալներից պարզվում է, վոր բլիժների բոլոր խմբակներից լավագույնն, անկասկած, յերկաթուղային խմբակն է: Դեպոյի բլիժը լավագույնն է վոչ միայն յերկաթուղային խմբակում, այլ և ամբողջ Սամարայում: Կարճ ժամանակամիջոցում հաջողվեց «Տեխնաստին» անդամագրել 175 հոգի, հիմնել և կարգի գցել 4 խմբակի՝ փականագործների, կաթսալագործների, շոգեկառքերի ուսումնասիրութեան և այլն աշխատանքները: Մի հատուկ սենյակում կազմակերպված է տեխնիկական անեյտն, վորտեղ դասախոսութեաններ են արվում յերկաթուղու և Վեստինհաուզի արդեւակի դարգացման պատմութեան մասին, եքսկուրսիա յե կատարված դեպի Ելիկտրոկայան և այլն:

Աշխատանքի հաջողութեանը մեծ մասամբ բացատրվում է պրոֆդպրոց ավարտած բլիժի քարտուղար կոմյերխական Աֆանասյեիի ջանքերով: Լավագույններից մեկն է հանդիսանում նաև գլխավոր արհեստանոցների բլիժը, վոր ունի 120 անդամ: Այդ բլիժի քարտուղարն է դարբին կոմյերխական Դրոգունով: Արդեն աշխատում են փականագործական և ստաղձագործական խմբակները, տանիք շինողների խմբակը և այլն: Ծարտարագետներն ու

տեխնիկները կազմակերպել են մի քանի դասախոսութիւններ: ԲՆԶՆԻ
նախատեսել է զնալ յենթաշէնք գյուղը՝ նրան տեխնիկական ողնու-
թիւն ցույց տալու համար: «Կրասնի Ակտյաբը» բՆԶՆ ունի 50 ան-
դամ, վորոնց համար հիմնված են գծագրական և մատեմատիկա-
կան խմբակներ: Պարբերաբար դասախոսութիւններ են կարգաց-
վում: «Ռադվոդկա» բՆԶՆ կից կազմակերպված են փրկանագոր-
ծական, տոկարի և տանիքադործների խմբակներ: Յերկաթուղային
արհեստանոցների բՆԶՆ կից կազմակերպված է տեխնիկական
կայան, վորը Սամարայի ընկերութեան պարծանքն է: Նրա մասին
մանրամասն կխոսենք քիչ հետո:

Մետաղագործական խմբակից առանձնապես աչքի յե ընկնում
Միջին Վոլգայի գործարանը, վորն ունի 100 անդամ: Նա ունի
ներքին այրման շարժիչների ուսումնասիրութեան և գծագրական
մատեմատիկական խմբակներ (գրանց ղեկավարում են ճարտարա-
գետներն ու տեխնիկները): Առանձին հետաքրքրութիւն է ներկա-
յացնում գործարանում կազմակերպված յերիտասարդ և հասակա-
կավոր բանվորների փոքրիկ խմբակը, վորի նպատակն է պատ-
րաստվել ԲՈՒՀ ընդունվելու համար: Գործարանային աղումբում,
ինչպես ամենուրեք, «Տեխմասսի» անդամ ճարտարագետները պար-
բերաբար դասախոսութիւններ են կարգում զանազան տեխնիկա-
կան թեմաներով:

«Շտամպովկա» № 5 գործարանում, ուր մեծամասնութիւնը
բանվորուհիներ են, բՆԶՆ 50 անդամ ունի: Կան տոկարի և փրկա-
նագործական խմբակներ: Կազմակերպված են կենցաղային տեխ-
նիկայի խմբակներ: Սամարայի ամենախոշոր № 42 գործարա-
նում, ուր «Տեխմասս» բՆԶՆ կազմակերպվել է միայն վերջերս, ըն-
կերութեանն անդամագրվել են 200 բանվոր: Չնայած միայն վեր-
ջերս ազարտվեց կազմակերպչական շրջանը, այնտեղ արդեն ամեն-
ինչ նախապատրաստված է, վորպեսզի աղումբին կից կազմակերպ-
վի բանվորական կիրակնորդա համալսարան, վորին ղեկավարելու
յեն իրենց ճարտարագետներն ու տեխնիկները: Դրա հետ միասին
գործարանի գործուսը լավագույնն է քաղաքում: Սամարայի ընկե-
րութիւնը բՆԶՆ հետ միասին մտադիր է հիմնել յերկրորդ տեխնի-
կական կայան:

Սնկագործների խմբակ: Ինչպես իր հաշվետվութեան մեջ
մատնանշում է «Տեխմասսի» Սամարայի բաժանմունքը, այդ խմբ-
ակն ամենաթուփուն է: № 60 աղացում բազմիցս առաջացել և զար-
գացել է «Տեխմասսի» բՆԶՆ: Հրահանգվողներն այնտեղ սցյելել են

20—30 անդամ: Այդ, իհարկէ, վկայում է, վոր նրանք ոժտված
են բացառիկ դիտակցականութեամբ և հաստատակամութեամբ, վորի
չնորհիվ № 60 աղացը ներկայումս ունի 55 անդամ և գծագրա-
կան-մատեմատիկական խմբակ, իսկ № 61 աղացում բՆԶՆ ունի 45
անդամ և գործում է ալրաղացման գործի խմբակը: «Յենտրո-
սպիրտ» գործարանում կա արտադրութիւնն ուսումնասիրող խմբ-
ակ: Լայն գործունէութիւն է ծավալել դպրոցական խմբակը,
վորն ունի «Տեխմասսի» 5 բՆԶՆ. բանֆակում՝ 154 հոգուց, ին-
դուստրիալ տեխնիկումում՝ 120 հ., գծագրական դասընթացնե-
րում՝ 150 հ., յոթնամյա դպրոցում՝ 25 հոգուց: Նրանց կատա-
րած աշխատանքի մասին մենք կասենք «Դպրոցական բՆԶՆ աշխա-
տանքը» հատվածում:

ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԵՆ ԽՍՀՄ ՄԵՋ ՅԵՐԿՐՈՐԴ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՅԱՆԸ

«Տեխնիկան մասսաներին» ընկերութեան Սամարայի բաժան-
մունքի ամենամեծ նվաճումներից մեկը յերկաթուղային գործու-
սին կից կազմակերպված տեխնիկական կայանն է: Նրա նշանա-
կութիւնն առաջին հերթին այն է, վոր Սամարայի նախաձեռնող
խմբակն ամենից շուտ է յուրացրել Մոսկվայի փորձը, վոր լու-
սաբանված էր «Комсомольская Правда»-յում, և լրիվ չափով
հարմարեցրել իր տեղական պայմաններին: Թե բաժանմունքն ինչ-
պես է հասել այդ դրութեան, այդ մասին ամենից լավ կարող է
վկայել ընկ. Մատրինի նամակը, վորովհետեւ Մատրինը հանդիսա-
նում է նախաձեռնող խմբակի ներշնչողն ու կազմակերպիչը: «Այս
նամակում յես ձեզ կնկարագրեմ, թե մենք ինչպես ենք կազմակեր-
պել մեր տեխնիկական կայանը: Նրա կազմակերպման միտքը մեր
մեջ հպացույ դեռ ամառը, յերբ «Комсомольская Правда»-յում
լույս տեսավ հարտարարութիւն Մոսկվայի կայանի մասին: Սկզբ-
բում մենք միայն սկսեցինք դպրոցի կազմակերպումը, մտածելով,
թե մեր հիմնած դպրոցի առաջին քայլերը կլինեն՝ կազմակերպել
տեխնիկական կայան: Սակայն սեպտեմբերին, յերբ «Комсомоль-
ская Правда»-յում մանրամասն հողված լույս տեսավ Մոսկվայի
կայանի աշխատանքների մասին, դրա հիմնելու միտքը մեզ այլևս
հանդիստ չէր տալիս դիչեր և ցերեկ: Ավելին. գործարանների
բանվորական ժողովներում հանդես գալով, մենք տեսնում էինք,
թե բանվորներն ինչպիսի հիացմունքով էին դիմավորում մեր
հարտարարութիւնները Մոսկվայի կայանի և մեզ մոտ ևս նման

կայան կազմակերպելու մասին: Այդ մասին մանրամասն մտածելով, մենք հարցը ըննության դրեցինք մեր նախաձեռնող խմբակում, ուր վորոշեցին չսպասել դպրոցի կազմակերպման, այլ միաժամանակ աշխատանք կատարել կայանի կազմակերպման համար և կայանը բացել կոնֆերենցիայի օրը: Հարցի մասին համաձայնություն դալով ում հետ հարկն է, մենք դիմում ենք գործի: Մենք սկսեցինք դեռ ու զեն ընկնել, մի գործուսից մյուսը վարել և աչք մանածել: Մենք գտանք, վոր յերկաթուղային գործուսն ամենից լավ է սարքավորված և այնտեղ կարելի յե գտնել այնպիսի մարդկանց, վորոնք ընդառաջեն մեզ: Գործի մեջ մտցրեցինք կոմյերիտական բլիշի քարտուղար Վեդերնիկովին: Մենք նրան վարակեցինք այդ մտքով և խանդավառությամբ: Յերիտասարդն, ինչպես ասում են՝ կրակ կտրեց: Նրա հետ միասին գնացինք դպրոցի վարիչ ընկ. Սոկոլովի մոտ: Նրա հետ միասին մենք վերջեցինք հրավիրել բոլոր դասատուներին, կոմյերիտականներին և աշակերտներին ժողով: Ժողովում զեկուցում ավինք: Մենք պատմեցինք կայանի նպատակներին և խնդիրներին, Մոսկվայի վորձի մասին, և կտրականապես հարց դրեցինք, վոր կայանը բացառապես պետական բյուջեյի միջոցներով չի կարելի կառուցել: Զեկուցում եմ և մտածում. հրես մի բան յեղալ, ամբողջ գործը կիջանա: Զեկուցումից հետո խոսք է անում դպրոցի վարիչ ընկ. Սոկոլովը և սկզբունքով արտահայտվում «կողմ» — ուղղակի անցնելով գործնական առաջարկներին, թե ինչպես կազմակերպել աշխատանքը: Նրա յետևից բոլոր դասատուները, աշակերտներն ու մնացածները պաշտպանում են մեր առաջարկը: Կարճ ասած՝ ժողովն ընդունեց այսպիսի «փոքրիկ» բանաձև.

- 1) Հավանություն տալ գործուսին կից կայան կազմակերպելուն:
- 2) Անվերադարձ նրան տրամադրել ամբողջ սարքավորումը (արհեստանոցներ, կաբինետներ):
- 3) Գործի հրավիրել բոլոր դասատուներին և աշակերտներին:
- 4) Հանձնաժողով ընտրել այս գործը մանրամասն մշակելու համար:

Ժողովից յերբ դուրս յեկանք, խելքներս կորցրել եյինք. ուրախությունից չգիտեյինք, թե ինչ անենք, ստիպան այդ դեռևս վաղաժամ եր: Հանձնաժողովն աշխատեց 1-2 շաբաթ, մանրամասն և ճիշտ հաշվեց, վոր կայանը բացելու համար, վորն ունենա ստաղձագործական, գծագրական, տոկարի դասընթացներ, անհրաժեշտ է ունենալ 500 ու.: Ահա, այստեղից են սկսվում մեր առա-

պանքները: Ահա, այստեղ մենք իմացանք, թե ինչպես լավ են ընդառաջում ներքևից յեկող նախաձեռնությունը: Մտածեցինք, թե ով է շահագրգռված այս գործով: Գտանք, վոր՝ Ժողովատիրոջ, Արհմխորհուրդը, Բաղխորհուրդը:

Մրանից հետո դալիս են չախագանց հետաքրքիր խոսակցություններ հիշված կազմակերպությունների ներկայացուցիչներին հետ, վորոնք, դժբախտաբար, վոչ մի հետևանք չեն տվել: Մենք գիտակցաբար հանեցինք այդ խոսակցությունները:

«Ուր վոր մենք գնացինք, — այնուհետև դրում է ընկ. Մասոլինը, — ամենուրեք մերժեցին: Գնացինք «Միջին Վոլգայի Կոմունա» լրագրի խմբագիր ընկ. Նագայեվի մոտ: «Ոժանդակել կոմյերիտականներին կայտառ նախաձեռնությունը» վերնագրով, լրագիրը սպառեց մի աշխուժ և ջերմաշունչ հոդված: Հիշատակենք նրա վերջին մասը: «Տեխնոլոգիայի յերկրորդն է լինելու ամբողջ Միություն մեջ: Առաջին կայանը Մոսկվայումն է: Կայանի կարիքը հրակայական է: Հենց վոր ձեռնարկություն մեջ խոսք բացվեց այդ կայանի հնարավորության մասին, սողերքի բերանները բաց մնաց, և քիչ եր մնում, վոր ծափ տային: Ինչ վոր մեկ և կես ամսում դեռ վերջնականապես չձևակերպված «Տեխնոս» ընկերությունը հասավ ահռելի մի մեծություն՝ 900 հոգու: Յեվ այս ամբողջ թարմ գործի առաջ մի խոչընդոտ կա. չկա միանվագ 500 ո. և ամսական 1000 ո. կոնսուլտացիայի պահպանման համար: Այդպես քիչ է յերևում, բայց և այնպես՝ չկա: Այդ պատճառով լրագրի խմբագրությունը կոչ է անում գործարանների վարչություններին, անտեսական մարմինների ղեկավարներին, բոլոր կազմակերպություններին և ընկերներին, վորոնք շահագրգռված են աշխատավոր մասսաների տեխնիկական զբաղիտություն բարձրացման գործում. «Շտապ ոգնություն հասեք կոմյերիտականների նախաձեռնությունը: Ոգնեցեք անդամավճարներով, հատկացումներով: Փողն ընդունվում է լրագրի գանձարկում: Մեր լրագրի եջերում հրապարակվելու յեն այն հիմնարկների և ընկերների անունները, վորոնք կարձազանքեն այս կոչին»:

Լրագրի կոչին նախ և առաջ արձագանքեց մարդային լուսաբանները, վորը հատկացրեց 500 ո.:

Ունենալով գործուսի չենքն իր սարքավորումով, 500 ո. և 12 կոնսուլտանտ՝ առանձնացված նահանգական ճարտ. և տեխն. սեկցիայի կողմից, հոկտեմբերի 21-ին հաջողվեց բացել տեխնիկական

կայանը հետևյալ բաժանմունքներով. կոնսուլտացիա՝ անձնակազմի և հեռակա բաժիններով, գյուտարարների ոգնութժյան բաժին, գրադարան-ընթերցարան հետևյալ կարգի ներքինով. ֆիզիկական, քիմիական և շոգեկառքերի գործի: Բացի դրանից, կազմակերպված են տոկարի, փականագործական և դժադրական Գամսյա դասընթացներ:

Կայանի նախարարատրաստութժյան և կազմակերպման գործիչները բաժնավիճակում լայն հասարակայնութժյուն և, առաջին հերթին, Սամարայի գործարանային կազմակերպութժյունները: Կայանը իրեն գիմոդներին սպասարկում է ձրի: Վարձ վերցնում են միայն դասընթացները՝ ամսական 5 ռ.: Տոկարի դասընթացներում սովորում են 20 հոգի (ցանկացողներ յեղել են 200), ատաղձագործական՝ 80 (ցանկացողներ յեղել են 300), դժադրական՝ 50 հոգի:

Ընկ. Մատլինի իր նամակում գրում է. «Կայանն այժմ բավականաչափ մարդ է գրավում ղեպի իրեն: Շատերը դալիս են և հարցնում, թե ինչպես հաշվել այս կամ այն մեքենան: Մի հետաքրքիր դեպք. գյուղից մեկը յեկել էր և ցանկանում էր հայելու համար բաբրտից ամալքամա պատրաստելու փորձեր կատարել: Մենք նրան քիմիական լաբորատորիայում տրամադրեցինք ամեն ինչ, ինչ վոր պետք էր և նա աշխատում էր այնտեղ: Իսկ ընդհանրապես կայանին սպասարկում է գործուսի կոլեկտիվը՝ դասատուներն ու աշակերտները: Բացի դրանից՝ մենք համաձայնութժյան յեկանք մարդային ճարտ. տեխնիկական կայանի հետ, և նա տրամադրեց 20 ճարտարագետ կոնսուլտանտ տեխնիկայի զանազան ասպարեզներին: Յերը կայանի աշխատակիցն է վիճակի չէ պատասխանելու, այն ժամանակ հարցը տրվում է համապատասխան ճարտարագետներին: Ահա Սամարայի տեխնիկական կազմակերպման և աշխատանքների համառոտ նկարագրութժյունը: Հետաքրքիր է մատնանչել այն մեթոդները, վորոնցով բանվորական լայն մասսաները ծանոթացվել են կայանի աշխատանքներին, խնդիրներին և գործունեյութժյանը»:

«Կայանի ժողովրդականացման և ղեպի նա մեծ հոսանք ստեղծելու համար բացման առաջին որերը մենք կատարեցինք հետևյալը. արդարագրութժյան կից գրադարաններում սահմանեցինք հերթապահութժյուն և կոնսուլտացիա, ձեռնարկութժյուններում սվեցինք ղեկուցումներ կայաններին մասին, համաձայնութժյան յեկանք Սովկինոյի հետ հրատարակելու հատուկ կինոխրոնիկա՝ նվիրված

«Տեխնասին» և կայանին, ղեկուցում կազմակերպեցինք ռադիոյի միջոցով, հրատարակեցինք թերթիկներ: Կայանը մեր գլխավոր նախաձեռն է, մեր պարծանքը: Սնկուսակցական բանվորներին առաջարկութժյամբ կայանն անվանված է «Կոմյերիտութժյան 10-ամյակի անվան տեխնիկայան»: «Տեխնասին» նախագահութժյունը կայանի բացման որը նրան նվիրեց մի փոքրիկ գրադարան 300 ռ. արժեքով» (Մատլինի նամակից):

Հրավիրվեց «Տեխնիկան մասսաներին» առաջին կոնֆերենցիան: Նախաձեռնող խմբակը, վորպես այդպիսին, աշխատեց 1928 թ. հուլիսից մինչև հոկտեմբեր: Ներկայումս կազմակերպված է բլիջներ լայն ցանց՝ «Տեխնասին» բազմաթիվ անդամներով: Այդ հանգամանքը հնարավորութժյուն սվեց հրավիրելու «Տեխնասին» կոնֆերենցիա, վորն առաջին էր ամբողջ Միութժյան մեջ: Կոնֆերենցիային ներկա էին 400 հոգի, վորոնցից 150 մեքենայի ձայնով: Կոնֆերենցիային մասնակցում էին «Տեխնասին» բոլոր բլիջները և բոլոր տնտեսական և հասարակական կազմակերպութժյունների ներկայացուցիչները, նույնիսկ նրանք, վորոնք առաջ անվատահութժյամբ էին վերաբերվում նախաձեռնող խմբակի ձեռնարկումներին և հրաժարվում էին նրան ոգնելուց: Մարդային ժողանտխորհրդ, արհմիութժյունները և մյուս կազմակերպութժյունները, անդամագրվելով, խոստացան ոգնութժյուն ցույց տալ և ուժանդակել «Տեխնասին» իր հետագա գործունեյութժյան միջոցին: Պատգամավորներն իրենց յեղութժյանում ամփոփեցին գոյութժյուն ունեցող վորձը և նշեցին հետագա աշխատանքների նշանաձողերը: Կոնֆերենցիայում ընտրվեց վարչութժյուն և բյուրո, վորոնց մեջ մտան մարդային արհմիութժյանի, նախաձեռնող խմբակների, գործարանային «Տեխնասին» բլիջների, բանֆակի, տեխնիկումների, կոմյերիտական դավկումի, տնտեսական կազմակերպութժյունների, գործուսի ներկայացուցիչները: Այսպիսով, Սամարայի բաժանմունքի վարչութժյունը հանդիսանում է առաջին ընտրական վարչութժյունն ամբողջ Միութժյան մեջ:

Իսկ հետո արշավ դեպի գյուղ: Գաղաքում բաժանմունքն ամբացնելով, սամարայիներն սկսեցին «Տեխնասին» ընկերութժյունն արմատացնել գյուղում: Առաջին բլիջը կազմակերպված է Կրասնիյե Պաեկի գյուղում՝ գյուղերիտղարոցին կից: «Տեխնասին» բլիջի նախաձեռնողներն ու կազմակերպողները կոմյերիտականներն են: Խորհուրդների վերընտրութժյան առթիվ բազմաթիվ կոմյերիտա-

կաններ մոբիլիզացիայի ելին յենթարկված գյուղում աշխատելու համար: Սամարացիներն ոգտագործեցին այդ մոմենտը, հավաքեցին մոբիլիզացիայի յենթարկված կոմյերխտականներին և նրանց նյութեր և հրահանգներ սվեցին գյուղում «Տեխմաստի» բջիջներ կազմակերպելու վերաբերյալ:

ԶՈՐՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ I

ՏԵԽՆԻԿԱՆ ՀԱՍՑՆԵՆՔ ՄԻՆՉԵՎ ԳՅՈՒՂ

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՎԱՏ ԵՆ ԲԱՎԱՐԱՐՎՈՒՄ

Ինչ միջոցներ են ձեռք առնվում վերացնելու այն անհամապատասխանությունը, վոր գոյություն ունի մի կողմից շեշտակի թափով գյուղատնտեսության մեջ մտնող տեխնիկայի, իսկ մյուս կողմից՝ գյուղացիական լայն մասնաների տեխնիկական յետամնացություն և գյուղում յեղած տեխնիկական աննշան կադրերի միջև, վորի մասին մենք գրել ենք գրքի առաջին մասում:

Ինչ են անում և նախաձեռնում ժողովրդական լուսավորություն մարմինները, կոմյերխտական, արհեստակցական, տնտեսական կազմակերպությունները՝ բավարարելու գյուղացիական մասնաների մեջ ավելի ու ավելի աճող հետաքրքրությունը դեպի տեխնիկայի խնդիրները: Դրված բոլոր խնդիրները տեղին են և ակտուալ բնույթ ունեն այժմ, յերբ ամբողջ յերկրում ծավալվել և հացահատիկային յտշոր գործարանների՝ յտրիտնտեսությունների և ավելի ու ավելի անող և տարածվող կոլտնտեսությունների ցանցի կառուցումը, վորոնք բնագրկում են մինչև այժմ անդրրիտեղիյան, նախապատմական յեղանակով աշխատող հսկայական քվով անհատական տնտեսություններ: Այդ տնտեսություններն այժմ աշխատում են գիտության և տեխնիկայի նոր սկզբունքներով:

Պետք և համբանալ, վոր գյուղ՝ կոլտնտեսություն և յտրհատնտեսություն մտնող յուրաքանչյուր նոր մեքենա, նոր գյուղատնտեսական գործիք անդրբվելիորեն դնում և կադրերի հարցը, վորոնք կարողանան գործածել դրանց, և գյուղացիները համար յսթան և հանդիսանում տեխնիկական գիտելիքներ ստանալու:

Հնգամյա պլանով քիմիական պարարտանյութերի արտադրությունը 1932—33 թ. հասնելու յե 8 միլիոն տոննից ավելի մի քանակություն—1927—28 թ. 175·000 տոննի դիմաց: Իսկ չե՞ վոր գյուղ մտնող գյուղատնտեսական յուրաքանչյուր տոնն պարարտացում դեմ և առնում քիմիայի վերաբերյալ տարրական գիտելիքներ ունենալու անհրաժեշտություն:

Դժբախտաբար, մենք հարկադրված ենք ամբողջ միջոցները օգտագործել ձեր շահերի և շահերի պաշտպանության և սոսակապի ֆրոնտի այս կարևորագույն ծախսատամասի վրա: Դժբախտաբար, մենք հարկադրված ենք ամբողջ միջոցները օգտագործել ձեր շահերի և շահերի պաշտպանության և սոսակապի ֆրոնտի այս կարևորագույն ծախսատամասի վրա:

Գործարաններում մենք վերջերս նկատում ենք, վոր ավելի ու ավելի յե ուժեղանում ուղարկվում ենք դեպի տեխնիկական գիտելիքների մասսայական պրոպագանդայի խնդիրները, և բանվորները տասնյակ խմբակներով, դասընթացներով, կոնսուլտացիաներով, վորոնք, ճիշտ է, դեռևս անբավարար են, բայց և այնպես պատասխան են ստանում տեխնիկական գիտելիքների բարձրացման վերաբերյալ իրենց հարցումներին և պահանջներին:

Բայց, ինչքան ել շատերին տարրինակ թվա, այնուամենայնիվ, մտահոգ են կարելի յե պնդել, վոր գյուղի խորհրդային և հասարակական կազմակերպություններում և նրանց սպասարկող քաղաքական կազմակերպություններում մեծ մասամբ բացակայում է գյուղացիության, կոլտոտեսականների, խորհուրտեսական բանվորների լայն մասաների մեջ հենց տեխնիկական գիտելիքների մասսայական պրոպագանդայի հարցադրումը:

Սրանից հետո տարրինակ չե, վոր դժվար է մատնացույց անել վորևէ գյուղ, ուր հասարակական կազմակերպություններն ստեղծած լինելին աշխատանքի այս կամ այն ձևը, ուր իրականանար հասակավոր քաղաքացիների, առանձնապես գյուղական յերիտասարկություն հետաքրքրություն ու ձգտումը դեպի տեխնիկական:

ԲԵԿՈՒՄ ԱՌԱՋԱՑՆԵԼ, ՈՒՏԱԳՈՐԾԵԼ ԱԳՐՈՒՄՆԵՆԿԱԿԱՆ ՈՒՇԵՐԸ

Ահա, թե ինչու մենք ամբողջ միջոցները օգտագործելով ձեր շահերի և շահերի պաշտպանության և սոսակապի ֆրոնտի այս կարևորագույն ծախսատամասի վրա: Դժբախտաբար, մենք հարկադրված ենք ամբողջ միջոցները օգտագործել ձեր շահերի և շահերի պաշտպանության և սոսակապի ֆրոնտի այս կարևորագույն ծախսատամասի վրա:

Առանձնապես մեծ նշանակություն է ստանում «Տեխնիկական» ընկերությունների գործունեությունների ամբողջում ու դարձացումը գյուղում, վորն իր բնույթով լայն ցանցի միջոցով պետք է աշխատանք ծախսելի բարձրացնելու աշխատավոր գյուղացիության լայն մաս-

տաների ազդրտեխնիկական մակարդակը և նրանց մեջ տարածելու ազդրտեխնիկական և տեխնիկական գիտելիքներ:

Ընկերությունների առաջին հերթին պետք է կազմակերպվեն վորոտային կենտրոններին, ագրոկայաններին, խորհուրտեսուրքյուններին, կոլտոտեսուրքյուններին, գյուղյերիտոպրոցներին, նորագիչ արևտանոցներին, սրակտորային և փորձական կայաններին և տեխնիկականներին կից:

Ինչ ձևերով պետք է և կարող է ընթանալ գյուղացիությունների ազդրտեխնիկական գիտելիքների բարձրացման աշխատանքը, ինչ միջոցներ և ուժեր պետք է հրավիրվեն գյուղի աշխատանքների այլ կարևորագույն մասի համար:

Մենք արդեն մատնանշեցինք, վոր տարածման մասսայական ձևեր չկան, բացի այս կամ այնտեղ առանձին խմբակների և անձանց նախաձեռնությունները առաջացողներից: Բայց դրանք հենց իրենց յեղակիությունների պատճառով վոր վոր հայտնի չեն, կամ հայտնի յեն քչերին:

Ահա, թե ինչու կարիք կա գյուղյուն ունեցող պայմաններին և հնարավորությունների հաշվառման հիման վրա, թեկուզ յենթադրաբար նշելու այն հիմնական ուղղությունն ու ձևերը, վորոնցով պետք է ընթանա այդ պրոցեսը:

Նախ և առաջ պետք է, վոր գյուղի հասարակական կազմակերպությունների և «Տեխնիկական» ընկերությունների միջոցով կատարվող գյուղացիական լայն մասսաների տեխնիկական մակարդակի բարձրացման աշխատանքը առավելագույն չափերով շարժվի այնպիսի խնդիրներին, վորպես են՝ գյուղատնտեսության ամեն կերպ ինդուստրացումն ու ռեկոնստրուկցիան, կոլեկտիվացումը, խորհուրտեսուրքյունների կազմակերպումը, մանր տնտեսուրքյունները կոլտոտեսուրքյուններում համալսմանը և բերքատվության պրոպագանդայի լուծումը:

«Տեխնիկական» գյուղում կազմակերպվող և առաջացող բնույթներն իրենց անդամների շարքերը պետք է դրախեն գյուղացիությունների լայն մասաներին, վորոնք ձգտում են բարձրացնել իրենց տեխնիկական գիտելիքները՝ առաջին հերթին ուղարկվում են դարձնելով աշխատանքի այնպիսի ձևերին կազմակերպման և զարգացման վրա, վորոնք անհրաժեշտ են հետևյալ նպատակներով. գիտակցաբար վարվել, գործածել և նորագիչ տվյալ շրջանում ամենից ավելի տարածված գյուղգործիքները, մեքենաները և իր տնտեսության մեջ լսվագույն ձևով կիրառել գյուղատնտեսու-

քյուն վարելու և ագրոտեխնիկական մինիմումը յուրացնելու բարելավված և գիտական մեթոդներ :

Ակներև է, Վոր դյուղացիական լայն մասսաների ագրոտեխնիկական չափազանց ցածր մակարդակի հուժեղ վերելքը շատ ավելի մեծ դժվարություն է, քան բանվոր դասակարգի տեխնիկական յետամնացություն վերացումը քաղաքում : Ահա, թե ինչու այդ վիթխարի խնդրի իրականացման կարևորագույն նախադրյալն ու անխուսափելի պայմանն է հանդիսանում այդ նպատակով գյուղի ամբողջ արտադրական և նյութական-տեխնիկական բազայի լիակատար ոգտագործումն ու կուլտուր-տեխնիկական կադրերի գոյությունը գյուղում :

Յուրաքանչյուր խորհանտեսություն, կոլտնտեսություն, շրջանային գյուղատնտեսական ելեկտրոկայան, ագրոնոմիական շրջան, կայան, գյուղատնտ. վորձակայան, նորոգման արհեստանոց, տրակտորային կայան, խոշոր աղաց, գյուղյերիտ, գյուղատնտեսական դպրոց, գործարան, Վոր մոտ է գտնվում գյուղատնտեսական շրջանին և կամ կենտրոնումն է, պետք է վերածվի ագրոտեխնիկական կուլտուրայի բազայի և նրա գիտական կենտրոնի՝ գյուղացիության լայն մասսաների համար :

Խորհրդային գյուղում չպետք է լինի վոչ մի ագրոնոմ, ուսուցիչ, քաղուսաշխատավոր, նարտապագետ, տեխնիկ, շափեր, տրակտորիստ, վորակյալ և նորոգիչ բանվոր, վորն այս կամ այն չափով չմասնակցի գյուղում ագրոտեխնիկական գիտելիքներ տարածելու կարևորագույն խնդրին :

ԻՆՁԻ ՎՐԱ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆԵԼ

«Տեսնաստի» բջիջները խորհանտեսություններին, տրակտորային կայաններին, նորոգման արհեստանոցներին և վերը թվարկված բոլոր տեխնիկական բազաներին կից պետք է հիմնեն բազմատեսակ տեխնիկական խմբակներ՝ տեխնիկական ուժերի դեկալաբություն, Վորոնք ուսումնասիրեն և գյուղացիական լայն մասսաներին, առանձնապես խորհանտեսություններին աշխատավորներին, կոլտնտեսականներին և չքավորներին ու միջակներին ծանոթացնեն իրենց տնտեսության մեջ յեղած գյուղատնտեսական մեքենաների և գործիքների հետ :

Միաժամանակ արանձին ուշադրություն պետք է դարձնել գյուղատնտեսական այնպիսի խմբակներ կազմակերպելու վրա,

Վորոնք ուսումնասիրեն և յուրացնեն ագրոտեխնիկական մինիմումը : Իրանց դեկալարման համար պետք է հրավիրել տեղական ագրոնոմներին, ուսուցիչներին և գյուղի կոլտնտեսական ուժերին :

Սմբողջ յերկրում փոխված է գյուղյերիտագրոցները ցանց, Վորտեղ սովորում են մեծ թվով գյուղական յերիտասարդներ : Մինչդեռ մինչև այժմ նրանցում չեն ավանդվում գյուղատնտեսություն մեջ անհրաժեշտ տեխնիկական գիտելիքներ :

Ձերնտրեստը, կոլտնտեխնտրոնը, Հողփողկոմատը սուր կերպով կուստղկոմատի առաջ խնդիր պետք է դնեն գյուղյերիտագրոցներին կից հիմնելու արհեստանոցներ համապատասխան տարաբաղվորումով և հրահանգիչները կադրեր պատրաստելու՝ նրանցում դասավանդելու համար :

Պետք է աշխատել, Վոր այն գյուղերին և գյուղատնտեսական շրջաններին չեֆարկող գործարանները, Վորտեղ կան գյուղյերիտագրոցներ, գործարանին անպետք է ին դադգյահներն ու տարաբաղվորումը հանձնեն արհեստանոցներ կազմակերպելու համար : Հիշատակված միջոցներն, անշուշտ, կնպաստեն գյուղյերիտագրոցներին պատրաստի կադրեր արտադրելու և այդ դպրոցները տեխնիկական բազայի վերածելու շրջակա գյուղերի համար :

Անհրաժեշտ է ջանալ լայնորեն զարգացնելու և տարածելու աշխատանքների բազմաթիվ աջ ձևեր, Վորոնք նպաստեն գյուղացիությունից ագրոտեխնիկական մակարդակի բարձրացման : Լայն տարածում պետք է գտնեն ագրոնոմներին, տեխնիկական ուժերին, ուսանողներին միջոցով մատչելի դասախոսություններին և զրույցների կազմակերպումն ու կարգալը ագրոմինիմումի առանձին խնդիրների վերաբերյալ, նպատակ ունենալով շրջակա ազգաբնակչությանը, խորհանտեսություններին աշխատավորներին, կոլտնտեսականներին, անհատ տնտեսատերերին ծանոթացնել այն նվաճումների հետ, Վորոնք հեշտ կիրառելի յեն նրանց կոլեկտիվ կամ անհատական տնտեսության մեջ : Լայն տարածում պետք է գտնի նաև վոխադարձ գրագրությունը, եքսկուրսիաներ կազմակերպելը գեպի վորձնական տնտեսությունները՝ քաղաքները՝ որինակով : Խոշոր խորհանտեսություններին, ագրոկայաններին, ելեկտրոկայաններին, նորոգման արհեստանոցներին կից կարող են հիմնվել ագրոտեխնիկական կոնսուլտացիաներ շրջակա ազգաբնակչության համար՝ նրանցում կազմակերպելով մասնագետ ագրոնոմների և Վորակյալ բանվորների հերթապահություն :

Այդ կոնսուլտացիաները նմանապես պետք է լայնորեն ստա-
սարկեն դյուտարար ինքնուս գյուղացիներին և նրանց բազմակող-
մանի ոգնութուն ցույց տան խորհուրդներով, ցուցումներով,
դյուտերը տեխնիկական ձևակերպելով, դժադրութուններ պաշո-
րատելով և հնարավորութեան չափ ոգնելով մոռելներ պատրաս-
տելու: Պետք է ամեն կերպ խրախուսել այնպիսի ազդոտեխնիկա-
կան Փիլմերի գյուղ ուղարկելը, վորոնք ցուցադրում են գյուղա-
տնտեսութեան մեջ յեղած նվաճումները:

Երեկտրոկայանների ցանցի հուժկու դարգացումը, ունիլոյի,
կարի մեքենայի մուտքը գյուղ, անհրաժեշտութիւն են առաջաց-
նում, վոր «Տեխնաստի» գյուղական բլիջները կազմակերպեն կար-
ճատե խմբակներ և կենցաղային տեխնիկայի դասընթացներ՝ ոգ-
տադրմանով քաղաքային բլիջների վերտնչյալ վործը, ղեկավա-
րութեան հրամիտելով տեղական մասնագետներին:

Տնայնագործական արհեստները ամբողջ ժողովրդական տըն-
տեսութեան, առանձնապես գյուղատնտեսութեան մեջ ահռելի դեր
են կատարում: Մինչդեռ մենք տեսնում ենք, վոր այս ասպարի-
զում արտագրութիւնն ամենից քիչ և դարգացել: Տնայնագործնե-
րի տեխնիկական մակարդակի բարձրացումը՝ կազմակերպելով
խմբակներ, արհեստագործական դպրոցներ գյուղացիներին և նը-
րանց գովակներին համար, հանդիսանում է «Տեխնաստ» ընկերու-
թեան կարևորագուցն խնդիրը գյուղում:

Միաժամանակ անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել դըպ-
րոցների, շոֆերների, տրակտորիստների և գյուղմեքենաների
սպասարկման տեխնիկական կադրերի պատրաստման դասընթաց-
ներին լաջի և հոյր ցանցի կազմակերպման վրա: Այդ կադրերն ի-
րենց հերթին կարող են ղիտելիքներ տարածել գյուղացիութեան
ավելի լայն խավերի մեջ: Դեռ անցած տարի գյուղական երեկտրի-
ֆիկացիային նպաստող ընկերութիւնը Մոսկվայի երեկտրոտեխնի-
կումին կից կազմակերպել եր գյուղական մանտորներին 10-ամսյա
դասընթացներ: Այդ դասընթացները գործուղվեցին գյուղացիների
անմիջականորեն գյուղի հետ կապված և գյուղյերիտ ավարտած
գովակները և այլն, վորոնք պարտաւորվեցին վոչ պակաս, քան 3
տարի աշխատել գյուղական երեկտրոկայաններում:

Հասկանալի յե, վոր մայրաքաղաքներում կազմակերպված նը-
ման դասընթացները շատ թանգ են նստում: Ինչու հարց չընել
գյուղական վայրերում, մարդերում, նահանգներում գործող խո-
չոր շրջանային և գյուղական երեկտրոկայաններին կից յերիտա-

աարդ և հասակաւոր գյուղացիներին համար կարճատե դասընթաց-
ներ կազմակերպելու մասին:

Նմանապես կարող է հարց դրվել զանազան խմբակներ և դաս-
ընթացներ կազմակերպելու մասին փորձակայաններին, տրակտո-
րային խմբերին, նորոգման արհեստանոցներին կից, վորտեղ կան
զանազան տիպի գյուղատնտեսական մեքենաներ, գործիքներ և
տեխնիկական կադրեր:

Այդ դասընթացները կարելի յե ուղարկել գյուղյերիտ կամ
գյուղական դպրոցն ավարտած գյուղացիներին, կոլտնտեսական-
ներին, չքավորներին, բարակներին գովակներին: Նկատել զանա-
լով գյուղերի մոտիկութիւնը, կրթութեան ծախսերը քիչ կլինեն և
գյուղացիները, մասնաւանգ կոլտնտեսականները կողմեն նրանց:

ԳԱՂԱՔԻ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԻՆ

Պետք է նախատեսել, վոր ներկայումս գյուղում գտնվող տեխ-
նիկական կադրերը չափազանց աննշան թիւ են կազմում, իսկ մոտ
ժամանակներս հաղիւթ թե հաջողվի այդ թիւը մեծացնել և հասցնել
այն չափին, վոր անհրաժեշտ է ավելի ու ավելի շեշտակի թափով
այնտեղ մուծվող տեխնիկայի և գյուղացիներին ազդոտեխնիկական
պահանջների սպասարկման համար: Այդ, արդեն ստեղծվող տար-
բերութիւնը պետք է թեկուզ վորոչ չափով վերացվի հետևյալ
կերպ. բարձրացնելով գյուղում յեղած կուլտ. ուժերի ազդո-
տեխնիկական մակարդակը, ուժեղացնելով գյուղի լուսավորական
հիմնարկների ուշադրութիւնը դեպի կուլտուրական փրոնտի այդ
նակատամար և ազդոտեխնիկայի պրոպագանդայի նպատակով
լիակատար չափով ոգտագործելով քաղաքի բոլոր հնարավորու-
թիւնները:

Սակայն գյուղացիական մասսաների տեխնիկական մակարդա-
կի բարձրացման գործում առանձնապես մեծ նշանակութիւն են
ձեռք բերում գործարանների շեֆական կազմակերպութիւնները,
վորոնք պետք է բազմապատկեն իրենց աշխատանքը գյուղացիներին
մեջ տեխնիկական ղիտելիքներ տարածելու ասպարիզում և հան-
դիսանան տեխնիկական կուլտուրայի կրողները դեպի գյուղ:

Գյուղն արձակուրդը զնացող բանվորները կամ հատկապես յեն-
թաշեֆ գյուղերը գործուղվող բանվորական բրիգադները պետք է
կուսակցութեան քաղաքականութիւնը գյուղում պարգաբանող
կամ պանիաների և դասախոսութիւններին կազմակերպման հետ մի-

ասին առավելագուցն չափով ոգտագործվեն գյուղացիներէ տեխնիկական գիտելիքներէ բարձրացման համար: Անկատկամ, նըպատակահարմար կլինի, յեթե գործարաններէ, հանքահորերէ, ելեկտրոկայաններէ «Տեխնաս» բլիթները շեֆական կազմակերպություններէ հետ միասին և նրանց ղեկավարությամբ տեխնիկական շեֆություն ստանձնեն գյուղական «Տեխնաս» բլիթներէ նկատմամբ: Այդ անելով, նրանք պետք է կազմակերպեն բանախորհուրդ, վարպետներէ, տեխնիկներէ բաղկացած տեխնիկական բրիգադներէ կանոնադր շրջադաշտություններ: Դրանք պետք է նպատակ ունենան կազմակերպելու դասախոսություններ և գրույցներ տեխնիկայի հարցերէ վերաբերյալ՝ ցուցադրելով տեխնիկական կինոֆիլմեր, տարածելով տեխնիկական և ազրոնոմիական գրականություն, նորոգելով գյուղական տնտեսության մեջ փչացած գործիքները, գյուղերի և գյուղական դարոցներէ այն հին նյութերով, գործիքներով, դադդասներով, վորոնք վերցված են գործարանից, պետք չեն նրան, բայց թանգարտեք են գյուղի համար:

Առջոր կորանտեսություններում և շրջաններում, վորտեղ կենտրոնացված է և նախատեսվում է ներմուծել մեծ քանակությամբ գյուղգործիքներ և մեքենաներ, շեֆական կազմակերպությունները ձեռնարկություններէ «Տեխնաս» ընկերություններէ և բլիթներէ հետ միասին և շահագրգռված կազմակերպություններէ տեխնիկականությամբ կարող են յերկար ժամանակով մի քանի բանավորից և տեխնիկական կազմից բաղկացած փոքրաթիվ խմբակ ուղարկել, վորպեսզի կազմակերպեն և ղեկավարեն գյուղգործիքներէ ուսումնասիրության կարճատեմ դասընթացներ:

Նմանապես լուրջ ուշադրություն պետք է դարձվի պլանկատներէ և մասսայական եօան ու մատչելի տեխնիկական դրքերի հըրատարակության վրա, վորոնք գրված լինեն գյուղական լայն մասաներին հասկանալի լեզվով և վերաբերվեն ազրոմիխումի և կենցաղային տեխնիկայի առանձին խնդիրներէ:

Վերահիշյալ մեր ասածները սոսկ հանդիսանում են թուղիկ մի ուրվագիծ վորոչ մեթոդներէ և ձեվերէ, վորոնցով պետք է ընթանա գյուղացիության լայն մասաների տեխնիկական գիտելիքներէ լայնացման պրոցեսը: Միանգամայն բնական է, վոր իրականության մեջ տեխնիկական գիտելիքներէ հարստացումը կարող է և պետք է ընթանա բազմազան ձեվերով, վորոնց գեօվար է նախատեսել այժմ: Նրանց հայտարարման և ուսումնասիրության հետ

միասին նրանք աստիճանաբար մատչելի կդառնան գյուղական հասարակայնության լայն խավերին:

Մենք անկատկամ դտնում ենք, վոր այս հաստվածում շոչափված թեման, գյուղացիության ազրոտեխնիկական մակարդակի բարձրացման հարցը և այն ձեվերի խնդիրը, վորոնցով պետք է ընթանա վերջինս, կարիք են դրում ավելի մանրակրկիտ լրացուցիչ մշակության և ներկրեստացման:

Այդ հնարավոր կլինի վորոչ ժամանակ հետո, յերբ մենք ունենանք «Տեխնաս» ընկերության աշխատանքի թեկուղ վորոչ փորձառություն գյուղում:

Առայժմ մենք ստիպված ենք սահմանափակվելու հարցադրումով և մատնանշելով մի քանի ամենից ավելի մատչելի ձեվեր տեխնիկական գիտելիքներէ մասսայական պրոպագանդայի տարածման վերաբերյալ:

ԳԼՈՒԽ II

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Մենք արդեն մատնանշեցինք, վոր ժողովրդական տնտեսության ինդուստրացման և տեխնոստրուկցիայի շրջանում՝ նոր տեխնիկայի հիման վրա, տեխնիկական գիտելիքներէ մասսայական պրոպագանդայի ուժգին ծավալումը պետք է սերտորեն շողկապվի նրան և հանդիսանա արտադրական պրոպագանդայի մի կարևորագուցն բաղկացուցիչ մասը, վորի նկատմամբ պետք է ուժեղացնել ուշադրությունը:

Ահա, թե ինչու արհեստակցական կազմակերպությունները պետք է ավելի, քան յերբևե ուժեղացնեն իրենց ուշադրությունը արտադրական պրոպագանդայի այդ ասպարիղին և ամեն կերպ նըպաստեն «Տեխնաս» ընկերության կազմակերպման, դարգացման ու ամրացման: Անհրաժեշտ է աշխատել, վոր «Տեխնաս» ընկերությունը դառնա արհմիություններէ ամենամեթալոր ոգնականը, աշխատի, անմիջական սերտ համագործակցություն ստեղծելով նրանց հետ և իր մեջ համախմբի արհմիություններէ և այլ հասարակական կազմակերպություններէ ամբողջ աշխատանքը տեխնիկական գիտելիքներէ մասսայական պրոպագանդայի ասպարիղում: Այս բերեցիկի գործարանի, Պեմդայի յերկաթուղային արհեստա-

նոցներէ, Նովոսիբրակի լուցկու գործարանի, Ելեկտրոգործարանի և մի շարք այլ ձեռնարկութեաններէ «Տեխնաստ» բլիշների աշխատանքի փորձը ցուցց ե տվել, վոր նրանք ի վիճակի յեն համարումբերու ձեռնարկութեաններէ բոլոր հասարակական կազմակերպութեաններէ ջանքերը, վորոնք աշխատում են տեխնիկական գիտելիքներէ բարձրացման համար՝ իրենց գործունեութեանը ծախարելով այդ կազմակերպութեաններէ հետ լիակատար համերաշխութեամբ և նրանց ղեկավարութեամբ:

«Տեխնաստ» կամավոր ընկերութեան նշանակութեանը նաև այն է, վոր նրա անդամները հավասարապես հանդիսանում են բանվորներէ, աշխատավոր գյուղացիներէ և ճարտատեխնիկական, գիտական և սպորտնոմիական ուժերէ լայն մասսաները: Ընկերութեանը անդամագրելով, բանվորները դրանով փակ իրենց վրա հասարակական յարատեսակ պարտավորութեան են վերցնում հոգ տանելու իրենց տեխնիկական մակարդակի բարձրացման համար, պայքարելու տեխնիկական հեղափոխութեան համար, իսկ մասնագետները պարտավորվում են իրենց գիտելիքները տարածել մասնագետներէ մէջ:

Ահա, թե ինչու պետք է ամենակարճ ժամանակամիջոցում վերացվի այն անվաստանութեանն ու ոտարութեանը, վոր մինչևի այժմ դեռևս կա վորոշ ստորին և ղեկավար պրոֆմարմիններում դեպի ընկերութեան բլիշներն ու բաժանմունքները: Հավասարապես պետք է վերացնել այն անվութեանը, վոր մինչևի այժմ իշխում է մեծ թվով տնտեսական կազմակերպութեաններէ մեջ դեպի կուլտուրական ֆրոնտի վարելորագուն ճակատամարտը հանդիսացող տեխնիկական գիտելիքներէ մասսայական պրոպագանդան և դեպի «Տեխնաստ» ընկերութեան գործունեութեանը, վոր զուրկ է նրանց ոժանդակութեանից:

Անհրաժեշտ է գիտակցել, վոր բանվորներէ և գյուղացիներէ լայն մասսաներէ տեխնիկական մակարդակի ուժգին վերելքը կարգացնել մասսաներէ՝ տեխնիկական ստեղծագործութեան հաղորդակից լինելու պրոցեսը և նպաստավոր ազդեցութեան կունենալինքնարժեքի իջեցման, արտադրողականութեան բարձրացման վերա:

Ահա, թե ինչու տնտեսական կազմակերպութեանները պետք է ուժեղացնեն իրենց ուղղորդութեանը տեխնիկական գիտելիքներէ

մաստայական պրոպագանդայի նկատմամբ և ամեն կերպ ոժանդակեն «Տեխնաստ» ընկերութեան ստեղծագործական աշխատանքի դարգացման:

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿ Ե ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ

Վերջին շրջանում լենինյան կոմյերիտմիութեան կարևորագուն աշխատանքն է յեղել կազմակերպել բանվոր յերիտասարդութեան լայն մասսաներէ արտադրական դաստիարակութեանը և ներգրավել նրանց սոցիալիստական շինարարութեան մեջ: Կոմյերիտմիութեանը ներկայումս հարողստ և ստուգված փորձ ունի և շոշափել է յերիտասարդութեան մասնակցութեան բազմազան ձեւերը ձեռնարկութեաններէ արտադրական կյանքին: Հիմնականում դրանք հետեւյալն են. արտադրական խմբակներէ, հարվածային բրիգադաներէ, արտադրական մրցութեաններէ, փորձնական ցեխերէ մրցականչի, յերիտասարդութեան վոնֆերենցիաներէ կազմակերպումը, պայքարը գործաւըումներէ, անդիսցիալինարութեան, արտադրական անկանոնութեաններէ դեմ, յերիտասարդութեան խորհրդակցութեաններէ հրավիրումը ցեխերում և այլն:

Վերոհիշյալ բոլոր ձեւերը, վորոնք նպաստում են բանվոր յերիտասարդութեան լայն ներգրավմանն արտադրական կյանքին, վորոնք վերականգնման շրջանում արդարացրել են իրենց, անկասկած իրենց ուժը պահպանում են մինչևի այսօր: Ներկայումս, յերթ վաղուց ավարտվել է վերականգնման շրջանը և ձեռնարկվել ժողովրդական տնտեսութեան արմատական ռեկոնստրուկցիային՝ նոր տեխնիկայի հիման վրա, լենինյան կոմյերիտմիութեանը հին ստուգված ձեւերը մաքսիմալ չափերով ոգտագործելու հետ միասին պետք է յերիտասարդութեանն արտադրական կյանքին ներգրավելու հետ կապված ձեռնարկումներէ ամբողջ կոմպլեքսը կապակցի այն աշխատանքին, վոր կատարվում է յերիտասարդութեան տեխնիկական մակարդակը բարձրացնելու և տեխնիկական անդրագիտութեանը վերացնելու համար: Ռեկոնստրուկցիայի շրջանում միանգամայն ժամանակին և բացարձակապես անհրաժեշտ է, վոր կոմյերիտական կազմակերպութեանները մարտական լողունգ առաջադրեն՝ «վոչ մի տեխնիկապես անգրագետ հոմյերիտական, յերիտասարդ բանվոր չպետք է լինի»: Անբաժնա

ե աշխատել, վոր յերիտասարդ բանվորի և կոմյերիտականի համար տեխնիկական անգրագիտությունը համարվի այնպիսի խայտառակություն, ինչպես կարմիր բանակայինի կամ հրաձիգ խումբակի անդամի համար քաղաքագիտություն չիմանալը և գեմք գործածել չիմանալը: Կոմյերիտակության բջիջներն ու կազմակերպությունները նախաձեռնողներ, առաջամարտիկներ պետք է լինեն բանվորների տեխնիկական ավելի բարձր մակարդակի համար մղվող պայքարում և նպաստեն տեխնիկական մակարդակի ուժեղին բարձրացման: Մենք վերը բավական մանրամասն հիշատակեցինք տեխնիկական դիտելիքների մասսայական պրոպագանդայի բաղմագան ձևերը: Պետք է աշխատել, վոր կոմյերիտական կազմակերպություններն ամենաաշխույժ մասնակցություն ցույց տան և մաքսիմում յեռանդ ու նախաձեռնություն հայտարարեն դրանց լայն ծավալման համար: Այժմ արդեն կոմյերիտական բջիջներն ու կազմակերպությունները առաջամարտիկներ են հանդիսանում «Տեխմասսի» առանձին բջիջների և բաժանմունքների կազմակերպման մեջ: Կոմյերիտակության նախաձեռնությամբ առաջադրված է տեխնիկական կայանների կազմակերպման իրենան, վոր մեր Միության արդյունաբերական մի շարք կենտրոններում (Մոսկվա, Սամարա, Չիտա, Բադու) արդեն կենսագործված է:

Մենք, իբրև որինակ, հիշատակենք Սամարայի կոմյերիտականների մի փոքրիկ խմբակի սքանչելի աշխատանքը, վորոնք համեմատաբար կարճ ժամանակամիջոցում կարողացել են ստեղծել «Տեխմասսի» հզոր բաժանմունք՝ իր գործարանային բջիջների լայն ցանցով, վորը կարողացել է իր աշխատանքներին ներգրավել յերիտասարդ և մեծահասակ բանվորների և մասնագետների բավականաչափ կազմեր: Բնորոշ է այն հանդամանքը, վոր Սամարայում «Տեխմասսի» բջիջների ջարտողարները մեծ մասամբ կոմյերիտականներ են: Կոմյերիտակության ակտիվ մասնակցության և ոժանդակության շնորհիվ մենք նկատում ենք, վոր Մոսկվայում բավականաչափ աշխուժացել է «Տեխմասսի» Բառամանի ռայոնի բաժանմունքի աշխատանքը: Տեխնիկական անդրադիտության դեմ պայքարելու գործում մեծ ակտիվություն են ցուցաբերում Մոսկվայի ելեկտրոգործարանի կոմյերիտական բջիջները: «Красный Пролетарий» և «Освобожденный Труд» գործարաններում արդեն ստեղծված են տեխնիկական կայաններ և նրանց կազմակերպմանը ձեռնարկված է Մոսկվայի մի շարք այլ

գործարաններում: Նովոսիբիրսկի լուցիլու գործարանում «Տեխմասս» բջիջը կազմակերպված է կոմյերիտակության նախաձեռնությամբ և մոտիկ մասնակցությամբ:

Մոսկվայի և Սամարայի որինակը պետք է ոգտագործեն կոմյերիտակության բոլոր կազմակերպությունները: Մոտ ժամանակներս անհրաժեշտ է խնդիր դնել, վոր կոմյերիտակության բոլոր բջիջներն ու կազմակերպությունները նախաձեռնություն վերցնեն իրենց վրա «Տեխմասսի» բջիջներ կազմակերպելու այնտեղ, ուր այդպիսիք չկան և ակտիվ մասնակցություն ցույց տան այնտեղ, ուր նրանք կազմակերպված են: Բանվոր յերիտասարդության լայն մասսաների տեխնիկական դրադիտության բարձրացման իր ամբողջ աշխատանքը կոմյերիտակությունը պետք է շարկուպի կոմունիստական կուսակցության հիմնական դժի՝ յերկրի խնդուտարացման և նոր տեխնիկայի հիման վրա ժողովրդական տնտեսության ռեկոնստրուկցիայի իրականացման և կենսագործման խնդիրներին:

ԳԼՈՒԽ III

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՅՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ «ՏԵԽՄԱՍԻ» ԱՆԵԼԻԳՆԵՐԸ

Լենինյան կոմյերիտակության նախաձեռնությամբ սկսված սոցիալիստական մրցությունն արդեն դարձել է ընդհանուր բանվորական շարժում և հետզհետե ծավալվում է ավելի ու ավելի լայն շափերով: Բաղմաթիվ գործարանների տասնյակ և հարյուր հազարավոր բանվորներ իրենց ուշադրությունը կենտոնացրել են մրցությամբ դրված խնդարժեքի իջեցման և աշխատանքի արտադրողականության բարձրացման խնդիրներին իրականացման վրա: Կոմունիստական կուսակցության և կառավարության առաջադրած այդ հիմնական խնդրի կատարումը, վորը կարելիորագույն մի նախադրյալ է հանդիսանում ժողովրդական տնտեսության դարձացման հնգամյա պլանի իրականացման համար, յերկրում կատարվող ռեկոնստրուկցիայի ավելի ու ավելի բարձրացման պայմաններում կախում ունի վոչ միայն որինակելի դիտցիպլինայից, այլև խոշոր չափով նրանից, քե մեմք վորքան կկարգանանք արմատացնել արտադրական - ուսցիտուացման ձեռնարկումներ, տեխնիկական բարելավումներ, կատարելագործումներ, ոգտագործել մեր գիտահետազոտական ինստիտուտներ

բի հորագույն միաճումները, արտասահմանի փորձը: Այս բոլորը բնականաբար արտադրական պրոցեսին մասնակցողներից պահանջում են ավելի բարձր տեխնիկական պատրաստականություն, քան նրանք ունենին վերականգնման շրջանում:

«Տեխմասս» ընկերությունը, վոր կյանքի յե կոչվել ինդուստրացման և ամբողջ ժողովրդական տնտեսությունը նոր տեխնիկայի հիման վրա տեխնիկապես վերակազմելու դարաշրջանի բարդ խնդիրների հետևանքով և աշխատավորության ամենալայն մասսաճերի տեխնիկական մակարդակի հզոր վերելքի համառ անհրաժեշտությունը, բնականաբար պետք է դտնվի սոցիալիստական մրցութայն մասնակցողների առաջին շարքերում, իր ուշադրությունը կենտրոնացնելով բանվորական մասսաների տեխնիկական մակարդակի բարձրացման և սոցիալիստական մրցութայն մասնակցողներին տեխնիկական ողնությունը սպասարկելու վրա: Մեր ամբողջ գիրքը շարադրելու ընթացքում (վորը, ի դեպ ասած՝ գրված է մինչև մրցութայն հայտարարումը)*) մենք՝ բավական մանրամասն կանգ առանք այն խնդիրների և աշխատանքի բաղմաթիվ, վորձով ստուգված ձեվիրի վրա, վորոնցով պետք է ընթանա բանվորների տեխնիկական գրադիտություն բարձրացումը, նրանց հաղորդակից անելը տեխնիկական ստեղծագործություն, այդ կարելիորադույն աշխատանքին մեր յերկրում յեղած կուլտուրական և տեխնիկական ուժերի ներգրավումը, վոր վերջին հաշվով պետք է արագացնի սոցիալիստական մրցութայն առաջ դրված խնդիրների իրականացումը: Մեր դժվարությունն այն է, վոր արդեն թվարկված և այլ աշխատանքի ձևերը հանդիսանում են միմիայն առանձին գործարանների տեխնիկականություն և մինչև իսկ մասսայական տարածում չեն դտել: Սոցիալիստական մրցութայն լայն ծավալման շրջանում «Տեխմասս» ընկերությունն ամենալուրջ միջոցների պետք է դիմի, վորպեսզի տեխնիկական գիտելիքների մասսայական պրոպագանդայի այն ձևերը, վորոնք ստուգված են գործարանների փորձով, ամենակարգ ժամանակամիջոցում դառնան ամբողջ Միութայն բոլոր մեռնարկուրյունների սեփականությունը և լայնորեն տարածվեն նրանց շրջանում:

Դրա հետ միասին հենց այժմ պետք է առանձնացնել հատուկ մոմենտներ և որչեկտներ «Տեխմասսի» գործունեությունից, վորոնց վրա նրա բջիջները, բաժանմունքներն ու ինքը պետք է

*1 Այս հատվածը մենք պատահաբար կարողացանք մտցնել այստեղ:

կենտրոնացնեն իրենց ուշադրությունը: «Տեխմասս» ամբողջ խորհրդային հասարակայնության հետ միասին պետք է ամենալուրջ միջոցներ ձեռք առնի, վորպեսզի բանվոր դասակարգի մեջ առաջացնի լայն մասսայական շարժում՝ բարձրացնելու իր տեխնիկական գիտելիքները, և այն ամբողջ աշխատանքին, վոր կատարվում է տեխնիկական մակարդակը բարձրացնելու համար, լայն մրցութայն բնույթ տա:

Առանձնապես մեծ տարածում պետք է ստանա գործարաններում, ձեռնարկություններում կազմված կարճատեղ դասընթացների և խմբակների բազմաքանակ ցանցը, վորի մեջ գտնվող և սոցիալիստական շինարարության մասնակցող բանվորները կարողանան ստանալ կատարելապես վորոշ տեխնիկական գիտելիքների միմիում, վորն անհրաժեշտ է յուրաքանչյուր բանվորի՝ արտադրական պրոցեսին ավելի լավ և ավելի գիտակցաբար մասնակցելու, նրա բարելավման և կատարելագործման համար:

Արտադրության բազմազան ճյուղերի առանձին պրոֆեսիաների և մասնագիտությունների համար տեխնիկական միմիումը և տեխնիկական գիտելիքների ծավալը պետք է մշակվի ամենակարճ ժամանակամիջոցում՝ ճարտարագետների, տեխնիկների, վարպետների ողնությունը, վորոնց հրավիրումն ու ներգրավումը՝ այդ կարելիորադույն աշխատանքներին ղեկավարություն ցույց տալու համար, հենց պետք է կազմի մրցութայն որչեկտը:

Պետք է աշխատել, վոր ամենամոտ ժամանակներս, գործարաններին կից կազմակերպված տեխնիկական միմիումի խմբակներն ու կարճատեղ դասընթացներն ընդունվեն և նրանցով անցնեն բոլոր բանվորները, վորոնք, վորպես սոցիալիստական մրցութայն մասնակիցներ, հասարակական պարտավորություն են ստանում ևնձ մեռք բերելու տեխնիկական միմիումի մեջ մտնող տեխնիկական գիտելիքները՝ իբրև ինձնարժեքի իջեցման և արտադրողականության բարձրացման նպաստող մի նախադրյալի:

Անհրաժեշտ է իր առաջ խնդիր դնել, վորպեսզի արդեն կազմակերպված և նոր հիմնվող հարվածային բրիգադներն ու նախաձեռնող խմբակները, բացի աշխատանքային սրինակելի ղիսցիպլինայի համար սրաչարելուց, մրցութայն մեջ մտնեն, նպատակ դնելով բարձրացնել իրենց տեխնիկական գիտելիքները և հասնել տեխնիկական միմիումին, վորն անխուսափելիորեն իր արտահայտությունը կունենա նրանց աշխատանքի եֆեկտի և հետևաբար վանքների վրա:

Ինտրաշ և այն հանդամանքը, վոր մի քանի ձեռնարկություններում, սոցմրցման հետևանքով, «Տեխմասսի», կոմյերիտմիության բջիջների, առանձին բանվորների նախաձեռնությամբ և ձՏՍ հետ միասին արդեն կազմակերպված են բանվորական խմբակներ և կարճատեղ դասընթացներ, ուր նրանք հասարակական պարտավորություն են ստանձնում գիտելիքների վորոշ պաշար ձեռք բերելու: Այսպիսով, նրանց կրթությունը խորապես հասարակական բնույթ է ստանում:

Նման առանձին ձեռնարկումներ կատարվել են Մոսկվայի ելեկտրոգործարանում և «Գեոֆիզիկա» ճիշտ մեխանիկայի գործարանում:

Ելեկտրոգործարանի ցուցադրելով դրված եր գործարանի մի խումբ բանվորների հետևյալ նամակ-գիտումը. «Մենք, շրկացման լամպերի արտադրական լարտրատորիայի բանվորներ Գլորոմովան, Բասովան, Տարակովան հրավիրում ենք բանվորներ Գանչինին, Կիդալկինին, Յուրլովային և Լեոնովային մասնակցելու սոցիալիստական մրցության, լողունդ ունենալով «բարձրացնել իր արտադրողական տեխնիկական դրադիտությունը», և առաջարկում ենք նրանց անդամագրվել «Տեխմասսին» իրենց արտադրությունն ուսումնասիրելու համար»:

Այդ կոչին ջերմ արձագանք տվեցին վոչ միայն հրավիրվածները, այլև մոտ 10 այլ բանվորուհիներ, վորոնք ստեղծագործական նախաձեռնություն ցույաբերեցին, և գործարանի «Տեխմասս» բջիջի ողնությամբ կազմակերպվեց մի առաջադեմ խմբակ, վորին ղեկավարում է այդ նպատակով նշանակված արտադրական ճարտարագետ: Գործարանի ընդարձակման և ուղեկոնստրուկցիայի հետեվանքով 1929 թ. աչնան նախատեսվում է բանալ մի քանի նոր ցեխեր, վորոնց համար կարիք կլինի հրավիրել Միության մեջ ղեռնա գոյություն չունեցող մասնագիտությունների 200 բանվոր: Գործարանի «Տեխմասս» բջիջը սոցմրցման կարգով արդեն ավարտում է 5 խմբակ և կարճատեղ դասընթացներ բացելու նախապատրաստական աշխատանքները: Դրանցում պատրաստվելու յեն գործարանին անհրաժեշտ բանվորներ յերիտասարդ բանվորներից, սեվագործ բանվորներից, գործարանի գիտնորական պահակներից, բանվորուհիներից՝ իրենց իսկ ճարտարագետների, վարպետ-տեխնիկների ղեկավարությամբ, վորոնք «Տեխմասսի» անդամ լինելով, իրենց աշխատանքը համարում են մասնակցություն սոցիալիստական մրցությանը: «Տեխմասսի» այս քայլին ո-

ժանդակություն են ցույց տվել գործարկումը, կուսբջիջն ու գործարանային վարչությունը, վորոնք հատկացրել են մի քանի հազար ուբլի: Ելեկտրոգործարանի «Տեխմասս» բջիջը կազմակերպել է տեխնիկական կինֆիլմերի ցուցադրություն, վորոնք նկարագրում են արտասահմանի նվաճումներն ելեկտրարդյունաբերության մեջ և ակներեխ ցույց են տալիս նոր մեքենաների հետ վարվելու մեթոդները: Մոսկվայի «Գեոֆիզիկա» ճիշտ մեխանիկայի գործարանում «Տեխմասս» բջիջը կազմակերպում է տեխնիկական մինիմումի Ծամյակ, վորտեղ սովորելու յեն 100 բանվոր տեղար, Փրեդագործ, վորագրիչ, սարիչ և ուպտիկ:

Այդ խմբակները կազմակերպվում են «Տեխմասսի» անդամ բանվորների նախաձեռնությամբ, վորոնք ակտիվ մասնակցում են ծրագրերի մշակության և պայմաններ ստեղծում նրանց նորմալ աշխատանքների համար:

Փրեդագործ բանվորներն իրենք՝ ցեխում դումարած խորհրդակցության մեջ մշակեցին մի ամբողջ շարք խնդիրներ և խնդրեցին մտցնել դրանք տեխնիկական մինիմումի ծրագրերը: Այդ խնդիրներն են.

- 1) Ծանոթություն Փրեդի ունիվերսալ դադգյահի հետ,
- 2) Ծանոթություն անշատիչ դլխիկի հետ,
- 3) Ծանոթություն Փրեդների բազմատեսակության և Յրանց աշխատանքի հետ,
- 4) Հասարակ բանեցնող անվի հաշվումն ու պարուրումը,
- 5) Սպիրալի հաշվումն ու պարուրումը,
- 6) Բանեցնող անվի հաշվումն ու պարուրումը,
- 7) Անհամաչափ սպիրալի հաշվումն ու պարուրումը,
- 8) Կոնաձեղ բանեցնող անվի հաշվումն ու պարուրումը,
- 9) Ծանոթություն նյութի տեխնոլոգիայի հետ և այլն:

Բանվորներն այս հարցերը քննեցին իրենց սուպրա ղեկավարների հետ միասին, վորոնցից մեկը ճարտարագետ է, մյուսը՝ վարպետ, և վերջերս խմբակը, չնայած ամառ եր, բայց սկսեց գործել: Համարյա այսպես են կազմվում և մյուս խմբակները:

Ելեկտրոգործարանի, «Գեոֆիզիկայի» որինակով կարելի յե հետեվել և տեսնել, թե ինչ ուղիներով է ընթանում այդ խմբակների կազմակերպումը և հասարակական այն մեծ նշանակությունը, վոր ունի բանվորների և բանվորուհիների վերաբերմունքն իրենց կրթությանը, վորպես սոցիալիստական մրցությանը գիտակից և եֆեկտիվ մասնակցություն ցուցաբերելու մի միջոց:

Տեխնիկական մեխանիկայի խմբակները աստիճաններով պետք է կազմակերպվեն միջակ և խոշոր ձեռնարկություններում և ընդգրկեն արդյունաբերության բոլոր ճյուղերից միլիոնավոր բանվորներ: Խորհանտեսություններում, կոլտնտեսություններում նրանք նույնպես պետք է կազմակերպվեն համաձայն տեղական պայմաններին և յուրահատուկ խնդիրներին: Նրանց ղեկավարութանն ամենալայն չափով պետք է մասնակից արվեն հարյուրավոր և հազարավոր ճարտարագետներ, տեխնիկներ, վարպետներ, հրահանգիչներ և գործուհիներ: Նրանց ողնությամբ բանվորական լայն մասսաներին տալով այն հիմնական տեղեկությունները, վոր անհրաժեշտ են ստորյա արտադրական աշխատանքներում, խոշոր չափով մենք նպաստած կլինենք ինքնարժեքի իջեցման և արտադրողականության բարձրացման: Այդ պատճառով նրանց լայն ծավալումը պետք է հանդիսանա սոցիալիստական մրցության մեջ «Տեխնաստի» մասնակցության ամենակարևոր մոմենտը:

Դրա հետ միասին ընկերության բջիջներն ու բաժանմունքներն ավելի, քան յերբեկեց պետք է սոցմրցման կարգով լայնորեն ծավալեն տեխնիկական գիտելիքների մասսայական պրոպագանդայի բազմազան ձևերը, վորոնք նպաստում են բանվորական մասսաների տեխնիկական մակարդակի բարձրացման: Այդ ձևերը, վորոնք մանրամասն լուսաբանված են նախորդ գլուխներում, հետևյալն են. դասախոսություններ, եքսկուրսիաներ, կոնսուլտացիաներ, գյուտարարների խմբակներ, ցուցահանդեսներ, արտադրական թանգարաններ, մասնակցություն մասնաշաղկան հանրամատչելի տեխնիկական գրականությունը ստեղծելու և տարածելու գործին և այլն: Սրանից հետո հասկանալի չէ, վոր մարտտեխն. ուժերի ամենալայն մասնակցությունն ու ակտիվ ոճանդակությունը անհրաժեշտ մի նախադայման է հանդիսանում «Տեխնաստ» ընկերության աշխատանքներն ամրացնելու, հիշատակված բոլոր ձեռնարկումները կատարելու և սոցմրցման հաջող քայլերը հաջող գարգացնելու համար: 1929 թ. Մոսկվայում գումարված ճարտարագետների 4-րդ միջակցիոն համագումարը լեհիսյան կոմյերիտիության կենտկոմի հետ միասին հրատարակած իր դիմումով կոչ է անում բոլոր ճարտ.տեխնիկական ուժերին ակտիվ մասնակցություն ցույց տալ սոցիալիստական մրցության: «Տեխնաստ» ընկերությունը, վորպես մի կազմակերպություն, վորն իր շարքերում ընդգրկում է աշխատավորության և մասնագետների լայն մասսաներին, պետք է նպաստի մարտարա-

դետական - տեխնիկական ուժերի որգտնական միասնական սոցմրցման մասնակցությունի բանակի հետ, բազմաթիվ ուղղություններով իրենց հանդես բերելով, վորպես տեխնիկական ուսումնարանների նախաձեռնողներ և կազմակերպիչներ:

Ճարտարագետները, տեխնիկները, վարպետները պետք է անմիջական որգտնական մասնակցություն ցույց տան հարվածային բրիգադներին, նախաձեռնող ուսցիոնալացման խմբակներին, վորոնք ստեղծվում են սոցիալիստական մրցության պրոպեգանդի ցեխներում, արհեստանոցներում, հանքահորերում, խորհանտեսություններում՝ տեխնիկական ողնություն և ղեկավարություն ցույց տալով բանվորներին:

Ձեռնարկությունները «Տեխնաստ» բջիջների միջև մրցության որդեկան պետք է հանդիսանա արտադրական խորհրդակցություններում ստուգատեսի ժամանակ, բանվորների մտցրած և արտադրական հանձնաժողովներում ստացվող առաջարկների լրիվ և լավագույն տեխնիկական մշակումը, բանվորական լայն մասսաների և խմբակների հետ արտադրական խորհրդակցություններում դրվող տեխնիկական բարդ հարցերի ըննումը, վորոնք վերաբերում են գործարանի, ցեխի ուսումնարանների, դյուտարար բանվորներին տեխնիկական ողնություն ցույց տալը, կոնսուլտացիաներին և դյուտարարների խմբակներին լավագույն ղեկավարություն ցույց տալը:

Դրա հետ միասին սոցիալիստական մրցության շրջանում ճարտ.տեխնիկական ուժերը պետք է հայտաբերեն առավելագույն նախաձեռնություն և տեխնիկական ստեղծագործություն մտցնելով իրենց առաջարկությունները ուսցիոնալացման, բարելավման, տեխնիկական կատարելագործման վերաբերյալ, նըպաստելով արտադրության մեջ մտցնելու բարելավված մեթոդներ, դիտահետազոտական ինստիտուտների նախաձեռնումները, արտասահմանյան տեխնիկան, դրանք մատչելի և հասկանալի դարձնելով բանվորական լայն մասսաներին:

Հարյուր հազարավոր և միլիոնավոր բանվորներ, լողունը ունենալով համառորեն պայքարել հանուն մեր կուսակցության հիմնական գծի՝ յերկրի ինդուստրացման և ժողովրդական տնտեսության ուսումնարանների՝ կենսագործման նոր տեխնիկայի հիման վրա, պոցիալիստական մրցության մեջ են մտնում, հակառակ աջ ուղորտունիստների պնդումների և նրանց ատաճանումների:

Իր գործունեությունը ծավալելով, «Տեխնաս» ընկերությունը պետք և մշտապես նկատի ունենա սոցիալիստական շինարարության, ունկոնստրուկտիվ շրջանի անհետաձգելի խնդիրները և բանվորական մասսաների ստեղծագործական յուանդը պետք և բազմապատկի նրանց նվաճած գիտություն և տեխնիկայի գիյիքներին: Յեվ այն ժամանակ մեզ կհաջողվի արագացնել աշտապլորության տեխնիկական գիտելիքների մակարդակի բարայցման պրոցեսը՝ բավականաչափ կրճատելով պատմական այն ռմանակամիջոցը, վորի ընթացքում մենք անպայման պետք և անհրաժեշտ էր դարձնենք ամբողջ յերկրի առաջ մեր կուսակցության դրած հիմնական խնդիրը՝ «Հասնել և զերազանցել Յեյլայայի և Ամերիկայի կապիտալիզմական յերկրների տեխնիկական և անտեսական մակարդակը»:



ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայերեն երատարակութայն առքիվ	5
Նախաբան	5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՊՂՈՒԵ I. Մեր առաջ դրված և հասնելու և անցնելու յոնգիրը	9
ՊՂՈՒԵ II. Տեխնիկական հետամնացութայնը արգելակ և ռեկոնստրուկցիայի անապարհին	11
ՊՂՈՒԵ III. Տեխնիկական հետամնացութայնը մասսաների մասնակցութայնը արգելակ և հանդիսանում սոցիալիստական շինարարութայն գործին	16
ՊՂՈՒԵ IV. Տեխնիկական անգրագիտութայնը գյուղացիութայն գերեզմանն և	19
ՊՂՈՒԵ V. Տեխնիկական հետամնացութայնը գյուղատնտեսութայն ինդուստրացման արգելակն և	25
ՊՂՈՒԵ VI. Բանվոր դասակարգի ձգտումը բարձրացնելու իր տեխնիկական գիտելիքները	31
ՊՂՈՒԵ VII. Գյուղացիութայն ձգտումը դեպի տեխնիկական գիտելիքները	37
ՊՂՈՒԵ VIII. Ինչպես ենք բավարարում մասսաների պահանջները	41
ՊՂՈՒԵ IX. Մասնագետները տեխնիկական պրագագանդային ոճանդակելու գործում	46

ՅԵՐԿՐՈՐԿ ՄԱՍ

ՊՂՈՒԵ I. «Տեխնիկական մասսաներին» ընկերութայնը, նրա աշխատանքի մեքողները	51
ՊՂՈՒԵ II. «Տեխմասսի» յարհրդատու-տեղեկատու աշխատանքը	57
ՊՂՈՒԵ III. Համամիութեական կոնսուլտացիան ինչպես և ոգնում գյուտարարներին	63
ՊՂՈՒԵ IV. Տեխնիկական դպրոցը պետք և ծառայի մասսաներին	67
ՊՂՈՒԵ V. Կարմիր բանակը և «Տեխնիկական մասսաներին»	74
ՊՂՈՒԵ VI. ԺՏԳԻ Գիտ. Տեխն. վարչ. գրագարանին կից «Տեխմասս» կարիքնտի աշխատանքները	77
ՊՂՈՒԵ VII. Հանում մասսայական տեխնիկական գրքի	80

ՏԵՐՐՈՐԳ ՄԱՍ

Գլուխ I. Ինչպես կազմակերպել «Տեխնասի» գործարանային բջիջ
և ինչ պետք է անի նա 99

Գլուխ II. Ինչ է տեխնիկական կայանը և ինչպես կազմակերպել 142

Գլուխ III. Ինչպես կազմակերպվեց և ինչպես է աշխատում «Տեխնասի»
Սամարայի բաժանմունքը 155

ՉՈՐՐՈՐԳ ՄԱՍ

Գլուխ I. Տեխնիկան հասցենեմ մինչև գյուղ 167

Գլուխ II. Արհմիությունների, սնտեսական կազմակերպությունների և
կոմյերիամիության ոգնությունը 173

Գլուխ III. Սոցիալիստական մրցությունը և «Տեխնասի» անելիքները 179



698

1931

11
27069

ԳՐԱԸ 1 ՌՈՒՐԱԿ



М Рубинчик
 Технику в массы
 Гиз ССРА. Эривань 1931.

